Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

J. Pennrich

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐ

երկու
հատորով

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1958

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐ

Հատոր առաջին



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1958

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հովհ. Թումանյանի երկերի ներկա երկհատորյակը բնդգրկում է մեծ բանաստեղծի գեղարվեստական, [illegible] բարգմանական, ժառանգությունը: Նախատեսված է [illegible] ընթերցել շատ ճշտորով, սակայն տեխնիկական [illegible] ստատկանարժար գանվեց նյութերը գետեղել երկու [illegible]:

ОВАННЕС ТУМАНЯН

СОЧИНЕНИЯ В ДВУХ ТОМАХ

Том первый

(на армянском языке)

Армянское государственное издательство

(Айпетрат), Ереван, 1958

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1887

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի՛, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Ասք շուտ տուր, խոփիդ դուրբան,
Օրհնյալ է ասուած, հորովե՛լ։

Քաշի՛, եզը, ուսիդ մատաղ,
Քաշի՛, քաշենք, վար անենք.
Ճիպտի՛ն արա, քշի՛, հուսաղ,
Մեր սև օրին ճար անենք։

Պարտքատերը գանգատ ընաց,
Քյոխվեն կրգա, կրծեծի,
Տերտերն օրհնեց, անվարձ մընաց,
Կրբարկանա, կանիծի։

Էն օրն եկան թովչի արին,
Հարկ են ուզում տերությյան.
Ի՞նչ տամ կռին ու բեգյարին...
Վարի՛, վարի՛, իմ գութան։

Ձեռքս պակաս, ուժքս հատած,
Հազար ՝ու մի ցավի տեր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ։

Արի՛, դուքան, վարի՛, դուքան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շո՛ւտ տուր, խոփիդ զուրբան,
Օրհնյա՛լ է ասուված, հորովի՛լ։

ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Լուսընկա գիշեր,
Երկինքը պայծառ,
Անհամար աստղեր
Ցոլցլում են վառ։

Քընած է արդեն
Հովտի մեջ գյուղը,
Մընթնած ու լուռ է
Գյուղացու հյուղը։

Հոգնած գյուղական
Ընտանիքն ահա
Սրահում, կալում,
Կամ կըտրի վրա

Երկընքի դիմաց
Գրկված են քընած,
Վերևիցն, ասես,
Ժըպտում է ասուված։

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով, ծալապատակ,
Միասին բազմած,
Մի շըրջան կազմած,

Քեֆ էին անում
Եվ ուրախանում
Մեր հրեկա պապերն ու մեր հայրերը՝
Գյուղի տերերը։

Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
Երեք դասընկեր,
Նըրանց առաջին գըլխաբաց կանգնած,
Ձեռքներըս խոնարհ սըրտներիս դըրած,
Ձի՛լ, ուժեղ ձայնով նըրանց ըսպասում՝
Տաղ էինք ասում։

Երբ գըվարթաձայն մեր երգը լըռեց,
Մըռայլ թամադեն բեղերն ոլորեց,
Նըրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին. «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք...»։

Ժամանակ անցավ, Նրանք էլ անցան,
Գըվարթ երգերըս վըշտալի դարձան.
Եվ ես հիշեցի մեր օրը լալիս,
Թե մեզ օրհնելիս
Ինչու ասացին. «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք...»։

Խաղաղությո՞ւն ձեզ, մեր անբա՛խտ պապեր,
Ձեզ տանջող ցավը մե՛զ էլ է պատել։
Այժըմ, տըխրության թե քեֆի ժամին,
Մենք էլ՝ օրհնելիս մեր զավակներին՝
Ձեր խոսքն ենք ասում. «Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք...»։

1889

* * *

Ես նայում եմ. իմ առջև
Ահա տիրող աշխարքը.
Թերրի դաշտերը մինչև
Հեռու լերանց այն շարքը

Լայնարձակ, գալարագիծ
Տարածվում են և կորչում
Մշուշի մեջ, իսկ այնտեղ
Ճոխ անտառն է կանաչում։

Ուր որ ագատ շրջելով
Ապրում են երե, գազան,
Եվ թռչունքը ճախրելով
Երգ են ասում զոհության։

Ահա, շքեղ դաշտի միջով
Գալարվում է և անցնում
Հանդարտ գետը մրմունջով
Հեռո՞ւ, հեռու է գնում։

Նրա գալար ափերում
Մինը հազար է բերում.
Սակայն, ահա, մյուս կողմում
Կապույտ ծովն է մեղմ ծփում։

Ինչքա՞ն ճոխ է, հրաշալի,
Այս աշխարհը լայն, արձակ,
Ամեն մի շունչ այքը լի
Կապրի այստեղ հոմարձակ։

Ես նայում եմ, և մի միտք
Հղանում է ինձանում.
Ինչո՞ւ համար են մարդիկ
Իրար զրկում, սպանում։

* * *

Ների՛ր, ո՛վ կույս, որ հուզեցի
Խաղաղ կուրծքդ կուսական,
Մեղսոտ սրտով ես շուզեցի
Կործանել քո սպասան։

Այն մի անմեղ խաղ էր, հոգի՛ս.
Պատանեկան հասակի,
Որ անցնելով պատճառ դարձավ
Քո աչքերիդ արցունքի։

Ես գուշակել չկարացի
Կյանքի վճիռն անարդար,
Անգիտությամբ ես հարուցի
Այդ փոթորիկն անդադար։

Ների՛ր, ո՛վ կույս, բուռն եռմունքին
Պատանեկան կրքերի,
Ների՛ր, հոգիս, որ մատնեցին
Քնքուշ սիրտդ վշտերի։

* * *

Երանություն էր խոստացել հույսս ինձ,
Բայց ես չըգտա նրան կյանքի մեջ,
Եվ քաշալերված պատիր խոստմունքից,
Կյանքի դեմ իզուր վարեցի ես վեճ։

Կարծում էի, թե մարդիկ անհամբեր
Ուրախությամբ ինձ սպասում էին,
Եվ ամեն քայլում խղճմտանք ու սեր
Մարդոց աչքերը միշտ հուզում էին։

Կարճատե՞վ ցնորք, որ անցար արագ,
Ինչպես մի քամի, առավել չընչին,
Եվ ահա ընկած իբրև մի նավակ,
Որ կամեր լողալ ավազի միջին։

Դուն անցար, այո, դարձյալ աշխարհը
Կառավարվում է յուր օրենքներով,
Եվ դիմակ առած մեծ բարերարը
Մարդիկ է սպանում դաղտնի զենքերով։

Մահացու ախտով վարակվածն ահա
Անարատության հագած վերարկու,
Եվ խավարասեր ամբոխը նրա
Չաղիր գործերին կանգնած խնկարկու.

Եվ հազարավոր ամեղ հոգիներ
Հալածված են շար կրքերից անսանձ,
Եվ, ի նախատինս բանականության,
Արդար է միայն գորեղը մարդկանց։

Ահա գետնաքարշ և չարախնդում
Խումբերըն անսիրտ մարդ-հրեշների
Վխտում են անվախ՝ հրապարակներում,
Իբրև առաջնորդ մարդոց մտքերի։

Ահա, խնդության ձայներ են թնդում,
Իբրև արձագանք չարության խոսքի.
Ի՞նչ են կամենում, էլ ի՞նչ են խնդրում
Պատուհասները մարդկային ազգի։

—Ի՞նչ եք կամենում դուք, մարդիկ ստոր,
Մա՞հը, կործանո՞ւմն արժանավորի.
Եվ այդ բոլորը միայն մի կտոր
Հացի համար. սակայն, ո՞վ դիտի,

Գուցե խավարը ձեզ ավեց պաշտոն
Բանականության բռնավորների,
Եվ դուք, անմիտներ, ամբողջ մարդկություն
Ձեզ հավիտենական կարծում եք դերի։

Խղճե՞ք, նայեցե՛ք, ահա ձեր դիմաց,
Առանց նայելու ձեր կատոր հացին,
Բանականության դավակը կանգնած,
Սպասում է նա մուտ լուսաբացին։

Երանություն էր խոստացել հույսս ինձ,
Սակայն չըգտա նրան կյանքի մեջ.
Բայց չեմ վհատել. անսպառ մեկ իզձ
Դեռ ինձ մղում է գեպ հառաջ անվերջ։

Հառա՞ջ, կովկլով, և կըգա մի օր,
Որ կընկնի ներկան վառշվեր, դաժան,
Նրա ավերի վերա փառավոր
Ապագան լուսա կըկանգնի նշան։

* * *

Երբ ես տխուր, հուսահատ,
Ինձ կորած եմ համարում,
Շուրջս մեռած, անապատ,
Սրտիս երկյուղ է տիրում։

Մահու ձայնը դառնալուր
Հասանում է ականջիս,

Մարդիկ մնում անհամբույր
Եվ խլանում են կանչիս։

Մի զորություն հզորեղ
Ինձ հուսաղրում է հանկարծ.
Եվ զգում եմ, ամեն տեղ
Դուն ինձ հետ ես, ասուած։

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Երբ որ գարշելով տեսնում եմ շուրջս
Մոլեգնած կյանքի պատկերը ցավոտ,
Հաճախ, մանկություն՛ն, խռոված հոգուս
Ներկայանում ես ինչպես առավոտ։

Եվ մանկան նման արտասվում եմ ես,
Երբ այս օրերում, չարությամբ լցված,
Քեզ, սուրբ մանկություն, հիշում եմ ինչպես
Երազի տեսիլք անհետ չքացած։

Ինչպես արևի ճաճանչը վերջին
Թռչում է հանկարծ, տիրում է խավար,
Այնպես շողացիր և անցար կրկին,
Մնացի անզոր, ցոփ կյանքին ավար։

Թե հնար լիներ մի անգամ դարձյալ
Դառնալ քո գիրկը... ա՛խ, ի՞նչ եմ ասում,
Այդ անհնար է. արդեն հանդերձյալ
Կյանքի ճամփան է իմ առջև բացվում։

Բայց մինչև այնտեղ, սոսկալի՞ ոգեր,
Ահա բռնություն, պատիվ անարդած,
Ահա հառաչանք, արտասուք աղի,
Ահա սև նախանձ և սեր սակարկած...

Կրմտնեմ և ես այս ցավերի տակ
Ինձ հետ տանելով շատ իղձ ու փափագ,
Իսկ այս աշխարհից, և ոչ մի պսակ՝
Միայն քո անմեղ, քո սուրբ հիշատակ։

Մի տխրատեսիլ գուցե գերեզման
Անցվորականից խնդրե մի բերան
Ողորմի ասել... ո՞վ գիտե, և այն
Կլինի՞ արդյոք, կընայե՞ն նորան...

ԿԱԼԻ ԵՐԳ

(ԼՈՌԵՑՈՒՆՑ)

Կալ արա, դնանք,
Ա՜ հեր ջան.
Հորովե՞լ,
Հո՞ր՞ովելա՞։

Արի՛, ման արա,
Ա՛յ քեզ մեռնեմ,
Դարման արա,
Ղադեդ առնեմ։

Ոտիդ արա,
Ոտիդ դուրբան,
Ուսիդ արա,
Ա՛յ ախպեր ջան։

Էլել ա, էլել,
Կալն էլել ա,
Հարել ես, հալել,
Հորովելա։

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

Հեռո՛ւ, ո՛վ սուրբ խաղաղություն,
Մենք քեզ համար չունենք անկյուն
Մեր հալածված հայրենիքում
Եվ մեր ցաված սրտի խորքում։

Գնա դեպի այն լեռները,
Ուր որ հովիվն ու գառները
Ապահով են պատառոտից,
Մենք ապառ չենք ո՛չ ու գոդից։

Գնա՛, հանգիր այն դաշտերում,
Ուր որ իրոք էլ չեն տիրում
Եղբայր-մարդիկ, և հերկելով
Քեզ օրհնում են սուրբ երկրով։

Գնա դեպի երանավետ
Այն վայրերը, ուր կյանքի հետ
Խաղ չեն անում զվարճության
Կամ հեշտության համար միայն։

Իսկ մենք ցավով լեցուն սրտով
Անկարող ենք միշտ անվրդով
Ե՛վ թուրքերի լուծը տանել,
Ե՛վ քեզ օրհնել, փառաբանել։

Հեռո՛ւ, ո՛վ սուրբ խաղաղություն,
Մենք քեզ, իբրև մի լուսե անուն,
Երանությամբ միշտ հիշելով
Պիտի կռվենք մեռցնող սրով։

1890

ՆՍԽԵՐԳԱՆՔ

Լեռնե՛ր, ներշնչված *գարձյալ ձեզանով,*
Թքնգում է հոգիս *աշխուժով լցված,*
Ու չերմ ըղձերս, *բախտից հալածված,*
Ձեզ մոտ են թռչում *հախուռն երամով։*

Ձե՛զ, ձեզ վերստին, *ամպամած լեռներ,*
Կյանքի տխրության *ամպերի տակից*
Ես ձայն եմ տալիս *ու ծանրաթախիծ*
Հոգուս ձայները *ձեզ բերում նվեր։*

Քեզ մոտ եմ գալիս, իմ հի՛ն տրամություն,
Վեհափառ դայակ մանուկ օրերիս,
Այժմ էլ չէիր ինձ հանգիստ տալիս՝
Սրբտիս ականջին խոսելով թաքուն...

Ո՛վ, որ կանչում ես դիշեր ու ցերեկ
Հաղար ցավերով, հազար ձևերով,—
Ոգեորության հրդեհ թևերով
Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հեղ։

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,
Այլ դառն հեծության հառաչանքներով
Էդ անգընդախոր ձորերդ լցնեմ։

Ձորե՛ր, ա՛յ ձորեր, սև, լայնարերան,
Սրբտիս էս խորունկ վերքերի նման.

17
Մ.Մաշտոցի անվ. Հանրապետական գրադարան ՊՀՀ Ակադեմիայի գրադարան

Աստծու հարվածի հետքերն են դուք էլ,
Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ էլ, էլ։

Դուք էլ խոսեցե՞ք, դուք էլ պատմեցե՞ք,
Ձեր անդունդներով եկեք շափվեցե՞ք։
Դուք է՞լ եք, տեսնեմ, ինչքան մեծ ու խորք
Ինչքան իմ հոգու թախիծն ահագոր...

* * *

Այդ ի՞նչ սրտամաշ տխրություն է քեզ
Պատել, հայրենի գեղեցիկ աշխարհ.
Մինչև ե՞րբ պիտի շարչարվես այդպես
Տառապանքներով, առանց մխիթար...

Իմ հայրենիքս տխուր է, տխուր...
Ուր աչք եմ դարձնում՝ տխուր ամենուրեք,
Ամեն տեղ միայն, միայն ցավալուր
Հեծության ձայներ, երկչոտ ազաղակ։

Թե երկրագործն է հարամել կանչում,
Թե մայրը որդուն օրորք է ասում,
Թե հովիվն իրան սրինգը հնչում,
Մի հուսակտուր հառաչք եմ լսում։

Աշխարհից, մարդուց հույսերը կտրած
Գանգատվում է նա, և ցավից տնքում,
Կյանքիցը զզված, սակայն գեռ չապրած,
Հանգիստ է խնդրում հեռո՞ւ, երկնքում...

Մի՞թե տրտմության թախիծըն այդպես
Խեղդեց նրա մեջ ապրելու հույսը.
Մի՞թե այլևս նա չէ երգելու
Իրան պապերի երգած խրախույսը։

Մինչև ե՞րբ պիտի մարդիկ կատաղի
Արցունքովն հայի կերածը թրջեն,
Եվ երկար պիտի մեռելաթաղի
Տաղերով ազատ ցիրբերեր շրջեն...

Մի՞թե դեռևս անսիրտ հազարը
Այն ավերակաց վերա պիտ իշխե,
Անարգե, պղծե մեր սուրբ տաճարը,
Անարժանների շնորհներ բաշխե...

Եվ չարագուշակ մտքերով հուզված
Քաշվում, մտնում եմ մի խաղաղ անկյուն.
Եվ երկար անշարժ ու խորասուզված
Հածում եմ նրա ցավերում անհուն։

Ավելի խորը, ավելի հեռու
Միտքս ինձ առնում, թռցնում, տանում է.
Թռչում է հանկարծ մի ծանր հառաչանք
Եվ սիրտս կարծես հանգստանում է։

* * *

Եթե իմ վերջին հայացքը մնա
Քո դեմքիդ վերա տխուր, վշտահար,
Տեսնեմ արտասուքդ ու սիրտս իմանա,
Որ սրտանց ես դու կոծում ինձ համար,

Եթե գիտենամ, իրավ պիտի դու
Ինձանից հետո ցավես իմ մահո՛վ,
Երդվում եմ սիրով, առանց ցավելու
Կըմեռնեմ ես այդ հուսով ապահով։

Եվ երբ կըլսեմ իմ գերեզմանից
Ու կըճանաչեմ քո հեկեկանքը,
Կըմխիթարվիմ, որ սիրում ես ինձ,
Որ քաղցրը էր քեզ համար իմ կյանքը։

* * *

Պանդուխտն երգեց օտար երկրում
Եվ սրտաբեկ հոգոց քաշեց,
Երբ որ տխուր յուր երգերում
Անցած ուրախ օրերն հիշեց։

Մարմնով տկար, հոգով տխուր
Շուրջը նայեց, մեկը չկար,
Որ տար գեթ մի բաժակ ցուրտ ջուր,—
Ողբաց պանդուխտն անմխիթար։

Եվ նա խնդրեց անժամանակ
Հանգստության լուռ գիրկման,
Անհույս երգեց վերջին նվագ,—
«Արի՛, շարքաշ կյանքիս վախճան։

Էլ ույժ չկա. բարյավ մնաք,
Դուք սև օրեր պանդխտության,
Դո՜ւն, հայրական հեռու տնակ,
Եվ երազներ պատանեկան։

Իսկ դուն արի՛, քաղցր հիշատակ,
Կորցրած սիրո, վայելչության,
Արի ինձ հետ իբրև սփոփանք
Գերեզմանիս լուռ տիրության։

Մեռավ պանդուխտն. բարյավ մնաք...
Գիտեք, որքան ձեզնից թաքուն
Խեղճը հեծեց, ողբաց մենակ...
Գեթ ողորմի տվեք հոգուն։

ՄԻ՛ ՈՐՈՆԻՐ

Մի՛ որոնիր մի ժամանակ
Արհամարհածդ՝ այս կրծքի տակ,
Հառաչանքով դուրս թռավ նա
Ու դատարկ է տեղը հիմա...

Էլ մի՛ կանչի՛ր, մի՛ լար իզուր.
Քո արցունքից միայն տրխուր
Հին-հին հուշեր սիրտ զարթեն,
Եվ ի՞նչ օգուտ... ո՞ւր է արդեն...

* * *

Շատերի նման նա էլ խեղդվեցավ.
Փորձությունն եք պարսավում նրա։
Լռեցի՛ք, եղբարք, ի՞նչ գիտեք, ի՛նչ ցավ
Առաջնորդեց այն մարդուն դեպի մահ։

Տեսե՛ք, այս խեղճը տխուր, գլխակոր,
Մոլոր շրջում է սղվորի նման.
Բայց նրա մասին մի՛ դատեք, երբ որ
Չգիտեք ինչն է կորացրել նրան։

Ահա, վարում են մյուսին պատժարան.
Օ՜, մի՛ անվանեք նրան չարագործ.
Ի՞նչ գիտեք, գուցե մի միտք երկնարժան
Այս օրին մատնեց այդ մարդուն անփորձ։

Եվ դուք ի՞նչ գիտեք, թե երդիչն ուրախ,
Որ ձեզ համար միշտ երգեր է երգում,
Քարասիրտ մարդկանց ծաղրանքից ծածկած
Ի՞նչ ցավեր ունի յուր սրտի խորքում։

ԽՈՐՀՐԴԱԾԱԻԹՅՈՒՆ

Ո՞րն է դրախտը,— վայրն երանավետ,
Ուր պիտի ապրեմ դերեզմանից ետ.
Մի՞թե մարդկային տառապած կյանքը
Ջրստեղծեց այն սուտ մխիթարանքը.
Եվ մի՞թե նորա մահից սարսափած
Ագահությունը չէ իրան խաբած...
Սակայն բարի է. մի տանջված արդար,
Կամ իրան արդար համարող մի չար
Երկրային կյանքի վերջին վայրկյանին
Հանգիստ ու խաղաղ կավանդե հոգին,
Համաձայն իրան ճաշակի, կամքի.
Վայելքն հիշելով խոստացյալ կյանքի.
Եվ ահա միակ, բայց մեծ օգուտը,
Որ մարդկությանը տվեց այս սուտը։
Ա՞յս է մեր կյանքը. լոկ խաբեություն,
Ո՜հ, մի՞թե և ես, ինչպես մի հնչյուն,
Այս իմ հուսերիս, ձգտումներիս հետ
Պիտի մեռանիմ, չքանամ անհետ...
Չէ՛, սիրելի է խոստումն երկնքի՝
Հույսն հավերժական, անվախճան կյանքի.
Հեռո՛ւ ինձանից հոգիմաշ կասկած,
Ողջույն քեզ, ողջո՛ւյն, ո՛վ կյանքի աստված.
Արի՛, հայտնվի՛ր, նշկտիր մահու
Տարակուսանաց տագնապն սհարկու
Եվ կույր հավատով զորացրու հոգիս՝
Անմահություն տուր լքացած կյանքիս...
Բայց ի՞նչպես պիտի կյանք առնեմ կրկին,
Արդյոք լուսակազմ, աննյութ, անմարմին
Պիտի ստվառնեմ անծայր եթերքում,
Թե՞ իբրև մի հունչ շրջեմ աշխարքում,
Թե՞ անփույթ, անգործ թափառեմ պիտի
Մարդոց աչքերին անտեսանելի,

Թե՞ ամպերի մեջ պիտի ես հանգչեմ
Եվ ոտքիս տակից կայծակներ իջնեն...
Օ՜, ներիր, աստված՝ ծածկագետ, անհուն,
Ներիր մեծամիտ, գոռող պատանուն.
Աննշան ճճիս շարաշար մեղա,—
Հանդուգն խորհրդով խորամուխ եղա,
Ձգտեցի պարզել քո աստվածային
Անհասանելի, անմեկին գաղտնին։

ՄԱՐԳԱՐԵ

Երբ որ վեհության կնիքը ճակատին
Եվ ճշմարտության սուրբ պատգամներով
Նա հայտնվեցավ մոլար աշխարքին
Եվ դարձ քարոզեց հրաթափ լեզվով,

Նրա աստվածային ձայնից սարսափած
Գիշերատեսիլ մարդիկ հուզվեցին,
Իրանց սեղանից վեր կացան հարբած,
Մոլեգնության մեջ աղաղակեցին.

— Ո՞վ ես դուն, արի՛, այս մեր հանցավոր
Ուրախությանը մասնակից եղիր,
Կամ թո՛ղ վայելենք մեր կյանքն անցավոր,
Թե չէ՝ խիստ պատժի քարերից փախիր։

Սակայն անվհատ նա հառաջ գնաց
Անուշադիր յուր անձի վնասին,
Մոլորությունը ներելով մարդկանց՝
Հոգ տարավ նրանց փրկության մասին։

Եվ երբ որ լուտ նա ջահը ձեռքին
Մոտեցավ կորստյան փոսի եզերքին,

Ապերախտ ձեռքով ամբոխը խավար
Ջարկեց, խորտակեց շահը փրկարար։

Ժամանակ անցավ. թշվառ ամբոխին
Արդեն փորձանքը վրա էր հասած,
Երբ ուշքի եկավ, վայ տվեց գլխին։
Ինա մարգարե էր, նա իրավ ասացու։

ԳԻՇԵՐԱՑԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏՂԻ ԴԻՄԱՑ

Արևը թռավ. երկինք ու երկիր
Առավ խավարը գիրկն համատարած.
Դուն, փայլուն աստղիկ, դարձյալ շողացիր,
Արդյոք այս գիշեր ի՞նչ բերիր մարդկանց։

Դուն ավետեցիր ժամը տխության
Այն սիրատենչիկ սիրահարներին.
Որ սրտատրոփ անհամբերությամբ
Սպասում էին խաղաղ գիշերին։

Դուն երևացիր խավար երկնքից...
Օ՜, նա սպասում էր քո երևալուն.
Ահա հուսահատ, զզված յուր կյանքից,
Խեղդվելու գնաց մարդկանցից թաքուն։

Դուն երևացիր և բազկատարած
Պատրաստվում է մեկն աղոթք անելու,
Այն ինչ, մի ուրիշն յուր զենքերն առած
Գնում է անմեղ մարդ սպանելու։

Իսկ մեծատունը, խնջույքից հոգնած,
Հանգստանում է. ա՜խ, թե նա հիշեր,

Որ յուր պալատի պատի տակ կանգնած
Թշվառն ծիծաղ չունի այս գիշեր...

Դուն, փայլուն աստղիկ, որ շողշողում ես,
Ինչպես սիրուհու թրթռուն տենչանք,
Ամեն գիշեր ինձ համար բերում ես
Կրքերի հուզմունք և հոգու տանջանք։

ՁԱՐԱՄԻՏՆԵՐԻՆ

Դո՛ւք, մեծ հայրերի ընկած զավակներ,
Դո՛ւք, ո՛վ ստրուկներ մոլի կրքերի,
Դո՛ւք, ո՜վ զեխության խղճալի հյուրեր,
Որ շվայտ կյանքին դարձել եք գերի.

Դո՛ւք, որ ընկնում եք ո՛չ պատերազմում
Թշնամու սրով և ո՛չ ձեր մահով,
Որ եղբայրադավ ժողով եք կազմում
Եվ տեսնող աչքից կարծում ապահով.

Դո՛ւք, որ պատրաստ եք անմեղին կապած
Սեղանավորի ոտքի տակ զոհել,
Որ ավազակի առաջ սարսափած,
Ճշմարտությունն եք ուրանում խոսել.

Դուք, որ ուզում եք աշխարքին խաբել,
Եվ դատաստանի առաջ դողալով
Գիտեք կեղծավոր արտասուք թափել
Զարությամբ լեցուն, հանցավոր սրտով։

Դո՛ւք, որ մարդկանց աչքերն եք կապում,
Ո՜վ սպասավորներ բանտի, խավարի,
Որ հարազատի արյունն եք թափում
Եվ ձեր եղբոր գույքն առնում ավարի։

Դո՛ւք, որ աչքի դաշն արտասուքով
Շաղախեցիք ձեր սեղանի հացը,
Որ հպարտացած անօրեն գործքով
Հաբցանում եք թե՝ ո՞ւր է աստվածը.

Կրհասնի նա ձեզ, բարկությամբ արդար
Աբժանի մահով պատուհասելու,
Եվ ո՞վ պիտի ձեզ ցույց տա ճանապարհ
Նորա բարկության պատժից փախչելու

ՄԻԱՄԻՏՆԵՐԻՆ

Երանի է ձեզ, որ չեք հասկանում,
Թե մարդիկ ինչու ինչեր են անում,
Երանի ձեզ, որ մարդու չեք զրկում,
Եվ ոչ ձեզ հասած հարվածն եք զգում.
Երանի ձեզ, որ ոչինչ չզգիտեք,
Որ հոգով անդորր, սրտով հանգիստ եք։

* * *

Ո՛հ, խնայեցեք, մի՛ հիշեցնեք ինձ,
Թե ինչպես էր նա արտասուք թափում,
Երբ, արդեն խոցված ենկդավոր խոսքից,
Անձնուրաց սիրույս էլ չէր հավատում։

Ո՛հ, մի՛ հիշատացնեք, այդ խոսքեր են լոկ
Եվ չեն դարձնելու կորուստս անդին,
Անտարբեր եք դուք, դեռ ձեզ անողոք
Բախտը չէ մատնել սիրո վտանգին։

Մի՛ հիշեցնեք, մի՛, թե ինչպես դաժան
Մարդիկ իրարից անջատեցին ձեզ,
Թե ոնց եմ ապրում ներքին քաժան...
Թողեք ինձ հանգիստ,— ես փոշ եմ այսպես...

Ո՛չ, ես չեմ կարող չարշարվել անվերջ,
Ուզում եմ խնդալ ցավերից հեռի,
Եվ մոռացության ալիքների մեջ
Թաղել հիշատակն անցած օրերի։

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Այս կրծքի տակ ապականված,
Հեռու կյանքի ժրխորից,
Դեռ մի հնչյուն կա պահպանված
Իմ մանկության օրերից։

Եվ երբեմն պատահում է,
Որ հնչում է նա հստակ,
Կյանքի ձայնը նշկահում է՝
Ես շնչում եմ համաթմակ։

Պայծառ շաղերն հիշողության
Մտնում են ծոցն անցյալի,
Լուսավորում իմ մանկության
Անհոգ պատկերն անձկալի։—

Ահա երկինքն իմ հայրենի,—
Հայի սրտի նման պարզ,
Ահա երկիրն իմ հայրենի՝
Կանաչազարդ հանապազ։

Ողջույն ձեզ, ո՜վ ուրախ, ազատ,
Անցած օրեր իմ մանկության...
Ա՜խ, ձեզանից ինձ մի բացատ
Անջատել է հավիտյան։

Ահա փոքրիկ իմ քույրերը
Խաղ են անում միասին,
Օ՜հ, անհանդիստ, շար եղբայրը
Նրանց ծեծում է կրկին...

Մորս ձայնը մեղեդիական
Ահա հնչում է քնքուշ,
Նրա հայացքը մայրական
Ինձ հետևում է զգույշ։

Ահա կանգնած է իմ առաջ
Մեր բազմահոգ գյուղացին,
Մեծամարմին և քաջալանջ,
Ծիծաղ շրկա երեսին։

Ո՜հ, լսում եմ նրա երգը
Միանման ու տխուր.
Լաքաբերան նրա վերքը
Մեծանում է օրավուր...

Ահա թշվառ հայ դեղչկուհին,
Դեմքը վշտոտ ու նիհար,
Պատառոտած մի շոր հագին,
Զարշարվում է անդադար։

Ահա ծերուկը, շարժելով
Ալիքները առաջվան,
Կյանքն է հիշում հառաչելով
Եվ մտնում է գերեզման...

Եվ պարզ աչքով ես տեսնում եմ
Հայրենիքս ծաղկավետ,
Այն ճոխ երկրից ես լսում եմ
Անհոգ ծիծաղ լացի հետ...

Դալարագեղ նրա հովտում
Ի՜նչ ազնիվ է վայրենի,—
Գետի գոռոց և որոտում
Հազարավոր ձայների։

Ահա նրա լուռ, ահավոր
Խաղաղ գիշերն աստղաշատ,
Ահա նրա հանդիսավոր
Առավոտը ցոդապատ.

Նրա ձորերն անդնդափոս
Եվ բարձրաբերձ քարափը,
Նրա սարերն ու հորդահոս
Սովորական տարափը.

Երբ որ կայծակը շեշտակի
Ահեղորոտ իջնում է,
Անտառապատ և վիթխարի
Լերանց կրծքին հանգչում է։

Ի՜նչ սիրուն է և հոյակապ
Հայրենիքս վշտակիր,
Եվ դու, մերժած սեր իմ հրատապ,
Այն լեռների մեջ հանգիր։

* * *

Դեռ անհիշելի վաղ մանկությունից
Անհայտ ըղձերով թռչում էի վեր,
Միաժամանակ քարշում էին ինձ
Դեպի ստորև ախտավոր կրքեր։

Հնազանդվեցի մոլություններիս,
Ոչ ոք էլ նրանց մասին չլսորհեց,
Իսկ կյանքը գրկեց և, փաղաքշելով,
Հեշտասիրությամբ սիրտս տոգորեց։

Սակայն ի՞նչ է նա, ինձ ոչ ոք չասաց,
Մեզ ի՞նչ է տալիս կամ ո՞ւր է տանում,
Որ մեկը միամիտ, իսկ մյուսն ստիպված,
Անվերջ սիրելով կյանք են անվանում։

Եվ ես, անգիտակ նրա խորհրդին,
Անձնատուր եղա բոլոր ուժերով,
Մինչև որ հասա ինձ խարող կետին,
Մինչև որ տեսա հոգնած աչքերով.

Վարդերով ծածկած կորստյան անդունդ,
Քաղցրավենիքով պատած մահադեղ.
Մարդիկ հառաջ են վազում սրտաթունդ,
Եվ օրապակաս ընկղմում այնտեղ.

Մեռելի վրա բարձրաձայն ազում,
Վաղաժամ մահ են ողբում անդադար,
Տեսնում, շոշափում, բայց դեռ չեն զգում,
Եվ դարձյալ շուտով մեռնելու համար...

Ա՛խ, ո՞րքան շատ են ճանապարհները.
Որ մեզ տանում են դեպի գերեզման,
Եվ ինչպես մոլի մեր թարմ ուժերը
Մենք սպառում ենք ձեռքով սեփական...

ԵՐԱՆ

Ես ուզում եմ, որ ինձ նման
Էլ չլսվեր մեկը քեզ.
Բայց տանջեն միաբերան,
Թե դու, իրավ, հրեշտակ ես։

Ես ուզում եմ, որ քո անմեղ
Սիրտը թնդար ինձ համար,
Եվ հավիտյան վառվեր ալմաստեղ
Միայն իմ սերը բոցավառ։

Ես ուզում եմ, որ օրնիբուն
Ապշած նայեմ աչքերիդ,
Ինձ մոռացած, կորչեմ անհուն
Խորության մեջ հայացքիդ։

Իսկ եթե մահն այն ժամի մեջ
Ինձ մոտենար, օ՞, սեր իմ,
Ես կուզեի քո սիրատենչ
Կուրծքդ լիներ ինձ շիրիմ։

«ՀՈՉ ՅՈՐԻՆԱԿ
ԱՅԼՈՑ»

Աղատ, համարձակ բարձրացի՛ր, արատ,
Քո պատվանդանի վերա ոսկեղեն,
Բարձրացի՛ր, խշխի՛ր... թող մարդիկ անպարտ
Հորդ արտասուքով ոտքդ ողողեն։

Դո՛ւրս արի, հանցա՛նք, մեծատան շեմքից,
Խեղդի՛ր, խորտակի՛ր անմեղ տղկարին,

Մի՛ քաշվիր սիրոջ փառավոր միրքից՝
Նա ընկեր է քո առած ավարին։

Եվ քաջալերված լրբենի բազուկ,
Ճեղքիր ճակատը ճշմարտախոսի,
Արդեն արծաթով վաճառվեց ծածուկ
Եվ ճշմարտության խոսքը հիսուսի։

Դու, սեղանավոր, ձեռքդ տարածիր
Դեպի սեղանը մարդոց սրբության...
Մի՛ վախիր,— ամեն բողոք ու խնդիր
Պիտի սին օդում անկատար մնան։

ՀԱՄԵՐԳ

Վրտակը ժայռից ներքև է թրռչում,
Թափ առած ընկնում քարերի գլխին,
Ջարկում ավազին, շաչում է, ճռչում,
Ճռչում անհանգիստ; փրրփուրը բերնին։

Ինչպես ծերունին, ձայնով պառաված,
Ջանակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպես է ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալիս շրջի աղմուկին.

Այնինչ բընության զրվարթ համերգի
Ունկընդիրն անխոս, հավիտենական,
Ժայռը մրտախոհ՝ իր մրոայլ մրտքի
Ետևից ընկած՝ լրսում է նրրան։

ԵՐԳՉԻՆ

Ապա, այն երգն ասա՛, երգիչ,
Որ հեծեծանք է միալար,
Այն սրտատանջ և մորմոքիչ
Երգը երգիր ինձ համար։

Սիրտս լիքն է լուռ վշտերով,
Շո՛ւտ, այն տխուր երգն հնչիր,
Եվ քո երգի նուրբ ձայներով
Արցունքներըս դուրս կանչիր։

Շատ թաքցրի սրտիս միջին
Զգայազուրկ մարդկանցից,
Այժմ ուզում եմ քո առաջին
Ողջ դատարկել իմ սրտից։

Դե շո՛ւտ արա, որ ինչպես թույն
Ինձ չըտանջեն հավիտյան,
Երգի՛ր, երգիչ, և նրանք իսկույն
Իմ աչքերում կերևան։

ՆԿԱՐԻՉ Գ. ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆԻ «ԶՈՐԱԳԵՏԸ ԳԻՇԵՐՈՎ» ՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ

Արտի՛ստ, քաջերի այս ձորն ահարկու
Յուր բնավայրից փոխադրել ես դու.
Մե՛ծ է արդարև, մեծ է քո հոգին,
Որ ընդգրկել է ժայռերն ահագին
Իրենց սեպական խոր մտածմունքով,
Փրփրուն գետը փայլուն ծփանքով,

Լուսին-աստղերով կամարը երկնի
Եվ համատարած խավարն ահռելի...
Լուռ հանգստություն՝ դիշեր է մթին.
Հանգստանում է նաև իմ հոգին

Բայց ահա այնտեղ, ձորի խորքերում
Մի մենակ վառվող լույս է երևում.
Լո՜ւռ հանգստություն՝ դիշեր է մթին.
Դու ճանաչո՞ւմ ես նորա քնակչին...

Օ՜հ, չես ճանաչում՝ անծանոթ ես դու,
Բայց թե գիշերը և նրա հոգու
Կարողանայիր տեսնել և զգալ՝
Հանգստություն չէիր նայելին դու տալ։

* * *

Կուրծքս երբեմն ես է վայիս և հուզվում.
Ես մնում եմ անշարժ, ինչպես մի աքձան,
Միտքս թռչում դեպի երկինք և տուզվում
Տիեզերքի խորության մեջ անսահման...

Ամփոփում է հանկարծ երկիր բովանդակ,
Եվ սիրատենչ կուսի դուրծքին է փարում,
Խոնարհվելով թշնամ մինչև ոտնատակ՝
Աշխատողի տխուր ճակատը համբուրում...

Ես է թռչում և մոլորված գեղերում
Քաղցրահուշիկ խոր անցյալի լուռ ծոցում,
Եվ թրթռում արքեն լռած երգերում,
Սառն ու տխուր շիրիմները շոշափում...

Հետաքրքիր ցանկությունով թևառած
Ապագայի մթության մեջ խարխափում,

Եվ, մի սատափի տենչով լեցուն, սավառնած
Երջանկության սահմանները թևածում...

Թռչում է միտքս,
Կորչում է միտքս,
Եվ չեմ հասկանում,
Ինչ եմ ցանկանում։

* * *

Քրիստոս հարյավ հրաշափառ,
Հարյավ աշխարքն էլ նորից,
Դու էլ, սե՛ր իմ, հարություն առ
Մոռացության խավարից։

Դու, որ ազատ միտքս ու հոգիս
Կախարդեցիր այնպես վաղ,
Հայտնվեցար խոսքերով
Եվ հեռացար անհապաղ։

Արի՜ դարձյալ, որ առանց քեզ
Կյանքդ դատարկ է և անձուկ.
Քեզ կանչում եմ, որ նորոգես
Մեր վայելքը վաղանցուկ։

Հիշի՛ր, որ քեզ դեռ սիրում եմ,
Եվ այժմ, բենված պատրանքից,
Ձեռքս, ահա, տարածում եմ՝
Ինձ ազատիր այս կյանքից։

ՏԱՐՈՆԻ ԳԱՐՈՒՆԸ

(ՀԱՏՎԱԾ ՊՈԵՄԻՑ)

Գարունն եկավ և թևերը
Հովիտներում տարածեց,
Հայաստանի խիստ ձմեռը
Լերանց ծայրերն հալածեց։

Ժպտաց երկնից արեգն աչեղ
Եվ ձյունները հալվեցան,
Հով սարերի վերա տեղ-տեղ
Վրանները շարվեցան։

Մուսաբեկի գազան օրեն
Դարձյալ իշավ յուր ուրթում,
Նրա մարդիկն առած ջիդեն՝
Մարդաբոհ են պտըրտում։

Հանկարծ տիրեց ահ ու սարսափ
Խաղաղանիստ վայրերին,
Միմիայն երեն մնաց աղատ
Բարձրը լերանց ծայրերին։

Հարյավ կյանքով գարնանաբեր
Եվ հրճվում է ողջ Տարոն,
Բայց չէ լսվում աշխատասեր
Հայ գյուղացու հորոլոն։

Գարունն եկավ, սարերն ելավ
Ազատ քյուրդը հաղթական,
Գարունն եկավ, յուր ցուպն առավ
Հայ գյուղացին գաղթական։

ՏԱՐՈՆԻ ԱՌԱՎՈՏԸ

(ՀԱՏՎԱԾ ՊՈԵՄԻՑ)

Կարմիր արևն առավոտյան
Պայծառ ցոլաց դեպի Մուշ,
Մավալվեցավ ծովի նման
Մշու դաշտը քաղցրահուշ։

Նրա շուրջը խոշոր գեմքով
Կանգնած լեռներն ահագին,
Քնաթաթախ, լուռ աղոթքով,
Նայում են վեր՝ երկնքին։

Արածանին օձապտույտ
Ծաղկադալար ափերում,
Մշուշի մեջ, ազատ, անփույթ
Խաղ է անում, փրփրում։

Բայց հարսներ չեն հավերժական
Խայտաճամուկ շորերով,
Եվ չեն եկել, որ լողանան
Արածանու ջրերով։

Որ սիղավետ տափաստանում
Վազվզելով մանրաքայլ,
Երգ ասելով քաղ են անում
Մարգերի մեջ ցողափայլ։

Արեգակի շողերի հետ
Ահա շողաց և մի բան,—
«Ո՞վ զորավոր սուրբ Կարապետ,
Ո՞վ ավազանդ հայության...»։

Հանգի՛ստ կացիր, բարեպաշտ մարդ,
Այն խաչը չէ քո պաշտելի

Սուրբ Կարապետ չքնաղագույն
Հայոց վանքի գմբեթին։

Մայրն է քրդի սուր նիզակի,
Որ ճոճում է մշուշում.
Ահա և ձին ամբողջակի,—
Ի՞նչ արագ է նա քշում։

Տեսավ հեռվից քաջ ալիրը
Զվարթ խումբը քաղվոքի
Եվ ցոլացին սուր աչքերը
Ցանկությունից վայրենի.

Եվ սլացավ, ինչպես բազեն
Խոյանում է ամպերից,
Ա՜հ, խեղճ կանայք, էլ ո՞ւր վազեն,
Ի՞նչ է գալիս ձեռքներից...

Հասավ, ճանկեց... բռնեց թարքին
Օրիորդին ուշաթափ,
Ասպանդակեց, տաքացավ ձին,
Եվ հեռացավ սրընթաց։

1891

* * *

Խղճալի՜ մարդ. տոգորված
Իրան անհայտ և կորած
Օր ու կյանքի տենչանքով,
Հազար ու մի ուռնչանքով,
Հույսերով միշտ անկատար,
Շտապում է անդադար...
Ցուր գոյության ընթացքում
Դիակներով է ծածկում
Ասպարեզը յուր կոխած,
Եվ, արյունով շաղախած,
Պիղծ ձեռքերով ուզում է
Երջանկություն ընդունել.
Չի նկատում, որ իզուր
Եղած կյանքն էլ բնատուր
Առանց հաշվի վատնում է.
Իսկ երբ ուժը հատնում է,
Գերեզմանի եզերքին
Կանգ է առնում տխրագին,
Ափսոսանքով արտասվում,
Ետ է նայում և տխսում,
Որ աղջ կորցրել է անդարձ,
Ինքն էլ կորչում է հանկարծ,
Ինչպես շունչը յուր վերջին,
Ինչպես հյուսի մի ջընջին։

Ա՜խ, ԵՍ ԵՐԱՆԻ

Ա՜խ, ես երանի
Կայծա՛կ լինեի,
Որոտ-ճայթյունով
Մրոայլ ամպերից
Ժայթքեի ըմբոստ,
Ջարկեի ուժգին,
Պատռեի խավար
Կամարը երկնի,
Ցույց տայի մարդուն
Գաղտնիքը վերին,
Որ տեսներ՝ այնտեղ
Ի՞նչ լան կա ահեղ,
Կամ ո՛վ է նըստած
Եվ ո՛ւր է աստված..

ԵՐԳՉԻ ՎՐԵԺԸ

Մանըր հեծության ժամանակների
Եվ հընչումների անբդգա որդիք,
Կամեցա սիրել, սակայն դուք բարի
Սիրտըս ու հոգիս զայրույթով լցրիք։

Բայց դրա համար ես այնպես կերգեմ,
Որ այդ ձեր սիրտը ցավից պատռի,
Տրխուր ձայներով կբթունավորեմ
Հանգստությունը գալոց օրերի։

Հուսահատության թախծալի երգով
Լեզի կըդառնեմ ձեր կյանքը բոլոր,
Եվ դուք կարտասվեք լիացած աչքով,
Խնջույքների մեջ նստած գըլխակոր։

Եվ խիստ վրեժը զայրացած երգչի
Ձեզ կըհետևի մինչև գերեզման,
Ձեր սիրտը կայրի, հոգին կըտանջի...
Եվ կըտառապեք այսպես հավիտյան։

ԿԱՆՉ

Եթե կաս, աստված,
Եվ չես ստեղծել
Արտասուք ու լաց,
Հեծել, անիծել,
Թե չար նախանձի
Թույնով մահացու
Դու չես վարակել
Պարզությունն հոգու,
Թե դու չես ասել,
Որ կյանքը այսպես
Լինի անսպառ
Տանջանքի հանդես,—
Մեղմացրու մարդկանց
Կիրքն ամբարտավան,
Եթե աստված ես
Դու խաղաղության։

Տե՛ր արագահաս,
Աստված արդարի,
Ո՞ւր ես, եթե կաս.
Ես աղոթք արի,
Բայց սրածության
Ահարկու ձայնից
Խլացավ իսկույն
Իմ աղոթքն անբիծ.

Եվ ես, վայրենի
Կրքից կատաղած,
Ամբարիշտների
Քարերից փախած,
Քո անվան հուսով
Կռվեցի երկար,
Պարծեցա քեզնով,
Սակայն դու չեկար։
Էլ ինչո՞ւ եմ ես
Տառապում այսքան,
Եթե ասված ես
Դու անմեղության։—

Ինչո՞ւ տակավին
Ձեռ պատժում չարին,
Ո՞ւմից է պակասում,
Թե՞ չենք աղերսում։
Ինչո՞ւ չես գալիս,
Ո՞ւր ես, եթե կաս,
Թե դո՛ւ չես տալիս
Խեղճին պատուհաս.
Թե չարագործին
Դո՛ւ չես տվել սուր,
Որ խաղաղ հոգին
Սարսափի իզուր.
Թե՞ դու չգիտես,
Որ այստեղ, երկրում
Մարդը ժպտերես
Մարդ է գիշատում.
Դե արի՛ ու տե՛ս,
Զարկի՛ր ու շանթի՛ր,
Եթե ասված ես
Դու վրեժխնդիր։

ՊԱՏՎԵՐ

Վանա բանտի խորքից ելած հառաչանք,
Ճիչ, աղաղակ բռնաբարված աղջկա,
Թալանվածի լաց ու ակերս, աղաչանք
Թե որ լսեք, ասացեք թե՝ բան չկա։

Ամբողջ տարին արյուն-քրտինք աշխատող
Հայ գյուղացին թե որ լինի սովամեռ,
Կամ հուսահատ ասնից կորչի հողից հող,
Գրեցեք թե՝ ստատիկ ցուրտ էր այս ձմեռ։

Թե կրակված հայոց գյուղի բոցերում
Վա՛յ կանչելով մարդիկ այրվին կենդանի,
Հավատացրեք՝ խաղաղություն է տիրում,
Ժողովուրդը կյանքն օրհնում է սուլթանի։

Բան է, թե որ (չի պատահիլ այդ իսկի)
Նահատակված հային մի բան տանք, ասեն,
Դուք հասկացրեք, իբրև ծանոթ այդ աղդի,
Որ ժամը չէ, հայերը դեռ տրհաս են։

Հայոց լեզուն Մեսրոպն իրան հետ տարավ,
Իսկ կրոնը մի աղանդ է զենդական...
Սպասեցեք, մինչև որ մեր սրտացավ
Ենամքի տակ լուսավորվեն, առաջ գան։

ՆՎԵՐ ԱՆ. ԱԲ.-ԻՆ

Նորեկ գարունը լեռնական հային
Տեսավ առապար օտար աշխարքում,
Տեսավ մոլորված մտքով տխրադին,
Եվ այսպես խոսաց թախծալի սրտում.

«Հիշո՞ւմ ես, պանդուխտ, քո հայրենիքիդ
Թանձր անտառը, ծառերը հսկա,
Ջրնաղ լեռները և ծաղկափթիթ
Մարգագետինը, որ այստեղ չկա.

«Գոչող ջրվեժը, որ ողողելով
Իջնում է գլխից մռայլ ժայռերի,
Զվարթ հավքերը, որ ճռվողելով,
Մերթ խլացնում են աղմուկը ջրի.

«Երկրի վայրենի գեղեցկությունը
Եվ գեղածիծաղ երկինքը անհուն,
Նորա փառահեղ, պերճ հորիզոնը
Վաղ առավոտյան, իրիկվան պահուն...

Եվ այն բոլորը, որ թողել ես դու,
Որ այնքա՜ն փարթամ, այնքան սիրուն են...
Օ՜, մի՛ արտասվիր, խորտակված մարդու
Արտասուքները այստեղ գին չունեն։

«Նրանք այս օտար ու սառն աշխարքում
Կրկորչեն, ինչպես կաթիլը ջրի,
Եվ քո թախիծը, դարձյալ քո սրտում,
Մենակ քո անձը պիտի տոչորի»։

N. N.-ին։

Կյանքի հոսանքն յուր ընթացքում
Մեզ մոտեցրեց միմյանց,
Բայց ղպույի նա իմ հոգում
Հենց նույն ժամին մի կասկած։

Նախազգացումն ինձ չընթաբեց.
Հայտնվեցար դու շուտով,
Եվ մենք այժմ բաժանված ենք
Աստելության անդնդով։

Արդեն ծանրը ես տուժեցի
Քեզ կանչելով «բարեկամ»,
Էլ մի՛ ջանար, փարիսեցի,
Գրավել սերս մյուս անգամ։

Մի՛ բարձրացներ ինձանց բաժակ,
Ինձ մի՛ օրհնիր ժպտերես,
Էլ մի՛ դարձնիլ ոչ մի մաղթանք
Իմ հավատը դեպի քեզ։

Քո պատկերը իմ սրտի մեջ,
Նզովելի՜ հիշատակ,
Ամեն անգամ զարթեցնում է
Բուռն ցասումն և տանջանք։

Դուցե տեսնես ինձ հալածված,
Անցավակից և մենակ,
Թափառելիս անտուն, անհաց...
Սակայն, և այն ժամանակ,

Անհնազանդ արտասուքս
Կամ հառաչանք մի թեթև
Թեթև հանկարծ հայտնեն վիշտս
Ակամայից քո առջև,

Դու մի՛ կարծիր, թե քեզանից
Կարեկցություն եմ խնդրում,
Այլև իզուր մի՛ հարցնիր ինձ,
Թե ինչ ցավ կա իմ սրտում.

Քո խոսքերն իմ տխրությանը
Չեն լինելու մխիթար,
Եվ իմ սրտի գաղտնարանը
Միշտ փակված է քեզ համար։

Երկինք, դեռինք թող միանան,
Կանգնի վկա տիեզերք՝
Տվողը հոգուս կարողության,
Էլ չեմ սիրել քեզ երբեք։

ՍԱՔԵԼՈՒՄ

Մութը իջավ, գետինն առավ
Քոշաքարա սարերում,
Գագաթների տեսքը կորավ
Ու խոր թաղվեց խավարում։

Երկինքն ամպած, տխուր ու սև
Լաց է լինում միալար,
Հեռո՜ւ, հեռու լերան ետև
Խաղում փայլակն անդադար։

Ահա փայլեց և մոտիկից,
Լուսափայլեց սար ու ձոր.
Ոլորվելով սարի տակից
Գետը վազում է պրղտոր։

Մենակ, անքուն հովիվն ահա
Կանգնած իրեն արթաջում,
Արթուն աչքով հրսկում է նա,
Գողից երկյուղ է քաշում։

Փայլակն ահա փայլեց կրկին,
Նրա կապմիր լուսի տակ,

Թինից հեռու, երևացին
Երկու մարդու կերպարանք...

Ամպը գոռաց ու տրրաքեց,
Եվ անձրևը սաստկացավ,
Հովիվն «հե՛յ-հե՛յ...» աղաղակեց,
Շունը թևից վեր կացավ...

Հրացանները որոտացին,
Ոչխարն եղավ ցանուցիր,
Հավարն ընկավ, ողջ դաբթենցին...
Գիշերը մո՛ւթն, ակնակիր...

* * *

Երբ տեսնում եմ, մարդ տակավին
Պահանջածը չի ստանում,
Եվ հուսահատ գիրեղմանին,
Մոլությանն է ապաստանում.

Երբ աչք եմ ածում շուրջս ու հեռու
Եվ չեմ գտնում խաղաղ անկյուն,
Ուր հառաչը տանջվող գիրու
Չտարածվեր տխրահնչյուն.

Այնինչ խոսքը մարդո որդու
Արհամարհված ու մոռացված,
Եվ գլուխը աղատ մարդու
Մինչև գետին խոնարհած,

Բարկությունով լցված հոգով
Ես ուզում եմ, որ հենց իսկույն,

Տիրող կյանքը յուր վայելքով
Դառնար ժանտախտ ու մահաթույն...

Թող մեղավոր հարանց շիրմի
Վերա որդիքն անապական
Ապրեն հանգիստ, և թող լինի
Նրանց օրենքն ավետարանն։

ԿՈՐՈՒՍՏԻՑ ՀԵՏՈ

Խնդրի՛ր, սիրտ իմ կարոտակեզ,
Սիրտ իմ պանդուխտ, վշտաբեկ,
Խնդրիր նրան, որ այլևս քեզ
Սփոփելու չէ երբեք։

Կանչի՛ր, կանչի՛ր, դուցե կանչիս
Հնչյունները ըղձական,
Ինչպես միտքս, ինչպես հոգիս,
Թափանցեն այն գերեզման...

Յուր դրախտից գուցե լսե,
Հառաչանքս ողիկեզ,
Մտաբերե և ափսոսե,
Որ ես ապրում եմ այսպես...

ՀՐԱԺԵՇՏ

Այստեղ ահա կըբաժանվենք.
Մնաս բարյավ, սիրելի.
Այսպես ես չեմ ցավել երբեք
Դառնությունով սիրտս լի։

Այստեղ ահա քեզ թողնում եմ
Եվ չգիտեմ, ուր կերթաս.
Կասկածներից ես դողում եմ...
Թող պահպանե քեզ աստված։

Ա՛խ, առանց քեզ ախուր կյանքիս,
Օրը տարի կդառնա,
Բայց ուր լինիս, դարձյալ հոգիս
Շուրջդ պիտի թրթռա։

Մնաս բարյավ, բայց միշտ հիշիր,
Որ քեզ շատ եմ կարոտել.
Եվ տեսության ժամի համար
Զըմոռանաս աղոթել։

ԴԵՐԱՍԱՆ ԱԴԱՄՅԱՆԻ ՄԱՀԸ

«Մեռնել—բնել»
ՀԱՄԼԵՏ

Ոգևորողն ընկավ արդեն,
Եվ լռեցին նորա հետ
Սիրտ տանջանք, զայրույթ ու քեն՝
Լիր, Օթելլո և Համլետ։

Մեռավ՝ քնեց, հանգստացավ.
Որպես աղմուկ կենդանության,
Մեռելության միջից անցավ
Եվ չքացավ հավիտյան։

Էլ չի լսվիլ նորա ձայնը
Իմաստներով ոգեշունչ,
Հավերժացավ աստվածայինը,
Մնաց դիակն անմոռուն։

Եվ կը հանդչի լուռ և անշարժ
Դերասանը քարի տակ,
Բայց կպատմի քարն ապառաժ
Մրրկալից հիշատակ։

Եվ այցելուն պիտի կանգնե
Շիրմի առջև փառագոչ,
Սրտի խորքից բացագանչե
Ձայնով հպարտ ու դողդոջ՝
«Ոսկեբացդ հանգիստ,
Աննման արտիստ»։

ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ

Էյ աստղե՜ր, աստղե՜ր,
Երկնքի աչքեր,
Որ այդպես վառ-վառ
Ժըպտում եք պայծառ.
Ժըպտում էիք դուք,
Երբ ես դեռ մանուկ
Աշխույժ ու կայտառ,
Ձեզ նման պայծառ
Թրռվռում էի
Ու ցավ չունեի...
Ժըպտում եք այսօր,
Երբ թույլ ու անզոր,
Կորած հուլսերիս
Կըսկիծն եմ լալիս...
Կըժպտաք նաև
Շիրիմիս վերև...

* * *

«Երբ խոսում էիր, պատմում էիր ինձ,
Ես այն ժամանակ արբած քո շնչից
Եվ հափշտակված քեզ էի նայում.
Իմ հոգին մենակ այն էր դրավում,

Թե ինչպես էին շարժվում բորբոքված
Թերթիկները քո վարդագույն շրթանց.
Ինչպես աչքերդ արտահայտիչ
Սավերների մեջ, որպես ծով հանգիստ,

Մերթ լցվում էին խաղաղ հրապույրով,
Մերթ վառվում էին կենդանի հրով...
Այնպես էր թվում՝ երազում էի,
Եվ իրրև հեռվից ես լսում էի
Մի նոր մեղեդի անտ՜ուշ, անբարբառ...
Ա՜հ, նորից խոսիր, բայց երկա՜ր,
երկա՜ր...»։

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Քո աչքերում, որ փայլում է,
Հոգուս հուրն է մշտավառ,
Իսկ ժպիտդ, որ բացվում է,—
Սրտիս բերկրանքն անսպառ։

Երբ որ հանդչի հուրն աչքերիդ
Եվ շրթունքդդ կարկամի,
Կըմեռանի նաև գերիդ...
Եվ մեզ մի մահ կըտանի։

ՈՒՐՈՒ

Դո՞ւ ես, իմ սիրո՛ւն,
Այն շքնաղ ուրուն,
Որ գբրկում է ինձ
Գիշերը քընից։

Դո՞ւ ես գբրկաբաց
Հայտնըվում հանկարծ,
Ուզում ես գբրկել,
Ու հանկարծ, մեկ էլ
Խավարի միջում
Սահում ես, կորչում...

Դո՞ւ ես ծիծաղով
Կամ ծանոթ ձայնով
Մեր սիրած երգի՝
Իմ լուռ սենյակի
Մութից հեռանում
Գիշերվա մըթնում...

Ասա՛, իմ սիրո՛ւն,
Դո՞ւ ես այն ուրուն,
Որ գբրկում է ինձ
Գիշերը քընից...

* * *

Սիրելի՛ աչեր.
Որպես մութ գիշեր
Կառված աստղերով,
Անմեկին ահով
Ցնցում եք հոգիս.

Եվ, մերթ նայելիս,
Անդիմադրելի
Հրապուրանքով լի
Սիրտս եք թափանցում,
Բայց դուք չեք խոցում,
Այլ մեղմ, անվրդով,
Լուռ այրվող խանդով
Գրկում եք ամուր
Սիրտս անձնատուր
Եվ ճմլում այնքան
Քաղցրը, դյուրեկան...
Օ՜, ոչ թե պաշել,
Այլ ապշած պաշտել
Ձեզ միայն կուզեի,
Սիրատենչ սրտի
Ջերմ խոսակիցներ,—
Սևորա՛կ աչեր։

---

1 8 9 2

ՕՐ. Օ. Գ.-Ի ԱԼԲՈՄԻՑ

Ի՞նչ ես ուզում, որ թողնեի
Քո ալբոմում հիշատակ,
Սիրտ հրդե՞հ փոքրիկալի,
Ուրախությո՞ւն, թե տանջա՞նք...

Դու խնդրում ես, բայց որի՞ց,
Սիրտս լիքն է բոլորից։

* * *

Երբ գիշերային
Մութ հորիզոնից
Արև կամ լուսին
Երևում են ինձ,
Իմ տխուր հոգում
Ծագում է ոսկի
Ճառագայթը հուսո
Հարատև կյանքի,
Եվ մոռացում եմ.
Աշխարքը դեռ կա,
Դեռ օր կըտեսնեմ...
Եվ նշանն ահա։
Հրճվում է հոգիս,
Երգում եմ գվարթ,

Եվ ժպտում են ինձ,
Թե՛ մատված, թե՛ մարդ։

———

Աստծո տաճարում
Մոմը սեղանից
Խնկարույր ծխում,
Վառվում է հանգիստ.
Իմ մռայլ հոգում
Առաքինության,
Ճշմարիտ կյանքի
Հավիտենական
Լույսը ցոլանում,
Վառվում է նույնպես.
Սրտով մեղմանում,
Աղոթում եմ ես։

———

Կույսի աչքերին
Նայում եմ ագահ.
Թնդում է հոգիս,
Դողում ակամա,
Եվ կենդանության
Ախտերը եռուն,
Ախորժ այրվում են
Իմ երակներում.
Սիրտս անհանգիստ
Պայթում է կարծես,
Զգում եմ ցավ, վիշտ...
Եվ տանջվում եմ ես.
Բայց այն տանջանքը
Քաղցր է ինձ համար,
Քան երկար կյանքը,
Աղոթք փրկարար։

ՌՈՄԱՆՍ

Երկու աչքով լալիս էր նա.
Վճիտ կաթիլքն արտասրի
Թափվում էին կրծքի վրա
Սև աչքերից այն կուսի։

Նուրբ շրթունքը այրվում էին
Մատաղ սրտի կրակից,
Եվ համարձակ իմ առաջին
Լալով պատմում էր նա ինձ։

Ես ակնապիշ լսում էի
Այն պատկերով հիացած,
Եվ հիշում եմ միմիայն վերջի
Նրա խոսքերն, որ ասաց՝

«...Ա՜խ, չարտասվել ես չեմ կարող,
Ծանր է ապրել սիրազուրկ...»,
Եվ բարձրաձայն հեկեկալով
Դարձյալ թափեց արտասուք։

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՆԱՊԱՏՈՒՄ

Անապատի մեջ խավար ու տխուր,
Ցրված քարերից մի քարի վրա,
Գլխակոր նըստած, մտախոհ ու լուռ՝
Աշխարհի մասին մըտածում էր նա։

Նրա ճակատը մութն էր ավելի
Քան անապատը գիշերվա մթնում,
Մտածում էր նա՝ սեր—լույս ծավալի
Մարդկային կյանքի մութն անապատում։

Աչքի առաջև անց էին կենում
Սըրով, արյունով խուժադուժ ազգեր,
Անճար ու տրկար լաց էին լինում
Աղքատը, այրին ու որբը անտեր...

Եվ անապատում մի քարի վրա
Միայնակ նըստած մըտածում էր նա...

ԵՐԱԶ

Գիշերն երազում հայածում էին.
Փախչում էի չար թշնամիներից.
Նրանք խառնաձայն հետևում էին...
Դողում էին սիրտս ու ծնկներս ահից։

Իմ առջև տեսա ընդարձակ դղյակ
Բարձրը պատերով փոքրիկ ծմակում.
Ես այնտեղ մտա... անմարդ ու դատարկ
Այն ավերակը ինձ հույս էր ազդում...

Զգույշ կուչ եկած, շունչս պահելով
Ես դողում էի մահվան սարսափից,
Եվ, զարհուրելի աղաղակներով,
Չարագործները մոտիկ էին ինձ։

Հանկարծ դղյակի իմ շուրջ տարածված
Գերեզմաններից ձայներ դուրս եկան,
Իմ հոգուն ծանոթ ձայներ մոռացված...
Եվ ես զորություն առա գերբնական։

Անարդ թաքստից դուրս թռա իսկույն
Որպես վրդոված վագրը դարանից,
Եվ հարձակվեցի ընդդեմ թշնամուն,—
Ջենքերի բախում... զարթեցա քնից։

* * *

Մութն էր երկինքը. ոչ ոք չըտեսավ
Բնության գործը գիշերվա մթնում,
Միայն առավոտ, երբ որ լուսացավ,
Փայլում էր ցողը կանաչ դաշտերում։

Լուռ էր պոետը, թախիծը դեմքին,
Ի՞նչ էր մտածում՝ մարդիկ չիմացան.
Սակայն տողերում, երբ որ կարդացին,
Զգալում սրտի արցունքը տեսան։

ԱՌԱՎՈՏ

ՆՎԻՐ ՄԵՐ ՆՈՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ

Արտամաշ տաղտուկ ծանրը գիշերի...
Ահռելի սարսափ գիշատիչների...
Թառանչում էի և լալահառաչ
Միմիայն արևի լույս էի խնդրում,
Երբ որ շողացին մի քանի ճառագ
Մութ հորիզոնի մռայլ ամպերում։

Առավոտ ահա, բացականչեցի,
Եվ թեզաց հոգիս. թեթև շնչեցի...
Ցանկալի կյանքի նշան ակներև.
Պատուվեց ահա թանձր խավարը,
Օրը բացվում է և գլխիս վերև
Շաղապունել է երկնակամարը...

ԻՄ ՍԵՐԸ

Ես սիրել եմ վարդը տրժգույն
Սիրուց տանջված այտերի,
Մելամաղձոտ խաղաղություն
Զույգ սևորակ աչքերի։

Ես պահել եմ սրտիս խորքում
Մի լուռ գաղտնիք սիրային,
Եվ այն երբե՞ք, ոչ մի երգում
Հայտնելու չեմ աշխարհին։

Բայց և պահել անկարող եմ,
Օ՜, դժվար է համբերել,
Ցասել՝ ինչով բախտավոր եմ,
Ցասել՝ ինչպե՞ս եմ սիրել։

ՀԻՇԻ՞Ր...

Ցուր չար բախտի ճանկում բռնված
Նա քեզանից հեռու մնաց.
Սիրեց քեզ հեռվից
Զրկված քո բույրից,
Եվ տանջվեց թաքուն
Գիշերը անքուն։

Նրա սերը մնաց անհաս,
Բայց անունը չըմոռանաս,—
Պահի՛ր քո մտքում,
Հիշի՛ր աղոթքում.
Եվ քո սրտում նա
Թող անմահանա։

* * *

Ինձ մի՛ խընդրիր, ես չեմ երգի
Իմ տխրությունն ահագին,
Աղեկրտուր ներքա ձայնից
Կը խորտակվի քո հոգին...
Ոչ, քեզ համար այսպիսի երգ
Երգելու չեմ ես երբեք։

Ես երգեցի սարի վերա,
Ուր շորացան խոտ ու վարդ,
Անապատ է այնտեղ հիմա,
Սև՝, ամայի անապատ...
Հառաչանքից այրված սարում
Էլ ծաղիկ չի դալարում։

Բույր ու գեփյուռ ես կուզեի
Եվ արշալույս ոսկեվառ,
Որ մի պայծառ երգ հյուսեի
Ու երգեի քեզ համար...
Բայց իմ սիրտը բըռնած են դեռ
Հուր հառաչանք, սև դիշեր։

ՆՎԵՐ

Դու արտասվում ես, և քո ծանրավիշտ
Սրտից լճացած արցունքի տակից
Փայլում է միտքը բոցոտ աչքերիդ՝
Խելոք տրտմություն և քնքուշ թախիծ.

Եվ այդ առավել վեհ ու սիրուն է,
Թեև ամպամած դիշերվան գրկում
Փայլակն էլ շողում և ցոլանում է
Խաղաղ ջրերի խորին հատակում։

* * *

Ա՛խ, ո՞րքան փարթամ կյանքը ծաղկում է
Մատաղ կրծքի տակ.
Աչքերի մթնում փայլատակում է
Կենդանի կրակ.
Հեշտախտի տապից այրվող շրթունքը
Խոսում են անբան,
Եվ արբեցնում է անույշ բուրմունքը
Նորա թարմության.
Եվ այս բոլորը քեզ պատմում են ճոխ
Սիրտ գաղտնիքը,
Բայց, ափսո՛ս, չըկա նաև մի պատմող,
Թե այս աղջիկը
Տերն է պոետի
Հոգու և սրտի։

ԱՄԱՌԱՑԻՆ ԵՐԵԿՈ

Ամռան դիշերվա երկինքն աստղալի,
Յուր հսկայական վըրանի ներքո
Գրկած շարքերը բարձր լեռների,
Պատմում է երկրին մեծությունն աստծու։

Եվ բարիքներով լցված— լիացած
Երկիրն ունկնդիր երկնքի ճառին,
Քնելուց առաջ, խոնարհ, երկյուղած
Փառաբանում է մեծազոր տերին։

Եվ փառք են տալիս իմ շուրջը բոլոր,
Ամեն մի տերև, ամեն շընչավոր...

* * *

Լսո՞ւմ ես դու էլ, թե ինչ են խոսում
Մեր մասին ամբողջ ամառանոցում.
Աչքերի տակից, տեսնո՞ւմ ես, ինչպես
Ծածուկ նայելով հետևում են մեզ,
Մեր ամեն խոսքին ականջ են դնում
Եվ կասկածավոր աչքով են անում...
Մեղանից հետո էլ մեկը մյուսին
Կասեն՝ հիշո՞ւմ եք դուք այն երկուսին,
Ազգական չէին, ոչ քույր ու եղբայր,
Ման էին գալիս անընկեր, անմայր...
Եվ գիշերները այս ծառերի տակ
Երգ էին ասում ձայնով ներդաշնակ,
Եվ նրանց երգը պպզմունքով լի,
Որ կախարդանք էր գիշերին տալի,
Որ ծավալվում էր այնքան հեշտալուր,
Լցված սրտերի զեղմունք էր մաքուր։
Նկատո՞ւմ էիք, անտառի մթին
Սավերում երգը ընդհատում էին.
Այն լռությունը հասկանո՞ւմ էիք...
Մտաբերո՞ւմ եք դեմքը դեղնցիկ
Վայելչահասակ այն աղջկանը.
Երբ երիտասարդ օտարականը
Ագահ աչքերը վրան հառում էր,
Իսկույն շիկնելով նա խոնարհում էր
Սիրուն գլուխը և ձեռքին բռնած
Ծաղկափնջին էր նայում շփոթված...
Ուրախ հնչյո՞ւնը նորա ծիծաղի,
Որ տարածվում էր այնքան դյուրալի
Այս ամայացած, խուլ շրջակայքում
Եվ սուր ճիչերով սրտերը ծակում...
Հիշո՞ւմ եք արդյոք
Այն ախտաբորբոք,
Միշտ գվարթ զույգին.
Սիրահար էին...

ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իմ եղբայրները օտարության մեջ
Ինձ ասում էին. «Կարոտ ենք, երգի՛չ,
Մեր հայրենիքի երգերից ասա՛.
Քո երգից նորա
Մայրական զվարթ
Հողի ու ջրի
Եվ մեր հարազատ
Հայ ժողովրդի
Համն ու հոտն առնենք,
Որ մխիթարվենք...

Սիրտս լցվեցավ, եվ հառաչեցի...
Նրանք էլ ինձ հետ սաստիկ ցավալի
Աղաղակելով արտասվում էին.
Եվ հոսում էին
Արտասուքները
Տխուր աչքերից,
Եվ մեր ձայները
Մի ծանոթ կսկիծ
Ուժեղացնում էր
Եվ միացնում էր...

Եվ տխրության մեջ կամ թե խնջույքի,
Օտար աշխարհքում,
Մենք այսպես էինք մեր հայրենիքի
Երգերը երգում...

ԿԱՐՈՏ

Սրբոհիս Թագուհի,
Կարոտել եմ քեզ.
Ա՜խ, ի՜նչ կըլինի
Հանկարծ հայտնըվես
Եվ թեկուզ իսկույն
Դարձյալ չըքանաս,
Ինչպես գիշերվան
Կարճատև երազ։
Միայն թե տեսնեմ
Պատկերըդ մեկ էլ,
Միայն թե ասեմ՝
Ո՜նց եմ կարոտել։

* * *

Օ՛, ո՛ւռ կաց, ընկե՛ր. այդ ի՜նչ ես երգում.
Ինչո՞ւ ես խաղաղ հոգիս փոթորկում
Ուրախ օրերի սիրելի երգով
Եվ սիրտս վառում անցյալի կրակով...
Քո ձայների հետ վաղուց հեռացած
Մի ուրիշ պատկեր մտքումս երևաց.
Ահա, կենդանի կանգնեց առաջիս,
Եվ, ահա, դարձյալ կարոտ ականջիս
Հնչում է նորա ձայնը սրտալի,
Որպես երբեմն, երբ սիրված էի։
Եվ մտքումս ահա լուսավորվեցան
Հին ցնորքներս, անցքեր զանազան,
Գծերը հոգուս ծանոթ դեմքերի,
Տեսարանները հայրենի երկրի,
Այն որհնյալ երկրի, ուր մի ժամանակ

Վայելում էի լիության հրճվանք...
Բայց զրկված եմ ես այժմ բոլորից.
Դու հիշեցնում ես կորուստս նորից՝
Երջանկությունս մռայլ վիճակում
Եվ այդպես անգութ սիրտս կտրատում...
Ո՛հ, ներում եմ քեզ, չեմ հանդիմանում.
Զըգիտես, հոգիս, թե ի՜նչ ես անում.
Սակայն մի՛ երգիր այդ երգը ինձ մոտ,
Թո՛ղ, երգիր ուրիշ մի երգ անծանոթ։

ՕՐ. Մ. Վ.-ԻՆ

Երբոր բացվելիս է եղել արփին,
Սարերի լանջում կամ թե քարափին,
Դիմացը կանգնած ես շատ եմ դիտել.
Առաջին շողը դեռ ինձ է դիպել.
Եվ ես ծանոթ եմ այն հրաշալի
Գույն ու ձևերին արևագալի,
Որ այնքան շըքեղ մեզ ցույց են տալիս
Երկինք ու երկիր քնից արթնելիս։

Բայց քեզ տեսնելուց օրեր անցկացած,
Երբոր վերստին տեսա լուսարաց,
Հասկացա գարնանի կապերը բնության,—
Բացվում էր պայծառ առավոտն ամռան,
Եվ ցոլանալով շաղախվում էին
Վաղ արշալույսի շողերն առաջին
Ջինջ կապուտակին անամպ երկնքի,
Որ գիշերային քողը լուր դեմքի՝
Թեթև մշուշը դեռ արևմուտքում
Խպառ վայր ձգել չէր համարձակվում,
Մինչ առավոտյան լույսի երևումն
Ժապավենները խայտալով սիրուն

Երկնային ծովի կապուտակ ծոցում
Հեռո՞ւս և հեռու էին տարածվում.
Եվ մի կլանք, ասես, նորը ու սիրազեղ
Ծանոթ ակնարկով խաղում էր այնտեղ.
Ծանոթ էր թվում կապույտն երկնքի
Եվ ծիծաղուն շողը անտես արևի...

Եվ ես հիշեցի սրտի թնդյունով,
Աչքերդ կապույտ, նույնպիսի գույնով,
Նրանց ժպիտը զվարթ, կուսական,
Որ արշալույսին նման է այնքան.
Տեսա՝ երկուսն էլ մի բան են պատմում,
Երկուսն էլ տեսա՝ արև են բերում,
Մեկը՝ լույսի,
Մյուսը՝ հույսի։

ՏԵՆՉ

Մեկն էլ այն է հարատև անթիվ տենչերի,
Որ իմ աչքով տեսանեմ հարյուր լրջերի,—
Ալեկոծվող օվկիանոսի մի ստվերապ.
Ահեղագոչ ալիքները լեռնաշատ
Բարձրանալին իրար վերա անդադար
Եվ մրրիկը նրանց վրա սաստկանար...
Եվ դիտեի ժայռի գլխին ես կանգնած,
Երբ հողմահոսք հոգեկները մոլեգնած
Մինչև երկինք փրփուր ու շուր ցայտեին
Եվ, ոռնալով, բարձր ափերին զարկեին,
Եվ, խորասափված, արհամարհանք հեծծանքով
Հեռանային խաղաղացած հարձանքով,
Եվ, խլածայն մռնչալով, նորից նոր
Բարձրանային աղշամղջում հեռավոր.
Նոր հարձակմանք, անհաշտ կռիվ զայրացած...
Եվ նայեի ժայռի գլխին ես կանգնած։

ԿԱՍԿԱԾ

Ո՞վ ես, չար ոգի, դո՛ւ, որ իմ սրտում
Այսպիսի անթիվ խոսքեր ես փարդում.
— «Հեղնալի՞», նույնիսկ այն շրթունքները,
Որ համբուրում ես կախարդված մաքով,
Գոգանի ծաղրում են քո անբիծ սերը,
Որ փայփայում ես այդքան խնամքով...»։

ՄՈՌԱՑՎԱԾ ԱԼԻ

Սիրում էի երբեմն քեզ...
Ցլժրվ ես տակավին
Իմ սրտումը դու ապրում ես,
Քաղցր ոչ ուժով քո նախկին։

Առաջ հընչում էիր մաքուր,
Որպես աղոթք իմ հոգում,
Որպես սիրո նախանձ և հուր՝
Տաք արյունս բորբոքում։

Այժմ՝ որպես վաղուց մեռած
Բարեկամի հիշատակ,
Կամ մանկության օրով սիրած
Մի հին երգի եղանակ...

Քո անունդ այժմ տալիս,
Էլ «հոգյակ» չեմ ես ասում,
Չեմ աշխատում քուն մտնելիս,
Որ քեզ տեսնեմ երազում։

Բայց զարմանքով երբեմնապես,
Մտածում եմ ակամա,
Ինչո՞ւ էլ դու սիրելի չես,
Ինչո՞ւ ես քեզ մոռացա....

ՎԱՏ ՕՐԵՐ

Ցուրտ է, իմ ընկե՛ր, ու հողմ ահագին.
Սև թևերը լայն փռած մեր գլխին
Որոտում է խուլ երկինքը խավար.

Դեսուդեն ցրված ամպերն հողմավար
Փընտրում են, ասես, մի տեղ, օթևան,
Մոլորված մարդու մրտքերի նման։

Այս խավար, ճրնշող, ցուրտ մթնոլորտում
Հանգիստ չեն, ընկե՛ր, նաև իմ հոգում
Իմ վեհ ցընորքներն, իմ տենչերն անենդ.
Նույնպես հալածված՝ նրրանք էլ երբեք
Չեն կարողանում գտնել ապաստան,
Երկրնքի ցրված ամպերի նման։

1893

ՀԱՑ ՈՒԽՏԱՎՈՐԻՆ

Գնա՛ս բարով, ա՛յ ուխտավոր,
Երանի քեզ, հայ ուխտավոր,
Որ կարոտով ու սիրառատ
Ուխտ ես գնում դեպ Այրարատ։
Ջեփյուռներով, ծաղկանց բույրով,
Ինչպես ծնող սիրագորով
Քեզ կողջունեն զմրուխտ հագած
Գեղամ սարերն ու Արագած,
Եվ հարազատ աչքի նման
Քեզ կը ժպտա վճիտ Սևան,
Որ լեռների շուքերի հետ
Խաղ է անում, խայտում վեռ-վեռ,
Փայլփլում է ծփանքներով,
Հորինում է լույսերի ծով,
Եվ մերթ վշտով ու տխրությամբ
Սևանում է, ինչպես մութ ամպ...

Հապա էն սա՞ռն, էն սար հսկան,
Էն սարերի սարն ու արքան,
Լազուր երկնի ծոցը մրտած,
Ճերմակ գլուխն ամպեր փաթթած,
Ահա կանգնեց ծանր ու տրտում
Քու առաջին ու քու սրտում...
Է՜, նա արդեն քանի սև դար
Պերճ գագաթովն իր ձյունափառ

Շողշողում է, փայլատակում,
Եվ ուխտավոր հայի հոգում
Հպարտության ծնում թռիռներ
Եվ սիրելի երազ՝ թե դեռ
Էն երկնահաս Մասյաց կատար,
Ուր հին տապանն առավ դադար,
Դադար կառնեն փառքերն մեր հին,
Որ նորափայլ իջնեն կըրկին...

* * *

Քրիստոս հարյավ... Ա՜խ, և այս հոծ
Մութ-մըռայլից, երանի,
Հառներ հոգիս կըրակ ու լոց,
Ջըվարթ հոգիս երբեմնի։

Եվ, երանի, նույն սաստկությամբ
Սիրո կիրքը ևս հառներ,
Երկինքս էլի դառնար անամպ,
Միտքըս ուժգին սավառներ...

— Լո՛ւռ կաց, անմիտ, ի՞նչ ես լալիս
Վրհատ ձայնով ծերության,
Դեռ քո ճամփին լույս է տալիս
Ճառագայթը վաղորդյան։

Եվ մըռայլից, որ կա իջած
Մանր ու տարտամ քո սըրտին,
Պիտի հառնեն տանջված, խաչված
Ցընորքները քո նախկին։

Ն. ԲԱԼԲԱԹԱՇՎԻԼԻՈՒ ԴԱՄԲԱՆԻ ՎԵՐԱ

Մխիթարությո՜ւն, սգավոր Վրաստան,
Ինչո՞ւ է տխրել դեմքըդ այրական.
Շարժված աճյունը հանգած պոետի
Շարժե՞ց վերստին ցավը քո սրտի,
Թե՞ նորա մըթին գերեզմանը խոր
Որը հոգուդ համար շատ է ահավոր...

Կը թաղես, այո՛, դարձյալ քո երգչին,
Բայց նորա վառած զգացմունքներին
Չըկա գերեզման և ոչ էլ վախճան.
Նրանք կենդանի կըմնան հավիտյան,
Եվ դու նրանցով պիտի մի այլ օր
Թաղես քեզ մաշող ցավերը բոլոր։

Եվ քե՞զ, անցավոր շիրիմից շիրիմ,
Հեգ ժողովրդի երգիչ մտերիմ,
Քե՞զ, որ տանջվել ես անհանգիստ սրտով,
Հավիտենական հանգիստ անվրդով։

ԱԳԲԵՑՈՒԸ

Սարի լանջին, ժայռի տակ,
Ջուր էր բըխում սառնորակ
Ու ցրվելով խոտերում
Իդուր ճահիճ էր դառնում։

Նրա առաջ մի խոր գուշ
Շինեց հովիվն ու անուշ
Խաղ ասելով նա տարավ
Ջրեց հոտը իր ծարավ։

Պախրեն անցավ էն սարից՝
Շոդից հանած չոր լեզուն.
Կուշտ-կուշտ խմեց աղբյուրից,
Ապա նայեց առուծուն։

Անցվորն եկավ տոթակեզ,
Սառն աղբյուրին որ հասավ,
Գըլխարկն առավ ու շոքեց՝
Խմեց, սիրտը հովացավ։

Ու տվավ իր օրհնանքը
Անցվոր մարդը էն բարի.
«Քո շինողի օր-կյանքը
Չրի նման երկարի՝...»։

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՒՋԵՎ

Ելած՝ օվկիանի անզուսպ ալիքներ,
Ծանրը հորձանքով զարկելով դեպ վեր,
Լեռնանում էին, գոռալով ահեղ,
Եվ մըրրիկն ուժգին շընչում էր այնտեղ
Անեզր ու անվերջ
Տարածության մեջ։
«Կանգնեցե՛ք», գոչեց վրրձիկը ձեռքին
Կախարդ ծերունին հուզված տարերքին.
Եվ լուռ, հրնազանգ հանճարի ձայնին,
Մութ ալիքները, փոթորկի ժամին,
Կրտսվի վրրա
Կանգնած են ահա։

ԽՐՃԻԹՈՒՄ

Մանուկները գոռում-գոչում,
Լալիս էին աղեկեզ.
—Նանի՛, նանի՛, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ։

Հիվանդ նանը տեղի տակին
Ծանր տընքաց տրխրալի.
—Մենք հաց չունենք, ես ձեզ մատաղ,
Ապին գնաց հաց բերի։

—Չէ՛, խաբում ես, սուտլիկ նանի,
Դու ասացիր՝ քարափին
Երբոր զարկի շողքն արևի,
Հաց կըբերի մեր ապին։

Արևն եկավ անց էլ կացավ,
Մենք սոված ենք դեռ էսպես.
Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նանի, հաց տուր մեզ։

—Հաց չի գտել ձեր ապին դեռ,
Տուն չի գալիս սևերես.
Քիչ էլ կացեք, իմ բալիկներ,
Հիմի այնտեղ կերթամ ես...

Մի մեծ ապի կա երկնքում,
Նա շատ ունի այնտեղ հաց...
Նա ձեզ այնքան շատ է սիրո՞ւմ...
Նա չի թողնիլ ձեզ սոված...

Կերթամ այնտեղ, նրան կասեմ,
Որ սոված եք, իմ բալեք,
Ձեզ համար շա՞տ-շա՞տ հաց կուզեմ,
Որ դուք ուտեք, լաց չըլեք...

Ասավ, սեղմեց սոսկալլոկ
Զավակներին իր լանջին,
Ու շրթունքի վրա դալոկ
Սառավ համբույրը վերջին։

Կրոնքերն էլ ետ շրթացվեցան
Բազմաշարշար մայրիկի.
Աչքը փակեց ու հավիտյան
Գրնաց, որ հաց ուղարկի։

Մանուկները գոռում, գոչում,
Լալիս էին աղեկեզ.
—Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ։

ՊՈԵՏԻՆ

Մեր ուշքն ինչո՞ւ ես կախարդում
Սիրո անհոգ երգերով,
Մեր աչքն ինչո՞ւ ես դու խաբում
Ցնորական պատկերով։

Այս օրերում հարկավոր չեն
Զրոսանքներ հոգեկան,
Նայի՛ր կյանքին, մեզ կանչում են
Մեր եղբայրներն օգնության։

Իսկ դու, անփույթ մեր տանջանքին,
Հարվածներին մեր բախտի,
Արբեցնում ես արթուն հոգին
Քաղցրը թույնով հեշտախտի։

Քո սիրային երգերի հետ,
Նայի՛ր, սուզ ենք մենք անում.

Բավակա՛ն է, կանգնի՛ր, պոետ,
Կյանքի կովի սահմանում։

Եվ տարաբեր աշխարհ անպենք
Ընդդեմ չարին մահաբեր,
Մենք էլ այնժամ քեզ հետ կասենք՝
«Մնաք բարյավ, կույս և սեր»։

ՆԱ. ՆՍՏԱԾ ԷՐ...

Նա նստած էր դաշնամուրի առաջին,
Որպես երգի մի վշտացած դիցուհի,
Եվ, նվագի հնչյուններով տրխրագին,
Այնքան ազդու պատմում էր վիշտն յուր սրտի,
Որ թվում էր այն հիացման ժամին ինձ,
Թե արցունքն էր հոսում տրխուր աչքերից...

---

1 8 9 4

ՆՈՐ ՏԱՐԻ

Դու էլ արի,
Նորեկ տարի,
Գլխիս վերից
Անցիր—գընա,
Ինչպես մի օր
Թեթևասահ,
Որ արևի
Վառ ժրպիտով,
Հոգմ ու շանթի
Սառն աղմուկով
Անց է կենում
Ծաղկի վրից.
Իսկ նա հովտում,
Իր հուսալից
Աչքը վերև,
Փոքրիկ, չընչին,
Ցնծում է կամ
Մոտ է վերջին։—
Ես էլ էնպես,
Նորեկ տարի,—
Մի խոտ, մի բույս,
Ո՛չ ավելի։

Մի երկիր է
Տվել մեզ կյանք,
Մի երկինք է

Պահել իր տակ,
Եվ գեղեցիկ,
Փարթամ, հրպարտ
Մի խոտ, ծաղիկ,
Կա թե մի մարդ...
Մենակ իրար
Չենք հասկանում,
Բայց ապրում ենք
Մի սահմանում,
Մի ճամփով էլ
Պիտի գընանք,
Կրրկին ձուլվենք
Մի հող դառնանք,
Անհետ, անտես
Կորչենք, ինչպես
Չոկ հընչյուններ
Մի մեծ երգի,—
Լոկ հյուսվեներ
Տիեզերքի։

ԵՍ ԱՍԱՑԻ...

Ես ասացի. դու ծաղկում ես,
Որպես շրքեղ մի գարուն,
Եվ բոլո՛ր, ինչ որ ունես,
Կյանք է թովիչ ու սիրուն...
Միայն, ափսո՛ս, սիրտդ է մեռած,
Մենակ նա է չոր քեզնում...
Նա հառաչեց և ինձ ասաց.
—Մենակ սիրտս չես տեսնում։

ՄԻ ՀԱՐՈՒԶԱՆՔ

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ «ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԵՐԸ» ՆԿԱՐԻ ԱՌԹԵՎ

Ես տեսա հսկա
Տաղանդի մի գործ՝
Անհաշտ Պոնտոսի
Ափերն ալեկոծ.
Տեսա ծովափնյա
Ժայռերը մեծ-մեծ,
Տեսա, հիացա,
Եվ սիրտս բացվեց.
Եվ նրա միջից,
Որպես վանդակից
Արծիվը գերի,
Մի կարոտալի
Հառաչանք թռավ,
Ցուխ դարձավ, կորավ
Դեպի ժայռերը
Իմ հայրենիքի,
Դեպի՝ վայրերը
Իմ անցած կյանքի։

* * *

Եթե մի օր, ամո՛ւշ ընկեր,
Գառ ոյցելու իմ շիրմին,
Ու նորաբույս վառ ծաղիկներ
Տեսնես փրոված չորս կողմին,

Դու չը կարծես թե հասարակ
Ծաղիկներ են ոտքիդ տակ,

Կամ թե գարունն է այն բերել,
Իմ նոր տունը զարդարել։

Նրանք չերգած իմ երգերն են,
Որ սրտումս ես տարա,
Նրանք սիրո այն խոսքերն են,
Որ դեռ չասած ես մեռա։

•

Նրանք իմ չերմ համբույրներն են,
Այն աշխարքից ուղարկված,
Որի ճամփեն քո առջև
Գերեզմանով է փակված...

ԺՊՏՈՒՆ ԱՂՔԵՐ

Դու մի՛ հավատա ժրպտուն աչքերին.
Շատ անգամ նրանք ծաղիկներ են վառ,
Բուսած կոլոստյան անգունդի ծայրին,
Միամիտ մարդկանց քարշելու համար։

Ահա պոետն էլ պատրանքով հարբած՝
Գերվեց մի անգամ ժրպտուն աչքերի,
Ու որքա՜ն տանջվեց, տառապեց խաբված,
Ու որքա՜ն սրտում գանգատներ ունի...

Դու շատ մի՛ խաբվիր ժրպտուն աչքերից.
Շատ անգամ նրանք ծաղիկներ են վառ,
Ծլում են սրտի ավերակներից,
Տրխուր հատակը ծածկելու համար։

Ահա պոետն էլ՝ տառապած մի մարդ,
Որ սրտում աթքան գանգատներ ունի,
Բայց հաճախ այնպես ժրպտում է զրվարթ,
Ասես թե քեզնից բախտավոր լինի։

ԵՐԿՈՒ ՍԵՎ ԱՄՊ

Վաղուց թողած բարձր ու կանաչ
Գահը իրենց հանգստության,
Երկու սև ամպ, հողմի առաջ
Գընում էին հալածական։

Հողմը սակայն չար հոսանքով
Բաժնել, տեսել չէր կարենում,
Ինչքան էլ որքանց լայն երկնքով
Դեսուդեն էր քշում, տանում։

Ու անդադար գընում էին
Քշված հողմի կատաղությամբ,
Իրար կըպած ու միասին,
Երկու սև ամպ, երկու սև ամպ...

1895

ԳԻՇԵՐ

Եկավ գիշերն՝ սիրուհանքը
Անմխիթար սըրտերի,
Եվ տարերի կերպարանքը
Փոխվեց անեզր ստվերի։

Հաղթահարված խորին քնից՝
Պապանձվեցին ամեն տեղ,
Մութն ու խավար հորիզոնից
Ծագեց լուսին փառահեղ։

Եվ երկնքում բարձր կախված
Սիփան սարի կատարին,
Մունջ նայում էր նա դեպի ցած՝
Տխուր նիրհող աշխարհին։

Նըրա փափուկ, արծաթահեր
Հով շողերը իրանց հետ
Թափում էին հանգստաբեր
Նիրհ ու թմրիր քաղցրավետ։

Սակայն գիշերն այն հեգ երկրում
Հանգստության փոխանակ
Ահ ու սարսափ է միշտ բերում,
Գաղտնի հարված ու տանջանք։

Գիշերային լռության մեջ
Մանըր տնքոց է լսվում,
Եվ աղաչանք, և լաց անվերջ,
Եվ... ողջ լեզվով չի ասվում։

Էն ճամփորդն է, ճամփի տակին
Զարշարվում է կիսամահ,
Էն ծնողն է իր զավակին
Ողբում, կանչում... և չկա...

Կույս աղջիկն է լուկանքի մեջ,
Ալևորը խոր բանտում...
Էն կորիճն է հայրենատենչ
Խիզախ հոգին ավանդում...

Եվ կյանքն այնտեղ ծանր ու խավար
Մի գիշեր է ահավոր...
Եվ ո՛վ գիտե, որի՞ համար
Կըլուսանա բարի օր։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Քրիստոս հարյավ... երկինք գնաց,
Երկրում թողեց պատվերներ.
Բայց պատվերը գրքում մնաց
Եվ աշխարհքը հնծում է դեռ։

Դեռ կուրացած ժանգ արծաթից
Մատնություններ են անում,
Եվ փախչելով արդար դատից
Միշտ ձեռքերն են լվանում։

Ապտակում են դեռ ծաղրելով
Անմեղության ճակատին,
Եվ հարության օր տոնելով
Խաչ են հանում ճշմարտին։

Ո՞հ, կարճամիտ անզգամներ,
Դրանք այսօր կըմեռնեն,
Բայց վաղը ձեր փոշու վրա
Նոր փառքերով կըհառնեն։

1896

ԲԱՑԸՂՆԻՆ

Ի՞նչ մեծ հանճարով, ո՛վ հսկա պոետ,
Ազատությունը կաշկանդող շըղթան
Հաշտեցրել ես դու ազատ մարդու հետ
Եվ քաղցրացրել ես վիշտը գերության։

Ի՞նչպես դարձրել ես բանտը հայրենիք
Եվ ողջ աշխարհը լայնարձակ մի բանտ...

Ահա տանջանքի աշխարքում բընիկ
Մեծարում են քեզ որդիքը հիվանդ,
Եվ արտասվում են քո անմահ երգում,
Թե ոնց է մարդու հոգին խորտակվում։

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Կըռունկն երկընքում ճամփա կըհանի,
Կը՞ռ, կը՞ռ, ձեն կուտա էն խավար ամպում.
Վարիը մոլորել՝ չիտե ինչ անի
Անգութ աշխարհքում, անծանոթ ճամփում։
Ա՜խ, էս սև ճամփեն, էս դըժար ճամփեն
Արդյոք ո՞ւր կերթա, արդյոք շա՞տ մընաց,
Ո՞րտեղ կըհատնի էս օրը արդյոք,
Ո՞րտեղ կըհանգչեն ոտներըս հոգնած։
Է՜յ, բարով գնաս, սիրելի թըռչուն.

Գարուն կըբացվի, ետ կուգաս կըրկին,
Զագով-ընկերով կուգաս դեպի տուն՝
Քո բունը հերվան, չինարու գլխին...
Ա՜խ, ես բընավեր, ընկած սարեսար,
Ու քաշ եմ գալի, ու քաշ եմ գալի,
Անքուն չրի պես դիպչում քարեքար,
Անշունչ քարին էլ երնեկ եմ տալի։
Ամեն քար, ասավա՜ծ, իր տեղն է անժամ,
Հենց ես եմ մենակ տեղից գլորվել.
Ամեն հավք, անդո՜ւթ, իր բունը ունի,
Հենց ես եմ զարիր ճամփում մոլորվել...
Ա՜խ, էս-սև ճամփեն, էս դըժար ճամփեն
Արդյոք ո՞ւր կերթա, արդյոք շա՞տ մընաց.
Ո՞րտեղ կը հասնի էս օրը արդյոք,
Ո՞րտեղ կը հանգչեն ոտներըս հոգնած...

1897

ԱՆԴԱՐՁ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

Իմ անցած կյանքն ու հին տարին,
Երկու անզոր ծերի նըման,
Զըրուցց տալով գընում էին
Դեպի աշխարհն հավերժական։

Մինն ասում էր.— Ես ունեի
Թարմ ու բուրյան ծաղիկներ,
Ու բոլորը մարդկանց տըվի
Գտրնան գըրկովն առատաբեր։

Մյուսն ասում էր.— Ես ունեի
Շատ ըզգացմունք ու կորով,
Ու ողջն ես էլ նըրանց տըվի
Սիրանըվեր երգերով։

Մինն ասում էր.— Ես թողեցի
Զըմե՛ռ ու սև՛ էն հովտում։
Մյուսն ասում էր.— Ես թախծալի
Մի սիրտ բեկված ու տըրտում։

Մինը ասավ.— Թալց կը ծաղկի
Էն հովիտը նորից նոր։
Մյուսը էստեղ ոչինչ չասավ,
Ու գնում էր գլխակոր...

Էսպես իմ կյանքն ու հին տարին,
Երկու անզոր ծերի նման,
Ջրաույց տալով գընում էին
Դեպի աշխարհն հավերժական։

ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐՆԵՐ

Տանջվում եմ անքուն գիշերն անկողնում,
Տանջվում հուսահատ, վաստակած, տրկար,
Ու մտքերն հոգիս հանգիստ չեն թողնում,
Ու գիշերը մո՞ւթ, գիշերը երկար։

Ա՞խ, մի ժամանակ, և դեռ նոր էր այն,
Մայրական գիրկ էր աշխարքն ինձ համար,
Հրճվանքը սրբտիս չէր թը վում ունայն,
Ոչ գիշերն այսպես տաղտկալի, երկար։

Էհ, անցա՞վ, գընա՞ց. և՛ ցընորք, և՛ սեր,
Ե՛վ ուժ, և՛ եռանդ, կորավ՝ ինչ որ կար,
Եկան սև օրեր ու ծանրը հոգսեր
Ու դարձրին այսպես գիշերը երկար։

Տանջվում եմ անքուն այժմ անկողնում,
Եվ հուսակտուր, հոգնած, ուժասպառ
Նայում եմ, նայո՞ւմ, դեռ չի լուսանում.
Ա՞խ, այս գիշերներն ինչքա՞ն են երկար։

1898

ՏԽՈՒՐ ԳԻՇԵՐ

Տխո՞ւր գիշեր, տրտո՞ւմ գիշեր.
Վիշտս ու ես ենք արթուն մենակ
Եվ ուզում ենք մի լավ հիշել,
Թե ո՛րտեղից իրար գըտանք։

—Ասա՛, իմ վի՛շտ, իմ սև թախիծ,
Ա՛յ անբաժան կյանքիս ընկեր,
Դու ո՞ր օրից կամ ո՞րտեղից,
Ի՞նչ դեպքով ես ինձ հետ ընկել...

Ու գալի՞ս են սև-սև հուշեր...
Տրխո՞ւր գիշեր, տրտո՞ւմ գիշեր...

ԳԱՐՆԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Մի՞տդ է գալիս մեր քեֆն, ընկեր,
Այն ճյուղալի ծառի տակին,
Երբ գնացինք դիմավորել
Նոր գարունքին ու նոր կյանքին։

Այն լավ օրից տարիք անցած,
Ես այն ճամփով անցնում էի,
Եվ ականջիս դիպավ հանկարծ
Մեր աղմուկը ուրախալի...

Պարզ ու որոշ ես լքսեցի
Այն կենդանի ձայներն, ընկեր.
Շըրրխկոցը բաժակների,
Աշխույժ ծիծաղ, ճառ ու երգեր...

Ու սրտաթունդ վեր նայեցի.
Բայց կարոտած աչքիս առաջ
Դաշտում դալար ու ոսկայի
Մեր հին ծանոթ ծառն էր կանաչ։

Լուռ ու դատարկ մարգի վրա
Մենակ կանգնած մընում էր նա,
Նա էլ, կարծես, բան էր հիշում
Եվ տխրության ձայնով շըրշում...

Մի՞տգ է գալիս մեր քեֆն, ընկեր,
Այն ճյուղալի ծառի տակին...
Բայց, ո՞վ դիտի, ո՞ւր ես ընկել,
Եվ կըտեսնե՞նք միմյանց կըրկին։

ԱՅՆ ՕՐԻՑ

Այն օրից, ինչ որ նրան թաղեցին,
Այլևս խընդալ ես չեմ կարենում.
Բերկրանք, խնդություն իմ մեջ պաղեցին,
Ծիծաղս էլ երբեք սրտանց չի լինում,
Այն օրից, ինչ որ նըրան թաղեցին։

Միտքս թռչում է միշտ այն կողմերը,
Ուր որ նա իջավ դալուկը դեմքին,
Դեպի հանգստյան այն սև բլուրը,
Դեպի հանգերձյալ աշխարհն անմեկին,
Միտքս թռչում է միշտ այն կողմերը։

ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՍՆԵՐԻՑ

Տե՞ր, մինչև ե՞րբ մեր աչքերը քեզ մընան.
Մեր գույժն հասավ հեռո՞ւ-հեռու աղգերին,
Աշխարհ լքցվեց մեր աղաղակ, մեր կական,
Ու չի անցել մեր տանջանքը տակավին։

Ինչո՞ւ, աստվա՛ծ, որտե՞ղն արդյոք հայրական
Գութը դ կօրհնեն կոտորածի այս ձորում,
Թե՞ տարագիր պանդուխտները կրպատմեն
Ողորմությունդ օտար-օտար ափերում։

Մի՞թե, աստվա՛ծ, դեռ բավական չըտեսար
Այսքան ավեր, վիշտ ու ցավեր, հեծություն,
Մի՞թե, աստվա՛ծ, հաճելի չեն քեզ համար
Աղոթք ու սեր, կյանք ու տաղեր ըվարթուն։

Բ

Աստվա՛ծ, ինչպես ծուխ օրերըս անցան,
Ոսկերքըս, ինչպես խըռիվ, չօրացան,
Սիրտըս ցամաքեց, ընկա խոտի պես,
Ճամփես մոռացա ահագին վըշտեռ։

Հայրը նախատինքն եղավ օտարի,
Հանդիստըս ճամփում հալածանքների,
Լքսեցի ցերեկն աղաղակ ու բոթ,
Գիշերը լացի մինչև առավոտ։

Տըքնեցի, ինչպես բու ավերակում,
Ինչպես միայնակ ճնճղուկ՝ տանիքում...
Աստվա՛ծ, տանջանքից ուժերըս հատան,
Մի՞թե չըհասավ ժամը փըրկության։

1899

ՄԵՐ ԱԶԳԱՑԻՆ ՎԻՊԱՍԱՆ ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆՑԻՆ՝ ԻՐ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻՆ

Այնտեղ ծնված ու մեծացած,
Ուր դարեվոր վըշտերն հայի
Մանր ու մռայլ կան լեռնացած,
Ինչպես Մասիսն այն վիթխարի։

Դու ընտրեցիր քեզ ուսուցիչ
Ազգի վերքերն ողբերգողին,
Քառասուն տարի ձեռքիդ գըրիչ,
Անցար, բռնած նըրա ուղին։

Հայ գյուղացին ցավեր ուներ
Խեղդված իրեն խուլ խրճիթում,
Այն ցավերին լեզու տըվիր
Ու խոսեցրիր ամեն սըրտում։

Այդ սրբազան գործի համար,
Այժմ ահա, ծեր օրերիդ,
Մենք գալիս ենք երախտապարտ
Պըսակ դընել ալիքներիդ։

Եվ թող ապրի անմահ փառքով,
Ով որ ցավը թույլ թըշվառի
Կարեկցության հզոր խոսքով
Դարձնում է ցավն իր աշխարհի։

1900

ԻՆՉՈՒ ԱՅԴՊԵՍ

— Ինչո՞ւ այդպես ինձ մոռացար,
Ասավ աղջիկն ինձ մի օր։
— Ինչո՞ւ այդպես մեզ մոռացար,
Գանգատվեցին սար ու ձոր։

— Ո՜հ, մի՛ հարցնեք, հին ընկերնե՛ր,
Ինչու էլ չեմ երգում ձեզ.
Շատ եմ փոխվել այն օրից վեր,
Այնպես մի ցա՜վ ունեմ ես...

— Ի՞նչ է ցավը դ, մի ճար անենք,
Ասավ աղջիկն անձնըվեր.
— Ի՞նչ է ցավը դ, տո՛ւր մենք տանենք,
Ասին սարերն ու ձորեր։

Ո՜հ, չէ, սիրո՛ւն, էլ ոչ մի սեր
Ճար չի անի իմ սըրտին,
Դուք էլ, անուշ սար ու ձորեր,
Չեք դիմանա էս դարդին։

Ա՜խ, իմ դարդը... Բայց ո՞նց անեմ,
Որ իմ դարդը իմանաք.
Սիրտըս խորն է, թե բաց անեմ,
Սիրտըս խորն է, լեզուս՝ փակ...

1902

ԴՈՒ ՔՈ ՃԱՄՓԵՆ

Դու քո ճամփե՛ն գնա, քույրի՛կ,
Եվ թող լինի նա պայծառ
Ինձ մի՛ ժպտա, ինձ մի՛ սիրիր,
Ես ընկեր չեմ քեզ համար։

Նլած կյանքի ամեն ճամփից,
Կարոտներով անմեկին,
Ագահ, անվերջ ու անհանգիստ
Թափառում է իմ հոգին։

Մի ձեռք չկա, մի գիրկ չկա՝
Պահի նըրան իրեն մեջ,
Խենթ, խելագար դընում է նա
Զբոսումներովն իր անվերջ։

Եվ ո՞վ գիտի՝ գեռևս անմեղ
Քանի հոգի կը տանջի,
Եվ ո՞վ գիտի՝ ինչ մութ, ահեղ
Անապատում կըհանդչի...

Դու քո ճամփե՛ն գընա, քույրի՛կ,
Եվ երբ լինենք մենք հեռու,
Աղոթք արա, որ մյուս անգամ
Չը հանդիպենք իրարու։

* * *

Ա՜խ, ի՞նչ լավ են սարի վըրա
Անցնում օրերն, անո՜ւշ, անո՜ւշ,
Անբըջայի՜ն, թեթևասա՜հ,
Ամպ ու հովերն անո՜ւշ, անո՜ւշ։

Ահա բացվեց թարմ առավոտ
Վարդ է թափում սարին-քարին,
Շաղ են շողում ծաղիկ ու խոտ,
Շընչում բուրմունք նդեմային։

Ա՜խ, ի՞նչ հեշտ են սարի վըրա
Սահում ժամերն անո՜ւշ, անո՜ւշ,
Շըվին փըչեց հովիկն ահա՝
Ազչիկն ու սերն անո՜ւշ, անո՜ւշ։

ԸՆԿԵՐԻՍ

Իմ վեհ տենչերի, չըքնաղ վըշտերի,
Վառ երազների մըտերիմ ընկեր,
Դու էլ ինձ նըման պանդուխտ ու գերի,
Անդուսպ կարոտով ձրգտում ես միշտ Վեր։

Այնտե՛ղ, մեր հոգու սուրբ հայրենիքում,
Խաղաղ օրերի պայծառ լույսի տակ
Ապրում է սերը, ժըպիտը ծաղկում,
Ուրախ երգերը թընդում ներդաշնակ...

Բայց, ա՜խ, նա այնքան, այնքա՜ն է հեռու,
Ու՝ մինչև այնտեղ կը հասնենք մենք գեռ,
Այնքա՜ն ենք լալու, այնքա՜ն տանջվելու,
Իմ տանջանքների մըտերի՛մ ընկեր։

ՏՐՏՈՒՆՋ

Օրերս անպըտուղ, տխուր, ձանձրալի,
Ու գնում եմ ես ունայն տըրտունջով
Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի
Գերեզմանների շարքերի միջով։

Թաղել եմ նըրանց։ Տխուր է ճամփան։
Եվ իմ հայրենի աշխարհում օտար,
Օտար ու մենակ անցվորի նըման,
Որ չունի ընկեր, ոչ տեղ ու դադար։

Օտար են շուրջըդ ու չեն հասկանում
Ոմանք քո վիշտը, ոմանք քո լեզուն,
Անտարբեր գալիք երշանիկ օրին,
Չըգիտեն նըրա կարոտը անքուն...

Չընչի՞ն մարդուկներ, լըրբորեն հանգիստ,
Անսիրտ, փոքրոգի, գըծուծ ու կոպիտ.
Մեռնում են, մարում նըրանց հայացքից
Ե՛վ հոգու ձրգտում, և՛ սըրտի ժըպիտ։

Էլ ո՞ւմ առաջին սիրտըդ բաց անես,
Ո՞ւմ համար երգես սըրտալի երգեր,
Ո՞ր չըքին սիրես, կյանքըդ նվիրես,
Էլ ի՞նչպես ապրես անսեր, անընկեր...

Եվ օրերս այսպես տըխուր, ձանձրալի,
Ու գընում եմ ես ունայն տըրտունջով
Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի
Գերեզմանների շարքերի միջով։

ՊԱՆԴՈՒԽՏ ԵՄ, ՔՈՒՅՐԻԿ

Պանդուխտ եմ, քույրի՛կ, մանուկ օրերից.
Գընում եմ դեպի մի անհայտ երկիր՝
Կըտրված կյանքի ամեն կապերից,
Մենակ, տարագիր։

Հալածում են ինձ անցած օրերը,
Ներկա ժամերը հանգիստ չեն տալի,
Հոգնած են վաղուց իմ թույլ ոտները,
Ու սիրտս ավելի։

Բայց գընում եմ ես հալածված նորից,
Ամեն վայելքից ու բախտից հեռու,
Նույնիսկ հայրենի հողից ու ջրից,
Ինչպես եղջերու։

Եվ դու հանդիպած իմ դըժար ճամփում,
Ասում ես՝ արդեն բախտավոր եմ ես.
Իզուր եմ փախչում, իզուր գանգատվում
Ու տանջվում այսպե՞ս...

Ո՞վ դու միամիտ։ Բայց, երկինք վըկա,
Չեմ եղել երբեք ես այդքան ըստոր,
Որ կարենայի այս դաժան բանտում
Լինել բախտավոր։

Չեմ եղել, քույրիկ. բոլոր օրերը
Տառապանք բերին, կորուստ ու կըսկիծ,
Եվ կյանքի հաճույքն, և կընոջ սերը
Ընկան իմ սըրտից։

Ես էլ վիրավոր գընում եմ փախած՝
Անհայտ օրերի խավարի ընդդեմ,
Ամենքից զըզված, ամենքին թողած,
Քեզ էլ կը թողնեմ...

ՄԵԸ ՆԱԽՈՐԴՆԵԲԻՆ

Երանի՜ էր ձեզ, գովվա՜ծ երգիչներ,
Դուք երգում էիք վաղ առավոտյան,
Երբոր երազներն ապրում էին դեռ,
Ոսկի երազներն հալի փրրկության։

Ձեր թարմ երգերում կար մի հայրենիք,
Խրո՜խտ, վեհապա՜նծ, թեպետև գերի,
Եվ ձեր քրնարի ձայներն երջանիկ՝
Լիքը հրճվանքով գալոց օրերի։

Ա՜խ, նա հաշտվեց մեր աչքի առջև
Եվ մեր ըզգայուն սրտերն իրեն հետ,
Ոսկի երազներ՝ միրաժի նման՝
Մեր անապատում չքացան անհետ։

Եվ մենք խորտակված մեր կյանքի ծեգից,
Անհույս ու գալուկ, ճակատներիս ցած,
Ընկնում է քրնար մեր մատաղ ձեռքից,
Ընկնում են սրտից և՛ երգ, և՛ ասված։

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԵՌԵԼԸ

Ուր որ կանգնում, նըստում եմ ես,
Ամենուրեք, անմեկին,
Աչքիս առջև դրրած է միշտ
Մի լուռ դագաղ թանկագին։

Օ՜, մի՛ հարցնեք՝ էն դագաղում
Ո՛մն է գալուկ էն դիակ,
Կամ թե ինչո՞ւ ես չեմ թաղում
Նրրան ընդմիշտ հողի տակ։

Ոչ, չեմ կարող ես հավատալ,
Թե մեռած է նա հավետ,
Թե նա գրնաց, էլ ետ չի գալ,
Թե նա չրկա էլ ինձ հետ...

Եվ ուր կանգնում, նըստում եմ ես՝
Նա մի՞շտ աչքիս առաջին...
Ու երբ խոսում, ժրպտում եմ ձեզ՝
Ըսպասում է իմ հոգին...

Ըսպասում եմ ամեն վայրկյան,
Թե ուր որ է՝ հիմի նա
Պիտի շրնչի ու մանկական
Իր աչքերը ինձ բանա...

ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

Այժրմ ես կրգամ, ասում է ասված,
Օգնել աղքատին իր ծանրը կրովում.
Չեմ թողնի նրան հավիտյան լրքված,
Նա ինձ ապավեն կանչեց նեղ օրում։

Վա՛յ ձեզ, հրզորներ, որ իր խրրճիթում
Լացացրիք խեղճին, այրուն ու որրին,
Ու վեհ, անպատիժ՝ ասիք ձեր սրտում՝
Ո՞վ է վերևից նայում մեր ճամփին։

Մի՞թե կարծում եք՝ չէր տեսնում, լրսում,
Նա, որ ստեղծեց և՛ աչք, և՛ ականջ.
Մի՞թե կարծում եք՝ ուժն էր պակասում,
Եթե համբերեց դատելուց առաջ։

Իմ աչքերն անթարթ ձեր ճամփի վրա՝
Հրսկել եմ անքուն ես ձեր գործերին,

Էլ չեմ դանդաղի՝ գալիս եմ արագ,
Ծ՛ա, տեր զորությանց՝ և հուրն իմ ձեռին։

Ես հուր եմ ձրգում ճընշվածի հոգին
Նրա համարձակ լեզվով ձեզ դատեմ,
Ես ուժ եմ տալիս աղքատի բազկին,
Նրա թիկունքին՝ գալիս եմ ձեր դեմ։

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլույս մըթնում
Երկա՛ր դարերով զընում ենք դեպ վեր
Հայոց լեռներում,
Դրժար լեռներում։

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին
Հայոց լեռներում,
Բարձրը լեռներում։

Բայց քանի անգամ շեկ անապատի
Օրդուները սև
Իրարու ետև
Եկա՛ն զարկեցին մեր քարվանն ազնիվ
Հայոց լեռներում,
Արնոտ լեռներում։

Ու մեր քարվանը շրփոթ, սոսկահար,
Թալանված, շարդված
Ու հատված-հատված

Տանում է իրեն վիրքերն անհամար
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում։

Ու մեր աչքերը նայում են կարոտ՝
Հեռու աստղերին,
Երկընքի ծերին,
Թե ե՞րբ կբացվի պայծառ առավոտ՝
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում։

---

1 9 0 3

ՀԱՅՈՑ ՎԻՇՏԸ

Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին։

Մերթ զայրացկոտ ծառա է լինում
Մինչև երկինք կապուտակ։
Ու մերթ հոգնած սուզվում, իջնում
Դեպի խորքերն անհատակ։

Ոչ հատակն է գտնում անվերջ
Ու ոչ հասնում երկնքին...
Հայոց վշտի մեծ ծովի մեջ
Տառապում է իմ հոգին։

ՄԵՐ ՈՒԽՏԸ

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս,
Ու գընում ենք մեր ճամփով,
Մրրիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով։

Մենք անցել ենք արյան ծովեր,
Սուր ենք տեսել ու կրակ,

Մեր ճակատը դեմ ենք արել
Մրրիկներին հակառակ։

Ու թեպետև պատառ-պատառ
Մեր դրոշը սրրթաղան,
Ու մենք չունենք տեղ ու դադար՝
Երկրից երկիր ցիրուցան,

Բայց գընում ենք մենք անվեհեր
Ջարկերի տակ չար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի։

1907

ԸՆՏՐՅԱԼԸ

Հոգու սրբբազան կրքակով վառված՝
Իշնում էր Մովսես լեռան գագաթից,
Իշնում էր ահեղ պատգամներն առած՝
Շրջթայից հանող աստուծո մոտից։

Եվ մինչ կանխատես աչքովն իր հոգու
Տեսնում էր գալոցն իր ժողովրդի,
Եվ մինչ հրճվում էր... ահա ներքևից
Ձայներ բարկության ու խառն աղմուկի...

Եվ տեսավ Մովսես լեռան բարձունքից,
Ժողովուրդն այնտեղ ներքև, հովիտում
Աստված է շինել ոսկուց, արծաթից,
Պարում է շուրջը ու հարբած գոռում.

— Ինչո՞ւ մեզ բերավ Մովսես անապատ,
Լի եգիպտոսից ինչո՞ւ հանեց մեզ...
Ո՞ւր է մեր սբխտորն ու սոխը առատ...
Այնտեղ հանգիստ էր ու լիքն էր այնպես...

Գոռում է այսպես ու հարբած պարում։
Եվ... սուրբ Սինայի մըռայլ ամպերում
Կանգնեց մարգարեն, նայեց դեպի վեր.
«Մի՞թե այս ամբոխն իմ եղբայրն է, տե՞ր...

Լսում եմ ձայնը դ լեռների գլխին,
Ծովեր եմ պատռում, անցնում անապատ,

Հրեղեն սյունով տանում իր ուղին,
Նա մի՛շտ կասկածոտ, նա մի՛շտ հուսահատ...

Տանջանքի միջից նրկատում եմ ես
Երկիրն ավետյաց հեռա՞ւ մըշուշում,
Իսկ նա փոքրոգի, կույր ու կարճատես,
Գերության սբխտորն ու սոխն է հիշում...

Եվ երբ ամպերում խոսում եմ քեզ հետ,
Քեզնից փրրկության պատգամ եմ բերում,՝
Նա այնտեղ ցածում մոլի՞, անհեթե՞թ
Ոսկի է պաշտում ու հարբած պարում...

Ինչո՞ւ են, ասավա՛ծ, քո վեհ պատգամներ,
Իմ տանջանքն ինչո՞ւ...»։ Գոչեց զայրացած,
Ու մեծ խորհուրդի քարյա տախտակներ
Ժայռերի գլխից նետեց դեպի ցած...

Բայց... մյուս առավոտ, երբ որ դեռ քընած,
Հանգչում էր ամբոխն աղմուկից հոգնած,
Իր ցուպը ձեռքին բարձրանում էր նա
Գարձյալ միայնակ վե՞ր՝ դեպի Սինա։

ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն.
Սիրունի՞կ, սիրունի՞կ,
Նախշուն կաքավիկ։

Քո բոմ հյուսած ծաղիկներով՝
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո տեղ լցված ցող ու շաղով,
Քընես-կելնես երգ ու տաղով.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ։

Քո թև փափուկ ու խատուտիկ,
Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով,
Կըշորորաս ճուտիկներով.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ։

Երբ կըկանգնես մամոտ քարին,
Տաղեր կասես ծաղիկներին,
Սարեր ձորեր զվարթ կանես,
Դարդի ծովեն սիրտս կըհանես.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքավիկ։

* * *

Ժամանակն անվերջ, տիեզերքն անհուն,
Ու նրանց միջում հավիտյան սիրուն,
Կյանքը՝ հարուստարժ հոսանք է վարար...
Նորանոր ուժեր ճնշում են իրար,
Ելնում են թափով,
Իջնում տագնապով
Ու կենդան, կայտառ,
Միշտ նոր ձևի մեջ,
Անդուլ, անդադար
Հոսում են անվերջ...

Էն լայն հոսանքի, մեծ աղմուկի տակ
Հավիտյան անշարժ, համր ու անգիտակ,
Անտարբեր էն տաք, եռուն պայքարին,
Անցնող օրերին, ապրող աշխարհին՝
Հզորն ու տկար
Ընդմիշտ հավասար,
Անխտիր հալվում
Մեծ հանգըստի մեջ,
Հալվում են, ձուլվում,
Հանգչում են ավերջ...

1908

ԾԱԴՈՒՄՆ

Ելնում է ահա նազելի փառքով
Հոգուս խորքերից իմ նոր դիցուհին,
Պճնած կուսության ճերմակ պսակով,
Վառվելով իր սուրբ շողերի միջին։

Ելնում է շռայլ իր փառքից շիկնած,
Ցոլուն աչքերը գետին խոնարհում,
Թեև նրանց մեջ երկնքից ծագած
Ամենից պայծառ ճաճանչն է բերում։

Թռչում են երգերս նրան ընդառաջ,
Ցնորքներս աշխույժ պարում են իր շուրջ,
Թռչում եմ և ես իմ բախտից հարբած
Ու կյանքը թեթև թվում է անուրջ։

ԴԺԱՐ ՏԱՐԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Վարի՛, գութան ջան, վարի՛,
Շատ է դրժար էս տարի.
Պապին տարան քյոխվի դուռ,
Հարկ են ուզում.— տո՛ւր հա, տո՛ւր...
— Կրտամ, քյոխվա, փող չունեմ։
— Ջունե՞ս, Շեկոն կրտանեմ։

— Ամա՞ն, քյոխվա, քեզ զուրբան,
Շեկոն գընա թող գութան,
Գարնան անենք վարուցանք։
Կալը կալսենք, բերենք տանք։
Գարունքը եւ դառավ էլ,
Գութան լըծվեց— հորովե՞լ...
Վարի՛, գութան ջան, վարի՛,
Դատենք ցորեն ու գարի,
Տանենք ածենք քյոխվի փեշ,
Որ չըտանի մեր գոմեշ։

ԳԱՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Բարի լուսի զանդեր զարկին
Զընգզընգալեն անո՞ւշ, անո՞ւշ.
Լուսը բացվեց մեր աշխարհքին
Ճըղճըղալեն անո՞ւշ, անո՞ւշ։

Հովտում առուն խոխոջում է
Գըլգըլալեն անո՞ւշ, անո՞ւշ.
Քամին բարակ շընկշընկում է
Ջըլզըլալեն անո՞ւշ, անո՞ւշ։

Կռունկն եկավ երամ կապած
Կրոկրոալեն անո՞ւշ, անո՞ւշ,
Կաքավ քարին տաղ է կարդում
Կըղկըղալեն անո՞ւշ, անո՞ւշ։

Հարսն ու աղջիկ հանդերն ելան
Շորորալեն անո՞ւշ, անո՞ւշ.
Ծաղկանց բուրմունքն անմահական
Սըլսըլալեն անո՞ւշ, անո՞ւշ։

ՃԱԽԱՐԱԿ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Մանի՛, մանի՛, ճախարակ,
Նրստենք բանի, ճախարակ,
Անտերին տեր, ճախարակ,
Որբերին հեր, ճախարակ։

Լուսնյակը դուրս է եկել,
Աչքերիս լուս է եկել։
Լուսնի լուսով մանեմ ես,
Սիպտակ ոստեր անեմ ես,
Ճղքատ օրով ու լացով
Ոորեր պահեմ մանածով։

Մանի՛, մանի՛, ճախարակ,
Նրստենք բանի, ճախարակ,
Անտերին տեր, ճախարակ,
Որբերին հեր, ճախարակ։

* * *

Է՜հ, ո՞վ գիտի, մենք ապիկար՝
Ժամանակի խաղալիք,
Ու անհայտ են միշտ մեզ համար
Օրն ու սերը մեր գալիք։

Մեկ էլ տեսար, քո սիրելին
Ընկավ օտար ու հեռու,
Պատահեցիր ուրիշ մեկին
Ու ժպտացիք իրարու։

Բայց չի տևում այդ էլ երկար՝
Նոր օր, նոր մարդ, նոր ալիք,
Ու ծփում ենք մենք անդադար,
Ժամանակի խաղալիք...

1909

ԱՎԵՐԱԿՈՒՄ

Մոլոր, մենակ ես շրջում եմ
Ավերակում հայրենի,
Աչք եմ ածում ու հիշում եմ
Անցած կյանքը վաղեմի։
Է՜, այստեղ էլ ժամանակով
Շեն ու կենդան է եղել,
Ուրիշ օրով, ուրիշ կյանքով,
Ուրիշ մարդիկ են ապրել։

Ահա նրրանց տեղ-տրները
Լուռ-լուռ փոսեր ցիրուցան,
Ահա նրրանց շիրիմները,
Մամոռոտ, անշուք, անանշան։
Ահա մեծի ապարանքը
Ու ամրոցը կիսավեր,
Ահա նրրանց խաղաղ վանքը,
Աղոթում է կարծես դեռ...

Մթընշաղը գետինն առել,
Լուռ է աշխարհք-արարած,
Բեկորներին աչքերս հառել
Մրտածում եմ շրվարած։
Հին դարերի մըշուշի մեջ
Նըշմարում եմ ես ահա
Փարթամ քաղաք, տներ անվերջ...
Մեծ պալատներ... ու սրբահ...

Ու սրբահը ճոխ զարդարված
Վառվում է ուշ գիշերով...
Էն սրահում, լուսավորված
Բյուրեղյա թանկ ջահերով՝
Հայրենիքի աղատանին
Հավաքվել է խընջույրի,
Տոն է տոնում, տո՜ն հաղթության
Իր հավատի ու զենքի...

Ու փափկատուն տիկինները
Հանդիսավոր ընթացքով
Ճեմ են առնում, աչք են ածում,
Սեր են թափում հայացքով։
Պարիկները պար են պարում
Ու զոփում են համարձակ,
Ու թընդում են մեծ սրբահում
Երգ ու նրվաղ ներդաշնակ...

«Վո՜ւյ...», «վո՜ւյ...», բուն էր, վայեց ա՜հա...
Մութն է։ Ու ես դրլխիկոր
Էն ավերակ քաղքի վրա
Կանգնած, ինչպես մի բեկոր...

ՎԱՅՐԷՋՔ

Քառասուն տարի բրռնած ճանապարհ՝
Շիտակ, անվեհեր
Գընում եմ ես վեր՝
Դեպ Անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ։

Քառասուն տարի ճամփովն ահարկու
Անցել եմ էսպես
Ու հասել եմ ես,
Խաղաղությանն եմ հասել ես հոգու։

Թոդել եմ ներքև, մեծ լեռան տակին,
Ե՛վ փառքը, և՛ գանձ,
Ե՛վ քեն, և՛ նախանձ՝
Ամենը, ինչ որ ճընշում է հոգին։

Եվ էն ամենը, արդ նայում եմ ես,—
Տեսնում եմ նորից
Իմ լեռան ծերից՝
Էնպես հասարա՜կ, դատարկ են էնպե՜ս...

Եվ ես իմաստուն ու բեռքս թեթև,
Անհոգ ծիծաղով,
Երգով ու տաղով
Իջնում եմ ղրվարթ իմ լեռան հետ։

— —·—

1910

PARODIA

Հովհաննես Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՞»... բանաստեղծության

«Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՞»...

Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները,
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,
Ուր թալանում են մերոնք ու այլերը,
Ուր հոսում է միշտ արցունք ու արյուն։

Տեսե՞լ ես արդյոք այն այգիները,
Ուր իբրև գոհար խաղողն է հասնում,
Որից գաստակ են նրստում տերերը,
Որ միշտ ցեցերի գրրպանն է լցնում։

Տեսե՞լ ես ծերուկ ժայռերի միջով
Կատղած անցնելիս գետը փրփրրած.
Վախե՞լ ես անցնել կոտրած կամուրջով,
Նստե՞լ ես արդյոք ափին մոլորված։

Տեսե՞լ ես գյուղը հովտի մեջ մենակ
Ու շուրջը փրոված հին աղբակույտեր.
Տեսե՞լ ես ո՞նց են այնտեղ շարունակ
Կրվում, կեղեքում քյոխվեն ու տերտեր։

Եվ դու տեսե՞լ ես նրա գանձն անգին,
Հարավի դուստրը՝ խրղճուկ արարած,

Լուսիյան կնիքն իրեն շրրթունքին
Ու ինքը ամբողջ կեղտի մեջ կորած։

Տեսե՞լ ես նրա եպիսկոպոսին
Դեմքին գոհության տափակ կնիքը.
Գիտե՞ս ինչ դարդ է թաղման հանդեսին,
Եվ կամ ի՞նչ արժե մատի մատնիքը։

Եվ դու տեսե՞լ ես նրա գազեթը,
Որ ազատ միտք է վաճառում հային.
Զգո՞ւշ, բաբեկամ, շրվիճես հետը,
Թե չէ՝ կրմատնի քեզ պոլիցիային...

«Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՞»...

ՍՈԽԱԿԻ ՎԻՇՏԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Մի օր տեսավ օտար թռչուն՝
Սոխակ կուլար կուլ-կուլ արուն.
— Ինչո՞ւ, ասավ, սոխա՛կ սիրուն,
Ինչո՞ւ կուլաս կուլ-կուլ արուն.
Ինչո՞ւ, մինչ ե՞րբ դու երերուն,
Տրխուր կուլաս շոր թրփերուն,
Աշխարհ ամեն վառ քո սիրուն,
Էդ ճրովռան քո երգերուն,
Հապա ինչո՞ւ դու օրնիրուն,
Էս լուս ու մութ առավոտուն,
Էս շատ անուշ զով հովերուն
Ախ ու վախով կուլաս արուն։
— Ի՞նչ կրխոսես, օտար թռչուն,
Խենթ ու խելառ դու ցընորուն.
Զրմե՛ռ նստեց մեր սարերուն,

Կըտրեց ջրրիկ աղբյուրներուն,
Կըտրեց հոտիկ ծաղիկներուն,
Կըտրեց ձենիկ իմ ձագերուն,
Ի՞նչպես չըլամ կուց-կուց արուն։
Էլի ասավ օտար թրոչուն.
— Հերիք դու լաս, սոխա՛կ սիրուն,
Հերիք դու լաս կուց-կուց արուն.
Էլի կուգա քեզ նոր գարուն,
Արև ծագե էս վայրերուն,
Հալին ձյուներ մեր սարերուն,
Բացվին ջրրեր աղբյուրներուն,
Ու շուրջ առած քո ձագերուն
Բարև կուտաս ծաղիկներուն։

---

1 9 1 1

ԿԱՔԱՎԻ ՈՂԲԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

I

Կըտուցը լիքը արին
Կաքավը նըստել քարին,
Ձեն է տալիս, կըզկըզում,
Գանգատ անում հավքերին.
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր։

Բուն շինեցի էն սարում,
Ձագ հանեցի անընդման.
Իշավ՝ խաղա մարգերում,
Եկան կալան ու տարան,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր։

Էն կարկաչուն վըզիկը
Սուր դանակով զարկեցին.
Էն կարմըրիկ կըտուցը
Հուր կըրակին ձըգեցին,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր։

Էն մանրաքայլ տոտերը
Կրտրատեցին ծունկն ի վար,
Էն խատուտիկ փետուրը
Ո՛րն արին ձոր, ո՛րը՝ սար,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր։

Էն, որ սարերն էր հասել,
Քամին եկավ գում արավ,
Էն, որ ձորերն էր անցել,
Հեղեղն ելավ ու տարավ,
Ա՛յ քուրիկնե՛ր,
Ա՛յ հավքե՛ր։

II

Էլ ո՞նց անեմ, էլ ի՞նչ անեմ էն բընում.
Հանգիստ չունեմ, դադար չունեմ էն բընում։
Զօրը մենակ՝ չեմ դիմանում էն բընում,
Գիշերն անտակ՝ չի լուսանում էն բընում.
Անցած օրերն եկել նորից էն բընում,
Գել են դառել, ուտում են ինձ էն բնում։
Էլ չի մընում իմ սըրտիկը էն բընում,
Ցավով լիքը, լացով լիքը էն բընում։

III

—Սև կաքավիկ, ո՞ւր պիտի դու նըստես հիմա։
—Զորուկ բարդի ծառի վրա։
—Սև կաքավիկ, թե որ նըրա տերը գա՝ ո՞ւր։
—Լացող ուռու ճյուղքին տրխուր։
—Սև կաքավիկ, էն տեղից էլ քշեն որ քի՞զ։
—Կըրակ կըլնեմ, կէրեմ ինձ ես...

IV

Վա՜յ կաքավիկ,
Սև կաքավիկ,
Զալիկ-մալիկ
Սիրուն հավիկ։

Վա՜յ քո ճուտին,
Էն խորոտին,
Վա՜յ սըդավոր
Իր մոր սըրտին։

Էլ չես կարդում
Հանդ ու արտում,
Մեր սարերից
Կերթաս տըրտում։

Վա՜յ կաքավիկ,
Սև կաքավիկ,
Վա՜յ իմ կորած
Սիրուն հավիկ։

ԳԱՐՆԱՆ ՀՐԱՎԷՐ

Բացվում են գարնան
Օրերը պայծառ.
Կըգա՞ս, իմ ընկե՛ր,
Գնանք դեպի սար,
Գընանք դեպ այնտեղ, երկնահաս վերև,
Կյանքը լայնարձակ, երկինք ու արև...

Փըթթում են գարնան
Ծաղկունքը վառ-վառ.
Վե՛ր կաց, վե՛ր, ընկե՛ր,
Ելնենք դեպի սար.

Հազար գույներով, հազար-հազար ցեղ
Ժըպտում են նրանք ու բուրում այնտեղ...

Կանչում են գարնան
Հավքերն անհամար.
Գնա՛նք, իմ ընկե՛ր,
Թռչենք դեպի սար,
Երգենք նրանց հետ, երկնահաս վերև,
Կյանքը լայնարձակ, ծաղիկ ու արև...

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Ամպոտ սարեն ուրախ ձենով
Ջուր է գալիս, անցնում շենով։
Մի թուխ մանուկ դուրս է վազել,
Ձեռքն ու երես պաղ լըվացել,
Լըվացել է ձեռքն ու երես,
Ու դարձել է՝ խոսել էապես.

—Դու ո՞ր սարեն կուգաս, ջըրի՛կ,
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։
—Ես էն սարեն կուգամ մըթին,
Որ հին ու նոր ձյունն է գլխին։

—Դու ո՞ր առուն կերթաս, ջըրի՛կ.
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։
—Ես էն առուն կերթամ ղվարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ։

—Դու ո՞ր այգին կերթաս, ջըրի՛կ,
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։
—Ես էն այգին կերթամ դալար,
Որ տերն է ժիր մեջն այգեպան։

1 9 1 3

ԹԵՊԵՏԵՎ ԲԱԽՏԸ ՄԵԶ ՇԱՏ ՀԱՐՎԱԾԵՑ...

Թեպետև բախտը մեզ շատ հարվածեց
Երկար դարերով, ահեղ հարվածով,
Թեպետև էապես ցրվեց, տարածեց,
Ջրգեց հողեհող, փըռեց ծովեծով,

Վկա է սակայն բովանդակ երկիր,
Որ մենք կարեվեր ապրում ենք կրկին,
Եվ ուր հասնում է հայի գիրքն ու գիր՝
Կենդանի է դեռ հայության ոգին։

Եվ թարմ աղմուկով մանկունք մեր մատաղ
Առաջ են խաղում լուսավոր տենչով,
Եվ թնդում են դեռ հայի երգն ու տաղ
Հարազատ լեզվով, հայրենի շընչով։

Եվ իր փրլատակ՝ տրմների տակից
Ելնում է ահա հզոր ժողովուրդ,
Իր վեհ ճակատին տանջանք ու թախիծ,
Խորունկ հայացքում մեծ կյանքի խորհուրդ։

Ո՞վ դուք սրբազան Մասիս, Արագած,
Էդ ձեր երկնամուխ գոհար թագերով,
Եվ որ նրանցից վերև խոյացած
Փայլատակում եք լույս-պըսակներով՝

Սահակ ու Մեսրոպ, և շատ պանծալիք,
Որ լցրիք Հայոց աշխարհքն ու սրտեր
Լուսավոր կյանքի սիրով երջանիկ
Ու ձրգտում տրվիք՝ ձրգտել դեպի վեր,

Քանի որ դուք կաք, քանի կըմնաք,
Հոյակապ սյուներ հայությյան ոգու,
Մենք միշտ անսասան առաջ պիտ գնանք,
Ինչքան մեր ճամփան լինի ահարկու։

Եվ տոն կըտոնենք էսպես խնդագին,
Եվ թող իմանա բովանդակ երկիր՝
Ապրում է անմեռ հայությունը հին,
Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր։

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

(ՀԱՏՎԱԾ)

Մեծ գոլն ընկավ, ձընհալն ընկավ,
Հողը շընչեց, գեփյուռն եկավ,
Արևն ելավ վառ ճառագած,
Հարցմունք արավ հողին հակված.

Արևը

— Սիրուն աղջի՛կ, ի՞նչ ղըրկեմ քեզ։

Աղջիկը

— Ես ծաղիկներ կուզեմ պես-պես։

Արևը

—Ա՛յ աղբյուրներ, ա՛յ գետակներ,
Սառցի ներքև քընա՞ծ եք դեռ.

Դո՛ւրս եկեք, դո՛ւրս,
Շո՛ւտ, դեպի լուս,
Նոր աշխուժով
Ու նոր ուժով
Կարկաչեցեք
Ու կանչեցեք
Հողում քընած սիրուններին՝
Մաղիկներին ու ծիլերին։

Ջրերը

— Վո՛ւշ-վո՛ւշ, վո՛ւշ-վո՛ւշ,
Էս ի՛նչքան ուշ...
Աղջի՛, աղջի՛, ծիլ-ծաղիկներ,
Քա՞նի քընեք, վե՛ր կացեք, վե՞ր,
Խընկածաղիկ,
Ծընկածաղիկ,
Արևքուրիկ
Շար-շարուրիկ
Հասմիկ, հափրուկ,
Ամանկոտրուկ,
Հորոտ-մորոտ,
Աղավնարոտ,
Կոճղեզ, ճանդուկ,
Քուրդ, ճարճատուկ,
Հարսնածաղիկ,
Ոսկեծաղիկ,
Խաշխաշ, ծրծուկ,
Վարդ, երիցուկ,
Մուշկ-վաղմեռուկ,
Պուտ, վառվրուկ,
Շրվան, մրվան,
Շուշան, ռեհան,
Ապրեմ-չապրեմ,
Թուրեմ-մարեմ...
Քանի՞ քընեք հողի միջին,

Եկեք էստեղ, սարի լանջին,
Առվի ափին, հով ըստվերում,
Ժայռի տակին, հովիտներում,
Կանաչ խոտով,
Անուշ հոտով,
Միծաղեցնք
Ու ծաղկեցեք։

Ծաղիկները

— Բարև, բարև, կարմիր սրև,
Ա՜խ, ի՜նչ լավ է դեպի վերև—
Աղա՜տ, լո՜ւյս, տա՜ք,
Կապտ՜ույտ, հրստա՜կ...

Ծաղիկները

— Սիրո՞ւմ եք ինձ...

Արևը

— Ա՜խ էնպես եմ սիրում,
էնպե՜ս,
Էլ առանց քեզ չեմ ապրիլ ես...
— Ես քեզ հետ եմ ուր որ դընաս...
— Ես կըտրխրեմ՝ որ հեռանաս...

Արևը

— Ապա եթե ձեզ համբուրե՞մ...

Ծաղիկները

— Ես հաճույքից կըկարմրեմ...
— Ես կըրուրեմ...
— Ես կըմարեմ...

Արևը

— Ա՛յ անուշներ,
Ա՛յ քընքուշներ,

Ապրեմ-չապրեմ, բուրեմ-մարեմ.
Բաժակներդ բացեք իմ դեմ,
Հաղար գունի, հաղար ձևի,
Պայծառ, ծավի ու ծարավի,
Լըցնեմ շողով,
Գոհար ցողով,
Ջերմ եթերով,
Նուրբ թըրթիռով,
Կյանքի հյութով,
Խունկի հոտով,
Ա՛յ անուշներ,
Ա՛յ քնքուշներ...

Աղջիկը

— Էս ի՜նչ անթիվ ծաղիկներ կան.
Ոսկի-գեղին, կարմիր, դեղձան,
Մոռ, ծիրանի, ճերմակ, պուտ-պուտ,
Ալ, նարընջի, մավի, կապուտ,
Բացվել, լըցվել, ծաղկել են վառ,
Ողջ ինձ համա՜ր, ողջ ինձ համա՜ր...

* * *

Հողմերի առջև ցըրված, հալածված,
Քարեքար զարկված, տանջված ու հյուծված
Ի՜նչ է ուզում նա դալուկ շըրթունքով,
Անվերջ բողոքով, անզոր խնդիրքով.
Իր փա՜ռքն է ուզում, թե թագն ու գահո՜ւյք...
— Իր կյանքն է ուզում, իր պատիվն, իր գույք.

. . . . . .
. . . . . .

Ո՛չ, հանգի՞ստ, հոգի՛ս, իզուր չի ոչինչ։
Ոչ ծիլ ու ծաղիկ, ոչ արևը ջինջ,
Ոչ խոսքն հանճարեղ, ոչ երգը քնքուշ,
Կա մեծ ու զրվարթ, իմաստուն մի ուժ,
Որ մութն աշխարհքից տանում է մարդուն

Դեպի Լույս աշխարհք, սեր, եղբայրություն...
Ամեն մի շարիք ունի իրեն վերջ
Ու կա հատուցում ամեն գործի մեջ.
Կա մխիթարանք տառապող հոգուն,
Լացող աչքերին կա հանգիստ ու քուն...

* * *

Տաղով եկավ,
Ախով գնաց Սայաթ-Նովան.
Երգով եկավ,
Վերքով գնաց Սայաթ-Նովան.
Սիրով եկավ,
Սրով գնաց Սայաթ-Նովան.
Սիրով մնաց Սայաթ-Նովան։

1914

ՎԵՐՋԻՆ ՏԱԳՆԱՊԸ

Վեր է կացել հին վիշապը նոր թափով,
Վեր է կացել վերջին մոլի տագնապով,
Արյունարուշտ, ոճիրներով ահավոր
Մահ է շընչում լեռներն ի վեր ալեոր։

Ու նրա դեմ ելած անզուսպ, անսահման,
Հորձանք տալով ամեն կողմից՝ հայության
Հին-հին հույսերն ու հուզմունքը դարավոր
Ծառս են լինում լեռներն ի վեր ալեոր...

Ու լեռները պառավ մոր պես վերստին
Արնոտում են գլուխները իրենց հին,
Միշտ խորհելով ամպերի տակ սևակնած,
Որ հենց իրենց հառաչանքն են կուտակված..

---

1 9 1 5

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհունները է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Մըղկըտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝ տրխո՞ւր, դատարկ ու խավար,
Զարկվա՞ծ հայրենիք,
Զրկվա՞ծ հայրենիք։

Խրոնվում են մըտքիս հանդեպ բանակները անհամար,
Տըրտըրում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակները աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խրնջույքներով արյունի,
Որ դարձըրին քեզ մըշտական սև ու ստվի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժըպիտ,
Ողբի՞ հայրենիք,
Որբի՞ հայրենիք։

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՞ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին—
Հույսի՞ հայրենիք,
Լույսի՞ հայրենիք։

Ու պիտի դա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՞ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու, պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՞ր հայրենիք,
Հըզո՞ր հայրենիք...

ԲԱՐՁՐԻՑ

Իմ բարի սըրտի էն մեծ խոհերից,
Էն մեծ խոհերի անհուն խորերից՝
Կամեցավ՝ ելավ իմ հըզոր հոգին,
Որ բարձրից նայի աստծու աշխարհքին։

Ու պայծառ ցոլաց դեպ վերին այեր՝
Մարդկային ամեն հընարքներից վեր,
Վե՞ր ամեն շուքից և շամանդաղից՝
Մինչև լուսեղեն ոլորտն անթախիծ։

Ու իր հարազատ բարձունքիցը լույս՝
Անչար, անաչառ, անդորր ու անհույզ՝
Պարզ, ամենատես հայացքովը նա
Ճառագեց ներքև՝ աշխարհքի վրա։

Տեսավ աշխարհքը՝ գեղեցի՞կ, անվե՞րջ,
Եվ հայրենիքներն անձուկ նըրա մեջ,
Եվ աստվածները նըրանց գանգան,
Եվ սուրբերը խիստ, խըստրող ու դաժան։

Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին.
Ամեն հայրենիք՝ իրեն զավակին,

Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված,
Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած։

Ու ոչ մի երկիր չկա հանգչելու—
Խոր, արարչական հանգիստն անխրոով,
Ու ոչ մի անկյուն չկա շընչելու
Շունչն աստվածային՝ լի անվերջ սիրով...

Անպատում վըշտով վերըստին նայեց
Իմ էս մեծ սըրտին՝ աշխարհքից էլ մեծ,—
Անսահմա՜ն աշխարհք, և սեր ընդհանուր,
Եվ մարդը ուրախ, և երգ ամենուր...

Ու, իշավ նորից էնտեղ հանգչելու—
Խոր, արարչական հանգիստն անխրոով,
Էնտեղ հանգչելու, էնտեղ շընչելու
Էն մեծ խոհերով, էն անվերջ սիրով...

ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶՈՒՄ

Սըրտիս խորքերեն
Հովեն թե ծովեն
Մի ձեն եմ լըսում.
Ո՛նց է մի աղջիկ
Մեղմ ու հանդարտիկ
Անվերջ արտասվում։

Կոպիտ աշխարհ է,
Մարդը միշտ չար է,
Կյանք է կործանում,
Կյանքն էլ կործանված
Որ անցավ գնաց,
Էլ ետ չի դառնում...

Սըրտիս խորքերեն
Հովեն թե ծովեն
Մի ձեն եմ լըսում.
Ո՛նց է մի աղջիկ
Մեղմ ու հանդարտիկ
Անվերջ արտասվում։

«Թամա՜ր... Ա՜խ, Թամա՜ր...»
Իզո՜ր... ոչ մի բառ...
Չի պատասխանում։
Սերը որ կորավ,
Սիրտը որ մեռավ,
Արցունքն է մնում...

Սըրտիս խորքերեն
Հովեն թե ծովեն
Մի ձեն եմ լըսում.
Ո՜նց է մի աղջիկ
Մեղմ ու հանդարտիկ
Անվերջ արտասվում...

* * *

Շուտ է գալիս ծանր քարը
Մեր մոր կըրծքից տենչավառ,
Վեր է կենում մեր աշխարհը
Ավերներից անհամար...

Մտիկ տվեք՝ ինչ վեհ պատկեր
Մեծ հիացման արժանի,
Էսքան դարեր նա քարի տակ
Դեռ շընչում է կենդանի.
Ու աչքերը, թեև լացոտ,

Լիքն են կյանքով ու հույսով,
Ու հույսերը համակ ազնիվ
Լիքը բարով ու լուսով...

Տեսեք, թեև ծվեն-ծվեն
Միրանի է իր հագին,
Ու ցոլում է իր ճիգերեն
Ազնվական իր հոգին...
Ամեն շարժում դեպի կյանքն է,
Ամեն ձրգտում՝ դեպի վեր,
Աչքերն էն կողմ, ուր ծաղկում են
Ընտիր ազգերն ու ցեղեր...

---

1 9 1 6

ԳԺՈԽՔԻ ՀԱՆԴԵՊ

Հո՜ւշ. հասավ օրը վերջի՜ն, ահավո՜ր.
Սրրով ու հրրով բացվում են էսօր
Հայոց դրժոխքի դրռներն ամբարիկ.
Սարսափի պիտի աշխարհքը համակ...
Ո՜ւհ, ի՜նչքան մութն է, դարշահոտ ու պաղ...
Ինչքան ոսկորնե՜ր, կրմախքներ անթաղ...
Էլ ի՜նչ կա հեռվում... հեռվի խավարում...
Ո՜վ է իմանում... ո՜ւմ աչքն է զորում...
Մեջտեղը մենակ, ժեռուտ բարձունքին,
Հողմերի առջև կանգնած է մի կին.
Որդու արյունը իր ձեռքն են տրվել.
— Խրմի՛ր սուլթանի կենացը դու էլ...
Եվ նա, որ մարդ էր ու մայր էր երեկ,
Այժրմ, էն ժայռին կանգնած կիսամերկ,
Անուժ ու ապուշ խելագար է մի,
Թաժակը ձեռքին, որ պիտի խրմի...
Կանգնած է մենակ, և լոկ մոլեգին
Հողմերն են ոռնում ու նրրանք չորս դին...
Բայց՝ հո՜ւշ. լռությո՜ւն... մրթին, ահավոր
Երկինք են նայում կրմախքները չոր,
Ու իրենց կարկամ շրրթունքները բաց՝
Խոսք են ասելու աշխարհքի դիմաց,
Խո՜սք, որ չի լրսված դեռևս լուանի տակ...
Սարսափի պիտի աշխարհ բովանդակ...
. . . . . .
. . . . . .

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝
Վերջին հանդիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին,
Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով
Մաբած են, մեռած, փրռված ու ցրված հազար հազարով...

Ու կրրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից
Մասիսն ու Արան, Սիփանն ու Սրրմանց, Նեմրութ,
Թանգուրեք,
Հայոց աշխարհի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,
Անհաս, աննրվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գլխի վերև...

Կանգնեց խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նրման,
Կանչեցի թրշվառ էն հոգիներին՝ ցրրված հավիտյան
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն Հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ։
—Հանգե՞ք, իմ որբե՞ր... իզո՞ւր են հուզմունք, իզո՞ւր .
և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կը մնա...

Աչիցը եփրատ, ձախիցը Տիգրիս՝ ահեղ ձեներով,
Սաղմոս կարդալով՝ անցան, զընացին խոր-խոր ձորերով,
Ամպերն էլ նլան Ջիրավի ձորից, հրսկա բուրվառից,
Ճանապարհ ընկան Ծաղկանց սարերից, Հայկական պարից,

Բուլլ-բուլլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը հեռու,
Գոհար ցողելու, ծաղկոնք բուրելու, բուրմունք խընկելու
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն Հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...
—Հանգե՞ք, իմ որբե՞ր... իզո՞ւր են հուզմունք, իզո՞ւր
և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կը մնա...

ԻՄ ԱՐՈՒՍՅԱԿԻՆ

Լուսապրսակ
Իմ Արուսյակ,
Ի՞նչ գեղատես
Ու ի՞նչ զրվարթ
Վառվռում ես
Իմ աստղազարդ,
Պայծառ ու պերճ
Գիշերվա մեջ...

Այո՛, թեև
Ջեղավ արև
Էս պաղ կյանքում
Ու երկնքում,
Բայց բյուր արեգ
Ու բյուր ցերեկ
Միշտ արժեր
Էսքան շրքե՞ղ,
Հրրաշագե՞ղ,
Մի գիշեր...

ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ)

Բաբելոնի գետեզերքին նրստել էին նրանք գերի,
Հիշում էին իրենց Սիոնն, Երուսաղեմն ու լալիս,
Կախել էին տավիղները վեր՝ ճյուղերին ծառերի,
Հիշում էին անցած փառքերն, անցած երգերն ու լալիս։
— Առե՛ք տավիղն, երգե՛ք, տեսնենք երգերը ձեր Սիոնի.
Ասում էին գերիշները Իսրայելի որբերին,
Ու՝ սրրբելով նրրանք լացը իրենց տխուր աչքերի՝
Տավիղն առած երգում էին օտար գետի ափերին։

— Ո՞վ սրբրազան Երուսաղեմ, ըսկիզբը մեր երգերի,
Եվ քեզ, Սիոն, մեր սրբությյուն, թե մոռանանք մենք երբեք,
Թող մոռանա մեղ մեր աջը, հավետ մընանք մենք գերի,
Թող չըտեսնենք մենք հավիտյան ոչ խնդությյուն և ոչ երգ...
— Ո՞վ անօրեն դու Բաբելոն, երնեկ բազկին ոխառու,
Որ կըզարկի աչքիդ առաջ դավակներդդ քարերի,
Երնեկ օրին, երբ կըզարթնի Իսրայելի Եհովան
Ու կըլսի հառաչանքը մեր գերեվար ըընարի...
Էսպես նըրանք երդում էին իրենց վըրեժն ահարկու,
Ու դարմանքով հարում էին գերիչները մեկմեկու.
— Մի՞թե դեռ էլ կենդանի է Իսրայելը աշխարհում,
Մի՞թե նըրան չըսպանեցինք պատերազմի դաշտերում...

ՎԸՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ

(ՀՈԴՎԱԾԵ ՓՈԽԱՐԵՆ)

Երբ խոսում են Վբրասանի
Թըշնամանքից արյունոտ,
Զարմանք է ինձ պատում հայանի,
Եվ խորին ցավ, և ամոթ։

Ո՞չ ապաքեն գիտեն նըրա
Ոսոխները մինչ անգամ,
Աղ ու հացն է սիրել միշտ նա,
Միշտ աշխարհքին բարեկամ։

Թեև պատած հազար վերքով՝
Շատ ցավեր է նա տարել,
Բայց խաչակիր իրեն ձեռքով
Դեռ ոճիր չի կատարել։

Եվ իր ձեռքը եթե համառ
Տարածում է հին վրկան,

Ոչ թե դաժան գործի համար,
Այլ դեպ պայծառ ապագան։

Եվ ի՞նչպես չեն տեսնում ոմանք
Նըրա ընթացքն անընկուն,
Ո՞նց են ասում. իր բախտի տակ
Նա ընկել է անկանգուն։

Ո՞չ ապաքեն Կովկասն անսասան
Պատ է կանգնած մինչ երկին,
Որ չըհաղթի բուքը նըրան,
Ինչքան սուրա մոլեգին։

Ո՞չ ապաքեն Պոնտոսը հար
Շունչ է հոսում հով ու դով,
Որ նա հավետ մընա դալար,
Խորշակներից ապահով։

Եվ չե՞ն լըսել դեռ վըրացու
Երգը զըվարթ ու անհոգ,
Ո՛նց է ծաղրում նա մահացու
Ամեն հարված անողոք։

Երբ խոսում են իր անկումից,
Թըշնամանքից արյունոտ,
Զարմանք է ինձ պատում անվերջ,
Եվ խորին ցավ, և ամոթ։

---

1 9 1 7

* * *

Երազեցի շարունակ
Իմ կյանքի մեջ ես մանկուց,
Ու մընացի միշտ մենակ
Պատրանքի մեջ՝ ես մանկուց։

Ես չըգտա ոչ մեկին
Երազներից իմ շըքեղ,
Եվ ոչ մի մարդ, ոչ մի կին՝
Հերոսներից իմ շըքեղ։

Երազեցի շարունակ
Իմ կյանքի մեջ ես մանկուց,
Ու մընացի միշտ մենակ՝
Պատրանքի մեջ՝ ես մանկուց։

ԴՈՒ ՉԳԻՏԵ՞Ս...

Դու չըգիտե՞ս՝
Ինչու եմ ես
Անբուժելի
Տրխուր էսպես։

— Ինչ ունեի լավ ու պայծառ՝
Ընկա՞ն, հանգա՞ն մի-մի, մի-մի,

Օրորանս էլ՝ միակ, որ կար,
Արնոտ եղավ ու թըշնամի...

Դու չըգիտե՞ս՝
Ինչու եմ ձեզ
Քընարիս հետ
Գըրկել էսպես...

— Մրթնեց հոգուս երկինքն անհուն,
Սիրտըս պատեց մեծ շափառուկ.
Մեռա՞ն, կորա՞ն շուրջս ու հեռուն,
Քընարս է լոկ մնացել... և դուք...

1918

ՊԱՏՐԱՆՔ

Վեր է կացել էն սարում
Մեր Զալակը իր թեից.
Գընում է մութ անտառում,
Քաջ ախպերքս նուռից։

Զրընգում են նըրանք խոր
Էն անտառում կուսական.
Ես կանչում եմ նորից նոր,
Ինձ թվում է, թե՝ կըդան...

Զո՜ւր... վա՜ղուց են, ա՛խ, նըրանք
Մեր սարերից գընացել.
Էն դիլ ձեներն են մենակ
Իմ ականջում մընացել...

ՎՐԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ

Խունկի բուրյան մըշուշներում,
Մըրմունջներով պատած երգի՝
Կանգնած է նա կապույտ հեռվում՝
Վարդը կյանքի, հարսն երկընքի,
Եվ չըդիտեմ՝ աղո՞թք անեմ,
Թե՞ ըդմայլվեմ իր գեղի դեմ։

Համակ շընորհք ու սըրբություն,
Նայում է լուռ՝ լուռ սըրտիս մեջ,

Լույս հայացքի խորքում անհուն
Վառված սիրո կըրակն անշեջ...
Եվ ո՞վ կասի՝ կըրա՞կն է շատ,
Թե՞ սըրբությունն իր անարատ։

Խաչ է բըռնած իր կույս ձեռին,
Որ նըման չի ոչ մի խաչի,
Ու վարդն, ասես, աստվածային,
Պիտի շընչի ու կանաչի.
Մի նըշանում կապված հանդարտ՝
Տանջանքը վեհ, կյանքը գըվարթ.

Մութի թեթև քող է իջել
Պայծառությանն իր երկնային,
Վշտի ամպից լույս ճաճանչել,
Լույսն ըսքողվել վշտովն իր հին.
Ու չարիքն էլ, ասես, անկար,
Զարդ է դարձել իրեն համար։

Ա՜խ, առնեի եղբոր ձեռով
Բախտի ձըգած քողը տըրտում,
Որ նա հառներ իր ողջ դեղով,
Ապրեր անփույթ էն ճոխ հովում,
Վերին Պոետն ուր որ նըրան
Կերտեց, դարձավ ապշեց վըրան։

ԻՄ ԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտա՞կ, անծե՞ր,
Ես հարուստ եմ, չա՞ն, ես հարուստ,
Մով բարություն, շընորհք ու սեր
Ճոխ պարգև եմ առել վերուստ։

Անհուն հանքը իմ գանձերի,
Սիրուս է առատ, լեն ու ազատ.

Ինչքան էլ որ բաշխեմ ձրրի՝
Սերն անվերջ է, բարին՝ անհատ։

Երկյուղ չունեմ, ահ չունեմ ես
Գոգից, չարից, չար փորձանքից,
Աշխարհքով մին՝ ահա էսպես
Շաղ եմ տալիս իմ բարձունքից։

Ես հարուստ եմ, ես բախտավոր
Իմ ծրնընդյան պայծառ օրեն,
Էլ աշխարհ չեմ գալու հո նոր,
Իր սրվածն եմ տալիս իրեն։

---

1 9 1 9

ՆՎԵՐ ՎԼԱԴԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

Չէ՛, չի լսել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոգին
Ու դարավոր ցավն ամեհի
Չի խորտակել էն հոգին։

Թընդում է դեռ նոր ձեռքերում
Էն քնարը գովանի,
Խընդում է դեռ նոր երգերում
Վրաստանը գեղանի։

— Ողջո՞ւյն, ողջո՞ւյն ձեզ հին ու նոր
Արի, բարի ընկերներ,
Արարատի կողմից էսօր՝
Եղբայրական երգ ու սեր։

Հին օրերի վերջալուսին,
Արշալուսին նոր կյանքի
Երգենք սրրտանց ու միասին
Երգը հանուր բերկրանքի։

Բարձրը հընչի մեր երգը թող,
Չարի ձենը խըլացնի,
Հընչյուններովն իր կախարդող
Երկրե երկիր թող անցնի։

Ամեն կողմից թող ամենին
Հրաշալիքի ու բերի
Բազմալեզու խրախճանին
Մեր Կովկասի ազգերի։

Ելնե՞նք՝ տեսով ու ճանաչով,
Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝
Մեր քյամանչով, ուրախ կանչով
Գընանք դեպ կյանքն ընդհանուր։

Շատ, շատ արցունք թափվեց մեղնում,
Մեն մի կաթիլն՝ մի խրատ,
Անլուռ, անդուլ էն է ասում՝
Ճամփա չունի գործը վատ։

Թող՝ ով կուզի՝ երկար-բարակ,
Ջոռ տա խելքին մինչև մահ,
Մենք իմաստուն՝ սիրենք, խնդանք,
Կյանքը էս է, ինչ որ կա։

Զարկե՛ք ուժգին մեծ Շոթայի
Էն քընարը ոսկեվար,—
Մարդը ինչ տա՝ էն կը շահի,
Թող իմանա ողջ աշխարհ.

Տեսնի քանի նոր ձեռով է
Խոսում մուսան էս երկրում,
Պատգամներով պայծառ ու վեհ,
Հազար ու մի երգերում։

Ողջո՞ւյն, ողջո՞ւյն ձեզ հին ու նոր
Արի, բարի ընկերներ,
Ակարատի կողմից էսօր՝
Եղբայրական երգ ու սեր։

---

1 9 2 2

ՍԻՐԻՈՒՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Սիրիո՛ւս, երկնից ահեղ անցվոր,
Ո՞ւրկից եկել,
Ո՞ւր ես թեքիլ,
Ո՞ւր ես ճեպում էգքան հըզոր,
Անճառ թափով,
Անծեր ճամփով,
Դարե՞ր, դարե՞ր հազարավոր։

Սիրիո՛ւս, երկնից շըքեղ գոհար,
Որ իաղում ես,
Փաղփաղում ես
Ճերմակ ու բիլ լուսով քո վառ
Ու զարդարում,
Զըվարթ վառում
Մեր գիշերվան ճակատը մառ՝

Ի՞նչքան աչք են վըրադ հառել,
Նայում են քեզ
Հիմա մեզ պես,
Ի՞նչքան աչք է նայել, մարել,
Եվ կամ ի՞նչքան
Դեռ պիտի դան,
Որ անհայտից կյանք չեն առել։

Ո՞վ առաջինն ասավ ողջերթ
Քեզ մեր հողից,
Մարդու ցեղից,

Կամ ո՞ւմ աչքում պիտի անհետ
Մի օր հատնի,
Մարի, մրթնի
Հրաժեշտի շողը հավետ...

Բարի ճամփա՛, հյո՛ւրըդ մեր հին,
Եվ թե տեսնես՝
Մեղնից էսպես
Մի հարցում տուր հրզոր մահին.
— Մարդու քանի՞
Սերունդ կանի
Մի հրաժեշտն աստեղային։

ԲԱՌՅԱԿՆԵՐ

1890

Ա՛նց կացա՞ն...

Օրերս թքուան, ա՛նց կացա՞ն.
Ախ ու վախով, դարդերով
Սիրտըս կերա՞ն, ա՛նց կացա՞ն.

«Հառաչանք»-ից

Վերջացա՞վ...

Կյանքըս մաշվեց, վերջացա՞վ.
Ինչ հույս արի՝ փուչ ելավ,
Ինչ խընդություն՝ վերջը ցա՞վ։

«Հառաչանք»-ից

1916

Ո՞ւր կորան...
Մոտիկները ո՞ւր կորան,
Ինչքան լացի, ձեն ածի՝
Ձեն չի տրվին, լո՜ւռ կորան։

Ե՞տ չեկավ...
Գընա՜ց, գընա՜ց, ետ չեկավ,
Անկուշտ մահին, սև հողին
Գերի մընաց, կ՚ետ չեկավ։

Հիմի բացե՞լ են հանդես
Երգիչները իմ անտես,
Ջա՜ն, հայրենի՛ ծրդրիդներ,
Ո՞վ է արդյոք լըսում ձեզ։

1917

Ցով է իմ վիշտն, անափ ու խոր,
Լիքն ակունքով հազարավոր.
Իմ գայրույթը լիքն է սիրով,
Իմ գիշերը՝ լիքն աստղերով։

Քանի՞ մահ կա իմ սրտում,
Թափուր դահ կա իմ սրտում.
Չէ՞ դու էլ ես մահացու.
Մահի ահ կա իմ սրտում։

Ե՞տ եկե՞ք...
Գարնան վարար գետ եկե՞ք,
Անցա՜ծ օրեր, խի՛նդ ու սե՛ր,
Դարձե՞ք, իրար հետ եկե՞ք։

3 Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մըտնում նոր,
Հազար տարվա փորձն ու գործ
Ըսկըսվում է ամեն օր։

Ո՞վ իմանա՝ ո՛ւր ընկանք,
Քանի՛ օրվա հյուր ընկանք,
Սերն ու սիրտն էլ երբ չըկա՝
Կըրա՜կ ընկանք, զո՜ւր ընկանք։

Երազումը մի մաքի
Մոտը եկավ հարցմունքի.
— Ասուած պահի քո որդին,
Ո՞նց էր համը իմ ձագի...

Ինչքա՞ն ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,—
Վատը՝ լավ եմ տեսել ես։

Քանի՞ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տրվել,
Լույս տալով եմ ըսպառվել։

Մընացել է բերդը մեզ,
Հաղթանակի երթը մեզ.
Անց են կացել՝ ով կային,
Հիմի կրգա հերթը մեզ։

1918

Ո՞նց է ժըպտում իմ հոգին
Զարին, բարուն,— ամենքին.
Լույս է տալիս ողջ կյանքիս
Ու էն ճամփիս անմեկին։

Ի՞նչ ես թրոչում, խե-դե սի՛րտ,
Հազար բանի ետև, սի՛րտ,
Ես ո՞նց հասնեմ հազար տեղ
Քեզ պես թափով, թեթև, սի՛րտ։

Իմ սա՛ր, արթուն ականջում
Մի խոր ձեն է միշտ հընչում,
Անհո՛ւն, անքո՛ւն կարոտով
Իրեն մոտ է ինձ կանչում։

Ինե՞ր հեռու մի անկյուն,
Ինե՞ր մանկան արդար քուն,
Երազի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն։

Մի հավք պարկի ես մի օր.
Թրռա՞վ, զընաց վիրավոր։
Թրռչում է միշտ իմ մըտքում
Թևը արնոտ ու մոլոր։

4 Երկու շիրիմ իրար կից,
Հավերժական լուռ դրրկից,
Թախծում են պաղ ու խորհում
Թե՝ ի՞նչ տարան աշխարհքից։

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,
Հեռվից անթիվ ձեռքերով՝
— Ջա՞ն, հայրենի՛ անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով։

---

3 Այնտե՛ ամպին ու զամպին,
Մոլոր նըստած իր ճամփին,
Լոռու հանդում՝ մի արտուտ
Նայում է դեռ իմ ճամփին։

Կըլթացնում են, արտորում
Արտուտները արտերում,
Թրոչում մանուկ հոգուս հետ,
Ճախրում, ճրխում եթերում։

---

5 Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան։

1919

Մեռա՞ն, մեռա՞ն... Եվ ահա,
Խառնըվել են կյանք ու մահ.
Ցեմ հասկանում աշխարհքի
«Կան ու չըկան» ես հիմա։

Արևելքի եդեմներին իջավ պայծառ իրիկուն,
Հեքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն.
Ի՞նչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի...
Ա՜խ, թե նորից գրտնեմ ճամփան դեպի էնտե՛ղ, դեպի տուն...

---

6 Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին,
Տանջում, տանջվում, որոնում է ու դրժբախտ է նա կըրկին.
Է՛յ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սըրտալի,
Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի։

Հե՛յ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար,
կյանքդ կարճ,
Քանի՞ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.
Ի՞նչ են տարել նըրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ։

Դու մի անհայտ Բանաստեղծ ես, չըտեսնըված մինչ էսօր.
Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր։
Ես էլ, ասենք, զարմանալի Ընթերցող եմ բախտավոր,
Որ կարդում եմ էդ երգերը էսքան հեշտ ու էսքան խոր։

Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ,
Երազն էլ, նարբ ու խուսափուկ, վրդաղ եղավ, անցկացավ.
Վրդաղ անցան երազ, մուրազ, ու չըհասա ոչ մեկին,
Կյանքս թեթև տանուլ տրված գրդաղ եղավ, անցկացավ։

Ո՞ր աշխարհքում ունեմ շատ բան. միաք եմ անում՝
Է՞ս, թե էն.
Մեջտեղ կանգնած՝ միաք եմ անում, չեմ իմանում՝ է՞ս, թե էն.
Ասուված ինքն էլ, տարակուսած, չի հասկանում ինչ անի.
Տանի՞, թողնի՞,— ո՞րն է բարին, ո՞ր սահմանում, է՞ս թե էն։

---

1 9 2 0

Ի՞նչ իմանաս ըստեղծողի գաղտնիքները անմեկին.—
Ընկեր տրվավ, իրար կապեց էս աշխարհքում ամենքին.
Բանաստեղծին թողից մենակ, մե՞ն ու մենակ իրեն պես,
Որ իրեն պես մըտիկ անի ամեն մեկին ու կյանքին։

Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ՝ իմ կյանքի հետ լինեի.
Հազար երնեկ՝ դաշտում մենակ՝ երկընքի հետ լինեի.
Բայց ո՞վ կըտա էն վայելքը՝ ինքս ինձ էլ չըվգայի,
Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի...

---

1 9 2 1

Առատ, անհատ՝ աստծու նման՝ միշտ տեղալուց հոգնել եմ ես.
Հոգիս ծարավ՝ սրբան-նրբան մրտիկ տալուց հոգնել եմ ես.
Մինը պիտի գար իմ դիմը՝ ճոխ ու շքեղ անհաշիվ,
Ամեն ճամփում ըսպասելուց ու փընտրելուց հոգնել եմ ես։

Ես շընչում եմ միշտ կենդանի աստծու շունչը ամենուր.
Ես լըսում եմ նրբա անլուռ կանչն ու հունչը ամենուր
Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին
Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունջը ամենուր։

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու,
Արեմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու՝
Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներամ
Դեպ Արևելքն աստվածային՝ հայրենիքը իմ հոգու...

Ամեն անգամ քո տրվածից երբ մի բան ես դու առնում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ի՞նչքան է դեռ մընում,—
Զարմանում եմ, թե՝ ո՞վ շքեղ, ի՞նչքան շատ ես տրվել ինձ.
Ի՞նչքան շատ եմ դեռ քեզ տալու, որ միանանք մենք նորից։

Ասի. «Հենց լոկ էս անյունն է ու անունը, որ ունեմ»...
Երբ ճառագեց անծայրածիր քո ժըպիտը հոգուս դիմ.
—Ի՞նչ է անյունն էդ անկայուն, ու անունը, որ ունես,
Դու աստվա՞ծ ես, դու անհուն ես, անանուն ես ու անե...

Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ,
Մեծ խոհերի խոյանքների հեռուներում անարատ,
Անհիշելի վերհուշերի մըշուշներում նրբաղոտ՝
Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կըհասնեմ նրբա մոտ...

Բարձր է հընոց աշխարհքն հայոց ու Մասիսը երկնադեռ.
Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել նրբա հետ՝
Անհաս բանից, ըսկզբանից երբ չըկան էլ դեռ չըկար,
Մինչև վախճանն անվախճանի քընում է դարեդար։

Ֆ. Ո՞վ անհատ մին, որ ամենին միացնում ես մի կյանքում,
Ամեն կյանքում ու երակում անտես, անկեզ բորբոքում,—
Ողջ ազատ են ու հարազատ էս աշխարհքում քեզանով,
Ողջը քո մեջ՝ անմա՞հ, անվերջ՝ քեզ են երգում քո ձենով...

---

10. Կյանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի.
Խափան, խոպան ու անպըտուղ, անցավ առանց արդյունքի։
Ի՞նչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին...
Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տըվողին...

Իմ կընունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ցահ սըրբազան,
Միածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կընքահայրըս, ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կընքողըս նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պտետ։

---

1 9 2 2

Աղբյուրները հընչում են ու անց կենում,
Ծառավները տենչում են ու անց կենում,
Ու երջանիկ ակունքներին երազուն՝
Պոետները կանչում են ու անց կենում։

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.
Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին։

Էնքան շատ են ցավերն, ավերն իմ սրտում,
Էնքան տրտում կորած լավերն իմ սրտում...
Չեմ էլ հիշում շար ու խավար էս ժամին՝
Ե՛րբ են փայլել ուրախ օրերն իմ սրտում։

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 9 0 6

ԱՂՎԵՍԸ

Աղվեսն եկավ բարձրը սարից,
Հարցմունք արավ լիքը թառից.
Մեծ խորոզ է հարկավոր ինձ.
Քաղցած աղվեսն, ագին ծաղիկ։

Աղվեսն հագել քուրքը դեղին,
Գրտուտ կուգա շուրջը գեղին.
Ջուր կըտրրվեց տատիս լեղին.
Դեղին աղվեսն, ագին ծաղիկ։

Աղվեսն ասավ պառավ տատին.
«Մրտիկ չեմ տա ձեռիդ փետին,
Կարոտել եմ թըմփլիկ ճուտին».
Անվախ աղվեսն, ագին ծաղիկ։

Աղվեսն եկել, նստել դեզին,
Երկար ագին ծրռել վրզին,
Աչք է ձրգել մեր խորոզին...
Էն գող աղվեսն, ագին ծաղիկ։

Մին էլ կանչեց տատրս պառավ.
Ամա՜ն, հասե՜ք, տարա՜վ, կերա՜վ...
Գրլխիս էս ի՞նչ փորձանք բերավ
Անտեր աղվեսն, ագին ծաղիկ։

Ա՛յ իմ խորոց, կարմիր խորոց,
Ման կուգայիր գոռոզ-գոռոզ,
Փետուրդ արավ ողջ դար ու փոս
Էն չար աղվեսն, ագին ծաղիկ։

Ապվե՛ս, աղվե՛ս, փոքրիկ գապան,
Ոտներդդ կարճ ու խիստ վազան,
Շրներն ամեն քեզ չը հասան,
Ճարպիկ աղվես, ագին ծաղիկ։

1907

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

— Մուղրուղո՜ւ.
Աքլորը գիլ կանչեց թառին.
— Ճի՛կ-ճի՛կ, ճի՛կ-ճի՛կ,
Զարթնեց մթնում ծիրը ծառին։

— Մուղրուղո՜ւ.
Խոսեց ծեգին երկրորդ բերան.
— Հո-հո՜, հո-հո՜,
Նախիրն արդեն հանդը տարան։

— Մուղրուղո՜ւ.
Լույսը բացվեց երրորդ կանչին.
— Վո՛ւյ-վո՛ւյ-վո՛ւյ-վո՛ւյ,
Նստեց նանը տեղի միջին։

ՔԱՄԻՆ

— Ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ...
Քամին է, քամին,
Տես անզգամին.
Բերան չունի՝ փչում է,
Թևեր չունի՝ թռչում է,
Ձեռքեր չունի՝ քաշում է,
Իմ փոքրիկին քըշում է։

Կորի՛, դու քամի,
Անպիտան քամի։
Մի՛ վախի, ջանիկ,
Փեշրս պինդ բռնի,
Ես թող չեմ անի
Քամին քեզ տանի։

ԱՌԱՎՈՏ

Հավը խոսեց երեք բերան.
— Էյ քնածնե՛ր, ծուղրուղո՛ւ,
Բացվեց կարմիր աղոթարան,
Ժամանակ է զարթնելու։

Խավարն անցավ գիշերային,
Հեռու մեզնից ու փարատ,
Աշխարհ լցվեց լուսն ու բարին,
Լուսն ու բարին անարատ։

Գյուղում աղմուկ, գյուղում խնդում,
Օրը պայծառ, բուրավետ,
Ժիր մըշակի երգը հանդում
Զրընգում է գործի հետ։

ԽՆՈՑԻ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Հարի՛, հարի՛, խնոցի՛,
Մեջդ բարի, խնոցի՛,
Ունկըդ բարակ, խնոցի՛,
Մեջըդ կարագ, խնոցի՛։

ԿՈՒՅՐ ԱՇՈՒՂԸ

Կույր աշուղը մի տան բակում
Եկել Ֆստել՝ երգ է երգում.
Երգում է ու սազին տալի
Էնպես տխո՛ւր ու սրտալի.
«Է՛յ, պարոննե՛ր, երնե՛կ նրան,
Ով տեսնում է ամեն օր
Կապույտ կամար, արևի լույս
Ու երեսը իրեն մոր»։
Երգում է ու սազին տալի
Տխուր-տխուր ու սրտալի։

ԿՌՈՒՆԿՆԵՐ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Կը՞ռ, կը՞ռ, կըռկըռան
Կռունկները հա՛ թռան.
Կռունկների թևի տակ
Եկավ գարուն մեր դռան։

ԾԻՏԸ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Հուրին գնաց բանջարի,
Բանջար չեղավ՝ խոտ եղավ,
Խոտի տակին ծիտ եղավ,
Ծըլվըլալեն դուրս թռավ։
Միտը թռավ գերանին,
Կանաչ խոտը բերանին։

ԱՐՏՈՒՏԻԿ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Արտուտիկ,
Նախշուն տոտիկ,
Իջնեն կալեր
Գոդտիկ-մոդտիկ,
Ընտրեն քարեր,
Ուտեն կուտիկ,
Կը ծլվլան
Կըլթիկ-կըլթիկ։

1908

ԱՐԱԳԻԼ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Արագի՛լ, բարով եկար,
Հա՜յ, արագի՛լ, բարով եկար.
Դու մեզ գարնան նշան բերիր,
Մեր սրտերը ուրախ արիր։

Արագի՛լ, երբ գընացիր,
Դու մեզանից երբ գընացիր,
Հա՜ փըչեցին բուք ու բորան,
Մաղիկները ամեն տարան։

Արագի՛լ, բարով եկար,
Հա՜յ, արագիլ, բարով եկար.
Բունդդ շինիր էն հին ծառին,
Մեզ մոտ մնա ամբողջ տարին։

ՈՒԼՈՒՆՔ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Գարունը եկավ ամպերով,
Ամպերը եկան անձրևով.
Անձրևը տանեմ արտին տամ,
Արտը ինձ ցորեն տա.
Ցորենը տանեմ ջաղացին տամ,
Ջաղացը ինձ ալյուր տա.

Այլուրը տանեմ մաշտին տամ,
Տաշտը ինձ խմոր տա.
Խմորը տանեմ թոնրին տամ,
Թոնիրը ինձ հաց տա.
Հացը տանեմ բոշին տամ,
Բոշեն ինձ ուլունք տա.
Ուլունքը տանեմ նանիս տամ,
Նանս ինձ ծեծի՜, ծեծի՜,
Տանից քշի, դուրս անի։

ՈՒՐԱԳ ՈՒ ՍԳԼՈՑ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Մի՛ լինի ուրագի պես,
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ,
Այլ եղիր սգոցի պես,
Մին դեպի քեզ, մին դեպի մեզ։

ՃՆՃՂՈՒԿՆԵՐ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Կոտ ու կես կորեկ ունեմ ցանելու համար,
Ճնճղուկներ թռան եկան ուտելու համար,
Կռացա քար վեր առա վարկելու համար,
Ղասաբներ դանակ բերին մորթելու համար,
Աղջիկներ թև քաշեցին փետրելու համար։
Պառավներ պզինձ դրին եփելու համար,
Դուռ-դրկից շուրջ բազմեցին ուտելու համար,
Տերտերներ խաչով եկան օրհնելու համար,
Աշուղներ սազով եկան դովելու համար։
Ա՜յ ճնճղուկիկ,
Կարմիր տոտիկ,
Սպիտակ փորիկ,
Ուտեն կուտիկ,
Խմեն ջրիկ
Առվի եզրիկ,
Պստիկ-մստիկ,
Փախչեն երթան ման գալու համար։

ԿԱՆԱՆՉ ԱԽՊԵՐ

Է՜յ կանանչ ախպեր,
Է՜յ ճանանչ ախպեր,
Արի՜, քեզ հետ բեր
Արևի շողեր.
Թե՛ր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարիաշուն վրտակ,
Երկինք կապուտակ,
Խատուտիկ հավքեր,
Ջրընգան երգեր,
Գառների մայուն,
Խաղ, ուրախություն.
Է՜յ կանանչ ախպեր,
Է՜յ ճանանչ ախպեր։

ԱՇՆԱՆ ՎԵՐՋԸ

Սարի լանջին,
Մեգի միջում
Խոխոջում է
Ու տրտնջում
Ջուրը բարակ,
Ջուրը տրխուր.
— Վաշ-վի՜շ, վաշ-վի՜շ,
Ո՞ւր կորան, ո՞ւր,

Տերև ու խոտ,
Վարդը շաղոտ,
Սարվտրն ուրախ,
Սբրինգ ու խաղ։
Շուրջը դատարկ,
Շուրջը տրխուր...
Վաշ-վի՜շ, վաշ-վի՜շ,
Ո՞ւր կորան, ո՞ւր։

ԳԵՏԱԿԸ

— Ո՞ւր ես վազում
Այդպես արագ,
Ա՜յ դու կայտառ,
Սիրուն գետակ.
Կանգ առ, խաղանք
Էս ծառի տակ։

«Չէ՛, փոքրիկըս,
Գնամ պիտի.
Տես ջաղացը
Գյուղի մոտի.
Պետք է ուժ տամ,
Որ պրարտի։

Ցածն էլ հովտում
Անուշահոտ
Ինձ են մնում
Մաղիկ ու խոտ,
Հոգնած-ծարավ
Տավարն ու հոտ։

Սառն աղբյուրը
Բարձրը սարի

Դրանց համար
Է ինձ տալի
Իր զով ջուրը
Կըկըլալի։

Իսկ կամուրջի
Տակն էլ որ կա,
Կա լվացքը
Պառավ կընկա,
Պետք է լվամ
Քանի լույս կա։

Դե՜, տեսնո՞ւմ ես.
Մնա՛ս բարով.
Ճամփես ցանած
Հազար գործով,
Դադար չունեմ
Ես մինչև ծով»։

ԱՄՊՆ ՈՒ ՍԱՐԸ

Ամպը եկավ նստեց սարին,
Նստեց սարի սուր կատարին։
— Էսի՛, պապի, ասավ նրան,
Լավ օրերդ անցան, կորան.
Խիստ սոսկալի
Ցուրտ է գալիս։
Ասավ, գնաց։
Սարը կամաց
Մտավ սպիտակ
Վերմակի տակ։

ՓԻՍՈՆ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Փիսոն, փիսոն մլավան,
Թավրիզ թողեց, փախավ Վան,
Լեղուն թաթխան, երկար պոչ,
Ինչ որ ուզեց, ասին՝ ո՛չ։

Փիսոն գնաց գողեգող,
Փորը դատարկ, սիրտը դող,
Դունչը մեկնեց կովկիթին,
Շերեփն իջավ ճակատին։

---

1 9 0 9

ԳՈՒԹԱՆ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Լուսը լուսացավ,
Բարին շատացավ.
Վաղ լուսարացին
Գութան լծեցին.
Հորովել հո՞...

Գութանը լարած,
Հոտաղը շարած,
Մանկալը մանին,
Ձեռը ականջին.
Հորովել հո՞...

Գութան ջան, վարի՛,
Ակոսը շարի՛.
Թափ տուր, թև արա,
Շուտ տուր, սև արա.
Հորովել հո՞...

Ցանենք, արտ անենք,
Հնձենք, տուն տանենք,
Ունենանք շատ հաց.
Օրհնյալ է աստված.
Հորովել հո՞...

ԿԱԼԻ ԵՐԳԸ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Արի, եկը չան, Միրան չա՛ն.
Հրամվել ա՞, հրամվել ա՞...
Ոտիդ արա, ուսիդ արա,
Կալը կալսենք, անձրև չըգա։
Տա՛ր, ման արա, ա՛ քեզ մեռնեմ,
Դարման արա, ցավդ առնեմ։
Դարմանը՝ դու, ցորենը մենք
Ձմեռն ուտենք, հանդիսա ապրենք։
Սրը գնաց, ա՛ Միրան չան։
Բանը մնաց, չան, ախպեր չան։
Ոտիդ արա, ուսիդ արա,
Կալը կալսենք, անձրև չըգա։

ՓՈՔՐԻԿ ԵՐԿՐԱԳՈՐԾ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Եկավ գարուն, եկան հավքեր,
Տաքցավ արև, գլգլան չրեր,
Եկան վարի-ցանքի օրեր։
Կռունկն ամոլ արեցի,
Սազերն հորիք լըծեցի,
Ճնճղուկն հոտաղ վարձեցի,
Կաքավն հացվոր բռնեցի,
Արտ ունեի՝ վարեցի,
Ցորեն, գարի ցանեցի։

---

1 9 1 4

ՔԱՋ ԿԻՎԻՎԸ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Ճախիններում, գետին մոտիկ,
Գեղափետուր ու խատուտիկ,
Բարձրասրբունք, ցրցունազարդ
Ո՞վ է ճեմում սեղ ու հպարտ,—
Կի՛-վի՛վ, Կի՛-վի՛վ...

Գեղափետուր ու խատուտիկ
Քաջ Կիվիվն է գետին մոտիկ,
Իր զինվորներն արմուն չորս դին՝
Ուրուրն ու բուն, բազեն ու ցին։

Ուրուրն ու բուն, բազեն ու ցին
Լագլագի դեմ արշավեցին։
Թևին արավ Լագլագն ահից.
«Ամա՜ն, ասավ, մի՛ դիպչեք ինձ,
Ինձ ու մանրիկ իմ ձագերին.
Ճահճի միջին, տովի եզրին
Մի հատ ոտիս կանգնած էսպես՝
Քաջ Կիվիվի ջըրվորն եմ ես»։

Ուրուրն ու բուն, բազեն ու ցին
Ագռավի դեմ արշավեցին։
Թևին արավ Ագռավն ահից.
«Ամա՜ն, ասավ, մի՛ դիպչեք ինձ,
Ինձ ու մանրիկ իմ ձագերին.

Ծառի ծերին, սարին, քարին՝
Սևեր հագած ծընած օրես
Քաջ Կիվիվի երեցն եմ ես»։

Ուրուրն ու բուն, բազեն ու ցին
Սագի վրա արշավեցին։
Թևին արավ Սագը ահից.
«Ամա՜ն, ասավ, մի՛ դիպչեք ինձ,
Ինձ ու մանրիկ իմ ձագերին.
Տիզմի միջին ու մարգերին
Օրոր-շորոր, խանարհ ու հեզ,
Քաջ Կիվիվի տընտեսն եմ ես»։

Ուրուրն ու բուն, բազեն ու ցին
Կրռունկի դեմ արշավեցին.
Թևին արավ Կրռունկն ահից.

«Ամա՜ն, ասավ, մի՛ դիպչեք ինձ,
Ինձ ու մանրիկ իմ ձագերին.
Ամեն աշխարհ, որ աշխարհին
Գարունը գա՝ բանա հանդես՝
Քաջ Կիվիվի աշուղն եմ ես»։

ՉԱՓԱԾՈ ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐ

Հովհ. Թումանյան, հ. I—12

1887

ԱՂՈԹՔ

Սողոմոնի պես, տե՛ր,
Ես խելք չեմ ուզում,
Ինձ երկար օրեր
Եվ փող տուր բազում։

Մի ձիոք էլ շոր,
Միայն մոդնի, տե՛ր,
Մին էլ մի հաստ փոր,
Տրոստ, ակնոցներ։

Եվ բավական է,
Դու վերեն գիտես,
Թե ինչեր կանեմ,
Այդ ծառադ գիտեմ։

1 8 9 7

ՀԱՅԻ ԶԱՐՄԱՆՔԸ

ՆՎԵՐ Պ. ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ԳԱՎԹՅԱՆԻՆ ԻՐ ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔՍԱՆՀԻՆԳԱՄՅԱԿԻՆ

Մեր բեմի Միծա՛ղ, քսանհինգ տարի
Դու հրճվանք տվիր այսքան սրտերի.
Անձայն թաքցրրիր ցավերդ ներքին,
Եվ այդ հանճարեղ ծաղրը քո դեմքին
Դարձար հայկական բեմի պարծանքը.
Բայց այդ չշարժեց հայի զարմանքը։

Սիրելիդ մեռավ, և նա դագաղում՝
Դու խեղկատակի դեր էիր խաղում.
Միմոսի ճամուկ, երկայն գրդակով,
Միծաղում էիր հրզոր կատակով,
Զսպելով հոգուդ անհուն տանջանքը.
Այդ էլ չշարժեց հայի զարմանքը։

Քո շրջեղ խաղով մարդիկ հիացան,
Մափեր զարկեցին ու գոհ հեռացան.
Դու տուն գնացիր հոգնած, վաստակած,
Ոչ փող ունեիր, ոչ մի պատառ հաց.
Եվ սակայն տարար այդ չարքաշ կյանքը...
Այդ էլ չշարժեց հայի զարմանքը։

Դու քո ահագին, հսկա շնորհքով
Շատ տառապեցիր անտրտունջ հոգով,

Աղքատ, անբնակիր, անօգ ու անգործ
Երկար շրջեցիր փողոցից փողոց,
Վերջը գնացիր ու մտար բանկը.
Այդ էլ չշարժեց հայի զարմանքը։

Բայց չկարացիր քեզ լա՜վ մշակել,
Եվ ինչպես շատերն էին գուշակել,
Համաշխարհա՜յին արտիստ չդարձար,
Ոչ ուսո՜ւմ առար, ոչ դպրո՜ց անցար...
Իզուր փչացրիր քո ձիրքն ու կյանքը...
Այդ սաստիկ շարժեց հայի զարմանքը։

1898

ՀԱՅԻ ՑԱՎԸ

(ՆՎԵՐ «ՄՇԱԿ»-ԻՆ)

Հայը թեև շատ ցավ ունի,
Բայց ողջ մեկ չեն նրա համար,
Մինն է նրան միայն սիրելի,
Նրա հոգուն, խելքին հարմար։

Առե՛ք, ահա, մեր թերթերը.
Ամեն տեղից գրում են միշտ,
Թե՝ տրգետ է մեր տերտերը,
Խիղճը մեռած, բարքն ամբարիշտ։

Զեռք ես առնում— էլ բան չկա—
Մեր տերտերը ագահ, տրգետ,
Մառաղահաս մի աղջկա
Պրսակել է մի ծերի հետ։

Շուտ ես տալիս, այլ տեղ՝ կարդում.
Մնացել են մարդիկ խաթում.
Տերտերն այնտեղ լոթի մի մարդ,
Գիշեր-ցերեկ խաղում է կարտ։

Մի ուրիշ տեղ տերտերն անկին
(Աստված հայից հեռու տանի)
Քանի տարի ծուխի միջին
Կին է պահում ապօրինի...

Հապա այստեղ՝ մեր կենտրոնում,
Հայ տերտերը դրժած ուխտին,
Առանց վարձի չէ կամենում
Հողին հանձնել հայ պանդուխտին։

Այսպես անվերջ ու անխբտիր
Ուր որ գնաս, մի կարճ խոսքով,
Շուշի, Ղզլար, Բաթում, Իգդիր,
Կարս, Երևան, Ղազախ, Մոսկով,

Գորի, Գանձակ, Փիր, Ասխաբադ,
Բաքու, Նուխի, Թիֆլիս, Թելավ,
Ամեն տեղ էլ տերտերը վատ,
Ազգի դլխին դարձել է ցավ...

Եվ խելճ ազգը շատ մտածեց,
Վերջը մի ճար գտավ սրբան,—
Շատ հոգևոր դպրոց բացեց
Մինչև անգամ ընծայարան...

Բայց ահա մեր խելոքները
Հարց են դնում այսօր կրկին՝
Խելքի՞ կրգա հայ տերտերը,
Եթե ուսում առնի կարգին։

Եվ շատ ճիշտ է այս կասկածը.
Թե ուսումը խելոքացներ,
Մի՞թե ուսում առած մարդը
Այս տեսակ բան կհարցներ։

Այսպես մեր հին ցավը էլի
Մնաց ընդմիշտ անբուժելի,
Եվ հայ թերթը շատ տարի դեռ
Պիտի գրի՝ տերտե՞ր, տերտե՞ր...

1898

ՀԱՑԻ ՏՐՏՈՒՆՋԸ

(ՖԵԼԻԵՏՈՆԻ ՓՈԽԱՐԵՆ)

Զարմանք բան է մեր բախտն, ամ՞ոպեր,
Հայ գործիչին ինչ էլ անես,
Լավ տեղ կըտաս, պատիվ, թե սեր,
Վերջը պետք է դու փոշմանես.
Ահա ես ձեզ համբեմ մի-մի,
Մեղքն, ասացեք, ո՞ւմն է հիմի...
Չէ՛, մեզանում, աստված վկա,
Արժանավոր մի մարդ չըկա։

Պոետն, ասին, տաղանդ ունի,
Մենք էլ դրինք գործակատար,
Բայց տեր աստված հեռու տանի՝
Հաշիվն այնպես խառնեց իրար,
Այնպես անկարգ, ցրված եղավ,
Որ իսաղեյնի գահլեն փախավ...
Չէ՛, մեզանում, աստված վկա,
Մի շնորհքով... պոետ չըկա։

Դերասանին շատ գովեցին,
Այնքան ասին՝ գլուխ տարան,
Մենք էլ տարանք... բանկի միջին
Մի հեշտ պաշտոն տվինք իրան,
Մի հե՞շտ պաշտոն, բայց տես այն էլ
Կարենո՞ւմ է գլուխ հանել...
Չէ՛, մեզանում, աստված վկա,
Մի հատ կարգին... արտիստ չըկա։

Վիպասանին քանքար ասին,
Մենք էլ արինք... աստվածաբան,
Բայց մի հարցրեք նրա մասին,
Թե ի՞նչ կասի սովրող տղան.
Չէ իմանում պատմել իրավ,
Թե Քրիստոսն ինչպե՛ս հարյավ...
Չէ՛, մեզանում, աստված վկա,
Կարգին... մի վեպ գրող չըկա։

Հայրենասեր և հոգեխոս
Քարոզիչ էր մեծ ու բարի,
Մենք էլ արինք... պոլիտիկոս,
Ասինք՝ թող մեզ կառավարի.
Բայց գործերը այնպես տարավ,
Որ աշխարքը լեզու առավ...
Չէ՛, մեզանում, աստված վկա,
Մի հասկացող... գլուխ չըկա։

Վերջը, խոսքս կտրում եմ կարճ,
Ով որ մեր մեջ ձայն է հանում,
Մենք քաշում ենք այսպես առաջ,
Բայց միշտ նրանք ետ են գնում.
Դուրս է գալիս մի օր հանկարծ,
Որ խաբված ենք աչքներս բաց...
Չէ՛, մեզանում, աստված վկա,
Մի ընդունակ գործող չըկա։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ «ՄԱՋԱՆԴԱ»

(ՆՎԵՐ ԻՄ ԲԱՐԵԿԱՄ Ղ. ԱՂԱՅԱՆԻՆ)

Այսքան երազ, որ մենք Հայերս
Ընդունակ ենք տեսնելու,
Պարզ է, որ շատ սազում էր մեզ
Լավ երազդիրք կազմելու։

Եվ գրքերից՝ միշտ հայ ազգը
Երազագիրքն է շատ հարգում,
Ինչպես կազմող տեր-հոր ազգը
Ցույց է տալիս «Մըշակ»-ում։

Տեր-հայրն այնտեղ ասում է, որ
Էլ չթողին երազգիրք.
Ամեն կողմից ուղարկում են
Շատ նամակներ ու խնդիրք...

Երազագիրքն է, ասում է նա,
Հայի ոսկի ընկերը...
Եվ սրանում կասկած չկա՝
Փաստ է ասում տերտերը։

Երազգիրքը չի կարելի
Տալ ապառիկ ոչ մի հատ...
(Ի՞նչ ապառիկ, երբ մի բանի
Մուշտարի կա այսքան շատ)։

Դեհ, իմ անգին Ասլան-ապեր,
Արի թողնենք ամեն ձիրք.
Էլ չըգրենք երգ ու վիպեր,
Շինենք մի լավ երազգիրք։

Ա՜խ, եթե մենք գեթ մի-մի հատ
Երազագիրք հորինենք,
Այնուհետև դրշով ապրող
Կարգին գրող կըլինենք։

Էլ չենք ծախիլ մեր գրքերը
Ուբսունուհինգ տոկոսով,
Կոպեկ-կոպեկ առնել փողը,
Այն էլ՝ կանխիկ միայն կիսով։

Տեր-հոր նման քսան տողից
Երկար մի ազգ կըգրենք,
Մինչև նոր տիպն ընթերցողից
Համբերություն կըխնդրենք...

Եվ մեր գործից երբ կըստանանք
Այսպես առատ վարձ ու փող,
Նոր կըտպենք ավելի թանկ,
Եվ ավելի մեծ ու ճոխ։

Իսկ երբ տանենք գրախանութ,
Էլ չենք կանգնիլ լուտ ու խեղճ.
— Հայի ոսկի ընկերն է սա.
Ոչ ապառիկ և ոչ զեղչ...

Ապրի՛ս, տեր-հայր, ի՞նչ լավ գիտես
Մեր հայ ազգի ճաշակը.
Թե չէ՝ մենակ պարծենալով
Ջահլա տարավ «Մըշակը»։

1899

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

(ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ)

— Հայրի՛կ, տե՛ս, տե՛ս, աստղը թռավ,
Անհետ կորավ երկընքից,
Ո՞վ էր արդյոք, որ զրկվեցավ
Կեսդիշերին իր կյանքից։

— Ո՛հ, իմ դստրիկ, հանդիստ եղիր,
Մի հոգևոր հայր էր նա,
Գիշեր-ցերեկ մի հոգս ուներ,
Որ մեզնից փող ստանա։

Փարիսական իր գործերով
Աշխարհ խարեց, զրվվեցրուց,
Այդ պատճառով աստված նրա
Աստղի լույսը խավարցուց։

Նա ամեն բան ծախեց փողով,
Ուրեց ամեն սրբություն...
Այժմ այնտեղ ահ ու դողով
Հաշիվ կըտա աստծուն։

— Հայրի՛կ, տե՛ս, տե՛ս, մեկն էլ ընկավ,
Եվ չըթողեց ոչ մի գիծ,
Ասա, հայրիկ, էլ ո՞վ հանդավ
Ու պակասեց մեր կյանքից։

— Ո՛հ, իմ դստրիկ, խաղաղ մնա,
Կեղծավորի մի աստղ էր,
Որ ձևացավ ամբողջ կյանքում
Առաքինի, ազգասեր։

Ամեն անդամ նա խնջույքում
Բախտ էր մաղթում խեղճերին,
Ազգի կենացն առաջարկում,
Արտասուքը աչքերին։

Բայց խեղճերը նրա ձեռքից
Գիշեր-ցերեկ հալածված,
Ազգին չեղավ նա կարեկից,
Ոչ ազգ գիտեր, ոչ աստված։

— Հայրի՛կ, տե՛ս, տե՛ս, աստղը թռավ,
Հետքից մի կարճ գիծ թողեց,
Աստղը թռավ դեպի Բաքու,
Էլ մյուս անդամ չերևեց։

— Ո՛հ, իմ դստրիկ, հանդիստ եղիր,
Այն գործիչի մի աստղ էր,
Որ իր սրտում ծնված օրից
Զուներ անկեղծ գործի սեր։

Նա ազմրկեց, անուն հանեց,
Սանդուղք շինեց իր ազգին...
Եվ ոչ ծաղրեց, երբ ապրում էր
Գըրպանները լի ոսկին։

— Հայրի՛կ, տե՛ս, տե՛ս, մեկն էլ ընկավ,
Հետքից թողեց մի ծուռ գիծ,
Ասա, հայրիկ, էլ ո՞վ հանգավ,
Աստղը պակասեց երկընքից։

— Ո՛հ, իմ դստրիկ, մի՛ վրդովվիր,
Մի խրմբագրի աստղ էր այն,
Որ իր թերթը տրպագրում էր
Անձի համար միմիայն։

Նա՝ կուրացած իր ցած կրքից՝
Հայհոյում էր անամոթ,
Եվ դորա տեղ միշտ իր ազգից
Պահանջում էր բաժանորդ։

Գրրոշները նորա թերթից
Հիշոցներով հալածված,
Զուներ մի տեղ, մի թղթակից,
Որ չըլիներ վշտացած։

— Հայրի՛կ, հայրի՛կ, ինչ լավ եղավ՝
Այդ աստղերը վայր ընկան,
Հայրի՛կ, հայրի՛կ, այդպես մարդիկ
Մեր աշխարհքումն էլ չկա՞ն։
— Ո՛հ, իմ դստրիկ, մի մասն են լոկ
Այդ աստղերը, որ ընկան,
Մեր երկնքում, գիտե՞ս արդյոք,
Որքա՞ն այդպես աստղեր կան։

ԿՏԱԿ

Դե գրի, տեր Հայր։ «Յանուն Հօր և որդոյ»...
(Այսպես անիրավ բա՞ն եք տեսել, տո՛,
Կյանքս մաշելով փող դիզեմ այսքան,
Հիմի իմ ձեռքով տամ սրբան-Ներսե՞ն...
Բայց դե ի՞նչ անեմ, հետս ու՞ր տանեմ...
Գոնե այս վերջին առուտուրն անեմ,
Գուցե կաշառեմ աստծուն ու ազգիս,
Սրանով փրկեմ անունս ու հոգիս...)։
Դե գրի, տեր Հայր։ Ուշքս դեռ վրես,
Կտակ եմ անում իմ ապրիս այսպես։

Ամենից առաջ ես իմ կտակում
Իմ մեռած եղբոր որդոցն եմ գրկում.
Կտակ եմ անում, որ նրանք երբեք
Զուտեն իմ փողից և ոչ մի կոպեկ։
Զուր տեղը իմ դեմ դատ էին բացել,
Թե իրանց բաժնին ես եմ տիրացել.
Լավ էր, որ հազիվ պրծա կաշառով,
Մարդիկ էլ տեսան ընկել եմ շառով...

Գրի մեր ժամին մի հարյուր թուման,
Հետն էլ այսպիսի մի անխախտ պայման,
Որ եկեղեցու գավթում ինձ թաղեն,

Կնոջս համար էլ կողքիս տեղ թողեն,
Տարին հինգ անգամ պատարագ անեն,
Հոգիս անպատճառ դրախտը տանեն.
Սրանից հետո հոգան ինձ վերա,
Հոյակապ արձան դնել մարմարյա,
Ոսկի տառերով վերան փորագրած,
Թե ազգիս համար ինչեր եմ արած։

Վանքի դպրոցին գրի մի գումար,
Որ իմ անունով, իմ հոգու համար
Որդեգիր պահեն Ներսե տոկոսով.
Ամեն տարի գան խմբով, հանդիսով
Դամբանիս վրա գովք ու ճառ ասեն,
Ազգի մեծերի շարքում ինձ դասեն,
Պատկերս էլ կախեն դպրոցի պատից,
Թեկուզ մի քիչ ցած մեր հայրապետից։
Ապա այն տունը (որ կեղծ թղթերով,
Հոգիս սևելով, սրտով ու զոռով,
Իբրև պարտքի տեղ, առա այն խեղճից
Ու իրան լալով դուրս արի միջից...),
Իմ հոժար կամքով, իմ վերջի օրին
Այն էլ տալիս եմ մեր մայր աթոռին,
Որ վեհափառը գրքի մի կոնդակ,
Անունս սփռի աշխարհ ՝բովանդակ
Եվ ինձ օրհնանքի այնպես մի գիր տա,
Որ երկրնքումն էլ ասաված հավատա...

Դրանից հետո մի գումար գրքի
Հօգուտ մեր ազգի խեղճ ու որբերի
Ընկերությանը Բարեգործական,
Որ գլուխն անշարժ մնա հավիտյան,
Ներսե տոկոսը մեր մեծ տոներին
Բաժնեն (իմ ղրկած) խեղճ ու որբերին,
Ամեն մեկին տան մի-մի արասի,
Որ ուտի՝ հոգուս ողորմի ասի։

— Հապա, օրհնված, տանու տերտերին
Ժամից չե՞ս տալիս քո հոգու խերին.
Քանի վախտ ունես, այդ էլ ասա շուտ...
Ասա՝ տանը ցիք տան լավ կողոպուտ,
Ոսկի սհաթը դ, նոր շորերը դ տան,
Որ հեշտ անց կենաս դուռն արքայության...
— Լավ, տեր հայր, այդ էլ քեզ եմ կտակում,
Որ ինձ միշտ հիշես քո պատարագում,
Դագաղիս վրա մի քարտեղ ասես,
Թե ինչ հոգևոր, մեծ մարդ էի ես...
Այս կտակն արավ հայ բարերարը
Ու մեռավ գնաց այն մյուս աշխարհը.
Միշտ երախտագիտ մեր ազգը հայոց
Նրան հրուշակեց ազնիվ բարեգործ,
Իր ժամի գավթում թաղեց ու մարմար
Արձան կանգնեցրեց իր գործքին հարմար,
Վերան էլ գրեց պերճ տապանագիր.
— Ո՜հ, վանի հոգի, դու խաղա՞ղ հանգիր,
Թեև դու մեռար, բայց միշտ քո հոգին
Հրսկում է բարձրից քո թրշվառ աղգին...
Բայց երբ որ գնաց այն մյուս աշխարհը
Եվ ուզեց մըտնել արդարոց շարը,
Հանեց օրհնանքի տարած պատճենը,
Տերն մեր կարդաց ու գրդեց դենը.
— Քո սիրտը հանիր, տուաց, հողեղեն,
Այնտեղ են գրված գործերդ ամեն։
Եվ մարդու սիրտը կարդաց մեր տերը,
Ուր տըպված էին նրա գործերը.
Կարդաց չա՞ր գործեր,— նաև կրտակը,
Եվ... խսկույն գրկեց դժոխքի տակը։

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԲԱԼԼԱԴՆԵՐ ԱՌԱԿՆԵՐ

1886

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

I

Ժամանակով Կատուն ճոն էր,
Շունն էլ գլխին գրդակ չուներ,
Միայն, գիտեմ ոչ՝ որդիանց որդի,
Ճանկել էր մի գառան մորթի։
Եկավ մի օր ձմեռնամըտին,
Կատվի կուշտը տարավ մորթին։

— Բարի աչողում, ուստա Փիսո,
Գլուխըս մըրսեց, ի սեր աստծո,
Ա՛ռ էս մորթին ու ինձ համար
Մի գդակ կարի գլխիս հարմար։
Վարձիդ համար միամիտ մընա,
Համա-համա շատ չուշանա։

— Աչքիս վերա, քեռի Քուչի,
Մի գրդակ ա, հո մի քուրք չի.
Քու թանկագին խաթեր համար
Ուրբաթ օրը համեցեք տար։
Փողի մասին ավելորդ է,
Մեր մեջ խոսելն էլ ամոթ է.
Ի՞նչ մեծ բան է, տո՛, հեր օրհնած,
Միա՛յն, միա՛յն մի գրդակի վարձ։

Ուրբաթ օրը քեռի Քուչին՝
Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին
Թափ-թափ տալով՝ ծանրը ու մեծ,
Ուստա Կատվի շեմքում կանգնեց.
— Ուստեն ո՞ւր ա... փափախս ո՞ւր ա...
— Մի քիչ կացի, հրես կերևա։

II

Ուստին եկավ քուրքը հագին,
Շանը տեսավ, բեղի տակին
Իրեն-իրեն քիչ փընթփընթաց,
Ու մուշտարու վրրա թընդաց.
— Ցուրտը տարա՞վ... վա՜հ, տընաշեն,
Չես թող անում մի շունչ քաշեն.
Հեշտ բան հո չի՛, հրլա նոր եմ
Ցրրցամ տրվել, թե որ կարեմ։

— Դե հե՛ր օրհնած, էտենց ասա,
Էդ բարկանա՞լդ էլ ընչիս ա։
Փող եմ տրվել, շուտով կարի,
Թե չէ՝ ասա՛ էդուց արի։
Համ ասում ես, համ չես կարում,
Համ խոսում ես, վրրես դառում,
Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,
Քանի՞, ախպեր, դրնամ ու գամ...
Ասավ Քուչին ու նեղացած
Վերադարձավ գրլուխը բաց։

III

Մին էլ եկավ, դարձյալ շրկար.
Էս անգամը դիպան իրար.
Էլ անպատիվ, անկարգ խոսքեր,
Էլ հին ու նո՜ր, էլ հեր ու մե՜ր,

Էլ գող Փիսո՜, էլ քաչալ Շո՜ւն...
Բանը հասավ դիվանբաշուն։
Շունը մինչև գնաց, եկավ,
Ուստա Կատուն կոտրրն ընկավ,
Գրլուխն առավ ու մի դիշեր
Հա՜յդե, կորավ, էն կորչիլն էր...

IV

Էն օրվանից մինչև օրս էլ
Շունն էս բանը չի մոռացել,
Իր մաքումը դեռ պահում է,
Որտեղ Կատվին-պատահում է,
Վեր է թրռչում, վրրա վազում,
Իրեն մորթին ետ է ուզում.
Իսկ սեներես Կատուն հանկարծ
Ետ է դառնում ու բարկացած
Փըշտացնում է, մրթում նոր եմ
Ցրրցամ տրվել, թե որ կարեմ։

ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Մի օր Չրչրիկն ու Ճայն եկան
Թե՝ ե՛կ դառնանք վաճառական։
Ասին ու խելք-խելքի տրվին,
Հավան կացան, պայման դրրին.
Բայց՝ արի տես... որ փող չունեն։
Շատ միտք արին, թե ինչ անեն.
Վերջը եկան Փրշի մոտը,
Ընկան նրրա ձեռն ու ոտը,
Ու մուրհակով,
Շահով, կարգով,
Փող վեր առան բավականին,

Ինչքան պետք էր իրենց բանին,
Չիղջը մընաց, ոչնչահ դառավ,
Ճայը բոլոր փողերն առավ,
Առավ, նըստեց նավի միջին,
Հասավ Մըսրը, Չինումաչին,
Ֆարս, Հընդըստան,
Արաբըստան...
Է՛լ թանկագին քիրմանի շալ,
Է՛լ մարգարիտ, ղըմրուխտ ու լալ,
Հընդու խուրմա, փըստա, բաղամ,
Եվ... ո՞ր մեկի անունը տամ.
Ինչ որ տեսավ, աչքը սիրեց,
Առատ-առատ նավը լցրեց.
[Նավը լցրեց հազար բարով]
Ու եռ՝ եկած ճանապարհով
Ուրախ-ուրախ տուն էր դալի։
Ճամփին ծովում սարսափելի
Ալեկոծում, մրրիկ ելավ,
Զարկեց, տարավ ապրանք ու նավ։
Միայն սովդաքյար Ճայը լնեօր
Ազատվեցավ մերկ ու տրկլոր։
Ազատվեցավ՝ փառք իր աստծուն,
Բայց ի՞նչ սըրտով խեղճը դա տուն.
Գա՛— ի՞նչ ասի պարտքատերին,
Ո՞նց երևա իր ընկերին...
Ընկերն էնտեղ՝ դուռը կըտրած,
Աչքը ճամփին, վիրդ ծրուած,
Համրում է՝ օրն օրի վրքա,
Թե՝ մեր Ճայը ե՛րբ պիտի դա...
Երկար նայեց,
Ճամփեն պահեց,
Շատ լավ ու վատ երազ տեսավ,
Մինչև պարտքի օրը հասավ,
Ու՝ մուրհակի թուղթը ձեռին,
Փուշը տրճկվեց կըտեր ծերին.

— Է՛յ, բարեկամ, ի՞նչ բանի եք.
Էլ չեք ասում, թե պարտք ունեք...
Գործ բրոնեցիք, հոբս ողորմի,
Ետ տվեք դե փողս հիմի։
Թուղթ եք տըվել՝ վախտ իմացեք,
Ամոթ, արուս, ա՞հ ունեցեք...
Թալան հո չի՞... մեղք եմ ես էլ...
Ախպե՞ր, էսպես բա՞ն եք տեսել.
Ոսկի տա մարդ իրեն ձեռով,
Չըկարենա առնի գլոխով...
Սրանից հետո դե արի դու
Ու ձեռ մեկնի աղքատ մարդու...
Գոռգոռում էր ողջ թաղակում,
Հայհոյում էր, խայտառակում.
Ամեն մարդ էլ, ով որ լըսում,
Հենց մի բերան էն էր ասում.
—Ա՛յ ամոթ ձեզ, Չըղջիկ ու Ճայ,
Ի՞նչ ենք լըսում.— վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ,
Անուններդդ վաճառական,
Ու էս տեսակ խայտառակ բա՞ն...
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ,
Չըղջիկ ու Ճայ...
Չըղջիկն էսպես միշտ լըսելիս
Սիրտը բերնով դուրս էր գալիս։
Բարկանում էր իրեն մըտքում,
Անիծում էր, ընդում, թըքում.
— Ա՛յ քու տունը քանդվի, ա՛ Ճայ,
Ա՛յ դու դառնաս դըրոսի փայ,
Էս ի՞նչ բան էր, որ դու արիր,
Գլուխս էս ի՞նչ փորձանք բերիր...
Ու խընդրում էր ամեն անգամ.
— Մի՛ նեղանա, Փուշ բարեկամ,
Շատ ես կացել,
Կա՛ց մի քիչ էլ։
Թուղթ ըստացա երեկ Ճայից,

Թե՝ դուրս եկա Աղաբիայից.
Որտեղ որ է՝ շուտով կըգա,
Դեռ մի բան էլ ավել կըտա...
— Ես չեմ ուզում ավելն, ախպեր,
Կանխիկ համրած իմ փողը բեր.
Շահ նք գըրել,
Վախտ նք դըրել.
Ինչ գըրած ա, էն եմ ասում,
Ձեզնից ավել բան չեմ ուզում։
— Չէ, աղա Փուշ,
Թե վաղ, թե ուշ,
Փողն իր կարգին, շահն իր կարգին,
Իսկ պատիվդդ... ես իմ հոգին...
Ես հույս ունեմ... ասենք պարտք ենք...
Բայց չէ՞ ախար մենք էլ մարդ ենք...
Չէ՛, քու արածն ով մոռանա,
Իր ասածն էլ նա կուրանա...

Խեղճը էսպես լեղու ածավ,
Շատ հույս տըվավ, շատ խոստացավ,
Շատ սուտ ասավ պարտքատերին,
Շատ ըսպասեց իր ընկերին.
Բայց ընկերը չըկա՞, չըկա՞,
— Էս ի՞նչ ցավ էր, ասված վըկա.
Ի՞նչ իմ բանն էր՝ մըտա մեջը,
Որ խայտառակ լինեմ վերջը...
Ի՞նչպես պըրծնեմ էս կըրակից,
Էս ահագին պարտքի տակից.
Էլ ի՞նչ ասեմ,
Ո՞նց ըսպասեմ.
Նա ե՞րբ կըգա, ի՞նչ իմանամ,
Ո՞ր ջուրն ընկնեմ... ո՞ւմ մոտ դընամ....
Շատ միտք արավ,
Դես-դեն թըրտավ,
Ինչ որ ուներ տանը, հագին,

Ողջ հավաքեց, տըվավ պարտքին,
Ցիփ մերկացավ։
Էլ չըպըրծավ։
Վերջը տեսավ, որ ճար չեղավ,
Թևեր առավ, ինքն էլ փախավ,
Փախավ, կորավ, որ էլ էնպես,
Դատարկ, սընանկ ու սևերես,
Ոչ պատահի պարտքատերին,
Ոչ երևա ըլլս աշխարհին։

Այնուհետև իր նամուսից,
Ջըղջիկը՝ մերկ, փախած լուսից,
Ցերեկները դես-դեն թաքչում,
Գիշերն է միշտ մըթնում թըռչում,
Որ չերևա իր թայ-թուշին,
Ոչ պարտքատեր աղա-Փուշին։
Ճայն էլ ծովում,
Ճըչում, ծըվում,
Ջուրն է մըտնում,
Դուրս է պըրծնում,
Թևին տալիս,
Ման է գալիս,
Թե մի գուցե բախտը բանի,
Կորուստն էլ ետ ջըրից հանի։
Իսկ Փուշն, արդեն հույսը հատած,
Ճանկ ու ատամ սուր պատրաստած,
Կողքովն ով որ անց է կենում՝
Քաշում է փեշն ու հարցընում,
Թե չե՞ն տեսել մեկն ու մեկին,
Էն լիրբ Ճային կամ Ջըղջիկին.
Ու էն օրից մինչև օրս էլ
Մեկը մեկին դեռ չեն տեսել։

1887

ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ)

Ասում են, իբրև, երկնում կապուտակ
Կա մի լուսեղեն սիրուն ապարանք.
Այնտեղ ելիքներում, ամպերի գլխին
Ամուր, անսասան կանգնած է նա միայն։
Նրա դռներին պահնորդ չէ հսկում,
Ոչ մոտից անցնող, ոչ ձայն է լսվում.
Միայն դյուցազական ամրոցի միջին
Տաշտքն առաջին լոքած է մի կին։
Խմոր է հունցում, և բաղուկները
Վերև են բաշած մինչ արմունկները.
Խմոր է հունցում և անուշ երգում,
Որ փափկահնչյուն լսին ելիքներում
Անտառ այերը թևին տատանում,
Կամաց հեռանում է, անհետանում։
Ահա համբընթաց, ձյունափայլ, ճերմակ
Ամպերը կտրած միմյանց քամակ,
Ինչպես գնայուն լեռներ ահագին
Ունկնդիր են այն քաղցրալուր երգին։
Այն հրաշագեղ կինն երկնաքնակ
Ունի երկու հատ դեղեցիկ զավակ.
Եվ ահա կանչեց իր սիրուն դուլգին,
Զայն տվեց թե չէ՝ դուրս եկան կողքին։
Աղջիկ է մեծը, անունն՝ Արեգակ,
Նմանը չըկա երկնքում հրեշտակ.
Աչքերը սև-սև, մազերը գանգուր,

Հոնքերը կեռ-կեռ, տանս մի-մի թոռ.
Իսկ փոքրը՝ տղա. անունը Լուսնյակ,
Շարմաղ, ինչպես ձյուն, իրավ լուսունակ։
Այդ թե խոսեց մայրը լուսածին.
«Գնացե՛ք, որդիք, Արեգակ, Լուսին,
Մեկդ գիշերը, մյուսդ ցերեկը,
Լուսավորեցեք խավար աշխարհքը.
Դե՛հ, բավական է, գնացեք, որդիք,
Հերիք խավարում խարխափեն մարդիկ»։
—Ես ցերեկը կերթամ, ասաց Լուսնյակը,
Լուսավորելու խավար աշխարհքը,
Եվ այնտեղ ինչ որ տեսնեմ, նկատեմ,
Կրդամ քեզ, մայրիկ, մին-մին կրպատմեմ։
—Վա՜հ, չէ՞, ես պիտի գնամ ցերեկը,
Խոսեց վրդովված սիրուն Արեգը.
Միթե աղջիկը կըշրջի՞ գիշերը,
Որոշիր, խնդրեմ, մայրիկ, մեր գերը։
— Լսի՛ր, իմ Լուսին, չէ՞ խելոք ես դուն,
Հորդորեց մայրը յուր համառ որդուն,
Արեգն աղջիկ է, նա կըվախենա,
Դու քաջ տղա ես, գիշերը գնա։
Սակայն Լուսինը պպզին էր կանգնել,
Սիրուն քրոջը չուզեց գիշանել.
Եվ այդ ժամանակ մայրը լուսածին
Բարկացած գարձավ համառ Լուսնյակին.
— Բավական Լուսին, պատանի դու վես,
Գնա՛ քո գործին, հեռացիր աչքես։
Ասաց, Լուսնյակի երեսին սիպտակ
Խմորոտ ձեռքով գարկեց մի ապտակ։
Խռովեց Լուսինն ու լացակընած
Դուրս Եկավ իսկույն իր գործին գնաց.
Բայց ապտակ կերած օրվանից գեսը
Խմորոտ է նրա քիթն ու երեսը։
Սակայն ամաչկոտ Արեգակն այժմ էլ
Մարդուց էր քաշվում ցերեկով շրջել.

Եվ ահա մայրն Արևին տվեց
Մի բուռը ասեղ, այսպես պատվիրեց.
— Հողեղեն աչքեր թե որ նայեն քեզ,
Այս ասեղներով նրանց կրծակես՝
Արևը շիկնած, մեծ ապարանքից
Դուրս եկավ երկինք, ամպի արանքից
Նայեց աշխարհքին, կենսատու շռայլ
Իջավ, լուսացավ երկիրը մռայլ,
Եվ զվարթացավ բնությունն ամեն՝
Բայց մինչև այսօր ոչ մի հողեղեն
Չէ կարող նայել նրա լույս դեմքին,
Աչքեր է ծակում, ասեղ կա ձեռքին՝
Մեկը ցերեկը, մյուսը գիշերը,
Չոկ կատարելով իրանց դերերը.
Երկար ժամանակ իրար լրտեսան,
Սաստիկ կարոտով տանջվել սկսան՝
Եվ տվեց ասաված իրարից բաժան
Քույր ու եղբորը մի ժամ տեսության.
Այդ տեսակցության ժամին կարոտած
Քույրն ու եղբայրը գրկում են միմյանց.
Իսկ քույր ու եղբայր երբ որ գրկվում են,
Մարդիկ մի առ ժամ լույսից զրկվում են՝

1891

ԱԽԹԱՄԱՐ

Միծաղախիտ վանա ծովի
Փոքրիկ գյուղից առավոտյա,
Ծովն է մրտնում գաղտագողի
Ամեն դիշեր մի տղա՝

Ծովն է մրտնում առանց նավակ,
Բազուկներով առնացի
Ջուրը հոդփում, լող է տալի
Դեպի կրդդին դիմացի՝

Խավար կրդդուց պարզ ու պայծառ
Մի լույս կանչում է նրրան,
Մի վառ փարոս նրրա համար,
Չրմոլորի իր ճամփան՝

Սիրուն Թամարն ամեն դիշեր
Այնտեղ կրբակ է անում,
Եվ բսպասում է անհամբեր
Այնտեղ՝ մոտիկ դարանում՝

* * *

Ծրփում է ծովն ալեծածան,
Ծրփում է սիրտը տրդի.
Գոռում է ծովն ահեղաձայն,
Նա կրռվում է կատաղի՝

Եվ Թամարը սրբատաշրոփ
Արգեն լքսում է մոտիկ
Ջրի ճողփյուն, ու տղջ մարմնով
Միրուց այրվում է սաստիկ։

Լքուեց։ Ծովի խավար ափին
Կանգնեց սև-սև մի բստվեր...
Ահա և նա... իրար գրտան...
Կասկածավո՞ր լուռ գիշեր...

Միայն ալիքը Վանա ծովի
Մեղմ դիպչում՝ են ափերին,
Հրճրբելով հեռանում են
Շրշունչներով անմեկին։

Ներանք ասես փրսփրսում են...
Ու աստղերը կամարից
Ակնարկելով բամբասում են
Լիրբ, անամոթ Թամարից...

Բամբասում են կուսի սրբոում...
Ժամ է արգեն... ու կբրկին
Մինն ալեկոծ ծովն է մրանում,
Մյուսն աղոթում եկերբին...

* * *

«Ո՞վ է ջահել էն խիզախը,
Որ հենց հարրած իր սիրով,
Սրբոից հանած ահն ու վախը
Ծովն անցնում է գիշերով

Ծովն անցնում է մյուս ափերից
Մեր Թամարին համբուրում...
Աղջի՞կ խելի նա մեր ձեռի՞ց...
Ի՞նչի տեղ է մեզ դընում...»։

Էսպես ասին վիրավորված
Կրղղու միջի ջահելներ
Ու Թամարի ձեռքով վառած
Լույսը հանգցրին մի գիշեր։

Մոլորվեցավ խավար ծովում
Լողորդ տղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերո՞ւմ
Հառաչանքներն՝ «Ա՜խ, Թամա՜ր...»։

Մոտ է ձայնը. խոլ խավարում,
Ժայռերի տակ սեպացած,
Ուր ամեհի ծովն է գոռում,
Մերթ կորչում է խլացած,
Ու մերթ լքսվում ուժասպառ,
«Ա՜խ, Թամա՜ր...»։

* * *

Առավոտյան ծովը ծրփաց,
Ափը ձրգեց մի գիակ,
Ներա շուրթին, պաղ, կարկամած,
Ասես մեռած ժամանակ -
Սառել էին երկու բառ.
«Ա՜խ, Թամա՜ր...»։

Այն օրվանից սրբա համար
Կրղղին կոչվեց Ախթամար։

1893

ՕՐՈՐՈՑԱԳՈՂ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ)

Կես գիշերին մութ խրճիթում
Մայրը լսեց մի խորդյուն,
Եվ վեր թռավ ահը սրտում,
Նայեց քնած յուր որդուն։

Մի արարած սև ու խավար
Նա նրկատեց սրտադող,
Եվ ճանաչեց սարսափահար՝
Օրորոցի մի չար գող,

Որ զավակի բուկը բռնած
Խեղդում էր սև ճանկերում,
Եվ երեխան աչքերը բաց
Զարշարվում էր ու հևում։

Խելակորույս խոկույն ևեթ
Վրա թռավ կատաղի,
Եվ բռնվեցան իրարու հետ
Օրրանի մոտ երեխի։

Կես գիշերին մութ խրճիթում
Կիսակենդան մանուկին
Իրարից խլել են աշխատում
Մեղ մայրն ու չար ոգին։

Կռիվ են տալիս. նախատում են,
Եվ կրծում են և թքում,
Իրար սեղմում և խեղդում են,
Ճանկռում, ծեծում, ապտակում։

Եվ մայրական անհուն սերը
Ուժ էր տալիս գերբնական...
Եվ ուժասպառ, հաղթված չարը
Թողեց օրրանը մանկան։

Հովհ. Թումանյան, հ. I—14

1894

ԵՐԿԻՆՔ ՈՒ ԵՐԿԻՐ

Իր խոր հայացքով երկինքը մի օր
Ներքև՝ մայր երկրի երեսին նայից,
Տեսավ դեղեցիկ դաշտեր, սար ու ձոր,
Անտառներ, ծովեր... և սիրահարվեց։
Երկիրը՝ թմրած, տխուր, ցրտամեռ,
Հանկարծ սթափվեց դարունքվա կյանքով,
Վառվեցին սրտում հրրեղեն բոցեր,
Եվ շնչեց հազար ծաղկանց բուրմունքով...
Եվ պինդ սիրեցին էսպես իրարու
Իրարից բաժան, իրարից հեռու
Երկինք ու երկիր...
Բայց ե՞րբ է սերը արդեք հարցընում.
Հենց որ գալիս է պիշերը հասնում,
Երկինքն աստղաղարդ, անհամբեր, ագահ,
Իր հազարավոր աչքերը բանում,
Հիացած նայում սիրուհու վերա,
Մինչև լույս նայում և չի կշտանում։
Եվ աստղ-աչքերը վառ-վառ ցոլանում,
Ընկնում են երկրի կրծքերը ջրային,
Որ փրփրում են, ուռչում, բարձրանում,
Ճգնում են հասնել վեր՝ սիրահարին։
Եվ սիրող երկինքն ավելի վառված,
Գիշերվա բոլոր զուգսով զարդարված,
Փռում է իրեն բոլոր փառքերը,
Իր բոլոր տենչերն, այրվող կրքերը,
Վառվում, բորբոքվում,

Փարում է, գրվում...
Եվ երբ չի հասնում իր անհաս սերին,
Լուռ-լուռ ճպում է ցոլուն աչքերին,
Ցոլուն աչքերից գիշերվա մթնում
Երկրի երեսին ցողեր են ընկնում,—
Մարգարիտ ցողեր՝ արցունք երկնային...
Իսկ էդ ժամանակ երկիր-սիրուհին
Հազար շրթունքով սարերի ծերից
Համբույր է տալիս թխպոտ ամպերին,
Անհուն ծովերից, անթիվ ծովերից
Հազար կրծքերով ձգտում է յարին։
Տանջվում է ուժգին, վառվում է սերը,
Հուզվում են, փրփրում նրա ջրերը,
Սակայն չեն հասնում քնքուշ փափագին,
Ծանրը տնքում են, հեծում մոլեգին...

Ամպերի տակից,
Իր մթին դահից
Թոլորը տեսնում լուսինը տխրուն
Եվ բանաստեղծին պատմում է թաքուն,
Թե ինչպես ծովը գիշերվա մթնում
Ուզենում է իրեն կուրծքը տարփալի,
Երկինքը հազար աչքերով ժպտում
Եվ գաղտնի սիրո համբույր է տալի.
Եվ իրար համար երգեր են ասում,
Իրար փայփայում, գրվում, արտասվում,
Ինչպես կենդանի, ղգայուն մարդիկ...
Եվ բանաստեղծը տխրում է սաստիկ,
Նախանձում է նա, թե ինչո՞ւ չունի
Ինքն էլ էն տեսակ մի վեհ սիրուհի։

1898

«ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ»

Վազո՜ւց, երբ մոտ էր երկրին երկինքը,
Ու լքսում էր դեռ մարդկանց տերն-ինքը,
Էն լավ ժամանակ երկու մանուկներ
Ունեին մի շատ, մի անսիրտ խորթ մեր։
— Կորե՛ք գընացեք, աշխատանք արեք,
Աշխատանք արեք ու եկեք կերեք.
Ի՞նչ եք վեր թափել անգործ ու անբան,
Հասած տղերք եք հինգ-վեց տարեկան...
Այսպես բարկացավ մի օր խորթ մերը,
Ծիպոտներ տրվավ, դրրկեց հորթերը։
Անհանգիստ հորթե՛ր, ամառվան շոգ օր.
Կետ արին, փախան, ընկան սար ու ձոր։
Նրբանց հետից՝ լալով, հեգլով,
Փոքրիկ որբերը՝ քարեքար դալով,
Վազ էին տալիս անտառի միջում,
Վազ էին տալիս ու իրար կանչում.
— Պողո՛ս, գոտա՜՜ր։
— Չէ՜է՜։
— Պետրո՛ս, գոտա՜՜ր։
— Չէ՜է՜։
— Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ։
— Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ...

Շատ որ ման եկան՝ խեղճերն հոգնեցին,
Եկան՝ խորթ մորը լալով պատմեցին.
— Նա՛նի, ա՛յ նանի, կորան հորթերը...

— Վա՛յ, գետինն անցնեք,— հրշաց խորթ մերը,
Թող գուք կորչեիք հորթերի տեղակ,
Անտակ ձորի մեջ, անժամ քարի տակ։
Մի այլ պատահեր, մի գազան, մի գել,
Որ չէի տեսել ձեր շուքը մեկ էլ...
Դե՛, ետ դրնացեք, գնացեք, կորե՛ք,
Մինչև չրդրանեք հորթերը բերեք՝
Աչքիս չերևաք, ա՛յ աչքիս փրշեր,
Թե չէ՝ կբսպանեմ ես ձեզ էս դիշեր...
Ու ճիպոտն էլ ետ իրենց թաթերին,
Հոպված ու սոված, արցունքն աչտերին
Փոքրիկ որբերը անտառի միջում
Գիշերվան կիսին լալիս են, կանչում.
— Պողո՛ս, գրատ՜՜ր։
— Չէ՜է՜։
— Պետրո՛ս, գրատ՜՜ր։
— Չէ՜է՜։
— Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ,
— Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ։

Անտեր հորթերը չրկան ու չրկան։
Ճարտերը կրտրած՝ խեղճերը եկան,
Լալով չոքեցին.
— Տեր աստված, ասին,
Ի՞նչ կրլնի, գրթատ՝
Գոնե թեեր տատ,
Թեեր տատ՝ թրռչենք,
Թրռչենք ու կորչենք,
Որ էլ չտեսնի մեզ մեր խորթ մերը,
Մինչև որ գրտնենք կորած հորթերը...
Հենց ասին-չասին անմեղ բերանով,
Աստված որոտաց իր գրթոտ ձայնով.
— Ահա ձեզ թեե՛ր, սիրուն երեխե՛ք,
Թրռչուններ դառեք, թրռած ման եկեք,
Որ էլ չտեսնի ձեզ ձեր խորթ մերը,

Մինչև որ գլտնեք կորած հորթերը։
Գիշերը քնեցեք ծառերի ճյուղին,
Ցեղն ու ծղոտը արեք անկողին,
Ապրուստ էլ կերեք իմ լի սեղանից,
Երբ որ դաղարգուն եղաք ձեր տանից...
Այսպես վերեից հենց կանչեց աստված,
Փոքրիկ որբերը փոխվեցին հանկարծ
Ու թևեր առան,
Թրռչուններ դառան։
Ու թևեր առած՝
Թրռչուններ դառած
Դեռ մինչև էսօր,
Ընկած սար ու ձոր,
Թրվում են, մընչում,
Մեկմեկու կանչում.
— Պողո՛ս, գլտա՜՜ր։
— Չէ՜է՜։
— Պետրո՛ս, գլտա՜՜ր։
— Չէ՜է՜։
— Վա՛յ-վա՜յ, վո՛ւյ-վո՜ւյ,
— Վա՛յ-վա՜յ, վո՛ւյ-վո՜ւյ։

ԱՆԻՄԱՆ ՀԱՐՍԸ

Վաղ ժամանակ մի հայ շենում
Մի հարգևոր հարսն է լինում։
Նրբա բերնից՝ կեսուր-կեսաս
Չէին լըսել մի շունչ, մի բառ,
Չէին տեսել շուրթը մի օր...
Էսպես խոնարհ ու հարգևոր
Մի օր մենակ օդում նըստած,
Իր հոխ մազերն արձակ թափած,
Ազատ, անփույթ սանրում, հյուսում,
Հետն էլ ձենով երգ էր ասում։

«Աշխարհքը բանտ,
Մեջը անբախտ
Ես մի գերի անխընդում.
Սիրուն շորեր,
Ջահել օրեր
Ի՞նչ եմ անում էս բանտում։

Երնե՞կ ծրտին,
Ճյուղքի միջին
Ծրվզլում է, թրռթրտում,
Թրռչում՝ սիրած
Ընկերն առած,
Ազա՞տ, կանա՞չ արտերում։

Ա՞խ, սև՛ ըլի,
Ջրքվի, փըլի
Ծընված օրը աղչկա,
Ցավ ու խընդում
Փակված սըրտում,
Ծիծաղ չըկա, ախ, չըկա...»։

Մին էլ հանկարծ բացվեց դուռը,
Ու ներս մըտավ ծեր կեսուրը։
— Հո՛, պո՛, պո՛, պո՛, կանչեց իսկզեր,
Գետին պատռվ՛, մըտնեմ մեջը...
— Հոպոպ դառնաս,
Անամոթ հարս։
Մի տե՛ս, մի տե՛ս,
Թե լըրբի պես
Գլուխը բաց,
Ազատ նըստած՝
Ո՞նց է կանչում,
Չի ամանչում։
Լեզուդ լալկի,
Մաղըդ թաղքի,

Գլխիդ կրպչի
Սանրը միջի։

Ասավ-չասավ,
Մին էլ տեսավ՝
Սանրը գլխին
Հարսն առաջին
Երդիկից թռավ
Հոպոպ դառավ
Ու վերացավ,
Վե՜ր, հեռացավ։

Էն էր ու էն.
Խեղճն էն օրեն
Հանգերն ընկած՝
Հոպոպ մընաց.
Միշտ էլ էն հին
Սանրը գլխին,

Ջալի՜կ-մալի՜կ,
Լեզուն լալիկ,
Անխոս ու թութ,
Մոլոր, տրխուր։

Բայց երբ հանկարծ
Միան է գալիս,
Որ գիտարաց,
Նրդ ասելիս՝
Իր կեսուրը բացեց դուռը,
Վեր է թռչում
Սըրտատրրոփ
Ու դեռ ճըչում.
— Հո՛-պո՛պ... Հո՛-պո՛պ...

ԱՐԾԻՎՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Եղավ՝ մի անգամ անտառի միջին
Արծիվն ու Կաղնին լավես վիճեցին,
Թե ո՞րն իրենցից շատ տարի կապրի,
Ո՞րն է դիմացկուն ու պինդ ավելի։
Արծիվն ասավ՝ ես. Կաղնին էլ թե՝ ես։
Երկուսն էլ համառ ու հրպարտ էսպես՝
Մեծ-մեծ պարծեցան, սատրկ վիճեցին,
Վերջը էս տեսակ պայման կապեցին։
Ժամանակ զբրին հինգ հարյուր տարի
Արքան հավքերի, արքան անտառի,
Որ թե որոշված էն օրին հասնեն,
Էն օրը մին էլ դան իրար տեսնեն։
Ու Արծիվն իսկույն Կաղնուց հեռացավ,
Հըզոր թևերը շարժեց, վերացավ
Դեպի ամպերը, դեպի ժայռերը,
Ուր տեղ է կացնում իր լավ օրերը։
Կաղնին էլ փըռեց ճյուղերն երկաթի,
Խո՜ր ու խոր մխեց ճանկերն արմատի՝
Ու էնպես հուժկու կանգնեց անտառում,
Որ վայր չընկնի էլ հինգ հարյուր տարում։
Դարե՜ր անց կացան։ Եվ ահա մի օր
Արծիվը եկավ ծերացած, անդոր,
Ծերացը կըտրած, տըկար, հեալով,
Թույլ-թույլ թևերը հոգիվ քարշ տալով
Տեղ հասավ մի կերպ, նայեց դեսուդեն,
Տեսավ, որ Կաղնին ընկել էր արդեն.
Ճյուղերը թեև դեռ թարմ ու կանաչ,
Ընկել էր ահեղ փոթորկի առաջ։
— Հե՜յ, կանչեց. գոռոզ, պարծենկո՛տ Կաղնի՛,
Դե լավ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.
Հինգ հարյուր տարուց մի ժամ էլ դեռ կա,

Ընկել ես արդեն, անկոտրում հրսկա։
— Հինգ հարյուր տարի ապրել եմ կանգնած,
Էդքան էլ կապրեմ գեռ էսպես թիկնած,
Մինչև լքրանա մի հոգար տարին։
Պատասխան տվավ ընկած վիթխարին։

---

1 8 9 9

ՈՐԲԸ

(ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ)

— Սրհա՜կ... Սրհա՜կ... գիշերն ի բուն
Կանչում է Որբն աղեկքտուր,
Աշխարհքն այնինչ մըտած խոր քուն,
Ինքը մենակ ու շուրջը լուռ։
Աղջիկ էր նա մի ժամանակ,
Էնպես աշխա՜ւյժ ու գեղանի.
Թուրքը տեսավ, խելքը կընաց,
Ուղեց զոռով հարեմ տանի։

— Մի՛ վախենար, սիրուն քուրի՛կ,
Ես չեմ թողնի քեզ տանելու.
Քեզ կըթոցնեմ, ինչպես մըրրիկ,
Էս աշխարհքից հեռո՜ւ, հեռո՜ւ...
Էսպես ասավ քաչ Սրհակը,
Քըրոջն առավ փախա՜վ, գընաց,
Թողած իրենց հոր աշխարհքը,
Թուրքի դաժան լուծը թողած։

— Տե՛ս, էն ձյունոտ, բարձրը սարեր,
Որ ձըգվում են հեռվում ահա,
Էն սարերն էլ անցնենք թե չէ՝
Դեռը, քուրի՛կ, է՛լ թուրք լրկա...
Հենց էս խոսքում՝ թուրքը հասավ,
Սև ձին քըշած՝ սարի տակից.
—Իմն է աղջիկն, իմն է, ասավ,
Ո՞ւր եք փախչում դուք իմ ճանկից...

—Մի՛ վախենար, սիրուն քուրի՛կ,
Կանգնած եմ ես չար թուրքի դեմ.
Փախի՞ր, գընա՞... ինչպես մըրրիկ՝
Ես էլ կըդամ քեզ կըհասնեմ...
Ու նա դարձավ բաց պատանին,
Ձենքի շալյուն, զարկ ու աղմուկ.
Զարկ են տալիս, զարկ են առնում
Հայի անահ կըտրիճն ու թուրք...
Աղջիկն արագ վազ է տալի,
Շունչը հատած փախչո՞ւմ, փախչո՞ւմ.
Մին էլ նայեց՝ թուրքն է գալի,
Փընչում է ձին, զենքը շաչում...
—Ա՜խ, ի՞նչ կըլնի թոչուն դառնամ...
Կանչեց ահից խեղճը հանկարծ,
Ու, բաց էին ղրոնեբն երկնից,
Լըսեց նըրա ձենը աստված։
Դարձավ թըռչուն մի թևավոր,
Երկինքն ելավ, թըռա՞վ, պըրծավ.
Մընա՞ց, մընա՞ց, մինչև էսօր
Քաջ ախոկերը նա չըդարձավ։
Էն օրվանից թըռչուն քույրը
Ցերեկն ահով կուչ է դալի,
Հենց հասնում է մութ գիշերը՝
— Սըհա՞կ... Սըհա՞կ... ձեն է տալի։
Ձեն է տալի գիշերն ի բուն
Կանչում տըխո՞ւր, ողեկըտո՞ւր,
Աշխարհքն այնինչ մրտած խոր քուն,
Ինքը մենակ ու շուրջը լուռ։

---

1 9 0 2

ՀՈԳԵՀԱՆ

(ԱՆԴԵՍԻ)

Փոցխովի ձորում ծաղիկում էր Շամոն,
Կուսական գարուն ու սեր շընչելով,
Փոցխովի ձորում թոչնում էր Համոն
Ծաղիկ աղջըկա սիրուց տանջվելով։

— Չէ՛, չեմ հավատում իսկի քո սերին,
Դու սուտ ես ասում, դու չես սիրում ինձ...
Ասում էր Շամոն սիրահար աղջին
Ու հեռա՞ւ-հեռու հըրում իրանից։

Ու դարձյալ ղընաց աղջան սիրակեզ.
Ո՞ր կըրակն ընկնեմ, Շամո, որ ղրթաս.
Սիրտս չեմ կարող, թե հանեմ տեսնես—
Ի՞նչ անեմ ուրիշ, որ ինձ հավատաս։

— Տեսնո՞ւմ ես, ահա, ասավ աղջիկը,
Ցույց տալով լեռան գագաթը ահեղ.
Ինձ դիր քո ուսին, սըրինգրդ փըչիր,
Ու վե՞ր, պարելով՝ տար մինչև այնտեղ։

Երբ որ կըհասնենք էն սարի գըլխին,
Այնժամ կիմանամ, որ սիրում ես ինձ,
Այնտեղ կըլինեմ ես քո սիրուհին,
Ու սիրով կապված կիջնենք այնտեղից։

Ու դրրավ ուսին սիրած աղջիկան,
Սրինգը հընչեց, ըսկըսվեց պարը,
Ճանապարհ ընկավ սիրահար արդան
Դեպի ամպամած լեռան կատարը։

Գընում է, գընո՞ւմ սեպ ժայռերն ի վեր,
Ու պար է գալի, և անվերջ ածում.
— Դեռ շա՞տ է հեռու... ո՞ւրտեղ ես դու դեռ...
Դու ինձ չես սիրում, դու սուտ ես ասում...

Ծալվում են հոգնած ծընկները տակին,
Քրտինքը վազում հակատից ներքև,
Բերանն է հասել՝ թրջում է հոգին,
Աչքերը մթնում, շընչում հևիհև։

— Չէ, չեմ հավատում ես դեռ քո սերին,
Դեռ շատ է հեռու գագաթը լեռան...
Ասում է Շամոն նըստած ուսերին,
Ճրդնում է նորից ուժասպառ արդան։

Արդեն ամպերի տակին է պարում։
Մոտիկ է արդեն գագաթը ձյունոտ,
Վերջին ուժերը հավաքում, լարում,
Դարձյալ մի պըտույտ, դարձյալ մի ոլորտ...

Մի քիչ էլ... քիչ էլ... վերջապես հասավ,
Վայր դրավ ուսից սարի կատարին.
— Հոգիս հանեցիր, օ՞ֆ Շամո...—ասավ,
Ասավ ու ընկավ սըրինգը ձեռին։

— Այժմ քո սերին հավատում եմ ես,
Այս ժամին ահա քոնն եմ հավիտյան,
Ճըչաց աղջիկը, գըրկեց վերջապես,
Գըրկեց Համոյի... դիակն անկենդան։

Այժըմ էլ ժեռուտ սարի գագաթին
Դեռ ցույց են տալի մի հին գերեզման,
Պատմում, ափսոսում անբախտ իդիթին
Ու սարի անունն ասում Հոդեհան...

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Կես գիշերին կանթեղը վառ
Կախ է ընկած երկընքից,
Լուսավորչի կանթեղն անմար
Հայոց մըթնած երկընքից։

Կախ է ընկած առանց պարան
Արարածի կատարին,
Ու սեղանից հըսկայական
Լույս է տալիս աշխարհին։

Լույս է տալիս երկա՞ր դարեր
Ու վառվում են միշտ անշեջ
Սուրբի մաքուր արցունքները
Ցուղի տեղակ նըրա մեջ։

Ոչ մարդկային ձեռ կը հասնի
Էն ահավոր բարձունքին,
Եվ ոչ քամին կը հանդգընի,
Վիշապ-քամին ահագին։

Երբ պատում է մութ խավարը
Զընաշխարհիկ մեր երկրին,
Երբ տիրում է ահն ու վախը
Թույլ, կասկածոտ սըրտերին,

Ով անմեղ է լիքը սիրով
Ու հավատով անսասան,

Ով նայում է վառ հույսերով
Դեպի Հայոց ապագան,—

Նա կըտեսնի էն մըշտավառ
Ջահը կախված երկընքից,
Ասես՝ աստծո աչքը պայծառ
Հըսկում է ցած երկընքից։

ՓԱՐՎԱՆԱ

I

Բարձրագահ Աբուլն ու Մըթին սարեր
Մեչք մեչքի տըված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Ջավախքից էլ վեր՝
Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ։

Ասում են՝ էնտեղ արծըվի նըման,
Միծղուն, կապուտակ երկընքի ծոցում,
Նըստում էր էն սեգ սարերի արքան
Իրեն Փարվանա ճերմակ ամրոցում։

Փարվանա արքան մի աղջիկ ուներ.
Ու ոչ մի որսկան դեռ իրեն օրում
Էնքան գեղեցիկ եղնիկ չէր տեսել՝
Իր որսն անելիս Մըթին սարերում։

Աշխույժ մանկությամբ զարդարում էր նա
Ծերության օրերն ու սարերն իր հոր,
Ու ապրում էր ծեր արքան Փարվանա
Իրեն էն քընքուշ ծաղկով բախտավոր։

Մեծ բախտը սակայն առաջևն էր դեռ.
Եկավ էն օրն էլ հասավ երջանիկ,

Ու ղըրկեց արքան ուրախ դեսպաններ
Ամեն մի ամրոց, ամեն արքունիք։

—Ո՞ւրտեղ է, ասավ, էն քաջը, թե կա,
Իմ չընաշխարհիկ գըստերն արժանի,
Թո՛ղ առնի իր ձին, իր զենքն ու զըրահ,
Գա, ցույց տա իրեն, իր բախտը տանի...։

II

Հագած, կապած զենք ու զըրահ,
Ձիանք հեծած ամեհի,
Ահա եկել հավաքվել են
Կըտրիճները Կովկասի.
Ծեր Փարվանա թագավորի
Ապարանքի հանդիման
Կաղմ ու պատրաստ սպասում են
Մոտիկ ժամին մըրցությանն։
Ըսպասում է ողջ աշխարհը՝
Եկած, կիտված Փարվանա,
Թե ո՞ր կըտրիճն արդյոք պիտի
Էն սիրունին տիրանա։

Հընչեց փողը։ Ահա փունջ-փունջ
Դըրանիկներ, նաժիշտներ,
Ահա աղջիկն իր նազելի
Ու թագավորն ալեհեր։
Հայրը ինչպես մըռայլ մի ամպ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փաթված՝
Դուրս են գալի միասին.
Հառաչում է ողջ աշխարհը.
Կըտրիճները քարացած,
Երազների մեջ են ընկնում՝
Էս աշխարհքից վերացած։

—Նայիր, դրստրի՛կ, իշխանազուն
Էս քաջերին լայնալանջ,
Այժմ պիտի հանդես դուրս գան,
Պայքար մրտնեն քո առաջ.
Մեկը իրեն ուժը ցույց տա,
Մյուսը՝ շընորհքն իր բազկի,
Ո՛րը՝ ճարպիկ ձիարշավը,
Ո՛րն էլ թափը իր վազքի։
Իսկ երբ կրռիվն առնի դագար,
Հայտնի լինին քաջն ու վատ,
Ու երբ անցնեն մեր առջևից
Կրտրիճները պայազատ,
Ընտրի՛, զարկի՛ ձեռքիդ խնձորն
Անհաղթներից անհաղթին,
Որ ողջ աշխարհ մայիլ մրնա
Անպուղական քո բախտին։

Ասավ արքան, ձեռքը ձրդեց,
Նըշան տըվեց պայքարին,
Այն ինչ՝ աղջիկն առաջ եկավ՝
Կարմիր խնձորն իր ձեռին։
— Գուցե, հայրի՛կ, տըկար լավին
Հաղթի մի վնս տրմտրդի,
Բայց չի կարող լինել երբեք
Նա սիրելին իմ սըրտի...
— Է՛յ, Փարվանա շըքնաղ փերի՛,
Ի՞նչն է հավան քո սըրտին,—
Խոնըվում են կրտրիճները,
Խընդրում կրկին ու կրկին։
— Գա՞նձ ես ուզում, ոսկի՞, արծա՞թ,
Անգին բարեր ու գոհա՞ր,
Ա՞ստղ ես ուզում, մենք երկընքից
Վեր կրբերենք քեզ համար։
—Ինչի՞ս են պետք ոսկին, արծաթ
Եվ կամ աստղը երկընքի,

Ոչ գոհար եմ ես պահանջում
Սեր-ընկերից իմ կյանքի։
Ես նրբանից հո՛ւր եմ ուզում,
Անշեջ հուրը սրբբազան,
Ով կրբերի անշեջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան...

Ասավ աղջիկն. իրար անցան
Կրտրիճները քաջարի,
Ջիանք հնծան, թրռան հապճեպ
Դեպի շորս կողմն աշխարհի։
Թրռա՞ն, շուտով գրտնեն, բերեն
Անշեջ հուրը աղջրկան.
Բայց... տարիք են գալի՞ս, գընո՞ւմ,
Նրբանք չրկան ու չրկան...

III

— Հայրի՛կ, ինչո՞ւ ետ չրդարձան
Էն քաջերը սիրատենչ.
Մի՞թե, հայրի՛կ, ինձ մոռացան,
Էլ չեն բերի հուրն անշեջ։

—Ո՛չ, իմ դրստրիկ, կրգան անշուշտ
Ու կրբերեն էս տարի.
Կրռիվներով արյունարուշտ
Լիքն է ճամփեն քաջերի։

Ո՞վ իմանա, պետք է անցնեն
Մութ աշխարհքից, Սև ջրրից.
Ո՞վ իմանա, պետք է փախցնեն
Ցոթղրլխանի դևերից։

Անց է կենում դարձյալ տարին.
Նայում է կույսն ամեն օր.

— Ու՞ր է, հայրի՛կ, ե՞րբ կըգա նա՝
Սարից թըռած ձիավոր։

Միշտ երազում ես տեսնում եմ
Էն հերոսին սպասող,
Հուր կարոտով թրռած իմ գեմ,
Լուսանում է... ու չըկա։

— Կըգա, գըսարի՛կ իմ թանկագին,
Հեշտ չի բերվում հուրն անշեջ.
Շատ, շա՛տ անգամ բերող հոգին
Ինքն է էրվում դրրա մեջ...

Անց է կենում դարձյալ տարին.
Նայում է կուլսն ամեն օր.
Ոչ մի սարից, ոչ մի ճամփում
Չի երևում ձիավոր։

— Հայրի՛կ, հայրի՛կ, մի՞թե չըկա
Էս աշխարհքում անշեջ հուր.
Թառամում է սիրտըս ահա,
Պաղ է էս կյանքն ու սրխուր...

Էլ չի խոսում. մռայլ, տըրտում,
Լուռ է արքան ալևոր,
Սև-սև ցավերն իրեն սըրտում՝
Միտք է անում գըլխակոր։

IV

Էսպես անցան շատ տարիներ.
Տրխուր աղջիկն արքայի
Նայե՞ց, նայե՞ց սարերն ի վեր,
Ճամփաներին ամայի,
Հույսը հատավ,... ու լաց եղավ.

Էնքա՞ն արավ լաց ու կոծ,
Որ լիճ կըարեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց.
Ծածկե՞ց, կորա՞ն, ինքն էլ հետը...
Այժըմ Լնտեղ տրրտմաշուք
Խոր Փարվանա լիճն է ծըփում
Հըստա՞կ, ինչպես արտասուք։
Ու էն վրճիա ջըրերի տակ
Ցույց են տալի մինչ էսօր
Մեր արքայի ճերմակ ամրոցն
Ու շենքերը վառավոր։

* * *

Ասում են, էն թիթեռները,
Որ գիշերվա խավարում,
Որտեղ ճըրագ, որտեղ կըրակ,
Որտեղ լույս է երևում,
Հավաքվում են, շուրջը պատում,
Մեջն են ընկնում խելագար,
Ասում են, թե էն Փարվանա
Ջահիլներն են սիրավառ։
Ըշտապելուց թե են առել,
Դարձել թևթև թիթեռներ,
Ու տակավին հուր տեսնելիս
Մեջն են ընկնում անհամբեր.
Ջանք է անում ամեն մինը,
Շուտով տանի, տիրանա...
Ու այրվում են, այրվո՛ւմ անվերջ
Կրտրիճները Փարվանա։

1905

ԳԱՌՆԻԿ ԱԽՊԵՐ

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Կորա՜ծ գնում են հեռու.
Արևը վառ,
Ճամփեն երկար,
Ոչ աղբյուր կա, ոչ առու։

Քույրը մեծ էր, ոնց որ լիներ
Կը համբերեր արևին,
Բայց ախպերը փոքրիկ էր դեռ,
Չէր դիմանում ծարատին։

Գընում են, գընում, տեսնում են ճամփին,
Կովի ոտնատեղ՝ մեջը լիքը ջուր։
«Քուրի՛կ չան, քուրիկ, ես շատ եմ ծարավ,
Ի՞նչ կըլի թողնես խըմեմ մի պուճուր»։

— Չէ՛, ախպեր չան, չէ՛, դու կով կըդառնաս,
Կովի կճզակի տեղից մի՞ խըմի.
Մի քիչ էլ կացի... քիչ էլ որ կենաս,
Առաջներս պաղ աղբյուր կա հիմի։

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Գընո՜ւմ, գընում են հեռու.
Արևը վառ,
Ճամփեն երկար,
Ոչ աղբյուր կա, ոչ առու։

Գընում են, գընո՜ւմ, տեսնում են ճամփին
Գառան ոտնատեղ՝ մեջը լիքը ջուր։
Փոքրիկ ախպերը էլ չի համբերում,
Քրոջից թաքուն խըմում է պուճուր։

Քույրը մին էլ ետ է նայում,
Որ մի գառը մզկտալի
Իր ետևից ախուր մայում
Ու մայիլով վազ է տալի։

Եղեռ Մանուշը վայ է տալիս,
Վայ է տալիս, լալի՜ս, լալի՜ս.
Բայց էլ ի՞նչ աներ,
Բայց էլ ո՞նց աներ...

Ճամփեն երկար,
Ոչ աղբյուր կա, ոչ առու։

Գընում են, գընո՜ւմ, տեսնում են ճամփին
Ձիու ոտնատեղ՝ մեջը լիքը ջուր։
«Քուրիկ չան, քուրիկ, ես շատ եմ ծարավ,
Ի՞նչ կըլի թողնես խըմեմ մի պուճուր»։

— Չէ՛, ախպեր չան, չէ՛, դու ձի կդառնաս,
Ձիու սմբակի տեղից մի՛ խըմի,
Մի քիչ էլ կացի, քիչ էլ որ կենաս՝
Մոտիկ մի զուլալ աղբյուր կա հիմի։

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Գընո՜ւմ, գընում են հեռու.
Արևը վառ,
Ճամփեն երկար,
Ոչ աղբյուր կա, ոչ առու։

Գընում են, գընում, տեսնում են ճամփին
Գառան ոտնատեղ՝ մեջը լիքը ջուր։
Փոքրիկ ախպերը էլ չի համբերում,
Քրոջից թաքուն խըմում է պուճուր։

Քույրը մին էլ ետ է նայում,
Որ մի գառը մզկտալի
Իր ետևից ախուր մայում
Ու մայիլով վազ է տալի։

Եղեռ Մանուշը վայ է տալիս,
Վայ է տալիս, լալի՜ս, լալի՜ս.
Բայց էլ ի՞նչ աներ,
Բայց էլ ո՞նց աներ...

Երկու որբեր,
Քույր ու եղբայր,
Գառն ու աղջիկ մոլորված,
Հեռու երկրում
Տրխուր-տրրտում
Գընո՞ւմ, գընում են կորած։

Սոված ու ծարավ գընում են, գընում.
Գընում են, գընո՞ւմ, չըգիտեն թե ուր.
Վերջապես մի հով անտառ են մըտնում,
Անտառի միջին մի զանգակ աղբյուր։
Կուշտ-կուշտ խըմում են էն ասաը ջրից,
Հետո Մանուշը ծառն է բարձրանում,
Գառնիկ ախպերն էլ ծառերի տակին
Մուշ-մուշ արածում, որոճ է անում։
Իրիկվան պահին խրխինջ ու քըրքիջ...
Լըցվում է հանկարծ անտառն աղմուկով.
Մոտիկ են գալի ձայները քիչ-քիչ...
Մոտիկ են գալի ծիծաղով, երգով...

Եվ ահա ոսկի սանձերից բըռնած
Բերում են ջըրին ձիանքն արքայի։
Ամեհի ձիանքն աղբյուրից խըրտնած՝
Ետս-ծառս են կանգնում ու մոտ չեն գալի։
Մըտիկ են տալի ծառայքը մեկ էլ,
Որ սիրուն մի ցոլք ջրի մեջն ընկել,
Ու ջուրը քանի ալիք է տալի,
Նա էլ ջրի հետ գընում է գալի։
Նայում են վերև։ Ի՞նչ տեսնեն, աստվա՞ծ.
Մի հուր-հրեղեն. մի շարմաղ աղջիկ,
Ծառի ճյուղերին նազելի նըստած՝
Նայում է ներքև լըռիկ ու մընջիկ.
Մի սիրո՞ւն աղջիկ, արմանք ու զարմանք։
Զարմանք է պատում խեղճ ծառաներին.

Տեր աստված, որդյոք ի՞նչ հրաշք է սա,
Վայրի անտառում իջած էս ծառին։

—Ո՞վ ես, չըքնաղ, տեսի՞լք ես դու,
Թե հուղեղեն արարած.
Թե տեսիլք ես՝ կաց մի քիչ էլ,
Թե աղջիկ ես՝ արի ցած։
Ցած ե՛կ տեսնենք՝ ի՞նչպես եղավ,
Որ ծագեցիր դու մեզ մոտ.
Ի՞նչ ցավ է քիզ արդյոք բերել
Մեր աշխարհը անծանոթ։

—Մեզ որբության ցավն է բերել
Ձեր աշխարհը անծանոթ։
Ցայն է տալի ծառի վըրից
Մեր Մանուշը ամաչկոտ։
Մենք առաջ չունենք, ոչ ապավեն
Էս լայն-արձակ աշխարհքում,
Մութն էլ հիմի շուտով կընկնի,
Վախենում ենք անտառում։

Ու ծառաները գառն ու աղջիկան
Առնում են բերում պալատն արքայի։
«Ո՞վ ես դու, սիրուն,— հարցնում է արքան,—
Անբան գառան հետ ի՞նչ ես ման գալիս»։

Կանգնում է աղջիկն էստեղ նորից նոր,
Պատմում է, ինչ որ պատմեցի ես ձեզ.
Թե ապրած կենաս, ահեղ թագավոր,
Մեր բանը, հապա՞, էսպես ու էսպես...

Թագավորն երբ որ լըսում է մին-մին՝
Ե՛վ շատ ցավում է, և՛ շատ հավանում.
Անում է ներքան իրեն թագուհին,
Յոթն օր, յոթ գիշեր հարսանիք անում։

Ու փառքի միջում, շրջեղ դահլիճում,
Լիքն ու երջանիկ ապրում է Մանուշ.
Գառնիկ ախպերն էլ ճոխ պարտեզներում
Արոտ է անում ու խաղում անուշ։

Պալատումը կար նախանձոտ ու շար
Մի պառավ կընիկ, հնուց աղախին.
Նախանձում է սա, թե ո՞նց պիտի գա
Մի որբ՝ թագուհի դառնա մեր գլխին։

Մի օր էլ գալի, գըլուխ է տալի,
Առաջը կանգնում, կնդծավոր գոռում.
«Արի քեզ տանեմ, սիրուն թագուհի,
Չըփ-չը՛փ լուացնեմ շարմաղ էն ծովում»։

Խաբում է, տանում, դցում ծովի մեջ.
Շորերը առնում, ետ թերում քաղաք,
Հագցընում իր սև, դարձվոր աղջըկան,
Պալատ ուղարկում թագուհու տեղակ։

Երեսը ծածկած թանձր շրջարշով
Պալատ է մըտնում էն սուտ թագուհին,
Ու թագավորն էլ կասկած չի տանում,
Թե ո՛վ է եկել բազմել իր գահին։

Բայց ինչ անում են, ինչ որ չեն անում,
Չեն կարում էլ տուն բերեն Գառնիկին.
Մայում՝ էս ափից էն ափն է վազում,
Մայում՝ էն ափից ետ գալի կըրկին։

Ի՞նչ անենք սըրան, ո՞նց անենք սըրան.
Պառավն ու աղջիկ շատ միտք են անում.
Վերջը գալիս է դարձվոր թագուհին
Անկողին մըտնում, հիվանդ ձևանում։

Էլ թանկ ուտելիք, էլ աղնիվ մրդեր
Բերում են փըռում, խնդրում, աղերսում.
Մըտիկ չի տալի ոչ մեկի վրա.
Վերջը Գառնիկի մըսիցն է ուզում...

«Բայց չէ՞ որ, Մանուշ, քո եղբայրն է նա,
Ո՞նց ես նըրա միսն ուզում դու հիմա...»։

—Ի՞նչ անեմ, ինձնից նա ազիզ հո չի՞.
Ես որ մեռնում եմ, թող նա էլ կորչի...
Ասում է, հչում. «Վա յ, մեռա՜, աման...»,
Ու թագավորը տալիս է հրաման.

«Կըրակ վառեցեք,
Դանակ սըրեցեք,
Բերեք մորթեցեք,
Ախպեր Գառնիկին,
Որ առողջ լինի
Իր քույրը տիկին»։

Թագավորն էսպես պատվեր է տալի,
Պատվեր է տալի ու գուրս է գալի,
Գընում է ծովափ սաստիկ սրտնեղած,
Թե ո՞րքան Մանուշն անգութ է եղած...

Մայում է, լալիս Գառնիկ-Ախպերը,
Լացացնում է ժեռ ծովի ափերը,
Մի ափից բըռնած մյուս ափն է թըռչում,
Մարդկային լեզվով քըրոջը կանչում.

—Քուրիկ ջան, քուրիկ,
Կըրակ են վառում,
Կըրակ են վառում,
Դանակ են սըրում։
Քուրիկ ջան, քուրիկ,

Լրսի անդունդից,
Օգնության հասի,
Սպանում են ինձ։

Լրսում է արքան՝ տեղը քար կըտրած,
Եվ ալիքների միջից ը հանկարծ
Շատ ծանոթ մի ձայն հեռա՜ւ, խո՜ւլ ու խոր
Կանչում է քնքուշ, կանչում է անդոր.

«Ախպեր ջան, ախպեր,
Անհեր ու անմեր,
Անքուր ու անտեր,
Իմ Գառնիկ-Ախպեր.
Դրժար է տեղրս,
Ձենրս չեն լրսում,
Ձենրս չեն լրսում,
Ձեորս չի հասնում։
Ա՜խ, չար պառավը
Սև արավ օրրս,
Այժմ էլ կըսպանի
Գառնիկ-Ախպորրս»։

Լրսում է արքան, պալատն է հասնում,
Պատռում է քողը թագուհու գեմքի.
Պատռում է, տեսնում... բայց ի՜նչ է տեսնում,
Ո՞վ է իր գահին եղել թագուհի...

—Եկե՜ք, ձկնորսնե՜ր, ուտկան գրցեցե՜ք,
Հանեցեք ծովից մեր լավ Մանուշին.
Եկեք, գահիճնե՜ր, ծովը գրցեցեք
Կախարդ պառավին ու էս հրեշին։

Էսպես բարկացած գոռում է արքան,
Ժողովուրդն ամեն թրնգում է ցավից,
Գալիս է կանգնում, գրցում է ուտկան,
Անմեղ Մանուշին հանում է ծովից։

Հանում է ծովից, գահին բարձրացնում,—
Կրկին թագուհի ու տիկնանց տիկին.
Գառնիկ-Ախպերն էլ անչափ խընդումից
Պատռում է իրեն ոչխարի մորթին,

Դուրս գալի, կանգնում սիրուն տղամարդ,
Ճակատը պայծառ, աչքերը վառ-վառ,
Ոչխարի տրկար մայունի տեղակ
Մարդկային լեզվով ազատ ու ճարտար։

Իսկ չար պառավին, իրեն աղջըկան,
Որ խաբել էին աշխարհ բովանդակ,
Վրզներից կապում չաղացի քարեր,
Գրցում են ծովի անդունդը անտակ։

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Առած պատիվ, գահ ու թագ.
Աշխարհքն էլի
Խաղա՜ղ ու լի՜,
Չարը թաղված ծովի տակ։

---

1 9 0 8

ՁԱՐԻ ՎԵՐՋԸ

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Էն ծառում փըշակ,
Փըշակում մի բուն,
Բընում երեք ձագ,
Ու վըրեն Կըկուն։
—Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկունե՛ր,
Ե՞րբ պիտի դուք առնեք թևեր,
Թըռչե՞ք, գընաք,
Ուրախանաք...
Երգում էր մարիկ Կըկուն.
Մին էլ, ըհը՛, Աղվեսն եկավ.
Էս սարը իմն է,
—Էս ծառը իմն է,
Ծառում փըշակ կա,
Փըշակում՝ մի բուն,
Էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն։
Ա՜խ, դու Կըկու, հիմա՛ր Կըկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու։
— Երեք հատ ձագ, աղա Աղվես։
— Երեք հատ ձագ ցույց կը տամ քեզ։
Ու չե՞ս ասել, դու, անամոթ,
Մինը ծառա ղըրկես ինձ մոտ։
Զըդի շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հըրեն սըրած,

Գընամ բերեմ,
Ծառը կըտրեմ...
— Վա՜յ, չըկտրես,
Ասուած սիրես,
Էս մինն տհա
Տար քեզ ծառա,
Միայն թե էզպես
Մի՛ չընչիլ մեզ
Բընով-տեղով,
Ամբողջ ցեղով։
Խնդրեց մարիկ Կկուն ու ձագերից մինը ձգեց
Ներքև։ Աղվեսը՝ հա՛պ, առավ գնաց։
—Վա՜յ-վա՜յ, դու-դո՜ւ,
Իմ լավ կուկու.
Ո՞ր սև սարում,
Ո՞ր անտառում,
Ո՞ր թըփի տակ
Կորար մենակ...
Վայ-վա՜յ, դու-դո՜ւ,
Իմ խեղճ կուկու...
Լաց էր լինում մարիկ Կկուն, մին էլ ըհը՛, Աղվեսը ետ եկավ։
—Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փըշակ կա,
Փըշակում մի բուն,
Էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն։
Ա՜խ, դու Կըկու, հիմա՛ր Կըկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու։
— Երկու հատ ձագ, աղա Աղվես։
— Երկու հատ ձագ ցույց կը տամ քեզ։
Ա՛խ, չարամիտ դու ավազակ,
Ի՞նչ խաբար է, երկո՞ւ հատ ձագ.
Ի՞նչ, ուզում էս էստեղ գոռով

Լրցնես ամրողջ կրկունե

սատկել է, թռավ եկավ վրեն վեր եկավ, որ աչքերը հանի։ Աղվեսը՝ հա՛փ, հանկարծ բռնեց։

— Ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜,
Աղվես աղա...
— Ա՛յ դու կռավոն չարալեզու,
Ո՞նց թե Կրկվին ասել ես դու,
Թե ես կացին չունեմ սրրած...
Կացին չունե՞մ... դե հիմի կա՛ց...
— Վա՜յ, քեզ մեղա,
Աղվես աղա,
Ես եմ ասել, չեմ ուրանում,
Ի՞նձ քրրքրրի, ինձ կեր հում-հում,
Տո՛ւր ինչ պատիժ սիրարդ կուզի,
Բայց մի վերջին խոսքս լսի։
Ես էն սարում, հենց դեմուդեմ,
Էնպես մի թանկ պահուստ ունեմ,
Որ չես գրտնի դու քո օրում
Ոչ մի թառում կամ անտառում։
Ընչի՞ համար էն ահագին
Գանձը կորչի հողի տակին։
Արի գրնանք, հանեմ տամ քեզ,
Էնքան ուտե՞ս, էնքան ուտե՞ս...
Թե չը լինի ու սուտ դուրս գամ,
Ես հո էստեղ միշտ կամ ու կամ...

—Գնա՛նք, ասավ Աղվեսը։ Թե կըլինի, շատ լավ, թե չի լինի, էլի քեզ կուտեմ։

Գնացին։

Վերևից թռչելիս Ագռավը նկատել էր, որ մի թփում պառկած էր գյուղացու շունը։ Աղվեսին տարավ, տարավ, դուրս բերավ ուղիղ էն թփի վրա։

— Ա՛յ ասավ. էս թփումն է իմ պահուստը։

Աղվեսն ագահ վրա ընկավ թփին. շունը վեր թռավ, կոկորդից բռնեց ու դրավ տակին։ Աղվեսը խեղդվելով սկսավ խռխռալ.

— Ա՜խ, ե՜ս... ա՜խ, ե՜ս....
Զգույշ Աղվես,
Փորձանքի մեջ
Ընկնեմ էսպե՜ս...
Ա՜խ, անիրա՜վ
Դու սև Ագռավ...
— Ինչքան էլ որ լինի զգույշ,
Չարի առջև թե վազ, թե ուշ,
Էդ է պահված, Աղվես աղա.
Ղա՜, ղա՜, ղա՜, ղա՜...

Պատասխանեց Ագռավն ու թռավ, ինքն էլ ազատվեց, կկուն էլ։

ՀԱԿԱՆ

(ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻՑ)

(Հատված)

Լավ չեմ հիշում, թե որ դարում,
Հին ժամանակ, մեր աշխարհում
Ասում են թե՝ կար մի իշխան.
Մի մեծ իշխան, էնքան ուժեղ,
Որ թե մարդիկ նրրա աչքում՝
Թե հասարակ ճանճ ու մրժեղ,
Ինչ որ աներ ու կամենար,
Օրենք էր էն երկրի համար.
Ո՞վ էր գրլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կրգար նրրա դիմաց։

Ուներ անթիվ ու անքանակ
Ոչխարի հոտ, մարդի բանակ,
Կովի նախիր, խոզի բոլուկ,

Երամակներ ձիու, ջորու,
Էս բոլորը ցրված, փրված
Մինչև ծովի ափը հեռու։
Մինչև ուր որ քշեր, տաներ,
Իր աշխարհքի սահմանն էն էր.
Ո՞վ էր գլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըգար նրրա դիմաց։
Մի անգամ էլ էս իշխանը
Երբ նրատած էր իրեն տանը,
Լեղապատառ նեռս ընկավ տուն
Իր հոտերի վերակացուն.
— Ապրած կենաս, մեր տեր իշխան,
Հապա՞ էսպես հրաշք մի բան.
Արածում էր ծովի ափին
Բազմությունը քու հոտերի,
Մին էլ տեսնենք՝ ծովի միջին
Մի վիթխարի մարդ է գալիս։
Մի վիթխարի մարդ եմ ասում,
Որ մենք իր մոտ լու ենք չընչին,
Ծովը մինչև ծունկն է հասնում,
Իսկ գլուխը ամպի միջին։
Եկավ, կանգնեց մեր հանդիման
Ու որոտաց ամպի նրման.
«Ո՞վ է, ասավ, էսպես բերում
Թողնում ապրանքն իմ հանդերում.
Կորե՛ք իսկույն, ավազակներ,
Ձեռքս քանի չի հասել դեռ...»։
Էն ժամանակ վեր կացա ես
Ու պատասխան տըվի էսպես.
«Էդ սեակնած, մութ ամպերում
Զուր ես էգքան բարձրը գոռում.
Ով էլ լինես, ուսկից էլ դաս,
Էս մի բանը լավ իմանաս,
Դու, երկնահաս, ահեղ հրոկա,
Մեծ իշխանի ապրանքն է սա,

Ո՞վ է գլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կը գա նրրա դիմաց։
Բայց ինձ իսկի չըլսեց էլ
Էն անճոռնի աժդահակը,
Էն ամպերից ցած կրոացավ,
Ձեռը կոխեց ծովի տակը,
Դուրս հանեց մի ձուկն ահագին
Ու դեմ արավ արեգակին,
Որ խորովի...»։— Հազիվ էսքան
Պատմեց հովիվն իշխանական
Ու վեր ընկավ շունչը փչեց։
Խիստ զայրացավ իշխանը մեծ.
—Ո՞վ է, ասավ, համարձակվել
Իմ տերության սահմանն եկել
Ու էդպես էլ վրրես հաչում...
Ինձնից ուժեղ չեմ ճանաչում
Ես ոչ մի տեղ և ոչ մեկին...
Էսպես ասավ ու զայրագին
Հըրամայեց՝ զորքերը գան։
Հըրամայեց՝ զորքերն եկան.
— Կեցցե՛ մեր տեր, մեր թագավոր,
Անհաղթ, անմահ, ամենազոր...
—Ապրե՛ք, ասավ իշխանը սեգ,
Ելեք իսկույն ու գընացեք,
Մանուկ ու ծեր
Իմ առյուծներ,
Ո՞վ է, տեսեք, վրրես հաչում
Ու իմ ուժը չի ճանաչում։
Ցույց տըվեք դուք, որ ոչ մի տեղ
Չըկա ոչ ոք ինձնից ուժեղ...
Ասավ՝ զորքերն իրենց կարգին,
Փող փըչեցին, թըմբուկ զարկին,
Շըրըխկոցով, զըրընգոցով
Ճամփա ընկան դեպի մեծ ծով։
Հասան, տեսան — ա՜յ քեզ հրոկա.

Գրքերն էստեղ, ոտներ չկա.
Գընա՞, գընա՞, թե որ գլտնես...
Սրկար ու մին ձգված էսպես,
Հրսկայական քընով քընած։
Էստեղ, էնտեղ դիրքեր բռնած՝
Դես շոքեցին, դեն պառկեցին,
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
Տեսան տեղից ժաժ չի գալի,
Խլոբմփում է դարհուրելի,
Խրոբմփոցից, ինչ-որ խոսում,
Մարդիկ իրար ձեն չեն լսում։
Մոտ գընացին, էլի՞, էլի՞...
Դարձյալ տեղից ժաժ չի գալի։
Կամաց-կամաց սիրտ առնելով,
Դողդողալով, հարայ տալով,
Դուրս թափվեցին թաքուստներից,
Նլան վրրեն, գեսից, գենից,
Որը ոտին,
Որը քթին,
Որը լանջին,
Որն ականջին,
Փորի վրրա, միրքի միջում,
Ձի են խաղում, նիզակ ճոճում,
Ձարկում, զարկում,
Ձրգում, թրքում,
Հայհոյում են էսպես, էնպես...
Մին էլ հրսկան էն սարի պես
Վրրա նստեց—մեծ, ահարկու.
Ի՞նչ պատահեց՝ ո՛չ տեսնես դու։
Հաղարներով մարդն ու իր ձին
Տակովն եղան, կոտորվեցին.
Որն էլ դըլխից, քթից, լանջից,
Կամ ուսերից, կամ ականջից
Ներքև ընկավ՝ թե մարդ, թե ձի,
Ներքև օրն էլ գու իմացի։

Շատ զարմացավ հրդեշ-հրսկան,
Թե, տեր աստված, արդյոք էսքան
Մանրը-մանրը ի՞նչ բաներ են,
Որ եկել են թափվել վրրան։
Տեսավ, ինչ որ կենդանի կան՝
Վազ են տալի, թե ետ գնան.
Բուռն արավ իր բրռնովը մեծ,
Իրար խառնեց, ողջ հավաքեց
Գրրպանն ածավ
Ու վեր կացավ,
Լընգընդալեն իրիկունը
Գընաց հասավ իրենց տունը։
Տանը իր պես մեծ, ահագին
Մի մեր ուներ, բարի մի կին։
Գընաց իրեն մորը պատմեց
Թե իրեն հետ ինչ պատահեց,
Ու զրրպանից հանեց բոլոր,
Ահից խելառ ձին-ձիավոր։
Բարի կինը հենց որ տեսավ,
— Ամա՞ն, որդի, վա՛յ ինձ, ասավ.
Ի՞նչ ես անում էդ խեղճերին,
Բա չե՞ս տեսնում, թե քու ձեռին
Ոնց են զողում։ Ասենք մեծ ես,
Մի՞թե պիտի փոքրին տանջես։
Մեծ թե փոքրը, ինչ էլ լինի,
Ամեն տարրոդ շունչ կենդանի,
Որ ծրնվել է արևի տակ,
Էս աշխարհքում միատեսակ,
Մինը պակաս, մյուսը ավել,
Ողջ էլ գիտեն խընդալ, ցավել։
Չը պարծենա երբեք ոչ ոք,
Թե ինքն անհաղթ մի բան է ջոկ.
Միշտ ուժեղից ուժեղը կա,
Իսկ ամենից ուժեղը՝ մահ...
Բաց թող, որդիս,

Բա՛ց թող՝ գընան,
Ապրեն ազատ
Ուր կամենան։
Ու, հընազանդ մոր խրատին,
Իսկույն հանեց հըսկա որդին
Իր գրպանից ձին-ձիավոր,
Իրար խառնած զորքը բոլոր,
Թողեց գընան՝
Ուր կամենան։
Ու, ազատված նըրա ձեռից,
Զինվորները էն աշխարհից
Փախան թափով զարհուրելի։
Ո՞ւր ես, իշխան, քեզ ենք դալի։
Գիշեր, ցերեկ, անհաց, անքուն,
Եկան հասան, վերջապես, տուն.
— Հապա՞, իշխա՛ն,
Էս տեսակ բան...
Բայց իշխանը հոժարակամ
Զուզեց լըսի մինչև անդամ,
Թե իրենից ուժեղ հըսկա
Էս աշխարքում ուրիշը կա։
Նորից արավ զորաժողով,
Ու ինքն անձամբ, երդով, փողով,
Դըրոշակով իշխանական
Ճամփա ելավ դեպի հըսկան։
Գընա՞ց, գընա՞ց, գընաց հասավ.
Ու վիթխարին մին էլ տեսավ՝
Էն իր թոռած մանրերն ահա
Կըրկին եկան իրեն վըրա.
Ձի են քըշում,
Մոտ են գալի,
Թուր են քաշում,
Հարայ տալի,
Նետեր ձրգում
Ու ծակծըկում...

Երեսս ցարկացավ Էստեղ հըսկան,
Ու, ցատումով հըսկայական,
Մի ժայռեղեն սար առավ մեծ,
Մինչև երկինք վեր բարձրացրեց,
Որ անհամար զորքն իշխանի
Միանգամից տակովն անի։
Հանկարծ... փըլվեց սարն ահագին,
Ինքն էլ մընաց նըրա տակին,
Ու կատարվեց էն խոսքն ահա,
Թէ ուժեղից ուժեղը կա,
Ու չկարծի երբեք ոչ ոք,
Թե ինքն անհաղթ մի բան է ջոկ։

ԷՍՊԵՍ ՉԻ ՄՆԱ

(ՀԻՆ ՋՐՈՒՅՑ)

Լինում է թե չէ, ո՞վ գիտի հաստատ.
Եվ ի՞նչն է հաստատ աշխարքի վըրա... —
Աշխարքում հաստատ մի բան կա մենակ,
Այն է, որ հաստատ ոչ մի բան չկա։
Լինում է՝ իրեն դյուղացի մի մարդ,
Աղքատ, օրական ապրուստի կարոտ։
Ունենում է սա մի խելոք տըղա,
Տանում է ծառա տալի մեկի մոտ։

Տարիք են անցնում, էս խելոք տըղեն
Էնպես է ազնիվ ու ժիր ծառայում,
Որ տերն էլ սըրա վարձը շատացնում,
Ինչպես իրենը՝ էնպես է ճայում։
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում դալի տեսություն.
— Հը՞, ո՞նց ես, որդիս, հիմի էլ էնպես
Էլ մեկկ ու տրկլոր, էլ քաղցած հո չե՞ս։

— Չէ՛, լավ եմ, հայրիկ, ապրուստս միշտ կա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը։ Տարիք են անցնում։
Առաջ է գընում արդեն օրն օրին,
Վերջը բարձրանում, պապան է հասնում,
Գառնում է ծառա մեծ թագավորին։
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսությունն.
—Հը՞, ո՞նց ես, որդիս, էլ ի՞նչ ես ուզում,
Լողում ես առատ էս լիքը ծովում։
— Հա՛, լի եմ, հայրիկ, դու հանդիստ զընա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը։ Տարիք են անցնում։
Էնքան է սիրվում մեր խելոք ծառան,
Որ թագավորը բերում է սրբան
Իրեն տերության երկրորդն է անում։
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում դալի տեսությունն.
— Հը՞, ո՞նց ես, որդիս, էլ ի՞նչ է մընում.
Քու խոսքովն են ողջ նըստում-վեր կենում։
—Հա՛, մեծ եմ, հայրիկ, նպլիր եմ ահա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մնա...

Գընում է հայրը։ Տարիք են անցնում։
Էս բարի երկրի թագավորը ծեր
Մի օր անժառանգ ընկնում է մեռնում,
Գահն ու աշխարքը մընում են անտեր։
Ժողովք են կանչում երկրի մեծերին։
Ժողովք են գալի, խորհուրդ են անում,
Բերում են իրենց խելոք նագիրին
Առքով ու փառքով թագավոր դընում,
Ու մեր գյուղացին լըսում է մի օր,
Դարձել է իրեն որդին թագավոր։

Գալիս է.— Որդի՛ս, էլ ի՞նչդ է պակաս,
Ամբողջ աշխարքում մի դու ես, որ կաս...
— Փառք աստծու, հայրիկ, ունեմ թագ ու գահ,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը։ Տարիք են անցնում։
Իր գահին բազմած ինքնակալը նոր
Սահվան ու կյանքի վճիռ է անում
Բուռը հավաքած աշխարքը բոլոր։
Բուռդ հավաքի աշխարքը թեկուզ,
Թողնելու ես ողջ դարձյալ աշխարքին։
Մեր թագավորն էլ մի անգամ էսպես
Մահիճ է ընկնում, ավանդում հոգին։
Լըսում է ծերուկ հայրը մի օր էլ,
Որ իր թագավոր որդին չըմնաց։
Ի՞նչ ասել կուզի՝ գալիս է վրեն,
Էլ ի՞նչ մըղկըտոց, էլ ի՞նչ սուգ ու լաց...
Ջորքով, աշխարքով, ծեսով, հանդեսով
Արքային վայել թաղում են անում,
Ու վեր են կենում՝ զըրույց անելով
Ամենքը իրենց սընեերն են գնում։

Տարիք են անցնում։ Հայրը մի անգամ
Գալիս է որդու շիրիմի վրա։
Գալիս է, տեսնում՝ մարմար մահարձան,
Բայց վրեն դրած... «էսպես չի մընա...»։

Գընում է հայրը։ Տարիք են անցել.
Ո՞վ կարա մեկնից հաշիվն իմանա...
Էն օրից էսօր անվերջ, դարեդար
Զրույցն ասում է՝ «էսպես չի մընա...»։
Ու չըկա շըրեկ արձանն արքայի,
Ոչ նրա քաղաքն աշխարքի վրա։
Մերն է աշխարքը ու կյանքը հիմի,
Բայց մեր աշխարքն էլ... էսպես չի մընա...

ԱՐՏՈՒՏԻ ԵՐԳԸ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ)

Մի մարդ տեսավ գարնան մարգում
Վեր ճախրելով,
Ճրռվողելով,
Ոնց էր արտուտն անուշ երգում։
«Սա որ, ասավ, էս վայրի տեղ
Երգ է ասում էսքան շքեղ,
Հապա թե մեր տանը լինի
Ի՞նչ դրախտի ձայն կըհանի»։
Ու ներշընչման տենդի միջին
Բռնեց մարդի սիրուն երգչին,
Տարավ փակեց նեղ վանդակում.
— Տեսեք, հիմի ոնց է երգում։
Բայց ի՞նչ. գերի, վանդակի մեջ,
Թրռչնակը լուռ նայում էր խեղճ
Հեռո՞ւ- հեռո՞ւ ճոխ մարգերին.
Միտն էր բերում կյանքը նախկին,
Երբ որ ազատ,
Էն ցողապատ
Թարմ արոտում,
Թավիշ խոտում
Ման էր գալի,
Սորոր տալի...
Միտն էր բերում,
Տրխրու՞մ, տրխրու՞մ,
Ու հառաչում,
Ցավոտ ճրչում
Մաշող կարոտն ազատության.
«Վա՛յ վաթա՛ն... վա՛յ վաթա՛ն»։
— Գուցե սրա կուտն է աղքատ
Կամ թե փայտե վանդակն է վատ,
Որ իր զըվարթ երգը թողեց։
Միտք արավ տերն ու ողջ փոխեց.

Փայտե կոպիտ հին բանտի տեղ
Ոսկի վանդակ շինեց շքեղ
Ու կերակուրն, էն օրից վեր,
Արավ շաքար ու թանգ մրրգեր։
Սակայն մարդի քընքուշ գերին
Մրտիկ չարավ թանգ մրրգերին։
Ոսկի բանտից՝ նեղ ու խավար,
Սըլանում էր միտքն անդադար
Դեպ վե՞ր, դեպ վե՞ր...
Ու հիշում էր,
Թե մայիսի
Արշալույսի
Ջինջ երկընքում
Ոնց էր երգում,
Խորո՞մկ, անվե՞րջ,
Հույս ծովի մեջ
Անփույթ լողում,
Խրնդում, խաղում...
Միտն էր բերում,
Տրխրու՞մ, տրխրու՞մ,
Ու էն կյանքի հուր կարոտով,
Նեղ վանդակում, կոտրած սրտով
Հընչում էր ողբն իր գերության.
«Վա՛յ վաթա՛ն... վա՛յ վաթա՛ն...»։
— Ո՞րն է սրա լավ վաթանը,
Որ չի կենում իր ճոխ տանը,
Ո՛չ մի ուրախ երգ է երգում
Էս ոսկեղեն թանգ վանդակում։
Ասավ տերը ու ետ տարավ՝
Թողեց հանդում։ Գերին թըռավ,
Կարոտալի մրտավ էն պերճ
Ծաղիկների, խոտերի մեջ։
Ապա վերև,
Դեպի արև
Ճախրեց, խընդաց.

Օդում թընդաց,
Հոսեց երգը... Սակայն նորեն
Էլ առաջվա երգը չէր էն...
Ու էն օրից
Ջինջ այերից
Ջիլ, թրոթրոան
Ինչ էլ երգի,—
Արև, դարուն,
Բույրը մարդի,—
Ընրա ղըվարթ, հընչուն երգում
Դեռ լալիս է ու հեկեկում
Հիշատակը իր դերության.
«Վա՛յ վաթա՛ն... վա՛յ վաթա՛ն...»։

ՄՈՒԿԻԿԻ ՄԱՀԸ

Միտիկն ու Մուկիկն ախպերացան։ Գետի ափին բուն շինեցին, մտան մեջը։

Մի օր Միտը գնաց քուչուը անելու, ետ եկավ տեսավ Մուկիկը մեռել է։ Մնկանը զարկեց.

— Վա՛յ, ախպեր ջան, վա՛յ...

Օխտը ճամփի մեջտեղ նստեց, հողը փորեց, ամփավ գլխին.

— Վա՛յ, ախպեր ջան, վա՛յ...

Ձենի վրա Լորիկն եկավ.

— Միտիկ-միտիկ, չալփետուրիկ,
— Հողն ինչո՞ւ ես տալի գլխիդ։
— Իսո՞ւ, թառ՞ւ,— ասավ Միտը,—
Ես որ չտամ, ո՞վ տա հապա.
Մուկիկի պես ախպեր մեռավ,
Աշխարքն էսպես մնաց անտեր,
Ես որ հողը տամ իմ գլխին,
Մե՞ծ բան է...
— Ափսո՛ս, ափսո՛ս,— ասավ Լորը,—
Մուկիկի պես մարդը մեռավ,—

Ասավ, իրեն էնքան զարկեց,
Թևը կոտրեց, կախ արավ։

Ծառը ասավ.
—Լորիկ քուրիկ, ճրտճրտուրիկ,
Ինչո՞ւ ես մի թևըդ կոտրել։
— Բա ի՞նչ անեմ, որ չկոտրեմ։
Մուկիկի պես մարդը մեռավ—
Աշխարքն էսպես մնաց անտեր.
Միտը գլխին հող է տալի,
Ես որ իմ մի թևը կոտրեմ՝
Մե՞ծ բան է...

— Ա՛խ-վա՛խ, ա՛խ-վա՛խ,— կանչեց ծառը.
Մուկիկի պես մարդը մեռնի՞...
Գընաց եկավ, գընաց եկավ,
Իր ճյուղերը զարկեց իրար,
Ջարդեց, մնաց հրդնակոտոր։

Քարերն ասին.
— Ծառիկ-մառիկ, կանաչ թառիկ,
Ճյուղերդ ինչո՞ւ վեր թափեցիր։
— Վա՛հ, ձեր տանը ասուված շինի,
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարքն էսպես մնաց անտեր.
Միտիկն էնտեղ հողը ղըլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Իմ ճյուղերը ես որ թափեմ՝
Մե՞ծ բան է...

— Հաղար ափսո՛ս,— քարերն ասին.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Ու գոռալեն, գըգրդալեն
Գլորվեցին սարերն ի վար,
Թափվեցին ցած՝ ջրերի մեջ։

Ջրերն ասին.
— Ի՞նչ պատահեց, ա՛յ գիժ քարեր,
Չէ՞ դուք ձեր տեղն անժամ էիք,
Ի՞նչ եք էդպես ցած գլորվում։
Էլ ի՞նչ անժամ. բա չե՞ք ասիլ,
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարքն էսպես մընաց անտեր.
Միտիկն էնտեղ հողը գլխին,
Լորիկն իրեն թևը կոտրած,
Ծառը մընաց ճրղնակոտոր,
Մենք մեր տեղից որ գլորվենք՝
Մե՞ծ բան է...

— Վա՛շ-վի՞շ, վա՛շ-վի՞շ, ինչ իմացանք,
Մուկիկի պես մարդն էլ մեռնի՞...
Ջրերն ասին, խառնվեցին,
Ու գնացին պըղտոր-մըղտոր։
Էն կողմերից տըմտըմբալով
Պառավն եկավ։ Էս որ տեսավ,
— Ա՛յ գըլգըլան ջրեր,— ասավ,
Դուք պարզ էիք միշտ ու մարմանդ,
Ինչո՞ւ էսօր պըղտորվեցիք։

— Վա՛յ քու տունը քանդվի, պառա՛վ.
Բա չե՞ս լըսել՝ ինչ է եղել.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարքն էսպես մընաց անտեր,
Միտը էնտեղ հողը գըլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Ծառը եղավ ճրղնակոտոր,
Քարերը ցած գըլտոր-մըլտոր,
Մենք պղտորվենք՝ մե՞ծ բան է...

— Հուն իմ գլխին,— պառավն ասավ,—
Մուկիկի պես մարդը մեռնի՞...
Ջարկեց իրեն ու ծըվատեց,

Երեսն արավ արյունլըվիկ,
Մազաքաղած՝ գյուղը վազեց։

Գյուղում ասին.
— Պառավ տատիկ, ի՞նչ պատահեց,
Ինչո՞ւ երեսդ արյունլըվիկ։
— Վա՛յ, քոռանամ, մի՛ խոսեցնեք։
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարքն էսպես մնաց անտեր.
Միտը էնտեղ հողը գըլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Ծառը եղած ճրղնակոտոր,
Քարերը ցած գըլտոր-մըլտոր,
Ես իմ երեսն արյունոտեմ՝
Մե՞ծ բան է...

— Ափսո՛ս, ափսո՛ս, հաղար ափսոս,
Որ էն տեսակ մարդը մեռավ...
Ափսոսացին էն գյուղացիք,
Սև կապեցին, ուդ նստեցին.
— Վա՛յ, ո՞վ ասավ, ո՞վ ասավ...
— Հողագըլուխ Միտիկն ասավ,
Թևը կոտրած Լորիկն ասավ,
Ճրղնակոտոր Ծառիկն ասավ,
Գըլտոր-մըլտոր Քարիկն ասավ,
Պըղտոր-մըղտոր Ջրիկն ասավ,
Մազաքաղած Պառվիկն ասավ,
Մեր Մուկիկը մեռել է՞...
Էլ ո՞վ մընաց էս աշխարքում,
Էլ ի՞նչ ապրենք էս աշխարքում...»։
Էսպես ասին
Ու միասին
Լացով, կոծով,
Ճիչ-գոռոցով
Հավաքվեցին ու դընացին,
Քարիցն ընկան կոտրվեցին։

Հովհ. Թումանյան, հ. 1—17

1 9 0 9

ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐԸ

Մի գյուղացի իրենց գյուղում
Խանութ սարքել, բան էր ծախում։
Օրվան մի օր մոտիկ գյուղից,
Մահակն ուսին, շունն ետևից
Ներս է մտնում մի գրա շորան.
— Բարի օր քեզ, ա՛յ խանութպան,
Մեղրը չունե՞ս,
Մի քիչ տաս մեզ։
— Ունեմ, ունեմ, շորան ախպեր.
Ամանդ ո՞ւր է, ամանդ բեր,
Ինչ տեղից որ ինքդ կուզես,
Էս սրհաթին քաշեմ տամ քեզ։

Էսպես հանգիստ, էսպես սիրով,
Մեղրից անուշ լավ խոսքերով
Մեղր են քաշում. մին էլ հանկարծ
Մի կաթիլ մեղրը ծորում է ցած։
— Տը՛զզ, էն կողմից մի ճանճ գալի,
Էս կաթիլին վեր է գալի։
Ճանճի վրա, թաքուն-թաքուն,
Էս խանութի տիրոջ կատուն
Դուրս է ցատկում,
Թաթով զարկում...

Քայց հենց կատվի ցատկելու հետ
Հովվի շունը իսկույն ետի

Հա՛ֆ է անում,
Վեր է կենում,
Խեղճ փիսիկին
Դընում տակին,
Ձեռաց խեղդում
Ու շրջբրտում։

— Խեղդե՞ց, խեղդե՞ց, վա՛յ, իմ կատուն,
Ա՛յ սատկես դու, շան որդու շուն,
Բարկանում է խանութպանը
Ու ձեռն ընկած մոտիկ բանը
Տուր թե կտաս շան ճակատին,
Շուռ է տալի կատվի կողքին։
— Վա՛յ, ձեզ մատա՞ղ, ասլան շունքս,
Իմ ապրուստը՞ս, տեղը՞ս, տունը՞ս...
Տունդ քանդվի, ա՛յ խանութպան,
Անխիղճ, լիրբ, շար, ֆրլան-ֆրստան,
Ո՞նց թե դու իմ շանը զարկե՞ս,
Դե, զարկելը հիմի դու տես...
Գոռում է մեր ածդահակը,
Մեծապլուխ իր մահակը
Ետ է տանում ու ցած բերում,
Խանութպանին շեմքում փքռում։

— Ապանեցի՞ն... հա՛յ, օգնությյո՞ւն...
Ու թաղից թաղ, ու տանից տուն
Ձեն է տալի մեկը մյուսին.
— Հա՛յ, օգնությյո՞ւն... ապանեցի՞ն...

Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամփի վրից, դորձի տեղից,
Ճիչով, լալով,
Հարայ տալով—
Էլ հերն ու մեր,
Քիր ու ախպեր,

Կին, երեխեք,
Ընկեր տղերք,
Զոքանչ, աներ,
Քավոր, սանհեր,
Քեռի, փեսա...
Ինչ իմանաս էլ՝ ո՞վ է սա,
Գալիս են ու անվերջ գալիս,
Ով գալիս է՝ տուր թե տալիս.
— Տո՛, կոպիտ արջ, տո՛, վայրենի,
Էս տեսակ էլ բա՞ն կըլինի.
Դու առուտուր եկար անես,
Թե՞ իր շեմքում մարդ ըսպանես...

Մին ասում են՝ տասը զարկում,
Աղցան անում, մեջտեղ ձրգում,
Իր շան կողքին երկար ու մեկ։
— Դե, ձեր մեռելն եկեք տարեք։
Ու էստեղից բոթը գընում,
Գընում մոտիկ գյուղն է հասնում.
— Հե՞յ, օղնեցե՞ք,
Մեռած հո չեք,
Սպանեցին մեր դյուղացուն...
Ինչպես շընաճանճի մի բան
Քանդես, թողնես,
Էն ճանճի պես
Ամբողջ գյուղով օրդու կապում,
«Բո՞ւհ» են անում, դուրս են թափում
Ամեն մինը առած մի բան.
Որը ձեռին մի հրացան,
Որը եղան, ցաքատ կամ սուր,
Որը թի, բահ, որը շամփուր,
Որը կացնով, որը փեռով,
Որը ձիով, որը ոտով,
Որն անդրտակ, որը բոբիկ—
Դեղի դուշման գյուղը մոտիկ։

— Տո՛, էսպես էլ անիրավ գյո՞ւղ.
Ոչ խիղճ ունեն, ոչ ահ-երկյուղ.
Մարդ գընում է առուտուրի,
Հավաքվում են՝ քաշում սրրի։
Թո՞ւ ձեր դեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին, ձեր ադաթին...

Գնա՞նք, զարկե՞նք,
Ջարդե՞նք, կրակե՞նք...
— Հա՞յ, հո՞ւյ, առա՞ջ, դե ձեզ տեսնե՞մ...»։

Ու դուրս եկան իրարու դեմ։
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
Կոտորեցին, կըրակեցին,
Ինչքան ավել կոտորեցին,
Էնքան ավել կատաղեցին
Ջարդեցին իրար,
Ջընջեցին իրար,
Կորան, գընացին
Գետնին հավասար։

Դու մի՛ ասիլ, մեկը մեկից
Էսքան մոտիկ, սահմանակից
Էս գյուղերը հարկ են տալի
Ամեն մինը մի արքայի։
Մի տերության թագավորը,
Երբ լսում է էս բոլորը,
Արձակում է հրովարտակ
Ժողովրդին իր հրպատակ։
— Հայտնի լինի մեր տերության,
Զինվոր, բանվոր, ազնվական—
Ամեն շարքին
Ու աշխարհքին,
Որ անօրեն ու դավաճան
Մեր դրացի ազգը դաժան,

Երբ մենք քընած էինք սիրով,
Մեր սահմանը մրտավ զոռով,
Ու կոտորեց սուրը ձեռին
Մեր սիրելի զավակներին։
Արդ, սրբահար ու հրրակեզ
Մեր որդիքը կանչում են մեզ,
Եվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,
Պատվեր տրվինք մեր բանակին,
Թընդանոթով մեր ավերող
Ու աստուծով մեծակարող,
Հանուն արդար ու սուրբ ոխի
Մըսանի հողը մեր ոտոխի։

Մյուսը նույնպես իրեն հերթին
Գրրեց զորքին, ժողովրդին.
— Մարդկանց առաջ և աստըծու,
Բողոքում ենք մեր դրրացու
Վարմունքի դեմ և՛ շար, և՛ նենգ,
Որ ոտքելով ամեն օրենք,
Բորրոքում է կռիվ ու վեճ
Հին հարևան ազգերի մեջ,
Քանդում սիրո դաշը կապած,
Արդ՝ ակամա մենք ըստիպված,
Հանուն պատվի, արդարության,
Հանուն թափված անմեղ արյան,
Հանուն ազատ մեր աշխարհքի,
Հանուն աստծու և իր փառքի—
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա
Ու մեր սուրը նորա վրրա։

Ու սկրսվեց կրռիվն ահեղ։
Շռինդ, որոտ էստեղ, էնտեղ։
Կրրակն ընկավ շեն ու քաղաք,
Արյուն, ավեր, ճիչ, աղաղակ,
Ամեն կողմից սարսափ ու բոթ,

Ամեն կողմից մեռելի հոտ...
Ամառ, ձրմեռ,
Ողջ տարիներ
Մըշակն անբան,
Դաշտերն անցան.
Ու, կրռիվը չըդադարած,
Սովը եկավ համատարած։
Սովը եկավ՝ սովի հետ ցավ,
Ծաղկած երկիրն ամայացավ...

Իսկ մնացած մարդիկ իրար
Հարցնում էին սարսափահար,
Թե ո՞րտեղից արդյոք ծագեց
Էս ընդհանուր աղետը մեծ։

---

1 9 1 2

ԱՊԱՎԵՆԻ ՎԱՆՔԸ

(ԱՋԳԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ)

Լենկթեմուրն եկավ, հուրն ու սուրն եկավ,
Անօրենն եկավ, եկա՜վ ու եկա՜վ.
Հավաքեց, կիտեց մեր ազգը Հայոց,
Փաթաթեց, պատեց, ինչպես վիշապ-օձ,
Կանգնեց Սևանա ափին հովասուն,
Էնտեղ, ուր ուշքը ու միտքն աստծուն՝
Անհունն է խորհում, մեռնեմ իր զորքին,
Օհաննա վանքը ծովի եզերքին։

Էն վանքում, հայոց ազգին պահապան,
Աղոթք էր անում ծերուկ հայր Օհան.
Աղոթք էր անում իր հոգու համար,
Իր ազգի համար, աշխարհքի համար։
Երբ տեսավ խաղաղ վանքիցը իրեն
Անօրեն մարդու էս գործն անօրեն,
Խրոովեց արդար ծերունու հոգին.
Ճերմակ միրուքով, իր ցուպը ձեռքին,
Դառնացած, դրժգոհ մարդուց ու կյանքից,
Աղոթքը կիսատ դուրս եկավ վանքից,
Իջավ Սևանա երեսը կապույտ,
Ու քրքիմընջալով, միամիտ, անփույթ,
Էն վեռ-վեռ, ծրփուն ջրերի վրա
Ցամաք ոտներով գընում էր ահա։
Տեսավ հրաշքը Լենկթեմուրն ափից,

Տեսավ, սասանեց տեղը սարսափից։
Կանչեց, աղաչեց իշխանը թաթար.
— Ե՛տ արի, ասավ, ե՛տ արի, արդա՛ր,
Ետ արի, ասավ, ո՛վ դու աստծու մարդ։
Ետ եկավ մեր հայր Օհանը հանդարտ,
Իր ցուպը ձեռին, ջրերի վրով,
Ու առաջն ելավ թաթարը սիրով։
— Ի՞նչ ես ուզում դու, ո՛վ սուրբ ալևոր,
Գա՞նձ, իշխանությո՞ւն, թե կյանք փառավոր...
— Քո փառքն ու գանձը հարկավոր չեն ինձ,
Իմ ժողովուրդն եմ ուզում քեզանից։
Ուզում եմ թողնես՝ գընան ուր կուզեն,
Ու ապատ իրենց կյանքի ձենն ածեն
Էս լեռն աշխարհքում, արևի տակին...
Ասավ սուրբ մարդը մեծ ավազակին։
— Ժողովուրդ կուզե՞ս... լա՛վ, լինի էդպես։
Էս վանքովը մին ժողովուրդ տամ քեզ,
Գընա ինձ համար աղոթք արա, ծե՛ր։
Ասավ Լենկթեմուրն ու տրվավ պատվեր,
Որ դերի հայոց ազգը մի թևից
Էն վանքը մըտնի սուրբի ետևից.
Ինչքան ժողովուրդ մըտնի էն վանքը,
Նրան է բաշխում էնքանի կյանքը։
Հրաման արավ իրեն զորքերին,
Ու բաց թողեցին հայ ազգի գերին։
Մըտնում է գերին, մըտնում մի ծերից,
Անցել է թիվը հարյուր հազարից.
Չի լցվում սակայն հասարակ մի վանք...
Ապշում է թաթարն՝ արմա՜նք ու զարմանք։
— Թողե՛ք, կանչում է իրեն զորքերին,
Հորձանք է տալի նորից հայ գերին։
Գնում է գերին, գնում է նորից,
Անցել է թիվը հաղար հազարից,
Չի լցվում սակայն էն վանքը կըրկին,
Չի կանգնում հայի հոսանքն ահագին։

Երրորդ անգամ է կանչում զորքերին։
Գալիս է անցնում մընացած դերին։
Անցնում է գերին, անցնում շարեշար,
Էլ մարդ չըմնաց, գընա՞ց ինչ որ կար,
Դատարկ է սակայն վանքը տակավին...
Թեմաբ զարհուրած դառնում է շորս դին.
— Զարթո՞ւն եմ արդյոք, թե՞ երազ տեսա....
Հայտնեցեք ինձ շո՞ւտ, ի՞նչ հըրաշք է սա...

Գընում են տեսնում մարդիկն իր գըրկած—
Մեր հայր Օհանը՝ աղոթքի շոքած,
Աչքերն երկընքին, միրուքն արցունքոտ,
Ով որ հայ ապրից մրտել է իր մոտ,
Իր սուրբ աղոթքով, կամքով վերինի,
Փոխել է խսկույն դարձրել աղավնի,
Բայց պատուհանից թողել ամենքին,
Թրջցրել գնալ իրենց լեռները կըրկին,
Ու հիմի վանքում էլ չըկա ոչ ոք,
Ինքն է աղոթում մենակ, ծընկաչոք։

---

1 9 1 3

ԱՂՋԿԱ ՍԻՐՏԸ

(ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՎԱՆԴԻՈԹՅՈՒՆ)

Հին արևելքում, մի հին քաղաքում
Ժուկով մի ջահել աղջիկ էր ծաղկում։
Հարուստ էր հերը զարում սիրունի,
Անհուն գանձի տեր ու շատ անվանի։
Բայց սիրտ համար խեղճ ու շեն չըկան.
Մի աղքատ տըղա սիրեց աղջկան,
Աղջիկն էլ նըրան սիրեց կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.
—Կա թե չըկա,
Նա է, որ նա...

— Չէ՛, որ չէ՛, կանչեց ծընողը փարթամ.
Իմ աղջիկն, ասավ, սև հողին կըտամ
Ու մերկ աղքատին աղջիկ չեմ տալ ես։
Ասավ ու կանգնեց էն լեռ բարի պես։

Բայց սիրտ համար քար ու սար չըկան,
Սիրում էր գըժված տըղեն աղջըկան,
Աղջիկն էլ նըրան սիրում կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.
— Կա թե չըկա,
Նա է, որ նա...

Սաստիկ բարկացավ հարուստն անկտրում,
Փակեց աղջըկան մեծ աշտարակում

Իր սիրած տղից ու կյանքից հեռու.
— Թող էնպես, ասավ, մոռնան իրարու

Բայց սիրո համար փակ ու բանտ չկան.
Սիրում էր անվերջ տղեն աղջկան,
Աղջիկն էլ նրան սիրում կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.
— Կա թե չկա,
Նա է, որ նա...

Տեսավ իր ձեռքին ոչ մի ճար չկար,
Համառ հարուստը հերսից խելագար,
Իրեն աննրման զավակը միջին,
Կըրակի մատնեց աշտարակն էն հին։

Բայց սերը որտեղ հըրդեհ է ձրգել,
Ի՞նչ անի էնտեղ հըրդեհը մեկ էլ։
Ու թեժ բոցերի սաստկության միջում
Աղջիկն էրվելով ճըչում էր, կանչում.
— Կա թե չկա,
Նա է, որ նա...

Ու էրվեց հիմքից աշտարակն չարհեղ,
Էրվեց նրրա հետ էն սիրունն ամեղ,
Հող-մոխիր դարձավ։ Իր սիրտը մենակ
Չէրվեց հըրաշքով ու սառ մոխրի տակ
Մընաց կենդանի... էն մոխրի վըրեն
Արտասուք թափեց սիրահար տըղեն
Ու կորա՞վ, գնաց, հեռո՞ւ, շատ հեռո՞ւ,
Իր օրը լալու, նրրան փընտրելու,
Մենա՞կ, օտա՞ր,
Անմըխիթար։

Ո՞վ քընքուշ գաղտնիք, ո՞վ սիրուն հըրաշք.
Էրված աղջկա սիրտը մոխրի տակ,

Իրեն մոխրի տակ կենդանի էր դեռ—
Ոչ ոք չըգիտեր, ոչ ոք չըգիտեր...

Ժամանակ անցավ էս տըխուր դեպքից,
Արցունքով թրջված էն մոխրի տակից,
Էն միշտ կենդանի սըրտից թրռթրռուն
Բուսավ խաշխաշի ծաղիկը սիրուն,
Կարմի՞ր, թեթև՞,
Բայց... սիրտը սև...

Սըգավոր տըղան հուսահատ, թըշվառ
Շըրջում էր մոլոր աշխարհից աշխարհ,
Չէր գտնում սակայն կյանքում էլ նրրան
Ամեն տեղ վիշտն էր սիրածի մահվան,
Որ հար, թե՛ զարթուն, թե՛ քընի միջում,
Տանջում էր նրրան, անդադար տանջում։

Բայց սիրո համար վերջ ու մահ չկան.
Տըղի հառաչքը հասավ աղջկան
Անմահ կյանքում,
Էն աշխարհքում։

Հասավ, ու շարժված, կարոտ, կարեկից,
Թռավ աղջիկը անմեռ աշխարհքից,
Սիրով ու բույրով, թարմ, անուշահոտ,
Երազով եկավ սիրած տըղի մոտ։
— Լըսի՛ր, իմ սըգվոր, լսի՛ր ինձ, ասավ.
Իմ մոխրի տակից մի ծաղիկ բուսավ
Ու էն ծաղկի մեջ իմ սիրտն է, որ կա,
Կարոտ, խենթ սիրտը չահել աղջկա—
Լիքը սիրով,
Երազներով...

Ուժ ունի իր մեջ նա կախարդական
Ու քաղցր արբեցում էնքա՞ն ու էնքա՞ն...

Քամիր ու խրմիր ուժը էն ծաղկի,
Նա քեզ կը փրրկի, նա քեզ կը փրրկի..
Մոռացնել կըտա իմ հուր սերն ու ինձ,
Հեռու կը տանի էդ կոպիտ կյանքից,
Ու կապրես անվիշտ և զըվարթ հոգով,
Կը խնդաս ընդմիշտ անթառամ կյանքով
Ազատ հեռվում,
Երազներում...

Ո՜վ սիրուն հըրաշք, ո՜վ քնքուշ դաղտնիք.
Տըղան էն օրից դարձավ երջանիկ,
Հարբած նվիրական էն ծաղկի ուժով,
Միշտ նոր կարոտով ու նոր աշխուժով,

Իրեն երբեմնի վիշտը մոռացած,
Է՝ կոշտ ու կոպիտ կյանքից հեռացած,
Ապրում էր ուրախ, ճոխ վայելքներով,
Լե՞ն ու լի սըրտով, անկաշկանդ սիրով
Ազատ հեռվո՜ւմ—
Երազներում...

1916

ՄՈԾԱԿՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Գիժ մոծակի պարի ժամին
Զարկեց, հանկարծ աշնան քամին,
Ուժը խըլեց, ուշքը տարավ,
Գիժը մին էլ մըտիկ արավ,
Որ էն արև
Աշխարհքն արդեն պատած ողջ սև,
Լացով, թացով սուգ է անում,
Դողում, պաղում ու դալկանում...
Շուտիկ, շուշտիկ իրեն կինն էլ
Սուսիկ-փուսիկ կողքից կորել,
Ով գիտի՝ ինչ ծակ էր գըտել,
Մինչև գարուն մեջը մըտել,
Սոված, սառած
Ու սալարած
Վեր թրռավ՝ վար, դես ընկավ, դեն
Ժիր Մըրջյունի տաքուկ ու շեն
Բունը հիշեց, ելավ դընաց,
Դրռան առաջ տրխուր տըղվաց.
— Բա՛ց արեք, բա՛ց...
Էս տարաժամ՝ թըշվառ ձենից
Կոպիտ, թուխ-թուխ,
Հաստագըլուխ
Մի պահապան զարթնեց քընից,
Ներսի մըթնում մի կերպ արավ,
Փակած դուռը նեղ ծերպ արավ,
Տեսավ՝ սևով, թևով զուգված՝
Դրռան առջև մինը տընկված,
Ոտները թել,

Ինքը մի գել։
— Հե՛յ, ո՞վ ես դու,
Ա՛խպերացու։
— Տը՛զ-պը՛զզ, ասավ, Մոծակն եմ ես.
Բա չե՞ս ասիլ՝ էսպես, էսպես.
Ամառն ամբողջ,
Ուրախ, առողջ,
Պայծառ ու տաք
Արևի տակ
Կինը աշխույժ սաղ էր ածում,
Ես էլ անհոգ խընդում, ցընծում,
Տևսակ-տևսակ պարեր պարում,
Սըրա նըրա թուշն համբուրում
Ու վայելում ամեն բանից,
Ամեն բարուց ու սեղանից,
Լիքը այգում,
Ճահճոտ մարգում,
Ճոխ տընկերում,
Պալատներում....
Մի անգամ էլ, երբ որ էսպես
Պարում էի, մինը անտես
Էնպես զարկեց՝ ուշքըս անցավ։
Ուշքի որ գամ՝ ի՞նչ տեսնեմ լավ,—
Երկինքը թուխպ, երկիրը սև,
Դառը քամի, սառը անձրև,
Արար աշխարհ պաղել, փոխվել,
Կողքիցըս էլ կինս է փախել...
Էլ ի՞նչ ասեմ, ողջը մի-մի
Էն ի՞նչ լեզու կարա պատմի
Կամ ի՞նչ բերան,
Զըտեսնըվա՞ծ, հըրաշք մի բան....
Հիմի էսպես՝ ասված, մենակ,
Մընացել եմ պատերի տակ,
Տեղ չի ունեմ, կեր չի ճարվում։
Ես էլ եմ հո շատ մընընդվում.

Բայց ի՞նչ անեմ, ո՞ւր գընամ էլ,
Երեսս էլի ձեզ եմ արել։
Աստծու սիրուն, մի՛ խընայեք.
Էս մի ձրմեռ շահեք, պահեք,
Մինչև նորից գարուն բացվի,
Աշխարհքն էլ ետ բարով լըցվի։
— Դե լա՛վ, դու կաց, ներս գընամ ես,
Տեսնենք ներսից ի՞նչ կասեն քեզ։
Ասավ պահնորդն ու մեջեմիջ
Կոկ սենյակներն անցավ անվերջ,
Մինչև հասավ ներսի տունը,
Ուր ապրում էր մեծ Մըրջյունը
Առատ կյանքով,
Իր համայնքով։
Գընաց իրենց լեզվով հայտնեց,
Մըրջյունը լուռ լըսեց, մըթնեց,
Ու ետ դարձավ
Էսպես ասավ.
— Գիժ Մոծակի համա՞ր եմ ես
Ողջ ամառը արևակեզ՝
Էնքան ջանքով
Ու տանջանքով
Տուն-տեղ դընել, ճամփա հարթել,
Ամբար շինել, պաշար կիտել,
Որ ամառը ծույլ պըտրտի,
Ձմեռը դա նըստի ուտի՞...
Մեր ծույլերին ջարդել ենք մենք,
Ուրիշ ծույլի՞ բերենք պահենք...
Կերթաս կասես էդ անպետքին.
Բանի, գործի ժամանակին
Ով փոխանակ աշխատելու,
Ուշք ու միտքը տա խընդալու,
Պարապ շըրջի, երգի, պարի,
Սըրա նըրա թուշն համբուրի,
Էս կուտ վազի, էն կուտ ցատկի,
Վերջը էդպես պիտի սատկի։

1 9 1 7

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՉԱՐՉԻՆ

(ՉՈՒՂԱՑԻ ԴԱՂԹԻՑ)

— Հե՜յ, լավ մանրո՞ւք,
Ասե՞ղ, հուլո՞ւնք,
Մատնի՞ք, մարջա՞ն,
Ապարանջա՞ն...
Հա՞վ, ձու բերե՞ք,
Ուսի՞ք, տարե՞ք,
Խունջիկ-մունջիկ
Հարան ու աղջի՞կ,
Իժան կըտա՞մ,
Լավը կըտա՞մ...
Էսպես կանչելով՝ փողոցից փողոց,
Իրրև թե չարչի մի թափառական,
Չարչու կերպ մըտած, ինչպես վիշապ օձ,
Անցնում էր ինքը՝ Շահ-Արաս արքան։
— Հե՜յ, ո՞վ կուզի թել ու ասե՞ղ,
Դուրս եկեք, դո՜ւրս, ինձ մո՞տ, էստե՞ղ....
— Չարչի ախպե՛ր, չարչի ախպե՛ր,
Ասեղ ունի՞ս, էս կողմը բեր։
Կանչեց մի կին՝ հայ գաղթական,
Ու մոտ գընաց չարչին կընկան։
— Օ՜, ի՞նչ ասեղ, իսկն օձի քիստ...
Թոփր մի հաց...
— Վո՜ւյ, թանկ է խիստ...
— Է՜, մի՛ խոսիր, քուրի՛կ, էդպես,
Շահի կյանքը թե կըսիրես։
— Ամա՞ն, հողեմ դյուխը Շահի,

Աստված Շահից հեռու պահի.
Նրանց ապրի, չարչի ախպեր,
Էդ անունը բերան մի՛ բեր։
— Վա՜հ, էսքան էլ չա՞ր լինի մա՜րդ.
Ինչ է արել Շահը ձեզ վատ։—
Գաղան թուրքի սըրից փըրկել,
Չոր Ջուղայի քարից պոկել՝
Բերել է ձեզ առատ Փարիս,
Աչքն էլ քաղցրը միշտ ձեզ վրա...
— Օ՜ֆ, հերիք է, չարչի ախպեր,
Մի՛ խոսեցնիր ինձ դրբանից։
Երնեկ դրբա ոտը կոտրեր՝
Չըդար հաներ մեզ մեր տանից։
Եկավ վարար հեղեղի պես,
Ջարդեց մեր շեն, մեր լի Ջուղան,
Ոչ աստըծուն նայեց, ոչ մեզ,
Սըրբեց բերով ողջ տեղտեղան։
Թող արինք փակ մեր տուն ու ժամ,
Բանալիներն Աբազն ածինք,
Սարի ուսից վերջին անգամ
Ետ նայեցինք ու կանչեցինք.
— Աստվածածի՜ն Վերին Կաթան,
Քեզ ամանաթ մեր սուրբ վաթան,
Ուր որ գընանք մեր վաթանից՝
Մեզ դարձըրու գերությունից։
Աղաչեցինք ագերսելով,
Ետ շուռ եկանք ու անց կացանք.
Ծեծով, կոծով, հըրով, սըրով՝
Ցով Արազի ափը հասանք։
Արազը ծո՜վ, Արազն երմա՜ն,
Դուրս է եկել իր ափերից.
«Անցե՛ք», եկավ մեզ հըրաման.
Շահն է հրաման տալիս վերից...
Ետևը սո՜ւր, առաջը ջո՜ւր,
Սո՜ւգ, վայնասո՜ւն, իրարանցո՜ւմ,

Թառաչում են մեծ ու պուճուր,
Իրար գրկած գետը լցվում...
Էն սև օրը, որ մենք տեսանք,
Քո թշնամին թող չտեսնի...
Ա՜խ, ե՞րբ պիտի մին էլ տեսնենք՝
Մեր անեծքը երկինք հասնի...
Ու գալիս են շարշու գլխին
Կիտվում պանդուխտ, գերի հայեր.
— Անե՜ծք Շահին, իրեն դահին,
Անիծում են երկինքն ի վեր։
Շուտ են գալիս իրենց բընում
Չարշու աչքերն ըսպառնալի,
Ձեռն ու ոտը դող են լինում,
Ու, սնակնած, հաբց է տալի.
— Շահի առջև հապա էնօր
Գոռում էիք միաբերան,
Թե ապրում եք դուք բախտավոր
Ու օրհնում եք թախտն ու իրա՞ն...
— Սուտ էր, ախպե՛ր։ Դու մեզնից մեկն՝
Ի՞նչ թաքցընենք մենք քեզանից,
Բայց մեր սիրտը ո՞նց չըծածկենք
Էն մարդակեր չար գազանից։
Սուտ էր։ Ու միշտ, քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վըրա
Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր...
Մոընչաց չարշին, աբեն շըպըրտեց,
Դուրս եկավ տակից Շահ-Աբասն ահեղ,
Նաջաղը ցոլաց, իջավ շեշտակի,
Գերի ծերունին փըրվեց տեղնուտեղ։
Փըրվեց... Ու միշտ, քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վըրա
Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր։

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

1893

ՍԱՎԻ ԺԱՄԱՆԱԿԻՑ

Երբ որ Լոռու Ձորերից հայ գյուղացին Սլեքսանդրապոլ յուր կնոջ քաղած հանով ալ առնելու գնա, հացը պակսած ժամանակ յուր շինած թին կամենա տանել Նորագյալ հացի հետ փոխելու կամ պարաբ արած փողով ցորեն, գարի գնելու, պետք է յուր բեռնակիր ձիու հետ անցնի Զամանլվի հովիտը։

Զամանլվի ահագին հովիտը կազմում են հանդիպակաց լեռները, որոնց անասելապատ գագաթները երկու կողմից իջնելով, ձորի խորությանն մեջ հանդիպում են սրընթաց կոհակներին Փամբակա ջրի, որ, համառուն սարերից գալով, հովտի երկայնությամբ վազում է դեպի Լոռու ձորերը։

Այս նեղ հովտում, գետակերբին տեղ-տեղ բացվում են սիզավետ, կանաչ հարթ տարածություններ անտառի մեջ. դրանցից ամենամեծը կոչվում է «Արաղի հալա»։

Սով էր տարին։ Արաղի հալեն շրջապատող անտառի բերանից — ներքևից դուրս եկավ մի փալանած ձի։ Մարդ մինչև կարողանար մտածել, թե այս մենակ ձին կորած կամ փախած պետք է լինի, դուրս եկավ և տերը՝ գյուղացի Անդրին։ Մի քանի քայլ հեռավորությամբ նա հետևում էր յուր ձիուն, որը տանում էր մեծ փալանի մեջ ձգած յուր տիրոջ հին չուխայի մնացորդները և մի դատարկ խուրջին։ Անդրին ինքն էլ, յուր ձիու նման, բավական մաշված մի արարած էր, բայց նույնպես ջղուտ ու դիմացկուն։ Աշխատասեր ու տո-

կուն ռանչպար մարդ էր նա, և, թեև միշտ աղքատ, զվարթ բնավորության տեր ու սրախոս։

Այս տարի խեղճ մարդու հացը պակսեց գեռ ձմեռվա կիսին։ Անդրին յուր հարևաններից փոխ առնելով, հարուստներին մուրհակ տարով յուր գնաց, մինչև գարունը հասավ, կամ ավելի ճիշտ, մինչև այն օրը, երբ էլ ոչ ոքից հույս չուներ փոխ առնելու. շատերը չուներին, ոմանք վախենում էին իրանցն էլ հատնի, ոմանք էլ նրա թախանձանքին պատասխանում էին. «Ինչ որ տվել ենք դեռ գնա էն բեր...»։ Մի խոսքով՝ սովի ահարկու պուզերն արդեն երևում էին դատարկված հորերից։

Եվ ահա գարունը նոր բացված՝ Անդրին յուր Ղռաթի հետ (այսպես էր անվանում ձիուն) ճանապարհ ընկավ դեպի Շորագյալ, կամ, ինչպես իրանք են ասում, դեպի «վերև»։

Շատակեր Շորագյի շատաբեր դավառը. մոտիկ լեռնաբնակ հայերի միակ ապավենն է հացապակաս ժամանակներում։ Լոռին, իրև լեռնային երկիր, հաճախակի երկարատև անձրևներով հացը կտրում է, և գյուղացիք Անդրու նման ձին փալանում են գնում Շորագյալ։

Անդրին մտաբեղ հետևում էր յուր ձիուն և ինքն իրան մտմտում.

«Կերթիամ Շորագյալ, թո՞ւշ իմ ծանոթ Ղաղաքոնց Մկոյի տունը... ինձ որ տեսնի շատ կուրախանա՝ «բարո՞վ, բարո՞վ, քավոր Անդրի... ո՞ւր ես ծո մարդ... իմա՞լ ես ծո՛... մանչերդ իմա՞լ են...», խուրջինիցս էլ էն մի քանի դասատ ղարա» թութունը որ հանեմ ավելի կուրախանա... իրիկնահացիցը եղը օդի տախտի վրա թինկը կըտանք ու շիբուխ քաշելով զրից կանենք... Կասեմ, որ մեր կողմերը հացի պակասություն ենք քաշում... ամա նա ինքը կիմանա թե ընչի եմ փնացել. առաջին անգամը խո չի... ով գիտի ինձ չի թողնի էլ թե բերանս բաց անեմ, «ինչքան որ կարաս ձիուդ բարձիր, Անդրի տխպեր, տար կեր, քեֆ արա»։— Վա՜յ ես քեզ մատաղ Մկո ջան... հանկարծ, զգացված Մկոյի ասելիք խոսքերից, լսելի ձայնով բացականչեց գյուղացին և քայլերը արագացրեց. ձայն տվեց և ձիուն, նրան էլ շտապեցրեց։

«Բաս ես ո՞նց դուրս գամ քու պարարքի տակիցը, Մկո տխպեր ջան,— շարունակեց նա,— էլ ի՞նչ ասեմ. առնչն ավելորդ ա, հալբաթ աշունքը կըդա, ես գիտեմ... ես քո լավությունը մի հատ վճարեմ, որ... ես մանկալ Անդրին եմ. ես ինձ վրա չեմ թողուլ ուրիշի լավությունը... հալա մի էս նեղ տարուցը պրծնեմ, քյուլփաթս սովամահից ազատեմ... ես գիտեմ էլի...»։

— Բարի օր, տխպերացու,— հանկարծ մի ձայն եկավ ներքևից։

Ցուր ցնորմունքից սթափվեց Անդրին և տեղնուտեղը իսկույն կանգնելով՝ ներքև նայեց։ Ճամփու տակի աղբյուրի մոտ տեսավ մի սպիտակ շուխավոր մարդ։ Անդրին իսկույն ճանաչեց, որ նա կոռ է (շորագյալցի). միայն նրանք են սպիտակ շուխա հագնում, իսկ իրանց երկրում այդ ամոթ է։

Շորագյալցուց փոքր-ինչ հեռու նրա կինը թոկի ծայրը բռնած սրածացնում էր իրանց ձին։ Իսկ նրանց մանկահասակ աղջիկը գետեզերքին լվանում էր երեսը փոքրիկ եղբոր, որի ուրախ ճվճվոցը խլանում էր լեռնային գետի գոռոցի մեջ։

Շորագյալցին զարմացել էր Անդրուց, որ պելացել էր իրանց վրա, և տեսնելով յուր պատասխանն ուշանում է, կրկին ձայն տվեց. «Առաջ բարի, տխպերացու... ո՞ւրտեղացի ես»։

«Թիզուս հե՜՜ղ»,— մարդուն պատասխանելու տեղ Անդրին կանչեց յուր ձիուն, որ հեռացել էր բավական։ Հոգնած անասունը իսկույն կանգնեց և սկսեց արածել ճամփի կողքի կանաչը։

Երբ որ տեսավ ձին կանգնեց, Անդրին ճանապարհից դուրս եկավ, կանգնեց ներքի եզերքին և սկսեց բարձր գոռգոռալ, կարծես ուզում էր վախեցնել անծանոթին.

— Աստծու բարին, բարեկամ, որտեղացի ես, բարեկամ։

— Որթնավեցի եմ։ Դու որտեղացի ես, ո՞ւր ես գնում, խնդրում ենք,— յուր ձայնն էլ բարձրացրեց վերևեցին։

— Ես գսեղեցի եմ՝ էդ ո՞ւր ես տանում էդ օղլուշաղը։

— Ահ չըկա խու ճամփեքին։

— Չէ՛, արխեին գնա. ո՞ւր եք գնալու։

— Քարնչեցի Մատնանց Գիքորը ո՞նց ա,— փոխանակ պատասխանելու հարցրեց շիրակեցին։

— Լավ են, փառք աստծու։

— Նրանց տունն ենք գնում։

— Դու նրանց փեսեն ե՞ս։

— Հրամանք ես։

— Դու Գոքորն ե՞ս։

— Հրամանք ես։

— Ա՛յ տղա, էդ մեր Նազլուն ա՞։

— Հրամանք ես։

Խոսակցությունն այստեղ ընդհատեց Անդրին և լուռ հեռացավ. գնաց յուր ձին բերեց արձակեց գետափի խոտերում, մոտեցավ ճամփորդներին։

Առանց ձեռք տալու իրար բարևեցին և երեսները դեպի գետի կողմը նստոտեցին երկու գյուղացիները։

— Բա դու ո՞վ ես, ամոթ չնի հարցնելը,— դիմեց շիրակեցին։

— Որ ասեմ, կըճանաչե՞ս։

— Բալքի ճանաչում եմ. ով գիտի։

— Ինձ մանկալ Անդրի կասեն. ճանաչում ե՞ս։

— Չէ՛, ախպեր, սուտն ինչ ասեմ։

— Հա՞, տեսնում ես, չես ճանաչում,— հաղթական կերպով նկատեց Անդրին և ինքը հարցրեց.

— Բա ես որթնավեցի մի բարեկամ ունիմ, կճանաչե՞ս։

— Ո՞վ ա, հալբաթ որ կը ճանաչեմ։

— Դաղաքոնց Մկոյին կը ճանաչե՞ս։

— Լա՞վ։

— Ո՞նց ա։

Հանկարծ մթնեց շիրակեցու դեմքը, կարծես թե նեղացավ։

— Ոանչպարը որ ուտելու հաց չունենա ոնց կըլի,— ծանր հառաչելով խոսաց նա և հոնքերը կիտեց անթարթ նայելով մի հեռու կետի։

— Ո՞նց թե... հա՞ց չըկա Շորագյալ,— սարսափելով բացականչեց լռեցին և լռած աչքերը սևեռեց Գոքորի դեմքին։ Նրա աչքերում այդ բոպեին տխուր վրդովմունքով փայլատակում էր նրա հոգին։

— Ո՞վ կըտա.— սրտաբեկ արտասանեց վերևեցին և կարճ լռությունից հետո ավելացրեց, առանց Անդրուն նայելու.

— Հրես կնիկս, երեխերքս հավաքել եմ, գամ անորս մոտ էս մի երկու ամիսն անցկացնեմ... Մինչև տեսնենք աստծ ինչ դուռը բաց կանի։

Անդրին չըլսեց. նա դեռ ապշած էր Գոքորի դեմքին. «Վեր կենամ սրան սպանեմ, կտոր-կտոր անեմ,— անցնում էր նրա մտքովը— ո՞նց անեմ, տը սիրտս հովանա... սա էս ինչ ասաց»։

— Էդ ինչ ասեցիր... վա՛յ քու մեջքը կոտրի,—հանկարծ արթնածի նման գոչեց Անդրին,— ախր էդ ո՞նց էլավ։

— Էլավ էլի, չորայինից հացը նվաղ եկավ, էլած չէլածն էլ ինչ մուշտարի եկավ ծախեցինք... ձմեռն էլ մեր քոռ բախտիցը երկարեց... մնացինք ձեռներուս ծոցներիս նստած... սատանի ծնունդները հոտիցն իմանում են, որ սով պետք է ընկնի, գալիս են լավ դին տալիս՝ տաշտի հացն էլ տանում... մենք էլ փողին թամահ ենք անում... ա՛յ շատ լավ էլա՞վ, մեր հախն ա... թող մի սոված կոտորվենք...», և երկուսն էլ լռեցին։

Այդ մի դառն և ծանր լռություն էր. և հուսահատությունը կամաց մոտենում էր նրանց սրտերին։

Հեշտ հուսահատվող մարդ չի դյուղացին։ Նա լուռ ու մունջ գերի է կյանքի պատահմունքների և մշտապատրաստ ղոհ բնության պատահարների.— մի ախտ հանկարծ կոտորում է նրա անասունը, կարկուտն է տանում արտը, մի արտասովոր շփոթ խլում նրա աշխատանքի ժամանակն ու արդյունքը... նա իրան սիրտ տալով կրկին նորոգում է յուր

արորն ու գութանը և կրկին մտածում է ապրելու մասին։ Ապրում է բոլոր տարին ցամաք հաց ուտելով, և այդ ցամաք հացն էլ հանկարծ կտրվում է։

— Բա հմի դու ո՞ւր ես գնում,— փորն ընկած ձայնով հարցրեց Անդրին։

— Ասեցի անտրանցս տունն էլի,— նույնպիսի ձայնով պատասխանեց Գոքորը։

— Ո՞ւր ես գնում... աներդ խանը ձեռին դոնեղուռը մանա գալիս ալիր չի գտնում... մեր կողմերը սով ա, սո՛վ...

— Կամա՞ց... կիմանա,— դեպի կինն ակնարկելով ահով շշնջաց շիրակեցին և էլ ոչինչ չըխոսաց։

«Որ կողմը գնամ,— մտածում էր նա.— ո՞ւր տանեմ կենս, երեխաներս...»։

«Վերադառնա՞մ...— մտածում էր լռեցին,— բայց ինչ ասեմ կնոջս... բայց երեխաներս քաղցած առաջս կըվազեն...»։

— Քա՛, մթնում ա,— մի քանի անգամ արդեն Նազլուն ետևից մարդուն կանչել էր կիսաձայն։ Նա հիշեցնում էր, որ ժամանակ է ճանապարհ ընկնելու։

Բայց մարդը ամաչում էր ետ մտիկ տալ, կնոջ երեսին նայել։ «Ինչ պատասխան տամ սրան... որ կողմը գնամ»,— մտածում էր նա։

Եվ երկու գյուղացիները Զամանլվի հովտում նստած մտածում էին։

— Գիտես ինչ կա, Գոքոր,— հանկարծ գլուխը վեր քաշելով խոսաց լռեցին։

— Ինչ կա։

— Մեր գեղումը մի հարուստ մարդ կա. Եգոր աղա են ասում, մի կատաղած շան տղա. էս բոլորին էլ ամբարներն ու հորերը լիքը հաց ունի։ Ով որ ճաղդ փող ա տալիս՝ թաղարը երեսուն մանեթով հաց ա տալիս, ով չէ՝ թամասուն ա տալիս թաղարին քառասուն մանեթ, մանեթին էլ՝ ամիսը՝ տաս շահի կամ երեք աբասի շահ։

— Պա՛հ, անիսապ մարդ,— բացականչեց կոռն,— նրանից ո՞վ կըվերցնի։

— Տո՛, ես վերցնում էի, չտվեց,— շարունակեց Անդրին.— հմի դիտես ինչ կա։

— Ինչ կա։

— Դու ղոչաղ մարդ ես, թե չէ...

— Ինչ ասեմ, ախպեր... — և շվարած շիրակեցին չկիտեր ինչ պատասխան տա։

— Գիտես ինչ կա,— խոսքը փոխեց Անդրին, տեսնելով, որ դժվարություն մեջ է դրել խոսակցին։

— Ինչ կա։

— Աստած վեր կանի, որ մի մարդի ամբար լիքը հաց ըլի, ու նրա հարևանը սովից մեռնի՞։

— Իսկի մարդն էլ չի էդ բանին հավանիլ,— համաձայնեց Գոքորը.— էդ անօրենություն ա։

— Չէ՛. արի կարճ քեզ մի ուրիշ բան ասեմ։

— Մի բան ես ուզում ասես, սիրտ չես անում, խնամի Անդրի,— նկատեց շիրակեցին.— ինձանից արխեին կաց, ինձ չես ճանաչում դու։

— Որ քեզ մի քանի թաղար ցորեն տամ, կարո՞ղ ես հասցնել Շորագյալ,— վերջապես հայտնեց Անդրին։

Այս խոսքերի հետ Գոքորի սովից նվաղած աչքերը փայլատակեցին։

— Քանի թաղար,— գոչեց նա ուրախացած,— տա՞սը... քսա՞ն... ե՞րբ կըտաս... Եգոր աղի՞...

— Սո՛ւս, գոռգոռալ մի...— զգուշացրեց Անդրին,— ամա գիտես, ուրիշ մարդ չըպետք է իմանա... գիշերով պետք է անցկացնենք... ա՛յ այս մոտիկ սարերով...— նա ձեռքը մեկնեց դիմացի սարերին։

Այդ բոպեին վերևից մի գոռոց բարձրացավ. «ա՛յ տղերք, ո՞վ եք, հե՞յ»։

Մեր ծանոթները ցնցվեցին, և ետ նայելով տեսան վերևից մի ուրիշ գյուղացի է գալիս. նա գոռգոռալով ուշադիր տալիս, թռչկոտում, վազում էր դեպի ցած։

Այս տարօրինակ ուրախ տրամադրությունը զարմացրեց

գյուղացիներին. «Ո՞վ պետք է լինի, այսպես ուրախ այս աղետի ժամանակ, երբ ժպիտը մեղք է համարվում— եթե միայն խելագար չի...»,— մտածում էին նրանք. կարծես նրանց կասկածն ավելի հաստատելու համար մոտեցողը բարձրացրեց յուր գլխարկը և հարբած քիֆ անողի նման սկսեց աղաղակել. «Հե՛յ-Հե՛յ»։

Գոքորն ու Անդրին, մերթ իրար երեսի նայելով, մերթ եկվորին, մնացել էին ապշած, թե այդ ինչ էր նշանակում։

— Ինչ կըտաք, որ ասեմ,— մոռենալով աղաղակում էր նա... ինչ եք տալիս, շան տղերք, որ ասեմ...

— Ադա, դու սովիցը խելքդ թոցրել ե՞ս, Համբո, էդ ինչ ես անում,— ձայնը բարձրացրեց Անդրին մոտեցողին ճանաչելով։

— Դու ես խելքդ կորցրել, տխմա՛ռ,— գոռաց Համբոն ու մի սոնագին քար շպրտեց նրանց վրա։ Գոքորն ու Անդրին մի կողմը փախան, և քարը թմփթմփալով մինչև դեսը մեկ գնաց։

Կոռչի փոքրիկ «մանչը» վախից սկսեց ճչալով լաց լինել։

Յուր քարից շատ շուշացավ Համբոն. կանգնեց երկու գյուղացիների առջև և դարձավ շիրակեցուն.

— Էս ձորում ինչ ես շինում, տո սոված կատ հարամզադա... ա՛յ ես ձեզ էլ զուրբան, ձեր հարսներին էլ... անումդ ի՞նչ ա... քանի՞ տարեկան ես...

Շորագյալցին զուլնը թոցրած Համբոյի կամ ոտներին էր նայում, կամ երեսին և ոչինչ չէր հասկանում նրանից։

— Սովն էլ չի էս շաշ ու գժերի հախիցը գալիս,— գլուխը պատելով փնթփնթաց Անդրին և չիբուխը սկսեց լցնել։

— Ինչ սով, տո՛, ինչ ես դուրս տալիս գլխիցդ... հրես ֆուրգոններով էնքան ցորեն ա գալիս Ջալալ-օղլի, որ էս ձորերն ածես կըլցնի... դնա ձին բարձիր տար. էնքան կեր, կիսիցդ տրաքվես... ի՞նչ ես կռռոփում բայդուշի նման... հլա փող էլ պտեն տալ. էն էլ չամչի տուր, ջերդ ածա։

— Ի՞նչ ես ասում ադա, դրուստ բան ասա, բան իմանանք,— սրտաբորբ անհամբերությամբ հարցնում էին Գոքորն ու Անդրին.— ի՞նչ ցորեն, ի՞նչ փող, ի՞նչ ես ասում։

— Դե՛ իմացեք էլի, թե մարդ եք իմացեք, որտեղից կըլի։

— Հա՞, իմացա,— հանկարծ հիշեց Անդրին,— էդ էլ կըլի... էն ինչ էն տարին մեր գեղական ամբարների ցորենը ծախել տվին փաղը տարան, ասեցին՝ որ սով ընկնի ետ կըտանք... ախր ես գիտեի որ էդ կըլի։

— Տո՛, չէ՛, չէ՛,— ձեռն Անդրու աչքը կոխեց Համբոն,— Թիֆլիզ, Բաքի, Բաթում, Էրևան, Պետրապոլ, Սատամբոլ... ես ինչ գիտեմ, մի խոսքով, որտեղ անունը հայ կա էլի, իմացել են, որ մեր կողմերը սով ա ընկել՝ հաց են հավաքել, փող են հավաքել, գիտեմ ոչ քանի հազար թուման ասեցին, համարյա էլ մտիցս ընկավ — զարկում են, որ սովն ընկած տեղերը ռտնչարին բաժին անեն։

«Փառք քեզ, աստած, գյուղացու համար միտք անող, դեղացու դարդը քաշող էլ կա...» — զարմացած, իրան իրան խոսում էր կռռն, մինչդեռ Անդրին հարց ու փորձ էր անում Համբոյին։

— Ադա, թե դու էն կապեթինն ես ասում, էն ինչ մի երկու շարաթ առաջ տիրացու Պետրոսը Ջալալ-օղլի կարդաց, էդ պարապ բան ա, կապեթումը սուտ ու մուտ բաներ շատ են դրում։

— Ա՜յ տղա, չէ՛ չէ՛, մեր Վարթանը Թիֆլիզիցը նոր ա եկել, մարդն իրան աչքովը տեսած բան ա ասում... հմի ճամփին ֆուրգոններով ցորեն ա գալիս էլի, էսօր էդուց կըհասնի Ջալալ-օղլի։

— Ա՛յ շեն կենան նրանք, հա՛,— սկսեցին օրհնել Գոքորն ու Անդրին։

— Էդ հլա Թիֆլիզինն ա,— ոգևորված շարունակեց Համբոն,— դրա ետնուց Բաքվինն ա դալիս, նրանից ետը Բաթում, Էրևան, Էջմիածին, Շուշի, Շամախի, Նուխի, Մոսկով...

Սով ու ցավ մոռացած գյուղացիները սրտաբոր զգայ-

ված լսում էին Համբոյին, և ամեն մի քաղաքի անունի հետ կարծես բարձրանում էին գետնից։

— Հաստատ ըլեն, հաստա՜տ,— հարբածի նման սկսեցին աղաղակել միասին, հենց որ լսեց Համբոն։ Եվ հոգնամայլ երկար աղոթում էին իրանց հարուստ եղբայրների հաջողության համար, օրհնում էին գիտեցած բոլոր օրհնանքներով։

Իսկ երբ որ ճանապարհ էին ընկնում, Անդրին մոտեցավ Գաբորին և կամաց փսփսաց. «Էն բանը, որ ասեցի, իմ ու քու մեջը մնա, քարը վեր կալ— քարի տակին դիր, օքմին չիմանա... էլ մեր պետքը չի Եգոր աղի հարամ ցորենը... նալլաթ չար սատանին...»։

1894

ԱՂԲԱՏԻ ՊԱՏԻՎԸ

I

Կ... գյուղաքաղաքում առանձնացած ապրում էր Սիմոն անունով մի բարի մարդ։ Նա չէր խառնվում գյուղական գործերին. երևի գիտեր, որ իրան խոսքը չի ընդունվիլ, նրա համար էլ պոչն իրան էր քաշել։

Սիմոնը մի կարմիր կով ուներ, մին էլ՝ մի սիրուն կին. կինն էլ շատ սակավ էր պատահում, որ հարևանության աներ դրացիների հետ. քաշվում էր հարուստ հարևաններից, գիտեր, որ յուր գնալ-գալը դյուրևկան չէր նրանց համար։ Եվ իսկապես հարևանների դռներն ընկնելու կարիք էլ չունեին։

Սիմոնը չութի կամ գութանի ժամանակ ընկեր էր դառնում անասուն ունեցողի հետ, տանջվելն իրանից, անասունը— լծկանը հարևանից, և յուր հոգերն էլ նրանցի հետ վարում։ Երբեմն էլ պատ էր գնում, տախտակ էր քաշում, ձուկն էր բռնում մոտակա գետից, ծախում և կարողանում էր թե չէ, ամեն բանի էլ ձեռքը գցում էր։

Դրա համար էլ ո՛չ լավ ձուկը բռնող էր, ո՛չ կարգին պատ գնող, և ո՛չ մի բանում հայտնի չէր. միայն մի բան լավ գիտեր, որ լավ սրախոսում էր և ծիծաղալի առակներ էր պատմում։ Այդ էլ վերագրում էին նրա խելքի պակասությանը, անունն էլ «շաշ-Սիմոն» էին դրել։

«Մի անգամ մի գյուղում մնի համար պատ դրի,— պատմում էր նա յուր կյանքից,— գործս վերջացրի, ասեցի՝ դե փողս տվեք, գնում եմ։ Եկան պատին մտիկ արին, ասե-

ցին՝ «սուտ ա՝, էս դշեր քու շինած պատի տակին քնի, առավոտը քու վարձն էլ տանք՝ մի բան էլ ավելի, վեր կաց գնա. համաձայնվեցի ոչ. վախեցի դշերը պատը վրես քանդվի... պատն էլ թոզի, վարձս էլ, վեր կացա եկա մեր տունը»։

Բայց խո տմեն մարդ այսպիսի պայման չէր կապում ուստա Սիմոնի հետ։ Շատ մարդ էլ հենց նրա զվարճախոսություններին ու առակների համար դեռ վարձիցը մի բան էլ ավել էր տալիս։ Եվ իրանց աղքատության մեջ ուրախ ապրում էին մարդ ու կին։

Այս մի փոքրիկ ուրախություն էր, որ ավելի շուտ բխում էր Սիմոնի սրտից, քան թե ունեցածից. բայց մարդիկ սրան էլ էին նախանձում։

— Ախպե՛ր, մենք էսքան չարչարվում ենք, մեզ համար ապրանք ունենք, դուքան ունենք, առուտուր ունենք... էլ չենք կարողանում ծերը ծերին հասցնենք, սա էս ո՞նց ա ապրում.— ո՛չ ջերումը կապեկ ունի, ո՛չ դատը չորսոտնանի, ո՛չ դլխումը խելք...

Այսպես նախանձում ու զարմանում էին համագյուղացիք, հարևանները Սիմոնի ապրուստի վրա, և միշտ էլ «շաշ» էին անվանում։

— Շաշ Սիմոնի թայն էլ չըկաս,— նախատում էին կանայք իրանց ամուսիններին,— տարեկը երկու-երեք թապա լեհին (դերիա) ա հագցնում իրան էն անբան կնգանը... Թողում չի բոբիկ ոտը դետին տեսնի...

— Դե նրա կնիկն էլ սիրուն ա, քու թայը խո չի,— կես լուրջ, կես հանաք նկատում էր մարդն յուր բարկացած կնոջն ու հեռանում։

Հիրավի, Սիմոնի կնոջ դեղեցկությունը մի երկնային պարգև էր, որ բաժին էր ընկել աղքատին։ Նա մի բուրալի շքեղ շուշան էր, որ դուրս է գալիս հաճախ մի հասարակ մացառի, մի փոքրիկ թփի տակ, և զվարթ ծաղկում է— ժպտում, առանց մտքովն անցկացնելու, թե քուրդը[1] բուսել է վհիտ ջրերի ափին կամ զանգակածաղիկը փայփայված է

[1] Մի հասարակ, անհոտ ծաղիկ է։ Հ. Ի.

բուրաստանում. նրան միայն մի փոքր լույս, մի փոքր արևի շող է հարկավոր...

Ես մոռացել եմ այն պարկեշտ, ամոթխած սիրունի անունը, բայց գյուղացիք նրա ավելի անունն էլ դրել էին «Նղալատառ»։

Գյուղի ջահելները աչք էին տնկել այս կնոջ վերա։ Քանի անգամ գանգատվել էր նա մարդուն, թե՝ ապբոստը ջուր լցնելիս Ղազոյանց Գալուստը աչքերին խոր մտիկ ավեց ու ասաց «ուխա՜»... Վարթումանց Փիլոսը իրանց դռնովն անց կենալիս աչքով արավ... Միրզանց Առաքելը ճանապարհին «դասատ» դիպավ իրան...

— Պոդատու ծառին շատ քար կըդցեն... էդ ամեն կնդա էլ կըպատահի, սիրտդ կոտրիլ մի, ես էլ եմ շատերի աչքով արել,— հանաք անելով կնոջը պատասխանում էր ուստեն։

Բայց, այսուամենայնիվ, թեկուզ հենց մենակ շըմնալու, չըվախենալու համար—որովհետև պատվիր, խզարչի, ձկնորս և այլն Սիմոնը հաճախ գյուղից հեռանում, ուրիշ տեղ էր մնում — իրանց հարևան դարբին Ակոփի փոքրիկ աղջիկը դիշերները Սիմոնի կնդա մոտ էր քնում։

Գիշերները երկա՞ր հեքիաթ էր ասում Սիմոնի կինը յուր փոքրիկ ընկերուհու, ութ-ոտաս տարեկան Մարուշի համար (այսպես էր հարևան աղջկա անունը) «Զմրուխտ զուշի» հեքիաթն էր ասում կամ պատմում էր, թե ինչպես մայրը յուր յոթը խորթ աղջիկներին ձգեց հորը ու ջաղացաքարը գրեց բեբրանին, իսկ նրանք օրը մի չամիչ դատն, ապրեցին ու փորելով, փորելով հասան մի ստորերկրյա զարմանալի աշխարհ... և կամ թե «Լիս ու մութ աշխարքների մասին էր պատմում, մինչև երկուսն էլ քնում էին։

II

Ահա ուստա Սիմոնի սպիտակ տնակը՝ մենակ, առանձնացած, երկու լուսամուտի փեղկերն էլ փակած, երևում է պարտեզի մի քանի ծառերի ետևից։ Գիշերը խաղաղ է,

ինչպես քունը, և կախարդիչ քան երազ։ Կարծես թե այս գիշերն էլ արևելյան մի հի՞ն-հի՞ն հեքիաթ լինի...

Երկու հոգի այս պահուն ծառերի տակովն անցան... մոտեցան Սիմոնի դռանը։

Թե ինչ էին անում նրանք, դժվար էր ասել, միայն շուտով ետ բացվեց դուռը շրխկալով, և երբ բացվեց, ներսից պարզ լսվեց մի սուր ճիչ, որ իսկույն լռեց, և մի կանացի ձայն միաժամանակ աղաղակեց՝ «ո՞վ եք, ի՞նչ եք ուզում... ո՞վ եք, ո՞վ, ո՞վ...»։ Դուռը շուտ փակվեց, ձայնը խլացավ, բոլորովին կտրվեց։

Այդ գիշեր ուստա Սիմոնը գնացել էր մոտիկ գյուղը, կարծեմ փուռը շինելու, և, երևի, խորը քնած, մի վատ երազ էր տեսնում յուր տան գլխին։

III

Գյուղական դատարանում ուստա Սիմոնի գանգատը լսելուց հետո, ոմանք հանդիմանելով, ոմանք թքելով, մի քանիսը բարկանալով խորհուրդ տվին, որ ձեռք քաշի «կեղտոտ բանից»։

— Թե որ կեղտոտ բանն ուզում չեք, դե դատաստան արեք, թե չէ՝ ես իմ ձեռովը կանեմ... — գոռում էր ուստա Սիմոնը և կարմրած աչքերը քիչ էր մնում դուրս թափվեին բներից։ Նրա կողքին հեկեկում էր փոքրիկ Մարուշը։

— Հա՛, անգամը կըկտրես էլի,— ձայն տվին շորս կողմից և ծիծաղելով նայեցին մեղադրյալին։

Սա գյուղի հայտնի լոթիներից մեկը՝ Սանդրոն էր։ Մահուդ շուխայով, երկայնահիտ, բարձրակրունկ կոշիկները հագին, ֆուրաշկան մի ականջի վրա թեքած, կարմիր բազդադին վզովը ձգած, մի կողմ կանգնած նա ժպտում էր ուստա Սիմոնի և նրա բարկության վրա։ Հերոսին շրջապատել էին յուր ընկերներից մի քանիսը, որոնք եկել էին դատին ներկա լինելու։

— Կրսպանե՛մ, ետո պատասխանը դուք կտաք,—

բարձրաձայն սպառնում էր Սիմոնը, տեսնելով, որ դատարանն անուշադիր է յուր բողոքին։

— Սպանող ես քու կնիկը պահի, շաշ գետինը մտած,— ձայն տվեց մեկը և սրան հետևեց ընդհանուր ծիծաղ։

— Սպանիլ մի՛, ուստա Սիմոն ջան, մեղք ա, մուրազի վրա ջահել ա,— հեգնեց մի ուրիշը նոր հոհոռոց բարձրացնելով։

Այնտեղ տանուտերը մերթ ծիծաղելով ու հանաքներով, մերթ սպառնալով ու բարկանալով սատիպում էր Սիմոնին, որ ձեռք քաշի «կեղտոտ բանից». բայց այդ չէր հաջողվում։

— Ես ասում եմ, որ արին պետք է անեմ... հիմի էս ա, որ ասում եմ...— իբրև հաստատ որոշում շուտ-շուտ կրկնում էր Սիմոնը, սակայն բոլորն էլ գիտեին, որ նա արյուն անող մարդ չի։

Սանդրոյի ընկերներից մեկը պատի տակը քաշեց տանուտերին, ականջումը մի բան փսփսաց. տանուտերն էլ Սիմոնին մի կողմ քաշեց՝ ականջումը փսփսաց.

— Չե՛մ ուզում,— նրա ձեռքից ազատվելով գոռաց ուստեն,— չե՛մ ուզում։

— Դե՛ որ չես ուզում, վկաներդ բեր, գործը շարունակում եմ,— դեմքը թթվացնելով ասաց տանուտերը և պաշտոնական դիրք ընդունեց։

Սիմոնը շրվախեցավ։

— Ա՛յ վկա,— համարձակ ցույց տվեց Մարուշին։

— Դա երեխա ա, երեխի վկայությունը զակոնը չի ընդունում։

— Իմ կնիկը ճանաչել ա,— իսկույն վրա բերեց ուստեն։

— Քու կնիկը, շատ կարելի ա, սուտ ա ասում, զակոնը առանց ֆակտի գանգատավորի խոսքին չի հավատում,— կրկին խիստ ու կոպիտ մերժեց տանուտերը։

Սիմոնը հուսահատությունից ու կատաղությունից քիչ էր մնում վրա թռչեր, խեղդեր յուր երեսին սառն հանդարտությամբ նայող տանուտերին, բայց իրան զսպելով հարցրեց.

— Բաս էս ո՞նց պըտի ըլիլ...

— Էնհենց պըտի ըլիլ, որ դրուատն իմանալու համար ես

պետք է քննություն անեմ.— պետք է քու կնգանը տանեմ դոխտուրի մոտ, որ դոխտուրը քննի...

Սիմոնը մնաց դիք կանգնած, արյունը գլուխը տվեց, ականջները ժժժացին. նա չէր իմանում, թե որտեղ է կանգնած. շար մտքերն արդեն խռնվում էին նրա գլխում...

— Ա՛դա, գնացեք սրա կնգանը բերեք,— հրամայեց տանուտերը և մի աղմուկ ընկավ։ Ոմանք տանուտերին էին խնդրում, ոմանք գնացողներին էին բռնում, ոմանք էլ Սիմոնի հետ էին կռվում յուր «շաշուվյան» համար, որ բանն այստեղ հասցրեց, և աշխատում էին համոզել, որ գոնե այժմ նա կանգնի խայտառակությունից։ Փոքրիկ Մարուշը կպել էր Սիմոնի փեշերին և յուր վախեցած աչքերով մեկ խոսողների երեսին էր նայում, մեկ Սիմոնի։

Այս ժամանակ դատարանի լուսը մթնեց, և յուր ահագին գայլենի քուրքը ներս բերեց գյուղի հարուստներից մեկը՝ Պետրոս աղեն։

— Ի՞նչ խաբար ա, ի՞նչ եք զալմաղալ անում,— ծանր ծանր հարցրեց աղեն։

Եվ բոլոր պատմությունը, թեպետ հայտնի էր իրան, ուշադիր լսեց, իբրև թե նոր էր իմանում։

Գլուխը պտտելով խոր հառաչեց գյուղի հայրը և խորհրդավոր ձայնով դարձավ շուրջը.— Գետինը մտե՛ք... ձենները կտրեցե՞ք, անարուններ, աննամուսնե՞ր...

Այս խոսքերն այնպիսի ազդու կերպով արտասանեց, որ բոլորն էլ գլուխները կախ արին, և եթե մի օտար մարդ լիներ, կըկարծեր թե ամաչեցին։

— Սրան մտիկ արեք, սրա՛ն,— գլուխը վեր քաշելով ձեռքը դեպի Սիմոնը մեկնեց աղեն— օղլուշաղի անունը բերել ա գցել գեղամիջ...

— Բա սուս կենա՞մ... նամուսս գետինն եք կոխել... բա սուս կենա՞մ... — դոռալով ընդհատեց ուստա Սիմոնը։

— Բաս ի՞նչ կանես, որ սուս չես կենալ...

— «Ի՞նչ կանե՞մ...» արին կանեմ, արի՞ն...

— Ա՛յ տղա, դեռ կանգնած ե՞ք, էս ոոպեիս գնացեք սրա կնգանը բերեք,— տեղիցը վեր թռավ տանուտերը։

— Կացե՛ք,— աչքերը չռեց աղեն, և նորից աղմուկն ընկավ։ Այս ժամանակ տանուտերն ու Պետրոս աղեն իրար մի քանի խոսք ասացին։

— Սո՛ւս կացեք,— ձայն տվեց աղեն,— ի՞նչ եք գորտան ժամատուն շինել... Սանդրո՛, էստեղ արի։

Սանդրոն մոտեցավ։

— Մի հինգ մանեթ հանիր էստեղ։

— Ախար զուր ա է՛, աղա։

— Ես քեզ ասում եմ՝ հանի՛ր։

— Ախար զուր ընչի՛ հանեմ։

— Ես քեզ ասում եմ զո՛ւր հանիր,— բարկացած հրամայեց աղեն։

Սանդրոն քթի տակը ժպտալով մի հնդանոց հանեց, տվեց աղին և ուզում էր հեռանալ։

— Կա՛ց, ո՞ւր ես գնում... դու էլ էստեղ արի, Սիմոն։

— Գալ չեմ, էդ խելքից հեռու բան ա... ես իմ նամուսը փողով չեմ առել, որ փողով էլ ծախեմ։

— Էստեղ մո՛տիկ արի։

— Ասեցի, որ գալ չեմ։

— Դե գնացեք, ասեցի... ես էստեղ խաղ չեմ անում... Շուտ գնացեք սրա կնգանը բերեք,— կրկին մեջ ընկավ տանուտերը։

— Կացե՛ք, դեռ չըգնաք... Սիմո՛ն, քեզ ասում եմ էստեղ արի։

— Առաջ գնա է՛լի, —խառնիխուռն աղաղակում էին այսուայն կողմից։

— Գնա բարրշի, հինգ մանեթն առ է՛լի...

— Տո շաշ, գնա մուֆթա փող ա, առ ջեբդ դիր. մի տարի որ տանջվես, պատ դնես, էդքան աշխատիլ չես...

— Կասես թե մենձ բան ա էլել... առաջ գնա՛...

Աղաղակելով, շշկլացնելով ու հրելով առաջ բերին Սիմոնին, մոտեցրին Սանդրոյին. աղեն նրանց ձեռք-ձեռքի տվից, հնդանոցը կոխեց Սիմոնի բուռն ու գոռաց— «պռոշտի՞»։

— Պռոշտի՞, պռոշտի՞,— աղաղակեցին գյուղացիք։

Սիմոնն անդգայաբար գլուխն առաջ ծռեց։

— Անո՜ւշ, անո՜ւշ,— ձայն տվին գյուղացիք։

Հաշտությունը կայացավ... Երբ որ սկսեցին արդեն ուրիշ բաներից խոսալ, Սիմոնն աննկատելի կերպով, փոքրիկ Մարուշի ձեռքը բռնած, էնպես թաքուն դուրս եկավ դատարանից, որ ոչ ոք չընկատի...

ԼԵՌՆԵՐԻ ՀՈՎԻՎԸ

Լեռնե՜ր... բարձր ու կանաչ լեռներ, դուք հայրենիքն ու դահը զով զեփյուռների, անուշաբույր ծաղիկների, սուրբ ցողերի ու շաղերի, անմահական սառն աղբյուրների, սև-սև ամպերի, հրեղեն կայծակների, ջրեղեն տարափների... Դո՜ւք— մոտիկ աստղուն, աստղերին, լուսնին, երկնային շնորհքներին ու գաղտնիքներին, վեհ ու վեհապանծ լեռներ...

Եվ ո՞վ է հողեղեններից այնքան ձեզ նման հպարտ, հզոր, վեհանձն ու մաքուր, որքան ձեր հարազատ որդեգիրը, ձեր մրրիկների ու զեփյուռների, ծաղիկների ու կայծակների ծնունդը, ձեր պահած ու փայփայած հովիվը։

Լեռների հովի՜վը. անծանոթ ու խորթ կյանքի սրտամաշ հառաչանքներին, գետնաքարշ արարքներին, հացկատակ խաղերին ու տաղերին, հպարտ ու զվարթ, որպես այդ ձեր վայրենի ծաղիկները։

Բայց ձեր վայրենի ծաղիկներն էլ իրանց բույրով-հրապույրով ընկնում են ծանր ու կոպիտ ոտների տակ և ապականվում, ցեխ դառնում։

Քաղաքում, բարձրահարկ տան բակում՝ յուր սրինգն ածում ու պար էր գալիս մի բարձրահասակ, թիկնավետ երիտասարդ։ Նրա հագին բազմատարազ շորերի ցնցոտիներ էին, գլխին ծանր քրդի քոլոզ։

Զվարթ էր նրա հովվական սրնգի ձայնը, ուրախ էր պարի եղանակը, աշխույժ էր և պարը, միայն տխուր էին թուխ, կրակոտ աչքերը, որ երբեմնակի նայում էին վերև։ Նրանք երբեմնակի նայում էին վերև, երևի տեսնելու, թե օքմի՞ն կա պատշգամբները, թե չկ. նայում էին, սակայն չէին աղերսում...

Տխուր էր և նրա առնական դիմքը յուր շիկասև նորածիլ լրջանակի մեջ, ուր նշանավոր էին արծվի քիթն և ուռած շրթունքները։ Եվ նա ինքն ամբողջ մի մարմնացած վայրենի վիշտ էր, բայց յուր սրինգն ածում ու պար էր գալիս։

Նրա հնամաշ շորերի ձորձերը թռչկոտելով դիպչում էին բարձր ապդրերին ու բաց սրունքներին, հորինելով մի ծիծաղաշարժ տեսարան, որ սատիկ վիրավորում էր նրա հպոր կերպարանքն ու գաոն տխրությունը։

— Քո՛ւրդը, քո՛ւրդը... — աղաղակեցին երեխաները, և տանցիք նոր ճաշերն ավարտած, թմփթմփալով սրնգի ձայնին դուրս եկան պատշգամբը, նայելու աղքատ քուրդին։

Ավելի սգհորված՝ քուրդը կրկնապատկեց եռանդը, աշխատում էր ցույց տալ յուր բոլոր շնորհքը զանազան ծամածռություններ ու խեղկատակություններ անելով... Եվ նա հասնում էր յուր նպատակին. վերևից հրճվում, ուրախ կրկնշում էին։

Բայց նրանցից ոչ ոք չէր մտածում, թե ինչու ինքը պարողը չի ուրախանում, ինչու մենակ նա է տխուր...

Եվ ի՞նչ կավելանար աղքատ քրդին, եթե մեկն այդ հարցներ։ Նրան մի քանի կոպեկ սև փող էր հարկավոր, տուավ դուրս եկավ։

— Մտավ սրիշ բակ։

Պատրաստվում էր դարձյալ յուր պարն սկսելու, երբ մեկը հարցրեց.

— Որտեղացի՞ ես, աղա՛։

— Սասունցի՛ն, աղա։

— Հապա ո՞ւր ես եկել։

— Ես շոբան էի, աղա. թուրքեր մեր դեղ քանդեցին... իմ ոչխարը լև թալեցին...

Նա բաց արավ կռան տակը, որտեղ երևում էր խանչալի տված յայն վերքի սպին, քոլոզը վերցրեց, ցույց տվեց գլխի պատռվածը, երևի դրանով ուզում էր ասել, թե հիշատ չի տեղի տվել թշնամուն, և դարձյալ ծածկելով՝ սկսեց յուր սրինգն ածել ու պարել։

— Где это Сасун, папа?—հորը փարելով հարցրեց օրիորդը։

— Это там... далеко,— ձեռը թափ տալով պատասխանեց հայրը և շարունակեց «ղնչռտալով» նայել աղքատ սրինգահարին, որ զանազան ոստումներ ու ծամածռություններ անելով պար էր գալիս ներքև, բակում։

Զվարթ էր նրա սրնգի ձայնը, պարի եղանակը, աշխույժ էր և պարը, միայն տխուր էին նրա թուխ, կրակոտ աչքերը, որ երբեմնակի նայում էին վերև...

Եվ այսպես պար էր գալիս հայրենիքից հալածված, ոչխարը խլած Սասունի լեռների հովիվը։ Նրա հնամաշ շորերի ձորձերը թռչկոտելով դիպչում էին բարձր ապդրերին ու բաց սրունքներին, հորինելով մի ցավալի տեսարան։

— — —

ՔԱՋԵՐԻ ԿՑԱՆՔԻՑ

«...Քաջ լռեցիք էլ որ իմացան, էլ դիմադրություն չունեին. սրանք էլ լին ուզում նրանց իրենց մեջը բերեն, պատիվ ասեն: Մեկ ամսաչափ էլ էստեղ մնաց (Աղասի)...»

«Վերք Հայաստանի», էջ 206.

I

1826 թվականին բացվեց Երևանի պատերազմը։ Ռուսաց զորքը դեռ չէր հասել պատերազմի բեմը, և սանձարձակ պարսիկներն ասպատակելով, կողոպտելով Շիրակը, Փամբակն ու Ապարանը, առաջ էին գալիս։

Հասան խանի խաժամուժ հրոսակներն արդեն Խրլգարաքիլիսեն քանդել, Ղշլաղը կրակել, Մեծ Ղարաքիլիսեն ավերել, ռուսաց սակավաթիվ զորքը շարդել, Լոռու ձորերի բերանն էին հասել։

Նրանց առաջից փախչում էր զարհուրած հայոց ժողովուրդը. փախչում էր ամեն բան թողած, յուր շոր գլուխն առած, որ ետևից եկող թշնամուց ու մահից պատսպարվելու մի տեղ գտնի։

Պարսիկների այս բարբարոսական շարժումը ոգևորեց, ոտի կանգնեցրեց իրանց կրոնակից Ղազախ— Բորչալվի թուրք ցեղերին, ուր դեռ չէր հասել Հասան-խանը։ Այս կողմերից էլ հալածվեցան, տեղից ու գեղից պոկ եկան, փախստական դարձան հայերը, և Փամբակ, Շորագյալ, Ապարան, Ղազախ, Բորչալու տակն ու վրա եղան, դատարկվեցին մի քանի օրում։

Այս բոլոր հալածականներն ամեն կողմից փախչում-թափվում էին Լոռու ամուր ձորերը, մինչև կըհասանեին Դսեղ։

II

Դսեղը յուր անառիկ ու լքնաղ դիրքով նման է մի բնակերա ամրոցի. Նրա փոքրիկ հարթավայրը շրջափակված ու ամրացած է— հարավից անառապատ սարերով, իսկ մնացած երեք կողմից՝ խոր ձորերով։

Նրա հանդի սահմանները հարավից սկսվում են հովասուն, բարձր լեռներով, հյուսիսում վերջանում անդնդախոր ձորերով։ Նրա հարավային սահմանում— Քոշաքարի ժեռուտ կատարին թռչկոտում է քոչը և բռնում զանձիլ, իսկ հյուսիսում— Ձաղի ձորում՝ ապրում է կարիճ և հանում խաղալ։

Այս երկու սահմանների մեջ կան թանձրախիտ, կուսական անտառներ, որ կացնի ձայն չեն լսած, ուր ծառերի փչակներում բուն է դնում մեղուն, թալաններում ապահով վխտում են երեները, մոռուտներում ինքնիշխան թագավորում է արջը, և շամբուտներում հանգիստ ապրում է վարազը։ Կան ժայռեր, ուր բուն է դնում արծիվը և թռչկոտում այծյամը...

Բայց մենակ հրաշալի բնության համար չեն խելոք ճանապարհորդներն այս դյուղը կոչել «փոքրիկ Զեյթուն» և կամ դիրքի ամրությունը չէր պատճառը, որ թշնամու ոտքը չէր ծեծում այստեղ։

Հին ժամանակներից ի վեր Դսեղը պարծեցել է յուր քաջերով։ Առած է դարձել, թե «Դսեղա իգիթների անունը Դաղըստան է հասել»։

Դսեղա ձորերը լիքն են ավերակ տնակներով։ Այդ բոլորը ժամանակավոր բնակարան ու օթևան են եղել դանազան տեղերի ժողովուրդների, որ ահ ու փախի ժամանակ ապաստանել են այս տեղերը, մինչև անցել է երկյուղն ու թշնամին։

Այս այն Դսեղն է, որ մեծազոր Մամիկոնյանները, Արշակունյաց փառքի վերջալույսին, երեսուն տարի ևս մենմենակ հաղթանակներով ճակատ ճակատի դարկելով պարսիկների ու արաբների հետ, ձանձրացած, X դարում թողին իրանց հայրենի սրբազան Տարոնը, եկան բնակվեցին այստեղ։

Դեռ մնում են նրանց շիրիմները, նրանց կանգնած խաչարձաններն ու մատուռները, դեռ մնում է նրանց կառուցած ձերմակ տաճարը— Բարձրաքաշ սուրբ Գրիգորի վանքը, և դեռ կանգուն Սիրուն խաչի վրա կարդացվում է «Յիշխանութեան տանն Մամիկոնեան...»։

Դեռ ժողովուրդն ավանդաբերեն պատմում է, թե այստեղ ապրեցին այն լավերը, այստեղ կռվեցին և այստեղ մեռան...

III

Ինչպես ղրաքին հանկարծ վրա է տալիս և ճնճղուկները ահարեկված այս ու այն կողմից փախչում-լցվում են մի թփի մեջ, որ ապատվին, ինչպես ուրուրը պտրտվում է երկնքում, և հավի ճուտերը լեղապատառ հավաքվում են մոր թևի տակը,— այնպես էր Հասան-խանի ահից հալածված՝ Փամբակա, Շորագյալի, Արարանու, Ղազախու, Բորչալվի, Լոռու ժողովուրդը վախել, լցվել Դսեղա ձորը։

Դսեղցի Օվագիմ յուզբաշին, քառասուն ամբարտավան տղամարդ հետն առած, անքուն, անդադար ոտի տակ էր տալիս Սևսի բերդից մինչև Հաղբատ—Սանահին, Լոռու Ձորերի մի ծայրից մինչև մյուսը, թևատարած արծվի նման պտրտվում էր յուր ձորերի գլխին և սիրտ էր տալիս քարանձավներում, քարափների տակ կուչ եկած, իրան թևի տակը մտած ժողովուրդներին։

— Վախի՛լ մեր,— սրտապնդում էր նա,— քա՜նի գլխանի կելի էն գղլբաշը, էն դուշմանը, որ էս ձորերը ոտ կոխի... բաս էլ ընչի համար ենք մեր գլխին տղամարդի գդակ դնում էլ ընչի համար ենք թուր ու թվանք վեր ունում...

Իրա նման էին և իրա բոլոր ընկերները։ Հասան-խանի չափաուքները՝ ասպատակները առաջին անգամ սրան պատահեցին Գյուլլադաղանա կիրճում, Լոռու ձորերի նեղ բերանում, և գլուխները կորցրած ետ նահանջեցին. երկրորդ անգամ ջարդվեցին Շահալվի ձորում, որը մինչև օրս էլ «Կրուվատեղ» է կոչվում, իսկ երրորդ անգամ Հնեվանա ձորում բանդած Ուլումլարի թալանը խլել տվեցին գիշերով։

Այսպես անսպարտելի կռվում էր, մի նոր գայլ Վահանի նման, այս «Լոռու ձորերի ասատվածը» յուր տոյուծ ընկերներով։

IV

Ծերունի Մեհրաբը, Օվագիմի հայրը, Լոռու ձորերի նահապետը, ըսկի չէր էլ մտածում, թե հարյուր տարին անց է կացրել։ Նրա վիթխարի, բարձր հասակը կորացել էր, նորից ամրացել, ձերմակ մաղ ու միրուքը բռնել կուրծք ու երես, և աժդահայի ահավորության հետ խառնել, միացրել ծերության պատկառանքը։

Թշնամու անունը նոր ուժ ու եռանդ տվեց նրան, որ դու և յուրայինների սխրագործությունները նոր սիրտ, նոր ուրախություն, և, մինչդեռ աշխարքը լողում էր արյան ծովում, այս ծեր արծիվը, յուր ժայռերի գլխին նստած, թշնամու վրա ծիծաղում ու իրանց պապերիցն էր պատմում։

— Մեր պապերն էս թավուր մարդիկ են էլել,— ասում էր նա,— մենք նրանց թոռներն ենք, նրանց սիրտն ու նրանց արիւն ունենք... Դուշն իրան թեռվը, օձն իրան պորտովը— թշնամի անունով չըպետք է մեր ձորերումն անց կենա։ Մեր ճամփեքը թշնամու համար փակ ու կապ պիտք է լինեն,— մեր տան դուռն ու մեր սիրտը բարեկամի համար ա բաց... Նամարդի համար մենք թուր ու թվանք ունենք. տղամարդի համար աղուհաց...

V

Այս ժամանակներում ամեն մի քաջ տղամարդի համբավ ու գործ կայծակի արագությամբ տարածվում էր երկրի երկիր, մերանե բերան։ Սաստիկ ճնշումն ու հալածանքը կատաղեցրեց, դուրս կանչեց ժողովրդի քաջերին, և ամեն տեղ հոգով արի տղամարդը մռնչաց, աղաղակեց, զենք առավ, սուր բարձրացրեց ղզլբաշի դեմ։ Տառապած, պաշտպանության կարոտ ժողովուրդը ոգևորությամբ նկատում ու հուշկոտում էր այս սակավաթիվ հերոսներին։

Գամբակա, Շորագյալի, Ապարանու փախածներից ով գալիս, քանաքեռցի Աղասու գովասանքն էր բերում հետը։— «Աղասի՛ն, իգիթ Աղասին... ղզլբաշի հոգին հանեց... քրդի արյունով քար ու հող լվաց Աղասին... Ալադյազու վրա պատահեց — հաղթեց... Անի քաղաքում կռվեց — կոտորեց Աղասին... Մի տեղ առաջը կտրեցին,— ջարդից անցավ Աղասին... Մի տեղ ուզեցին բռնել, փշրեց փախավ Աղասին...»

Այս լուրը ոգևորեց Դսեղա իգիթներին, և հայտնեցին Մեհրաբ յուզբաշուն։

«Աֆֆարի՛մ իգիթ,— բացականչեց հիացած ծերունին Աղասու պատմությունը լսելուց հետո.— որտեղ որ լինի, մի տեսե՛ք տեսնեմ, ճակատիցը պաչեմ, քանի չեմ մեռել»։

Եվ կատարվեցավ ծերունու իղձը։

VI

Աղասին Ղարաքիլիսու սարերից հրավիրված էր Դսեղ։

Հին սովորությամբ անվանի հյուրի պատվին, ինչպես Աղասին էր, խաղեր, հանդեսներ էին սարքվում։ Ձիրիզ (Ձիարշավ) էին խաղում «զոնախի» հետ, թագավորաորս էին անում, և ուրիշ զյուցազնական խաղեր էին հորինում։ Բացի պատիվը, դրա մեջ կար և մի ուրիշ միտք.— այդ հանդեսներում ճանաչում էին իրանց «զոնախին», թե ինչ շնորհքի տեր մարդ է նա։

Մարդիկ էր ուղարկել ուրախացած Մեհրաբ յուզբաշին և շրջակա տեղերի հայտնի քաջերին հրավիրել, հավաքել Դսեղ։ Եկել էր Ճոճկանեցի Խուդին, որ ասլանի սիրտ ուներ, Գյուլլուբաղցի Դանդուզ Ղռանը, որ լեգղու արյուն էր խմում, Արդվեցի լեգղի Պետոն, որ մաղը մաղից ջոկում էր գյուլլով, Սանահնեցի Արութինը, որ ձին աստղերի հետ էր խաղացնում, Շնողնեցի վիթխարի Վերանը, Հաղբատեցի ամրահա Պրանը և ուրիշ անվանի քաջ մարդիկ։ Եկել էին և զանազան տեղերից փախած ժողովուրդների մնձերն ու տանուտերերը։

Այս բոլորին հավաքել էր Մեհրաբ յուզբաշին Աղասու

պատվին լինելիք խնջույքն ու հանդեսը փառավոր անելու համար։

Սրա համար էր, որ առավոտը վաղ Մեհրաբ յուզբաշու ծաղրածու Ղազոն, որ միևնույն ժամանակ լավ քարոզիչ էր, կատվի նման մագլցելով բարձրացավ, յուզբաշու տան դիմացը, մի բարձր խոտի շարդախի ալի ծայրին ամրացրեց մի ընկույզ։

Ժողովուրդը հավաքվել, դուռն ու կտուրը բռնել, թամաշավոր էր կանգնել։

Դուրս եկան տանից հրացանավորները և արծաթաբանդ հրացանները փայլատակեցին արևի շողերից։

— Էգ ինչ եքքա (ահագին) նշան ես դրել, է՛յ Ղազո, քարով տալու համար խո չի...— զվարճախոսելով ու նշանն արհամարհելով առաջ անցավ ծերունի Մեհրաբը։ Բոլորը հանկարծ լռեցին. ծիծաղ ու ազմուկ դադարեց, շունչները պահած ընկույզին էին նայում։

Հրացանը որոտաց, ընկույզը կորավ։

Ո՞նց էր, կրծքին զարկելով ետ դարձավ ծերունին. չլինի թե միրքիս եք մտիկ անում, էս շատ մածուն ուտելուց ա սիպտակել. բա՛ս դուք ի՞նչ եք մտածում... դե՛հ, առաջ արի մի հունարդ տեսնեմ, հենց արա չամաշես իմ ծերությունից և հրացանը տվեց Աղասուն։

Նորից բարձրացավ Ղազոն, նոր նշան դրեց, բայց դեռ չէր իջել աչից, որ Աղասու գնդակը նշանը թռցրեց։

Այդպես և մյուսները։

— Էգ չելավ, ես դրան թվանք չեմ ղցիլ... տարեք հեռու մի խանչալ տնկեցեք, կողքին էլ մի հաստ տախտակ, որ գյուլլեն պահի։ Նշան դնենք խանչալի սուր բերանին, էնպես, որ գյուլլեն երկու հավասար մասի բաժանվի. եթե մի մասը մյուսից ծանր էլավ — կընշանակի չի դիպել,— ձայն տվեց Օվագիմ յուզբաշին և համաձայնվեցին սրա հետ։

Այս նշանին առաջին անգամ առաջարկողը հրացան արձակեց. և որքան ձեռքերում ծանր ու թեթև արին, չկարողացան գնդակի երկու մասերի ծանրությունն իրարից որոշել։

Պակաս չէր և Հաղբատեցի Պրանի արածը, որ տախտա-

կում տված առաջին գնդակի ծակով անցկացրեց հետևյալ գնդակները։ Բայց ոչ ոք չհամաձայնվեց կանգնելու Արղվիցի լեղվի Պետոյի առաջ, որ առաջարկում էր, թե մեկը հետևի կանգնի, գլխին մի խնձոր դնի, որ ինքը հրացան արձակի խնձորին։

Եվ այսպես մեկը մյուսից դերազանց հանդիսացավ։

Ժողովուրդը ցնծաց. գովեց յուզբաշիներին, գովեց Աղասուն և յուր ընկերներին և հրավիրված բոլոր քաջերին։

Իսկ իրիկնագեմ ջիրիդ էր նշանակված։

Զուռնի դիլ ձայնն ու գնոյի դրմբոցը իմացրին, թե պատրաստ է ձիարշավի դաշտը, և ժողովուրդն անհամբեր սպասում էր դյուղից վերև։

— Եկա՞ն, եկա՞ն...— հանկարծ ժողովուրդն աղաղակեց, միաժամանակ շների հաչոցն ու ձիաների խրխինջը բարձրացավ, և ահա երևաց դյուցազնական ժամանակներին վայել մի հեծելախումբ։ Հսկա ձերունին՝ Մեհրաբ յուզբաշին վազում էր կատարյալ գինովություն մեջը։ Գդակը թեքած աջ ականջի վրա, նա տաքացնում էր յուր ամեհի ձին, և, սպիտակ միրուքը քամու հետ խաղալով, մերթ ուսամն էր անցնում, մերթ կռան տակովը։ Նրան շրջապատած գալիս էին յուզբաշիները, Աղասին յուր ընկերներով և մյուս հրավիրվածները, բոլորն էլ հզոր, զենք ու զրահի մեջ կորած։

Այսպես երևացին նրանք ձիարշավի տեղը։ Զուռնին սաստկացավ, ամբոխն անհանգիստ իրար խառնվեց, ամեն մեկն աշխատում էր, որ շատ հիանա այս ահավոր դեղեցկության վրա։

Հանկարծ փոշի բարձրացավ սև ամպի նման, բռնեց բոլորի աչքի առաջը, և ահագին արագությունը գետինը շարժեց։

Նրանք երրեմն երբեմն ջոկվում էին, իրար հետ մրցում, ջիրիդ արձակում, կամ խարան էին տալիս, փախչում իրար առաջից, խաղ անում ձիու մեջքին ու փորի տակին, ձին չափ դցած ժամանակ իրար գլխարկ էին փախցնում, կամ դեմնից

բան էին վերցնում, և, ընկերախաղի տալով, աշխատում էին իրանց շնորհքը ցույց տալ, առանց իրար ջիրիդով վնասելու կամ հաղթելու։

Մի ժամից հետո ամբողջ դաշտը կարծես վարած էր պուլիանով կամ հաղարավոր խողեր քանդ էին արել։

Ուրախության աղմուկներով հիացած ժողովուրդը փոշեղեն ամպերում նկատում էր յուր ծերունի նահապետի ճերմակ միրուքն ու ճերմակ ձին, նրա կողքին փայլականման Աղասուն, առյուծանման Օվագիմին, և բոլորին միասին, որպես մի բարմաղլխանի մարմին, մի փոխած վիշապ։ Ժողովուրդը չէր իմանում, թե որն է որին խնայում...

Այդ չէր իմանում և ցնծության աղաղակներով գովում էր մեկին ու մյուսին. գովում էր ալևոր Մեհրաբին, նրա կորյունիներին, քաջ Աղասուն և նրա ուշիղ ընկերներին և մյուսներին։ Այսպիսի հանդիսից հետո ոտն վերադարձան։

Մեհրաբ յուզբաշին պատվիրեց, որ առավոտը դիշերով թոչիներ (ձկնորսներ) գնան ձորը, ձուկ բռնելու, որսորդներ գնան, որս անելու, և ամեն տեսակ պատրաստություն տեսնեն, որ յուր «զոնախներին» հետ քեֆ է անելու Զորագետի ափերին։

VII

Ահա սրընթաց Զորագետը—արյուն է տանում[1]։ Մութը ճալիցն, երկու ժայռերի արանքից դուրս պրծած, սելավաջրի նման սղղտոր պրոլված ու փրփրած, ատկոտպոկ արած ծառ ու մացառ, քար ու քոթուկ իրար խառնած, առաջն արած, գոռալով, թշշալով, վշվշալով, տեղ-տեղ, ուզած տեղը թեները փռելով, արջախնդուկի անելով[2], կրկին իրան հավաքելով, ուռչելով ու քարերի դլխովը թռչելով—արթուրմա խաղալով, ցալքան տալով, գալիս է Մազմանա գյոլումը կսնգնում, պտիտ գալիս, շունչ առնում, դարան մտնում, և հանկարծ վերկենում, իրան թոփ արած, թոփ առած, դրդու նման հաս-

[1] Արյուն է տանում—սաստիկ վազարած է։

[2] Արջախնդուկի անել—արջի նման խնդալ, խաղալ։ Հ. Թ.

նում, զարիում շոքած Ավանաքարի ապառաժ ծնկներին, ու քիթը ջարդած, լացակնքած, գլուխը քարելով, թոնթորելով, գալիս է սուրբ Նշանի դիմացն երեսին խաչակնքում, սիրտը դեր նստացնում, ու շարակաս ասելով աջ կողմի վրա պառկում, մտնում Հայրատա—Սանահնա ձորերը։

VIII

Զորագետի ափերին՝ բոլոր ծառերից բարձր մի խումբ ընկուզենիներ են բարձրանում. ծուխը բարձրանում է նրանց միջից վերև, և քաջերի խումբն աղմկալի ուրախանում՝ քեֆ է անում այն հսկայական հովանու տակ։

Ծառատակերին, կանաչ խոտերում կարմիր իալիչանները տարածել, մի մեծ շրջան են կազմել անմնա լցրած մավի սուփրաների շուրջը։ Ալեոր Մեհրաբն էր յուր հարազատներով, Օվագիմն ու յուր խումբը, Աղասին և յուր ընկերները, Արուքինը, Խուդին, լեգվի Պեսոն, Դոնդուզ Ղոանը, Վերանը, Պրանը և զանազան տեղերից պատսպարված ժողովուրդների մեծերն ու տանուտերերը։ Ուրախությունից բացվել, ծիծաղում են նրանց խոմոս դեմքերը, ինչպես առավոտյան արևի տակ սև ժայռերը։

Այստեղ եկան ուղարկած որսկանները, ապտնած պարթա բերին իշխանների լիքը սուփրին. ձկնորսները թագաթաղա ձուկն եփեցին Զորագետի ջրովն ու շատ ավին տերևի վրա, և քեֆն ավելի թեժացավ։

Զվարթ ազմուկի ու ծիծաղի մեջ հնչում էր Օձնեցի հրաչակավոր ուստա Յանըզի զուռնան և թմբուկի հետ դրմբում էին քարերն ու բարանձամները։ Աստղները ճղնում էին իրանց հուժկու ձայներով խլացնել ազմուկն ու զուռնան, բայց Մեհրաբ յուզբաշու ծաղրածու Ղազն տանում էր բոլորի ուշքը։ Մատավակները (սազի) մեծ-մեծ զավեր ձեռներին, սպասավորում էին շրջանի մեջտեղը պտրտվելով. շարունակ հոսում էր Շուլավերի կարմիր գինին, երկայնակոթ հաղարփեշանները անցնում էին ձեռից ձեռք, և ավելի ևս տաքանալով ազատվում էին նրանք մերթ մերթ նստած տեղերից դատարկելով

հրացանները. գնդակները շառաչում էին բարձրաբերձ ժայռերի կրծքերին, և ձորերը բազմապատկում, տանում հեռացնում էին նրանց որոտը դեպի հեռու ձորեր։ Տեր Մելիքսեթ պարթև քահանան էլ երբեմն երբեմն մի հոգերուխ մեղեդի էր վառում կամ ոգևորվելով թնդացնում էր Մամիկոնյան մեծ նախարար, Սմբատի անվան երգը «Ասյո՞ւծ, արի՛ անպարտելի. ե՛կ, սեր իմ, ե՞կ...»։ Զորագետն էլ մյուս կողմից զանազան եղանակներով, հարբած ալեորի նման, հազար ու մի տեսակ ձայնը փոխելով երգում էր ի պատիվ թանկագին հյուրերի... և այս բոլորը միախառնված իմացնում, ազդարարում էին, թե քաջերը զվարճանում են։

IX

Ուրախության այս թունդ միջոցին ծերունի Մեհրաբը վերցրեց գինով լիքը հազարափեշեն և բոլորը ուշք դարձրին նրան։

— Աղասի՛,— ձայն տվեց նա,— ես ուզում եմ օխնել էն ծառը, որ քեզ նման բար ա տվել... ո՞նց օխնեմ.— աջողություն մաղթե՞նք, թե՞ ողորմաթասը խմենք...

Այս որ ասաց Մեհրաբ յուզբաշին՝ Ագասու պայծառ դեմքը մթնեց, ինչպես մի սև ամպ հանկարծ ծածկում է գարնան արևի երեսը. նա լուռ խոնարհեց գլուխը կրծքին. նրա հետ տխրեցին և յուր ընկերները։

Բոլոր սեղանակիցները իրար երեսի մտիկ տվին հոնքերի տակից, ուզեցին ասել—երևի տխուր բան հիշեցրին իրանց հյուրերին։

— Ուրեմն ասված հոդին լուսավորի, ասված նրա դատաստանը քաղցր անի...— մեղմ կարեկցությամբ խոսքն առաջ տարավ ծերունին։

— Ագասու հերը մեռած չի, յուզբաշի,— գլուխը վեր քաշելով ընդհատեց Ագասու ընկերներից մեկը։

— Բաս ընչի տխրեցիք... ընչի՞ չեք խոսում, Կարո՛, ի՞նչ կա...

— Տխրացրիր, ո՞նց չի տխրենք, յուզբաշի,— հառաչեց Կարոն։

— Աղասու հերը երևանու բերդումը նստեր ա... Քանաքեռից աղջիկ փախցնելիս Աղասին ֆարրաշին սպանեց ու փախավ, շոլերն ընկավ, իրան տեղակ հերը բռնեցին... Պառավ մերը, ջահել կնիկն ու երեխանեքն էլ...

Կարոյի պատմության հետ մռայլանում էր ծերունի Նահապետի դեմքը, որպես Լալվարի սարը աշնան վերջերում, և թավամազ գոգլ հոնքերի տակից աչքերը բարկությամբ վառվում էին, որպես կայծակը Լալվարի ամպերում։ Սեղանում էին և մյուսները, որպես միասին ամպում են այն սարերը...

Կարոն շարունակում էր.

Պառավ մերը, ջահել կնիկն ու երեխանեքն էլ մնացել են Քանաքեռ—Թշնամու հողում, Ղզլբաշի բերանում... տանջվում են, կանչում են, ձեռքներս հասնում չի... ո՞նց չի տրրենք։

— Է՛հ՛՛...— բացականչեց ծերունի Մեհրարը այնպիսի եղանակով, որպես թե մի անսպասելի շար պաղանիք էր գտել.— սա էլ իգիթի նման մաս ա գալիս սարերում... և, խեթեթի ակնարկելով գունատված Աղասուն, մի գասը ծիծաղով աղաղակեց— Հա՛ հա՛ հա՛ հա՛ իգի՛թ...

Բոլորը լուռ էին։

— Ափսո՞ս,— մռնչաց ալեորը։

Նռատգնեքը գլուխները կախ տրին։

— Ափսո՞ս,— կրկնեց նա և գինու թասը դրեց նեքրև,— ափսո՛ս իմ հաց... ափսո՛ս իմ օգաղ... ափսո՛ս, որ պրաչեցի քո ձակատից... Ապա թե ձայնը բարձրացնելով գոռաց.

— Մենք սրա՞ն ենք իգիթ ասում...

Ոչ որ ձայն չշնչեց։

— Մենք սրա՞ն ենք իգիթ ասում, որ իրան վռնած կրակում ուրիշին թագանի էրվելիս, ինքը գլուխն ապատի, փախչի սարերն ընկնի.... իրան նամուսը— ծնողը, կնիկը, երեխեքը մեր գցի թշնամու առաջին...

Դարձյալ ոչ որ չբխոսաց, թեև բոլորը համաձայն էին։

— Ափսո՞ս իգիթի անունը... ափսո՞ս իմ օջախ... ափսո՛՛ս...

Այսպես աղաղակելով տեղից էլ վեր կացավ ծերունին, հեռացավ սուփրից. վերկացան յուրայինները, վեր կացան կանչած հյուրերը, լսեց զուռնի ձայնը, երգը վերջացավ։

Մի քանի վայրկյանից հետո դարձյալ աշտարակին ձորը մնաց մենակ Զորագետի գոռոցներին, որոնք միացած, կարծես, մռնչում էին «ափսո՛՛ս...»։

— — —

1895

ԳԻՔՈՐԸ

1

Գյուղացի Համբոյի տունը կոիվ էր ընկել։

Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի։ Կինը չէր համաձայնում։

— Չեմ ուզում, իմ քորփա էրեխին էն անիրավ աշխարքը մի գցիլ, չեմ ուզում,— լալիս էր կինը։

Բայց Համբոն չըլսեց։

Մի խաղաղ առավոտ էր. մի տիսուր առավոտ։ Տանըցկեր ու հարևանները եկան մինչև գյուղի ծերը, Գիքորի թշերը պաչեցին ու ճամփա դրին։

Քույրը, Զանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից ձայն էր տալի. «Գիքո՜լ, էդ ո՞ւլ ես գնում, հե՜ Գիքո՜լ»։

Գիքորը շուտ-շուտ ետ էր նայում։ Տեսնում էր դեռ գյուղի ծերին կանգնած են նրանք ու մայրը դոդոջով սրբում է աչքերը։ Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն էր ընկնում։ Մին էլ ետ նայեց. գյուղը ծածկվել էր բլուրի ետև։

Այնուհետև Գիքորը ետ էր ընկնում։

— Արի հա՛, Գիքոր ջան, արի հա՛, հասանք հա՛,— որդուն կանչելով գնում էր Համբոն, շալակին մի խուրջին, մեջը մի քանի հաց ու պանիր ու մի երկու դաստա թութուն։

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, մի անգամ էլ երևաց գյուղը հեռո՜ մշուշում։

— Ա՛յ, ապի, մեր տունն էն ա հա՞,— ցույց տվով Գիքորը՝ մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չէր երևում, ու անցան։

Առաջին իրիկունը գոնախ ընկան մի գյուղում։ Տանտերը Համբոյի հին ծանոթն էր։

Դեղին սամովարը թշշում էր տախտի ծերին։ Մի ջահել աղջիկ շրխկշրխկացնելով բաժակները լվանում ու թեյ էր շինում։ Նա մի կարմիր սիրուն շոր ուներ հագին։ Գիքորն էնտեղ մտքումը դրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Զանի համար մի էնտեսակ շոր դարկի։

Իրիկնահացից ետը տանտերն ու Համբոն թինկը տված, չիբուխ քաշելով զրուց էին անում։ Խոսեցին Գիքորի մասին։ Տանտերը գովեց Համբոյին, որ շարչարվում էր որդուն մարդ շինի։ Հետո սկսեցին խոսել կռվի վրա, հացի թանգությանվրա, բայց Գիքորը շատ էր հոգնած, քունը տարավ։

Մյուս օրը քաղաք մտան։ Գնացին ծերունի թավլաշու մոտ։ Առավոտը բաղարն իջան։

— Թիձա, էդ էրեխին ծառա ես տալո՞ւ,— խանութի ներսից հարցրեց մի վաճառական։

— Հրամանք ես,— ասավ Համբոն ու Գիքորին էն կողմը հրեց։

— Թեր ինձ տուր, ես կըրոնեմ,— առաջարկեց վաճառականը։

Նրան ասում էին բաղաղ Արտեմ։

2

Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվավ բաղաղ Արտեմի տանը։ Պայմանն էն էր, որ Գիքորը պետք է տունը մաքրեր, ամանները լվանար, ոտնամանները սրբեր, դուքանը բաժին տաներ, ու էս տեսակ մանր ծառայություններ, մինչև մի տարի։

Մի տարուց ետը բաղաղը նրան պետք է տաներ դուքան, շիներ դուքանի «աշկերտ», ու էսպես Գիքորը պետք է բարձրանար։

— Հինգ տարի դեռ փող չեմ տալ,— ասավ բաղազը պայմանը կապելիս։— Թե դրուստը կուզես, դեռ դու պետք է տաս, որ քու որդին բան է սովորիս։ Ախար իսկի բան չգիտի...

— Որտեղից դիտենա, խաղեին ջան,— պատասխանեց Համբոն,— որ գիտենար, էլ ո՞ւր կբերեի, ես էլ բերել եմ, որ բան սովորի...

— Կըսովորի, ամեն բան կըսովորի։ Էնպես սովորի ո՞ր... Ձեր կողմերից էն Նիկոլն ինչ է, որ իրեն համար դուքան ունի բաց արած, նա էլ ինձ մոտ է մարդ դառնալ։ Ամա վերջում մի ջուխտ չայի գդալ ու մի քանի բան գողացավ...

— Չէ՞, խաղեին ջան, սա գողանալ չի։ Որ էդպես բան անի, կըգամ կռնիցը կըբռնեմ էն Քուռը կըգցեմ։

— Հա՛, որ ձեռը հալալ է՝ մարդ կըդառնա։

— Իմ դարդն էլ էն ա, ազա ջան, որ մարդ դառնալեկու սովորի, գրիլ-կարդալ սովորի, նստիլ-վերկենալ սովորի, մարդ ճանաչի, որ աշխարքումն ինձ նման խեղճ ու զուրկ չըմնա... Ինքն էլ աշքարաց էրեխա ա, մեր գեղական շկոլումն էլ գրաճանաչ ա էլել, գրի սեն ու սիպտակը ջոկում ա։ Ամա աղաչանքս էն ա, որ լավ մտիկ անեք, զարիր էրեխա ա, քորփա ա...

Բաղազը Համբոյին միամտացրեց ու գուրս գնաց բարձր ձենով հրամայելով. «Չայ բերեք, հաց բերեք, սրանց համար...»։

3

Հեր ու որդի նստած էին բազազ Աբտեմի խոհանոցում։

— Դե, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղա ես դուրս գալի... Հենց պետք է անես, որ... ես ի՞նչ գիտեմ... ո՞վ տեր աստած... — մռնչաց Համբոն ու շիբուխը լցրեց։

Այնինչ Գիքորը չորս կողմն էր դիտում։

— Ապի, սրանք բուխարի չունե՞ն։

— Չէ, սրանցը փեչն ա, ա՛յ էն ա փեչը...

— Կալ էլ չունե՞ն։

— Սրանք քաղաքացի են, գեղացի հո չեն, որ կալ կասեն։

— Բա ո՞րտեղից են հաց ուտում։

— Փոլով առնում են ուտում։ Հացն էլ են փոլով առնում, եղն էլ, կաթն էլ, մածունն էլ, փեստն էլ, ջուրն էլ...

— Վա՜...

— Բա՜, սրան Թիֆլիզ կասեն։ Դու հլա զուշազ կաց, դեռ շատ բան կիմանաս։

— Ապի, սրանք ժամ ունե՞ն...

— Ունեն բա՛ս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնյա են։ Մտիկ արա հա՜ — ձեռնաքաշություն չանես։ Կարելի ա քեզ փորձելու համար փող վեր կըգցեն, մոտենաս ոչ։ Թե վերցնես էլ, տար ասա— «խանո՛ւմ, էս ի՞նչ փող ա, էստեղ վեր ընկած էր. ազա՛, էս բանն էստեղ գոտա», թե չէ...

— Էստեղ էլ պրիստավ կա՞ որ...

— Կա բա՞ս... Վախտ ու անվախտ դես դեն չընկնես, ձեռդ ընկած փողը քոռ ու փուչ չանես, հազար ու մի պակասություն ունենք։ Քեզ էլ լավ պահի, դիշերները բաց չըլես, մրսես ոչ... Մի մին եկողի հետ գիր զարկի...— մերթ մերթ շիբուխը բերանից հանելով որդուն խրատում էր Համբոն։ Այնինչ Գիքորը ննջում էր։

— Հացի կտորտանքն ու քարթուն կըտան, կերակուրի թերմացքը կըտան, շատ անգամ էլ իրենք կուտեն քեզ տալ չեն, բան չըկա, ծառայի կարգն էդ ա... Օրեր են, կըմրնեն ունց կըկենան...

Շարունակում էր հերն իր խրատը, բայց Գիքորը հորդ թինկը տված քնել էր արդեն։

Էն երկու օրը նա էնքան բան էր տեսել, էս ու էն կողմը նայել, որ հոգնել էր բոլորովին։

Մրգով լիքը խանութները, գեղերի նման գարսած գույնզգույն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուտումնաբան գնացող կամ դարձող երեխաների խմբերը, իրար ետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանաչի բար-

ձած ավանակները, թաբախները գլխներին կինտոները... էս ամենի գոռոցն ու գնգոցը, աղմուկն ու ազազակը իրար խառնված զժվժում էր նրա գլխում։ Եվ նա հոգնել էր ու հոգը թինկը տված քնել։

Էս ժամանակ բազարն ու իր կինը վիճում էին ներսը։ Կինը տրտնջում էր, որ ծառան խամ էր, նոր սարիցն եկած, վայրենի, իսկ մարդն ուրախ էր, որ մի քանի տարով անվարձ ծառա էր գտել։

— Կըսովորի, հո էգպես չի մնալ,— ասում էր նա կնոջը։

— Կըսովորի, որդի, սիրտգ շուռ մի՛ բերի,— խնդրում էր բազարի պառավ մայրը։

Բայց տիկին Նատոն չէր համոզվում։ Նա արտասվելով տնիծում էր իր բախտը։

4

Գիքորը մենակ նստած էր բազարի Արտեմի խոհանոցում։ Նա արդեն ծառայությա՛ մեջ էր։

Խալվերնի հին գլխարկը մինչև տկանջները կոխած գլուխը, հին ոտնամանները ոտներին, մի մալի բլուզ էլ հագին, էսպես ոտից գլուխ փոխված, նա նստած էր խոհանոցում ու միտք էր անում, թե ընչի եկավ իրենց գյուղից, որտեղ է ընկել, հիմի ինչ պետք է անի...

Էս ժամանակ ներս մտավ տիկին Նատոն։

Գիքորը տեղը նստած էր։

Տիկինը մի բան ասավ։ Գիքորը լավ չլսեց, թե չհասկացավ։

— Քե՞զ չեմ ասում, տո արշի քոթոթ։

Գիքորը շփոթվեց, քրտնեց. մին ուզեց հարցնի թե ինչ է ասում, մին էլ սիրտ չարավ։ Աղջիկ պարոնը բարկացած դուրս գնաց։

— Ը՞հ, հոգեմ ձեր գլուխը, որ վայրենի եք ու գալիս եք մարդի գլխի խաթա դառնում... Ես բան եմ ասում, սա տեսիցն էլ ժաժ չի գալի, ձեն էլ չի հանում...

— Վերջացավ,— անցավ Գիքորի մտքովը։ Բայց ի՞նչ շուտ վերջացավ... ի՞նչ վատ վերջացավ... Հիմի ես ի՞նչ անեմ... հերս էլ գնաց...

Եվ ամենն բան նա վերջացած էր համարում, երբ իրեն իրեն խոսելով ներս մտավ սև շորերով բարի պառավը, բազարի մերը։

— Որ աղջիկ պարոնը ներս է գալի տեղիցդ ընչի՞ չես կանգնում, որդի,— խրատում էր նա Գիքորին.— որ բան են հարցնում ձեն հանի... ո՞նց կըլի էդպես...

Պառավին գեղի էին ասում։

Գեղին սովորեցնում էր Գիքորին, թե ինչ պետք է անի, ինչպես սամովարը գցի, ոտնամանները սրբի, շոտկը բռնի, ամանները լվանա...

Բացի պառավ գեղին, ամենքը նեղացնում էին նրան։

Բազարի «զուբանի տշկերտներին» էլ շարունակ ծաղրում էին նրան, «քիքի» էին կանչում, քիթը քաշում, գլխին խփում, գլխարկը կոխում ականջները։

Բայց էս բոլորը տանելի բաներ էին։

Ամոտանելին էն էր, որ նա չէր կարողանում քաղցին դիմանա։ Իրենց տանը, երբ սովում էր, գնում էր տաշտիցը հաց էր առնում, կճուճիցը պանիր էր հանում, ուտելով գնում խաղալու, կամ թե չէ՝ փնշն էր գնում, գնում հանդը։ Երբ ուզում էր՝ մի ծառի տակի կամ աղբրի վրա նստում էր ուտում։

Հիմի էստեղ ուրիշ տեսակ էր։ Ինչքան էլ տված լիներ՝ պետք է սպասեր մինչև ճաշի ժամանակը գար, էն էլ ամենքը ուտեին, հետո ինքը։ Էդ անիծած ժամանակն էլ էնքան ուշ էր գալի, որ խեղճի սիրտը քամ էր ընկնում, թրթռում։

Մին, երկու, տասը համբերելուց ետը նա սկսեց շորս կողմն աչք ածել խոհանոցում, թե արդյոք մի բան չի գտնիլ ուտելու, որ սիրտը կանգնեցնի. մինչև ճաշի ժամանակը գա։

Սկզբում ինչ գտնում էր— չոր հացի փշրանք, կրծած ոսկոր թե ուրիշ բան, գցում էր բերանը։ Մի քիչ հետո մտածեց խոհանոցի պահարանները սրոնել։ Ապա թե սովորեց կերակուրի պղնձից կիսեփ մսի կտոր դուրս քաշել...

Բայց եթե նկատեի՞ն...

Ինչ վատ բան դուրս կգա՞ր...

Եթե նկատեի՞ն...

Հապա ի՞նչ անես...

Թողնե՞ս, փախչե՞ս...

Եվ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին։

Բայց ո՞նց փախչես, ո՞ր կողմը փախչես. մենա՛կ, ճամփա չըգիտես, մարդ չես ճանաչում... իսկ հերը...

Էնքան շարշարվեց, խոսեց, խրատեց՝ «Օրեր են, որդի, կըմթնեն, անց կըկենան...»։

Եվ ահա Գիքորի գլխում հնչում է հոր խանձված ձենը.— «Օրեր են, կըմթնեն, անց կըկենա՞ն... անց կըկենա՞ն...»։

5

Զանգը տվին։

Գիքորը վեր թռավ։ Ասել էին, թե երբ զանգը տալիս են, գնա տեսնի՝ ով է, ինչ է ուզում։ Նա դուրս եկավ, պատշգամբից նայեց, տեսավ՝ մի պարոն ու մի քանի տիկին դռան առաջ կանգնած։

— Էդ ո՞վ եք, հե՛յ,— ձայն տվավ վերևից։

Ներքևից վերև նայեցին։

Տիկինները ծիծաղեցին, իսկ պարոնը ակնոցներն ուղղելով հարցրեց։

— Աղջիկ պարոնը տա՞նն է։

— Ի՞նչ եք անում,— հարցրեց Գիքորը։

Ներքև ծիծաղն ավելի սաստկացավ։

— Քեզ հարցնում են՝ տա՞նն է, թե չէ,— բարկացավ պարոնը։

— Բան ունե՞ք։

Էս աղմուկի վրա տիկինը դուրս եկավ։

— Քրքրվես դու, գնա դուռը բաց արա, շո՛ւտ,— ճչաց ու սկսեց անիծել Գիքորին և իր ամուսնուն։ Բայց շուտով հյուրերն երևացին և նա ժպտալով դիմավորեց։

— Ա՜ բարև, բարև... էս ո՞ր խաչիցն էր, ի՞նչպես է որ մտաբերեցիք...

— Էս ո՞րտեղից եք գտել,— տերը գլուխը Գիքորին շափելով հարցրեց պարոնը, իսկ տիկինները շարունակ ծիծաղում էին։

— Ի՞նչ եք նախանձում, կուզեք ձեզ տանք,— կատակի սովավ տիկինն ու հյուրերը խնդալով ներս մտան։

Գիքորին շտապով մի տեղ ուղարկեց ու նրանց ետևից իսկույն ներս մտավ և տիկին Նատան։

Իրար առողջություն հարցնելուց ետը հյուրերն սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմությունը, և դուրս եկավ մի ահագին պատմություն։

— Օ՜ֆ, սիրուս մաշել է,— գանգատվում էր տիկին Նատան.— թե իմանաք՝ ինչ եմ քաշում ես դրա ձեռքից։ Ասում եմ՝ դուրս անենք կորչի, բայց դե Արտեմի բնավորությունը գիտեք էլի, ասում է՝ մեղք է, դեղտցի երեխա է, թող կենա, մի կտոր հաց է, ուտի, կըսովորի... Ախր էլ ե՞րբ... սիրտս մաշեց...

— Օ՜հ, օ՜հ, օ՜հ, էդ ծառաների բանն էլ մի՛ ասի,— էս ու էն կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը։

Մի կես ժամ խոսեցին գեսից-դենից, ծառաներից, քաղաքի նորություններից։ Հենց էդ խոսակցության ժամանակ ներս մտավ քրտնած Գիքորը։

— Աղջիկ պարոն, միրգը բերի։

— Հա, լավ, գնա՛,— հրամայեց տիկինը կարմրելով, իսկ հյուրերն սկսեցին ծիծաղել։

— Աղջիկ պարոն, խաղեինն ասում էր՝ բալը թանդ ա, հարկավոր չի...

Էս խոսքերի վրա հյուրերից ոմանք պոռթկացին ու թաշկինակով բերաններին հուպ տվին, ոմանք էլ տանտիկնոջ խայտառակությունը ծածկելու համար վկայեցին, թե իրավ բալը շատ թանդ է, էս ժամանակին ով է բալ առնում։ Ապա

ակնեցին հանդիմանել, թե ի՞նչ հարկավոր է միրգը, հո ուտելու համար չեն եկել, ի՞նչ են նեղություն քաշում...

Տանտիկինը, մինչև ականջակոթերը կարմրած, աշխատում էր մի կերպ եղածն ուղղի։

— Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել էս հիմարը։

— Ով սուտ ասի՝ գետինը մանի,— երդվեց Գիքորը, ու ամեն բան լրացավ։

6

Հյուրերին ճամփու դնելուց ետը տիկին Նատոն բարկացած, բարձր-բարձր խոսելով վեր էր քաղում մրգի սեղանը։ Նա հայհոյում էր Գիքորին, մեկ-մեկ թվում էր, թե ինչեր է անում նա, անիծում էր իր բախտը, իր ամուսնուն։

— Քա՛, խամ է, որդի, կրսովորի, որդի... ինչի ես սիրտդ շուտ բերում... Ախ աստած, ի՞նչի չես հոգիս առնում,— հառաչում էր պառավ դեդին։

— Երանի մի իմանամ՝ մարդու սրտի էս նեղացած ժամանակը դու ինչ ես խոսում... Խամ է, դե գնացեք դուք շինեցեք, ես հո ձեր գերին չեմ,— ձենն ավելի բարձրացնելով պատասխանեց պառավին հարսը ու շարունակեց իր տըրտունջն ու անեծքը մինչև ամուսինը տուն դար։

Ամուսնու ոտնաձայնը որ լսեց՝ սկսեց արտասվել, ավելի բարձր խոսել ու ամանները իրար գլխով տալ։

— Ասում եմ՝ դուրս արա կորչի. ես ծառայի բանն էլ կանեմ. թե խնայում ես՝ փող տաս, կարգին ծառա բռնես... Լավ է մարդ ծառայի տեղ էլ քաշ գա, քան թե ամեն օր էսենց սիրտը շուտ բերի... Իմ թշնամին հո չե՞ս...

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց բազազը՝ տան մեջտեղը կանգնելով։

—Ի՞նչ պետք է պատահի. էս էր մնացել, որ խալխի մոտ էլ մարդ գետինը մանի, էս էլ արիր. էլ ի՞նչ պատահի,— վրա թռավ տիկինը ու պատմեց բալի պատմությունը։

— Վա՞հ,— բացականչեց բազազը։

— Ա՞խ աստո՛ծ,— հառաչում էր բարի պառավը՝ դես ու դեն ընկնելով։

Բազազը Գիքորին ձեն տվեց։

Թրմփթրմփացնելով Գիքորը ներս ընկավ։

— Մոտիկ արի,— կանչեց բազազը։

Գիքորը վախեց նրա գույնից, մնաց տեղը կանգնած։

— Քեզ ասում եմ՝ մոտիկ արի...

Գիքորն էս անգամ շարժվեց, բայց դարձյալ մնաց տեղը կանգնած։

— Տո՛, արջի քոթոթ, ես քեզ ասում եմ՝ աղջիկ պարոնին ասա, դու գալիս ես զոնաղներին ասում, թե բալը թանգ է՞ր...

— Ես... ես... աղջիկ պարոնին...— ուզում էր արդարանա Գիքորը, բայց խոսքը բերանում՝ ապտակը հասավ, աչքերը կայծակին տվին, պուխը դիպավ կողքի պատովն ու վեր ընկավ։ Հենց ընկած տեղն սկսեց բազազը ոտքել անդադար կրկնելով— «բալը թանգ էր, հը՞... բալը թանգ էր, հը՞...»։

Պառավ դեդին զողդողալով մեջ ընկավ, աշխատում էր ետ քաշի կատաղած որդուն, աղջիկ պարոնն էլ եկավ, երեխաներն էլ սկսեցին ճչալ, բազազը ետ կանգնեց հեալով ու կրկնելով. «Բալը թանգ էր հը՞»,— աչքերը միշտ չռած անկյունում կծկվված Գիքորի վրա, որ դողալով ու ցավագին մրմնջում էր.

— Վա՞յ, նանի ջան, վա՞յ... վա՞յ, նանի ջան, վա՞յ...

7

Տեսան տանը չի կարողանում ծառայի՝ խանութ տարան Գիքորին։ Էնտեղ ապրանք պետք է տային մուշտարիների հետ տանելու, չիթ պետք է ծալեր, խանութը սրբեր, իսկ պարապ ժամանակը մուշտարի կանչեր։

Եվ ահա Գիքորը հաց է տանում խանութը։ Կերակրամանը ձեռքին, մաշված ու տժգույն, մեծ մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով։ Նայեց ներքև։ Քար-

վանսարանների բարձր պատերին զարկելով ծառս էր լինում Քուռը, տլորվում, պատվում ու ճնշվելով խեղդվում, խուլ թշշում կամուրջի տակին։

Ափից մոտիկ պտրտում էր մի կանաչ նավակ։ Երկու հոգի կայլին նրա մեջ. մինը ուռկան էր ձգում, մյուսը նավն էր կառավարում։

«Ա՛յ հիմի կըհանեմ»,—ասավ Գիքորն, ու կոնգնած նայում էր ձկնորսներին։ Ուռկանը դատարկ գուրս եկավ։

— Էս մինն իմ բախտից,— ասավ Գիքորն ուռկանը ձգելիս։ Գիքորի բախտը դատարկ գուրս եկավ։

— Էս մինն էլ մեր Ջանների բախտիցը։

Էս էլ դատարկ գուրս եկավ։

— Էս մինն էլ Գալոյի բախտիցը։ Գալոն էլ էր անբախտ։

— Էս մինն էլ բաս...

Բայց էգ ժամանակ մոտիկ բարվանսարի դռանը աղմուկ բարձրացավ։ Մի պարսիկ կապիկ էր պար առնում երդելով։

Ա՛յ արի, արի, մեյմուն,
Ճիպոտիդ սարի, մեյմուն,
Պառավի պես կուզի կուզ,
Ջահելի պես պարի, մեյմուն։

Ժողովուրդը հավաքվել էր գլխին ու վազում էին չորս կողմից։ Գիքորն էլ վազեց։ Աշխատեց կոնգնած ժողովրդի արանքը մտնի, առաջ անցնի, շրիարոզացավ։ Վիզը ձգեց, պճեղնների վրա կոնգնեց ու ճգնում էր անպատճառ տեսնի թե ինչ է կատարվում մեջտեղը։

— Ի՞նչ ես ներս խցկվում, ռտ լածիրակ, դնա քու բանին,— ասավ մի կինտո ու զարկեց գլխին։

Գիքորը հանկարծ սթափվեց ու վազից դեպի խանութը։

8

Իրիկունը Գիքորը կուչ էր եկել խոհանոցում։ Դեռ արտասուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ այրվում էին խաղեղինի ապտակների տեղերը, դեռ նոր էր լռել աղջիկ պարոնի ձենը— շվշվացնելով ներս մտավ Վասոն, բազազի

աշկերտը։ Գիքորին նկատելով՝ նա իսկույն կանգ առավ ու մատխարա դեմքին լրջություն տալով սպառնալի հարցրեց.

— Կլուրսամն ուշացա՞ր, տո արջի քոթոթ, թե գուբերնատի մոտ վռազ գործ ունեիր...

Գիքորը գլուխը չէր բարձրացնում։

— Ասա մի տեսնեմ է, տա՛...

Գիքորը լուռ էր։

— Ձե՞ռ իմանում, տո՛. ո՞րտեղ էիր է՛, որ էսօր ինձ բաղցած սպանեցիր, որ մեռնեի՝ հետո՞...

Էսպես խոսելով կամաց կամաց մոտեցավ, մի քիչ կանգնեց ու հանկարծ զարկեց Գիքորի գլխին։ Գիքորը երկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին։ Վասոն պատրաստվում էր մի ուրիշ ձեի հարված էլ հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խաղեղինի ձայնը։ Գալիս էր։

— Աբա տես հիմի քեզ ի՞նչ է անում,— սպառնաց Վասոն։

«Հիմի ինձ կըսպանեն»,— անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին ասպ արավ։

Խաղեղինը արդեն բավականին ծեծել էր խանութում, այժմ միայն հրամայեց հայ չըտան, որ իմանա թե ինչ բան է քաղցածությունը։

Վասանն անցավ։

Գիքորը հանգստացավ, թեև լսում էր աղջիկ-պարոնի ձայնը, որ ճչում էր.— Ախր ընչի՞ ես պահում, դուրս արա կորչի էլի, դուրս արա կորչի՛...

9

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ արավ։

«Վուանչակ դիշեր, բոլորովին քուն չունեմ,
Ինձ տեսնողը կարծում է թե տուն չունեմ, վա՛յ, տուն
չունե՞մ...»։

Իր երգը երգելով Վասոն հաց էր ուտում։ Գիքորը վերմակի տակից երբեմն զգույշ ծիկրակում, թաքուն նայում էր նրան,

կրկին աչքերը ծածկում։ Նա էն օրը հաց չէր դրել բերանը. ծեծվել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պառկեց, ու քունը չէր տանում։

— Հը՞, ո՞նց ա, սոված քունդ չի՞ տանում հա՞, էդպե՞ս...— նկատեց շարաճրճի Վասան ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին։— Դե, առ, տեղի տակին թաքուն կեր, խազեինը չիմանա։

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը, դուրսը կոխեց տեղի տակը, թաքուն ուտում էր ու մտածում։ Մտածում էր իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ ապատ խաղում էր հանդերում ու լիասիրտ հաց ուտում, մտածում էր էն երեկոների վրա, երբ հերն ու մերը կռվում էին իրեն քաղաք բերելու համար... մերը լաց էր լինում, չէր ուզում...

— Ա՜խ, նանի՛ջան, ի՞նչ լավ էր սիրտդ իմացել,— հառաչում էր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրը ուտում ականջը սրած, թե խազեինը հո չի գալի։

Իսկ առավոտը կանչված էր խանութի դռանը։

10

Խանութի դռանը կանգնած ձեն էր տալի Գիքորը, մուշտարի էր կանչում ու բարձր ձենով գովում իրենց ապրանքը։

— Կանչի է՛, տո՛, ի՛նչ ես մնչվիլ, մնացել կանգնած։ Բերանումդ հո չուր չըկա՞։

— Է՛ստի համեցե՞ք, է՛ստի համեցե՞ք...— կանչում էր Գիքորը։

Ներսը ծիծաղից թուլանում էին։

Նրան սովորեցրել էին, որ մուշտարի քաշի դեպի իրենց խանութը։ Եվ նա հաճախ բռնում էր էս կամ էն անցորդի փեշից, կոպիտ ու համառ սկսում էր քաշել դեպի խանութը, ու բաց չէր թողնում, մինչև որ մարդը դուրս էր գալի համբերությունից։ Գալիս էր դարձյալ իր տեղը կանգնում ու կանչում։

Ամառվա տոթ օրերին, խանութի դռանը երկար կանգ-

նելուց հոգնած, նա երբեմն նստած քնում էր խանութի առաջին դարսած չթերի վրա։

Էդ ժամանակ շարաճրճի ընկերները կամ հարևանները բրոնոթի էին բռնում նրա քթի տակը։

Նա փոշտալով վեր էր թռչում։

Շոգից թմրած վաճառականները զվարճանում էին։ Իսկ խազեինը կուշտ ծիծաղելուց հետո ձայն էր տալի.

— Քնում է՞ս, տո, արջի քոթոթ, կանչի է՛...

— Է՛ստի համեցե՞ք, է՛ստի համեցե՞ք,— ձեն էր տալի Գիքորը։

11

Մի օր էլ Գիքորը երբ մուշտարի էր կանչում՝ դիմացից երկու գյուղացի դուրս եկան։ Նա վազեց, փաթաթվեց գյուղացիներին։

— Ա՛յ տղա, իսկի ճանաչեցի ոչ, էս ի՛նչ բան էր,— զարմացած բացականչեց գյուղացիներից մինը ու դարձավ ընկերին.

— Բաղդ, դու կըճանաչեի՞ր...

— Ես աչքերիցը կըճանաչեի,— պարծեցավ ընկերը։

Ճշմարիտ, որ Գիքորը շատ էր փոխվել, շատ էր մաշվել։ Ինքն էլ էր փոխվել, շորերն էլ։ Դժվար էր ճանաչելը։

— Ա՛յ տղա, էս կարգին մարդ ա դառել... հալա սրա շորերին, սրա շնորհքին...— հիանում էին գյուղացիները։

— Համբոյի հոգը մեր գլխին. տես, նա իր տղին ո՛րտեղ հասցրեց, մեր տղերքը էնտեղ խոզ են արածացնում...

Այնինչ Գիքորը իրար ետևից հարցնում էր.

— Իմ մերը ո՞նց ա... մեր էրեխեքը ո՞նց են... իմ հերն ընչի՞ չեկավ... մեր կովը ծնել ա թե՛ չէ... մեր գեղումն ո՞վ ա մեռել...

— Ամենն էլ լավ են, շատ բարով կանեն,— պատասխանեցին գյուղացիքը։— Էն ա Սուքենց Ղուվասը մեռավ, մին էլ Պուճուրանց պառավը, մնացածը լավ են։

— Բա իմ հերն ընչի՞ չի գալիս։

— Քու հերը լավ ուզում ա, ամա ո՞նց գա։ Ինքը մենակ մի մարդ ա, սաղ տան չափն վրեն...

— Բա բան չեն գարգե՞լ...

— Ինչ ունեն, որ ինչ գարգեն, դու ձեր տան բանը գիտես ո՞չ։ Էս տարի էլ հացը բարակ էր, խեղճ հերդ գոռով ծերը ծկին ա հասցնում։ Նրանցից ի՞նչ ես ուզում։ Թե ունիս, դու գարգի. հրեն խարջ են տուզում— ձեռին գոշ չունի։

— Հո մեր տանիցը օգմի չի՞ հիվանդացել։

— Չէ՛, էն ա ձեր Մագիկ կովը Միրզանց գոմի փլեկովը ներքև ընկավ, սատկեց։

— Մագիկը սատկե՞ց...

— Նեղճ մեկդ էնքան լաց էլավ այքերն ուռան։

Էս ասելով գյուղացիներից մինը մի նամակ հանեց տվավ Գիքորին ու ասավ.

— Հիմի ի՞նչ ես ասում. մենք էլ քիզ տեսնել չենք, գնալու ենք. թե մարդ կամ քվորդ համար բան ես գարգիլու, տուր տանենք։

— Ո՞րանցից բան գարգեմ, գեռ փող չեմ ստանում... ամա...

— Ամա ի՞նչ...

— Ուզում եմ՝ ես էլ գամ ձեզ հետ։ Համ մեր գնցին, համ մերոնց կարոտել եմ, համ էլ...

— Վա՜յ, վա՜յ, մենք հենց իմացանք մարդ ես գտել, խելոքացել ես... էդ տեսակ բան կասե՞ն։ Էստեղ քեզ համար աղավարի տարրում ես— շորերդ թապա, ոտն ու ձեռդ խոտակ... Մենք ասում ենք մեր երեխանցն էլ պեղ անես բերենք, դու էդ ի՞նչ ես ասում։ Էն որ ասել են՝ «Մարդի գլուխը գրին խալիչին, գլորվեց ետ ցեխն ընկավ», հալալ քեզ համար են ասել։

Էսպես հանդիմանեցին գյուղացիները, խրատեցին, մնաս բարով ասին ու գնացին։

Նրանց գնալուց հետո Գիքորն իր անկյունը քաշվեց ու բաց արավ հոր նամակը։

«Իմ սիրելի որդի Գիքոր ջան։

Ի քաղաքն Թիֆլիզ։

«Մենք ողջ և առողջ ենք, միայն քու առողջությունն ենք ուզում, ամեն։ Քեզ շատ կարոտով բարով են անում Ապին, Նանը, Զանին, Մոսին, Միկիչը, Գալոն, ամեն։ Մեր սիրելի որդի Գիքոր. ահա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա և խարջը սաստիկ ուզում են և փող չենք ճարում, և Նանն ու Զանին սկլոր են և տեղներս շատ նեղ ա։ Գիքոր ջան, մի քանի մանեթ փող զարգի և մի գիր զարգի քու որոշությունից։ Եվ իմացած ըլես, որ Մագիկը սատկեց, և Նանն ու Զանին սկլոր են»։

Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք էր անում Գիքորը. դարդ էր անում իրենց տան համար։ Սիրտը էրում էին նամակի տողերը։

— Նանն ու Զանին սկլոր են... Տեղներս նեղ ա...

— Կանչի է՛, տո, ի՞նչ ես վերացել, ուշքդ հեռանելը գնա՞ց...— ձեն տվին ներսից։

— Է՛ստի համեցե՞ք, է՛ստի համեցե՞ք,— կանչում էր Գիքորը խանութի դռանը կանգնած։

12

Զմեռը եկավ։ Սառն աղմուկով ձյունախառն բուքը թրռչում է քաղաքի վրով։ Փողոցներում սուրում, սուրում, հոսան է անում։ Վզդալով մտնում է անկյունները, աղքատի ու սկլորի է ման գալի, պանդուխտ ու անտեր երեխա է սրոնում։

Ահա գտավ Գիքորին։

Մի բարակ ըլուզ հագին, խանութի դռանը կանգնած ձեն էր տալի նա.

— Է՛ստի համեցե՞ք, է՛ստի համեցե՞ք...

— Հրե՞սս...— շարախինգ սոկլով ցուրտը, աներևույթ թրի նման, դարկեց անցավ ոսկորները։ Գիքորը դողաց։

Առանց էն էլ նա շատ էր մաշված. էդքանն էլ հերիք էր նրան։ Ու անկողին ընկավ։

Հիվանդ պառկած էր Գիքորը բաղազ Արտեմի խոհանոցում։ Պառավ դեղին օրը մի քանի անգամ ներս էր մտնում իրեն-իրեն խոսելով։

— Ի՞նչ կուզես, որդի՛, Գիքո՛ր։

— Ջո՜ւր...

Դեղին ջուր էր տալիս։ Հիվանդը դողդոջուն ձեռներով բռնում, ագահ խմում էր ու կրկին ուզում։

— Էս սիրտս հովացնում չի, դե՛դի... ես մեր աղբրի սառը ջրից եմ ուզում, դե՛դի... ես մեր տունն եմ գնում... ես իմ նանին եմ ուզում...

Բաղազ Արտեմը ցավի մեջ էր ընկել։ Նա դես-դեն ընկավ, նրանց կողմերից մարդ գտավ, ասպարեց, որ Համբոն գա, իսկ Գիքորին տարավ բաղաքային հիվանդանոցը։

Էնտեղ շատ հիվանդներ կային շարքերով պառկած։ Տխուր անրում էին ու օձորքին նայում անդոր հայացքներով։

Գիքորին էլ պառկեցրին նրանց շարքում։

Էստեղ գտավ նրան հայրը։

— Էդ ինչ ես էլել, Գիքոր ջան,— մղկտալով վրա ընկավ Համբոն։

Գիքորը ստրուկյան մեջ չիմացավ հոր դալը։

— Գի՛քոր ջան, քա եկել եմ է՛, Գիքոր ջան... ես քու ապին եմ է՛...

Հիվանդը ոչինչ չհասկացավ։ Նա դառանցում էր ու դառանցանքների մեջ կանչում էր — «Միկի՜չ, Զանի՜, Նանի՜...»

— Էստեղ եմ, Գի՛քոր ջան, Նանը զարգել ա, որ քեզ տանեմ մեր տունը... գալիս չե՛ս... Միկիչն ու Զանին հրին կտերը կանգնած քեզ ճամփա են պահում։ Ի՞նչ ես ասում. գե խոսա է, Գիքոր ջան...

— Է՛ստի համեցե՛ք, է՛ստի համեցե՛ք,— բոդոկանչեց հիվանդը, զանազան անկապ, կցկտուր խոսքեր ասավ ու ծիծաղում էր ստրուկյան մեջ։

Մի երկու օրից նորը Համբոն գնում էր իրենց գյուղը։

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր։ Կռան տակին տանում էր շորերը, որ մերը լաց լինի վրեն։ Շորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, լիքի կտորներ ու մի քանի քրոց գտան։ Էն էլ երևի, քրոջ— Զանիի համար էր հավաքել ու պահել...

Գնում էր Համբոն ու մտածում։ Շատ ժամանակ չէր անցել, որ էդ միևնույն ճամփով բաղաք եկավ իր Գիքորի հետ։ Ահա էստեղ էր, որ նա ասավ.

— Ապի, ոտներս ցավում են...

Եվ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու...

Ահա էնտեղ էր, որ ասավ.

— Ապի, ծարավ եմ...

Ահա էն ագրյուրն էլ, որ ջուր խմեցին...

Ամենը, ամենը կան, մենակ նա չկա...

Մյուս օրը, երբ Համբոն սենյակում էր լեռները՝ հեռո՜ւմ երևաց իրենց գյուղը։

Գյուղից դուրս կանգնած սպասում էին նանը, Զանին, Միկիչը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից կանչում էր։

— Ալի՜, ալի՜, հե՜ Գիքոլ...

———————

1898

ԵՂՋԵՐՈՒԻ ՄԱՀԸ

Անտառը հառաչանքով լիքն էր։

Աշնան չարագուժ ցրտերն ու անգութ որսկանները մտել էին նրա մեջ։ Իր մահաբեր թույնը թափելով՝ սուլում էր զառնաշունչ քամին։ Նրա շնչից գունատված տերևները դողդողում էին, անհասկանալի լեզվով ցավալի սվսվում, դալկանում, դեղնում ու իրանց իրանց թափվում, և թափվելով՝ ոխուր շրշում, անզոր հառաչում էին։ Այստեղ ու այնտեղ ոլոտում էր որսկանի հրացանի ձայնը. անտառը թնդում, արձագանք էր տալիս, և ամեն արձագանք տալով՝ կարծես թե ահագին «վա՜յ» էր կանչում իր խոր թավուտներից։ Ճիշտ որ վա՜յ...

Կորչում էին նրա պայծառ օրերը, ընկնում էին նրա դալար զարդերը, հալածվում ու կոտորվում էին նրա սիրուն երեները՝ և... հառաչում էր նա։ Չէ՞ որ նա էլ դիտի դղալ, չէ՞ որ այստեղ էլ կենդանությանն շունչ կա, ցավ ու կսկիծ կա։

Ահա վերջին տագնապի մեջ է անտառի չքնաղ թագուհին։ Որսկանի ձեռքից փախած՝ նա վայր է ընկել բրնուտում։ Գնդակատեղից դեռ հոսում է նրա արյունը, իր աչքով տեսնում է, զգում է այն սոսկալի փոփոխությունը, որ կատարվում է իր մեջ, իր շուրջն էլ փոխվում է, ինքն էլ այն չի, ինչ որ առավոտն էր... Բայց այս ի՞նչ զարհուրելի բան է. ինչու էլ այն չի, ինչու էլ չի կարողանում կանգնել, փախչել... Օրհասական ջանքեր է անում, տանջվում է, տանջվում, և ձգնում է պարզել, թե ախար ի՞նչ պատահեց, այն ի՞նչ էր... Եվ շփոթ ու աղոտ հիշում է, որ արածում էր իր հորթուկի հետ... հանկարծ մի բան որոտաց... մի տաքություն զգաց ու վայր ընկավ... ականջատիել կանգնեց... իր սիրուն հորթուկը... Բայց հիշողության թելը կորավ, ուշքը խառնվեց ուժ չկա...

Նա զգաց, որ ծարավից պապակում էր, այրվում էր ներսը... Հիշեց ներքև՝ ձորակում վազող վտակը, խոնարհած ճյուղերի տակ կարկաչող այն վճիտ-պսպղուն ալիքները... Նրա մտքով կայծակի արագությամբ միասին եկան ու անցան հովասուն անտառներում անցկացրած օրերը, և մշուշապատ առավոտները, երբ նա առողջ ու թեթև իջնում էր այն ձորակն ու կուշտ կուշտ խմում էր սառը ջրերից... Այժմ էլ փափագում էր սաստի՜կ-սաստի՜կ, բայց որքան աշխատում էր՝ չէր կարողանում բարձրանալ։ Ամեն շարժվելով հղփում էր նրա տակ լճացած արյունը և կրկին սկսում էր ծորել գնդակատեղից։ Բայց արյունը բարակեց, ցավն էլ առաջվա նման չէր նեղացնում. նա թմրեց, զգաց, որ քունը տանում էր մի տեսակ. խավարը թանձրանում էր շուրջը, և հետզհետե աչքերը մթնում էին։

Արևն իր վերջին շողերը քաշել էր լեռների ետևը։ Ամեն ձեն ու ձուն կտրել էր անտառում։

Գիշերվան ցուրտն ընկավ։ Սթափվեց եղջերուն, լիակուրծ ու ագահ շունչ քաշեց, լայն-լայն բաց արավ շշմած աչքերը... վերևը փոքրիկ լույսեր ցոլացին։ Այդ աստղերն էին երկնքում։ Նա հասկացավ, որ գիշերը հասել էր։ Վերջին ուժերը հավաքեց, ջանք արավ, շարժվեց, մինչև անդամ ծնկները բարձրացրեց և... կրկին ընկավ մի ծանր ու անզոր թառանչով։ Նա լսեց իր թառանչը, և այդ վերջին ձայնն էր, որ նա լսեց այս աշխարհքում։

1899

ԱՐՋԱՆՈՒՍ

Ա

Մի կերի տարի ես ու մեր Ավագը Մասրեքում խոզ էինք պահում։ Հիմի մի աշունքվա գիշեր բերել ենք խոզը իր նիստը արել ու դափի դռանը մի կրակ վառել, որ բոցն աստծու ոտներն էրում է։ Մի լուսնյակ գիշեր է։ Ես պկու եմ ածում, էս Ավագն էլ մի բայաթի է վեր քաշել, որ սար ու ձոր գվգվում են։

Մին էլ Ավագը թե՝ «Ա՜յ տղա, էն ո՞վ է, հրե մի մարդ է գալի վերի կռնիցը»։

Մտիկ տամ տեսնեմ, դրուստ որ՝ մի մարդ է գալի վերևիցը։ Ամա ես էլ լսել եմ, որ արջը գողությյան գալիս՝ խաբելու համար առաջի երկու ոտը դոշին է դնում, երկու ոտանի մարդի նման է գալի, ոնց որ մարդ ըլի։

Ասի՝ Ավագ, էս օքմին չի, արջ է։

Թե՝ բո՛հ, չէ չէ պոզեր։

Ա՛յ տղա, ասի՝ արջ է։

Ես՝ հա, սա՝ չէ. ես՝-հա, սա՝ չէ։ Իսկ նա էլ կամաց-կամաց կողքըհան մոտենում է, ու ձեռներիս էլ հրացան չկա։ Մին էլ էն տեսանք՝ առաջի երկու ոտը վեր դրավ, դառավ չորսոտանանի ու, ա՛ռ հա կըտաս՝ խոզի կես տեղը։ Խոզը ճղճըղալով իրար խառնվեց, հավաքվեց արջի վրա։

— Ալաբա՛շ, բռնի հա՛ բռնի, հրես հա՛ հրես։

Ամեն մինս մի ածխակոթ վեր կալանք, վազեցինք։ Մի հաստլիկ մերուն ունեինք. ականջ դնենք, որ սրա ճղղոցը ներքի փոսերիցն է գալի։ Վազ տվինք փոսերի վրա։ Ածխակոթը քաշել ենք, հիմի էս անիրավին վեր ենք հատում, տա-

լիս ենք, ինչ անում ենք, չենք անում, մերոնը բաց չի թողնում. առաջներս խոբտած ձորն է ընկնում։ Վերջը՝ շատ տեղը նեղացրինք, չէ՞, թող արավ, փախավ։

Առավոտը ասի՝ Ավագ, դու խոզի կշտին կաց, ես գնամ տանիցը մի հրացան բերեմ։

Թե՝ դե՞, լավ։

Բ

Ավագը խոզի կշտին կացավ, ես գնացի. տանը մի հին հրացան ունեինք, վեր կալա եկա։ Եկա, շիտակ գնացի ներքի մոշուտնին, որտեղ դիտեմ արջի տեղն է։ Ման էկա, որ գտա տչ, մի տեղ մի լավ մոշուտ պատահեց, կանգնեցի, ասի՝ մի քիչ մոշ ուտեմ։ Միամիտ մոշ ուտելիս՝ հենց մոշենու տակիցը մինը ֆրթթացրեց ու հրացանս բռնեց։

Դու մի ասիլ, գնացել եմ հենց անտեր արջի վրա եմ կանգնել։

Որ հրացանիս լուլիցը բռնեց, ես էլ կոթը պինդ բռնեցի։ Հիմի նա օլորում է, ուզում է կատրի, ես օլորում եմ, որ հենց անեմ ծերը վրեն ընկնի, հուպ տամ, ծուխը փորն անեմ։ Բայց անտերը գլխի է ընկել, թողնում չի։

Ես ձգեցի, նա ձգեց. տեսա, որ բան չի դառնում, ձեռս գցեցի ասի հանկարծ խլեմ։ Ձեռս գցեցի թե չէ, թանթլիկը բերավ ուսովս պատ տվավ։ Որ թանթլիկն ուսովս պատ տվավ, հրացանը բաց թողեց։ Էնքան արի՝ հրացանի ծերը փորին դեմ առավ, չախմախը ձեռս գցեցի, ասի՝ էս է, բանը պրծավ։ Վերի ոտը քաշեցի՝ չրթկացրի, տրաքեց ոչ։ Մտիկ տամ, տեսնեմ՝ քարը վեր է ընկել, կորել։ Էստեղ մեջքս կոտրեց։ Հրացանը բաց թողի, ասի՝ խոբտիցն ազատվեմ, եղավ ոչ։ Բռնեցինք իրար։

Գ

Դես քաշեցինք, դեն քաշեցինք։ Տեսնեմ՝ անտերն էս է, ինձ ուտում է։ Ձեն տվի՝ «Ա՛լաբաշ հե՞յ... Ա՛լաբաշ հե՞յ...»

Մին էլ տեսա շունը կլանչելով գալիս է։ Եկավ, հասավ։ «Ա՛լաբաշ, օգնի, ասի, ինձ կերավ...» Հա՛յ քեզ մատաղ,

շո՞ւն. որ հասավ մեջքին տվավ էլի, ոնց որ մի գնդակ ըլի։ Սմա ի՞նչ, էն շունը թե նրա մեջքին տված, թե էն լեռ քարափին։

Ոնց որ երկու փահլևան պինդ իրար բռնեն, բռնել ենք ու աչք աչքի ենք դցել։ Մին էլ էն տեսա՝ կում արավ ու մարդի պես երեսիս մի մեծ թքեց—թո՞ւ։ Որ թուքն աչքերս բռնեց, գլուխս դոշիս վրա կուացրի, ետնուց էլ թանթլիկով մի թունդ ապտակ հասցրեց, ու ինձ կորցրի։

Տեսա՝ էլ ազատվելու դուռը չկա, ասի՝ ես առաջուց երեսիս վրա վեր ընկնեմ, որ երեսս փչացնի ոչ։ Բերանսի-վեր տակին վեր ընկա։ Որ տակին վեր ընկա, շունն ավելի կատաղեց։ Արջն ընկել է ինձ վրա, շունը ետևից իրեն ուտում է, որտեղից բռնում է՝ օգուտ չի անում։ Դու մի ասիլ վարպետ շուն է, դիտի արջը որտեղից կը խեղճանա։ Մեջքին վեր էլավ, ականջներից բռնեց։ Որ ականջներիցը բռնեց, արջը ինձ թողեց։ Անտերը գաղափեց, շանը թափ տվեց մեջքից, վեր գցեց ու բռնեց, հուպ տվավ թե շանչեց, էլ դիտեմ ոչ՝ ինչ արավ, որ բաց թողեց, շունը կլանչելով ձորն ընկավ, փախավ, կորավ։

Դ

Շունն էլ գնաց. մնացինք ես ու ինքը։ Հիմի տակին երեսս բռնած միտք եմ անում։ իմացել եմ, որ արջը ականջ է գնում, տեսնի շունչ կա, թե չէ։ Թե իմանում է որ շունչ է քաշում տակի օքմինը, շարդում է, մինչև շունչը կտրի, թե հո չէ՝ քոթքաթաղ է անում, թողնում գնում, որ հոտի, հետո գա հանի ուտի։ Էս միտք անելիս մին էլ էն տեսա՝ գլուխը բերավ գլխիս վրա դրավ, շունչը իրեն քաշեց. ականջ է դրել։ Ես էլ շունչս փորս գցեցի, ոնց որ թե մեռած եմ։ Գլուխը վեր քաշեց, մի քիչ կացավ, մին էլ ականջ դրավ։ Էլ ետ շունչս պահեցի։ Սա որ տեսավ՝ ես էս է մեռած եմ, ինձ թող արավ մրթմրթալով գնաց։ Աչքս ծերպ արի, ասի՝ մտիկ անեմ, տեսնեմ ուր է գնում։ Ասում եմ՝ հենց լինի մի քիչ տեղ հեռանա, վեր կենամ փախչեմ։

Գնաց՝ մտիկ ցախ ու մախ կար, փետ կար, հավաքեց բերավ վրես ածավ։ Մեջքիս վրա դրավ, շլինքիս վրա դրավ, էլ ետ գնաց։ Գնաց, մի թեթև ցըցլորի կար, էն էլ բերավ ատներիս վրա դրավ, մին էլ ետ գնաց։

Տեսնեմ՝ մի ահագին քոթուկ կա, շարչարվում է պոկի, որ բերի էն էլ վրես գցի։ Միտք արի որ՝ թե էս քոթուկը բերի վրես գցի, տակին շունչս կըկտրի։ Ասի, քանի ուշքը քոթուկումն է, վեր կենամ կորչեմ։ Փորսոդ տալով փետերի տակիցը դուրս եկա, փախա մտա մոտիկ մամխուտը, տապ արի։

Հիմի տապ արած տեղիցը մտիկ եմ անում։ Չարչարվեց, քոթուկը պոկեց ու, ոնց որ մարդը խտրտի, խտրտեց, բերավ թե վրես գցի։ Եկավ տեսավ փետերի տակին մարդ չկա։ Քոթուկը խտրտին զարմացած կանգնեց, փետերի տակին մտիկ արավ, շորս կուռը մտիկ արավ, հանկարծ քոթուկը վեր գցեց ու՝ թո՛ւ հա թո՛ւ, թո՛ւ հա թո՛ւ, մարդի նման թքոտում է. ասի երևի ափսոսում է, էլի։

Թու հա թու անելով, ճռճռացնելով ընկավ ներքևի ձորը։ Ես էլ վեր կացա, դուրս պրծա դեպի Ավագը։ Գալիս եմ, ոնց եմ գալիս, ոնց որ հետ ածած լինեմ։ Ետ եմ մտիկ անում, ասում եմ տեսնեմ, հո արջը գալիս չի։ Հասա մեր խոզի նիստը։ Էս Ավագը թե՝ ա՛յ տղա, էդ ի՞նչ խարար է, էդ ի՞նչ ես եղել։ Ասի՝ էլ խաբարը ո՞րն է, քու տունը քանդվի, էսենց բան եկավ գլուխս։ Թե՝ բա հրացանդ ո՞ւր է։

Նոր տեսնեմ, որ հրացանս մատիցս ընկել է, թողել եմ տեղը։

Ե

Եկանք մի քանի հոգի հավաքվեցինք, գնացինք հրացանս բերինք։ Հրացանիս քարը շինեցի, պնդացրի, ասի՝ Ավա՛գ, էլի պետք է գնամ։ Թե՝ ա՛յ տղա, ձեռը վեր կալ, կրբոնի կըգդի։ Ասի՝ հիմի սովորեցի, էնպես չեմ անի որ բռնի։

Թե՝ դու գիտես։

Հրացանս վեր կալա, քարը պնդացրի ու գնացի։ Տանձի էլ կաթոցի ժամանակն է։ Գնացի մինչև ճաշ ման եկա, ոտնահան եղա, դուռ ոչ։ Միտք արի՝ ախպեր, սա ուր կըլինի քաշված, ախր սա պետք է որ էս խոզի կողմերից հեռանա ոչ։ Վեր կացա, ասի ներքևում մոշուտների վրա։

Մի քիչ գնացի, մին էլ տեսնեմ, ըհը՛, արջի հետքը առաջիս։ Հետքն ընկա գնացի. գնամ՝ տեսնեմ հրես մի բարդի կրծել է կրծել ու թողել։ Գլխի ընկա, որ սրանում մեղր կա։ Վերև մտիկ տամ, ճանճը արկանոցից բանում է։ Ասի՝ հիմի թե իրեն դանեմ էլ ոչ, էս հո որս է ու որս։ Մի քիչ էլ գնացի, տեսնեմ առաջիս մի մորմոնջաբուն է քանդել, բայց հողը դեռ թաց է։ Տեսա որ մոտեցել եմ։ Էստեղ մի անտեր ահ ընկավ սիրտս։ Հրացանի քարին մտիկ տվի ու առաջ գնացի։ Հենց ոտս փոխեցի, մի թրմփթրմփոց եկավ։ Կանգնեցի... Բացատի գլխին մի լավ մեղրատանձի կա. տեսնեմ՝ հրես տակին տանձ է ուտում։ Էս կռանը մի տանձ է կաթում, դեսն է վազում մըրթմըրթալով ծամում է ու ականջ դնում, էն կռանը մի տանձ է կաթում, դենն է վազում։ Մին էլ որ կանդնեց տանձի կաթոցին ականջ դնելու, ծառի տակը մտա, հրացանն երեսս կալա։ Տեսնեմ հրացանի ծերը տրմբտրմբում է։ Չէ՞, սիրտս պնդացրի, մին էլ նշան դրի, հոպ տվի... Հրացանը որ տրաքեց, սա մի դոռաց, պըտիտ եկավ, ու առ հա՛ կըտաս, ընկավ ներքևի ձորը։ Հրացանս մին էլ լցրի, մտիկ թմբի գլուխը բարձրացա, տեսնեմ սա ջրին է վազում. ասի՝ բաս սրա բանը խարաք է. վիրավորը որ ջրին գնաց, ջուր խմեց—պրծավ, էլ ապրիլ չի։

Մին ասի՝ եռևիցը գնամ, մին էլ ասի՝ անենք չար սատանին. վիրավոր արջը գեշ է, կըբռնի, կըփչացնի։ Էն է, ինչ նա դենը գնաց, ես էլ ետ եկա, էլ գիտեմ ոչ ինչ եղավ։

Միայն էն օրերում ձորի վրա շատ ուրուր պըտիտ եկավ...

ԳԱԲՈ ԲԻՋՈՒ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ես ու Գարո բիձեն անցնում էինք Լոռու ձորով։

— Հե՞յ, տիրացու,— ձայն տվավ նա։

— Համմե՛։

— Հրամանքդ շատ։ Ես տեսնում եմ, որ էս մեր նոր ուսում առածները շատ աշխարհքից դուրս մարդիկ են, դու սրան ի՞նչ կասես։

— Ինչո՞ւ, Գարո բիձա։

— Նրա համար, որ հենց գիտեն՝ ամեն բան իրենք են հասկանում, իրենցից առաջ էլ ոչ մարդիկ են եղել, ոչ բան են հասկացել։ Մին էլ կըտեսնես բռնեցին ու ղլխիդ գելի ավետարան կարդացին—հա՛ էս ճանճ պահի՛ր, էս աբրեշումի ճիճու պահի՛ր, էսպես մածուն շինի՛ր, էսպես ցանի՛ր, էսպես հնձի՛ր... Ցո՛, հեր օրհնած, մի առաջ հարցրո՛ւ, տես՝ էդ բաները դրանք էլ միտք են արել թե չէ, նրանից ետը՝ թեկուզ ուշունց տուր։

— Ետս մի՞տք եք արել որ, Գարո բիձա։

— Ախպեր, ա՛յ, ես հիմի օրինակի համար՝ մինն ասեմ, դու տես՝ մենք էլ հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկանում թե՞ չէ։ Մի աշունք մեր Դավոն գնաց քաղաքը խոզ ծախելու։ Մի ճանանչ մարդ աբրեշումի ճիճվի սերմ էր տվել թե՝ տարեք ձեր տեղը առաջ բերեք։ Ճամփա պահեցինք մինչև գարունքը բաց էլավ։ Գարունքը որ բաց էլավ, ոնց որ խրատ էր տվել՝ էս ճիճվի սերմը բերինք մեր խիղանի ծո-

ցում դրինք, որ տաքանան, դուրս գան։ Դուրս էկան ասկի՛ ձերի չափ մանր սև զագեր։ Տիրացո՛։։

— Համմե՛։

— Էդ ձեր ուսումնականները թե գիտեն—արբեշումի ճիճուն ի՞նչ կուտի։

— Թթան տերև։

— Ապրե՛ս, դրուստ ա։ Գնացի ձորիցը մի շալակ թթան տերև բերի, կապեցի մենծ տան ամբարի ոտիցն ու ճիճուն վրեն ածի։ Ինչքան մարդ էկավ նայելու, ոչ ոքի տուն չը-թողինք՝ որ աչքով չտան, ասինք՝ թող մի տեսնենք ինչ ա դուրս գալի։ Ա՛յ տղա, էդ անտեր ճիճունները մի քանի օր կացան ու կոտորվեցին։ Հիմի թե ասենք նրանից է, որ գոմշի ձագը շատ էր մոտ կապած, ոտնատակ էր տալիս, թե նրանի՞ց էր, որ հավերը տուն էին թափում՝ կոցահարում. դե ո՞նց անենք։ Հո չէինք կարող հավերը կոտորել կամ ձագն սպանել։ Թե ասենք անձրևիցն էր, որ երդիկովը ներս էր թափվում, մին էլ մարդ միտք ա անում, թե բա քաղաքումն անձրև չի գալի՞... Մի խոսքով՝ բան գլուխ չեկավ։ Տեսանք, որ մեր երկրումը աբրեշումի ճիճուն անում չի, բան չի դառնում։ Դե՛, զարմանալու ի՞նչ կա որ. էնպես երկիր կա՝ հավը չի ապրում, էնպես երկիր կա՝ ցորեն չի դուրս գալի. ամեն աշխարհք մի տեսակ բնություն ունի. բայց էս մեր նոր ուսում առածները էսքանն էլ չեն հասկանում։

ԽՈՐՀՐԴԱՎՈՒ ԾԵՐՈՒՆԻՆ

— Այդ դո՞ւ ես,— ասաց նա և գլուխս թեթև շոյելով շարունակեց իր ճամփան առանց կանգնելու։

— Դու ո՞րտեղից գիտես ինձ, ծերունի։

— Քո ծնված օրից։

— Ուրեմն դու ճանաչո՞ւմ ես ինձ։

— Ես քո հորն էլ էի ճանաչում փոքրուց։

— Վա՜հ, մի՞թե...

— Ես քո պապին էլ եմ տեսել. ա՜խ, ինչ շարաճրճի էր երեխու ժամանակ։

— Դու իմ պապին տեսել ես երեխա ժամանա՞կ։

— Է՜հ, բայց քո պապի պապը ավելի կայտառ երեխա էր։

— Դու իմ պապի պապին էլ ես տեսե՞լ։

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, զարմանում ես դու. դեռ նրանց պապերի պապերին էլ...

— Դե որ այդպես է, պատմի՛ր, խնդրում եմ, պատմիր ծերունի. ի՞նչ տեսակ մարդիկ էին նրանք, ի՞նչ գիտես նրանցից։

— Ինչ տեսակ մարդի՞կ...

Նրանք էլ քեզ նման մարդիկ էին։ Այդպես՝ քեզ նման երազներ էին երազում, մեծ մեծ հույսեր էին փայփայում... Գալիս էին ոգևորված իրանց հույսերով ու ցնորքներով և մեկ մեկ կորցնում ճանապարհին։ Ոմանք շուտ էին վհատում

ու բեկվում, ոմանք ավելի հանդուգն ու համառ գալիս էին, մինչև մի տեղ ընկնում էին ուժասպառ ու... Օ՜, շատ եմ ծիծաղել նրանց վրա։

— Վա՜յ, խե՜ղճ պապեր։

— Բայց ես ականատես եմ եղել և նրանց սիրային տարփանքներին, ես տեսել եմ նրանց կայտառ զավակների խաղերն՝ ու լսել եմ նրանց առաջին թոթովանքները, մասնակցել եմ նրանց զվարթ խրախճանքներին, ձայնակցել եմ նրանց հաղթանակի աղաղակներին, ես պատկել եմ նրանց առաքինություններն ու մեծագործությունները...

— Ո՜վ բարի ծերունի։

— Հա՛, նրանք ինձ հետ էին։ Մի քիչ տեղ եկան. մեկը մի անգամ մտավ գերեզման, մյուսը նրանից մի փոքր հեռու իրան ալեոր գլուխը դրեց, որը դեռ մատաղ, որը ծերունի, որը սիրահար, որը ցավագար... Քո բոլոր պապերն ինձ հետ են անցել ու ամեն մեկը մի տեղ մնացել։

— Ո՜ւհ, ինչքան մեծ ես դու։

— Մե՜ծ, աչքդ ինչ տեսնի՝ նրա սկիզբն եմ ես, միտքդ ուր հասնի՝ նրանից առաջ եմ ես, ո՛ր քարը վերցնես՝ տակին եմ եղել, ինչ մեռել գտնես՝ այն ես եմ թաղել։

— Եվ դեռ այդպես արա՞գ ես գնում. ես չեմ կարողանում քեզ հասնել։

— Հա՛, հա՛, հա՛, հա՛. հոգնեցի՞ր... տեսնում եմ, արդեն քեզ էլ եմ թողնում։ Օ՜, դու վաղ ես ծերացել... Ե՜կ, ե՜կ...

— Սպասի՛, ծերունի, իմ ուժը, իմ եռանդը դու տարար, ես հոգնեցի, էլ չեմ կարողանում գալ։

— Ե՜կ, ե՜կ...

ԹՑՈՒՐԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄՈՒԹԻ ՄԵՋ

Շուլավերցի իմ մի բարեկամը մի անգամ ինձ հետևյալ պատմությունն արավ.

— Բեհբութովի կռվի տարին Ղարս տանող ռազմական ճանապարհը մեր գյուղովն էր անցկենում։ Զորանոց չկար, և մեր գյուղում գիշերող զորքը բաժանում էին գյուղի վրա, ամեն մի տան մի կամ մի քանի զինվոր էին տալի պահելու։

Երեխա էի։ Մի իրիկուն մեծ ախպերս հանդից եկավ, կրկենի արավ (բաղարջ) գցեց կրակը։ Կրակի չորս կողմը կտրած նստել ենք, սպասում ենք կրկենուն, մին էլ տեսանք քյոխվեն մի զինվոր բերեց, թե գիշերը պետք է պահեք։ Ինչ ասել կուզի, շատ սիրով ընդունեցինք, շոր գցեցինք տակը, կրակի մի կողմն էլ նա նստեց։ Դե լեզու չգիտենք, բան չգիտենք։ Հիմի հերս չիրուխ է քաշում, մերոնք էլ զրուց են անում, թե ինչպես ռուսն եկավ մեր երկիրը խաղաղություն դցեց, ու օրհնում են ռուսին, ռուս սալդաթին...

Հենց էս ժամանակը սալդաթը տեղիցը վեր կացավ, էն կողմից կասկարենքը վեր կալավ բերեց, որ դցի կրակին, թաղած կրկենու վրա։

Ախպերս վրա թռավ կասկարենքը էն կողմը հրեց, աղաղակելով.

— Բրա՛տ, կրկենի՜, կրկենի՜...

Զինվորն, իհարկե, բան չհասկացավ, նեղացավ, մի քանի խոսք փնթփնթաց. էն էլ մենք չհասկացանք, ու կրկին

կասկարենքը բերեց դեպի կրակը։ Ախպերս դարձյալ հրեց դենը։ Նա քանի բերեց կրակին, սա հրեց դենը, և սրանց մեջ սկսվեց մի լուռ կռիվ։ Հասավ ենաեղ, որ բռնեցին ու սկսեցին իրար քաշքշել։ Բայց էգ միջոցին կարող էր կրկենին այրվել, ու մենք հանեցինք մոխրի տակից։ Զինվորն էս որ տեսավ, «ա՜...» բացականչեց ու հանգստացավ, ախպորս օձիքը թողեց, իր տեղը նստեց, նորից կրակն իրար արինք, նա էլ իր «կատալը» դրեց վրեն, մենք էլ, ինչով կարող էինք պատվեցինք։ Թյուրիմացությունը դուրս եկավ մոխրի տակից. կռիվը վերջացավ սիրով, ու սիրով էլ առավոտը բաժանվեցինք, օրհնանքով ճանապարհ դրինք դեպի կռվի դաշտը։

1908

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

1898 թվին նոր էր բացվել Թիֆլիսից Կարս գնացող երկաթուղին։ Լոռու գյուղերից մեկում մի իրիկնադեմ Ուհանես բիձու դռան գերանների վրա նստոտած զրույց էինք անում։ Ուհանես բիձեն մեզ պատմում էր, թե ինչպես սկսվեց երկաթուղու շինությունը։

«Մի տարի ես ու մեր Սիմոնը ներքի ճալումը ճիպոտ էինք կտրում»։ Էսպես էր պատմում նա։

«Մին էլ տեսանք մի քանի սիպտակ շլապկավոր մարդիկ ներքևից դուրս եկան ու ջուրնիվեր, ջուրնիվեր գնացին։

— Ասի՝ հե՛ Սիմոն։

— Թե՝ ի՞նչ ա։

— Ասի՝ էստեղ մի բան կա։

— Թե՝ ի՞նչ պրտի ըլի, ճամփորդ մարդիկ են, կարելի ա ճամփեն կորցրել են, իրենց համար գնում են։

— Ասի՝ չէ, էստեղ մի բան կա, ետնա կիմանաս։

Եկանք տեսանք Տերսանց ջաղացի կտերը մի սիպտակ փետ ա տրնկած։

— Ասի՝ հե՛ Սիմոն։

— Թե՝ ի՞նչ ա։

— Ասի՝ հիմի տեսնում ե՞ս։

— Թե՝ էս ի՞նչ ա որ։

— Ասի՝ հալա դեռ կաց, ետնա կիմանաս...

Սրանից մի քանի ժամանակ անցկացավ—մին էլ տես-

նենք կապեթ եկավ, թե՝ բա՞ երկաթուղու ճամփեն դեսն են տանում...

— Ասի՝ հե՛ Սիմոն։

— Թե՝ ի՞նչ ա։

— Ասի՝ հիմի տեսա՞ր՝ խոսքս որտեղ դուրս եկավ...

— Ա՛յ լեզուդ պտպտնվեր հա՛,— ձայն տվեց էն կողմից որսկան Օսեփը։

— Ա՛յ տղա, ընչի՞ ես էդպես ասում, ի՞նչ մի վնաս բան ա երկաթուղին,— մեջ մտան մի քանի գյուղացի։

— Վնաս չի, բա ինչ ա, եկավ ձորերումը ծղրտաց, էլ պտիրա չըմնաց, կխտար չըմնաց, ձենիցը խրտնեցին, փախան կորան։

— Պտիրեն ու կխտարը չէ որ, հավատա ես էլ կորչեմ,— խոսքն առավ մի հովիվ, որ գազանակին հենված կանգնած էր։— Գնում եմ քարի դյխին կանգնում եմ, ձորերին մտիկ եմ անում, որ էն քարափները քանդելիս տեսնում եմ, արտիս ծերը մղկտում ա, ոնց որ թե մարդի երեխեն թշնամու ձեռին լրբրելիս ըլեն ու մարդ կարենա ոչ թե օգնի...

— Չէ, շատ բան կըփչանա,— սրա հետ էլ հառաչեցին մի քանիսը։

Ու սկսվեց վեճը երկաթուղու վրա, թե երկաթուղին օգուտ էր բերելու, թե վնաս։

Էդ վեճի ժամանակ երկաթուղու դծի վրա աշխատող օտարականներից մինը ձորիցը դուրս եկավ ու մոտեցավ մեզ։

— Բարի իրիկուն ձեզ։

— Աստծու բարին, ուստա։

— Ինձ մի շափ ալյուր է հարկավոր, ձեզանից ո՞վ ալյուր կըծախի,— դիմեց օտարականը ամենքիս։

— Ո՞րտեղացի ես, ուստա,— հարցրեց Ուհանես բիձեն։

— Օսմանլվի հողիցն եմ։

— Ուհանես բիձա, հալա մի հարցրու տես ո՞ր քաղաքիցն ա,— խնդրեց մի գյուղացի։

— Քու քաղաքի անունն ի՞նչ ա, բարեկամ,— կրկին հարցրեց Ուհանես բիձեն։

— Սրվաղ։

— Սրվա՞ղ,— երկարացնելով ու խորհրդավոր կերպով կրկնեց Ուհանես բիձեն։

— Ի՞նչ ասում, Ուհանես բիձա։

— Սրվաղ...

— Պա՛հ, քու տունը չըքանդվի...— ծափ տվին ու ծիծաղեցին մի քանի գյուղացի։

— Էնտեղից էստեղ քա՞նի ամսվա ճանապարհ է,— շարունակում էր հարց ու փորձը Ուհանես բիձեն։

— Երեք ամսվա։

— Պա հո՞...— միաբերան զարմացան ամենքը։

— Համեցեք, զարիր ախպեր, նստիր, հաց բերեն, հաց անուշ սրա։

— Չէ, շնորհակալ եմ, վռազ եմ. ձեզանից ո՞վ ալյուր կծախի, մի շափ ալյուր տա՝ գնամ։

— Ախչի, մի շափ ալյուր դուրս բերեք,— դռնից ձեն տվեց Ուհանես բիձեն.— գլուխ-գլուխ լցրեք։

Հարսներից մինը մի շափ ալյուր դուրս բերեց, տվեց գատարկի մեջը, բայց նա թող չարավ։

— Ի՞նչ արժե...

— Ածա, դեռ ածա տոպրակիդ մեջը։

— Չէ, առաջ մի գինն իմանանք։

— Դեռ ածա, հետո կիմանաս. թե որ թանգ ըլի, գատարկելը հեշտ ա։

Ուստեն իր տոպրակը բաց արավ, հարսն ալյուրը մեջը գատարկեց ու գնաց։

— Դե հիմի ի՞նչ տամ,— հարցրեց ուստեն ծոցից քսակը հանելով։

— Ոչինչ, ուստա, ոչինչ չի հարկավոր, քեզ փեշքեշ, մեր աշխարքումը գարիրից հացի փող չեն առնիլ, էդ տեսակ ագաթ չկա...— ասավ Ուհանես բիձեն ու շարունակեց իր չիբուխը ծխել։

Ուստեն մի քիչ շփոթվեց, չեմ ու չոմ արավ ու գնաց։

Ուստի գնալուց հետո մի կարճատև լռություն տիրեց, ապա թե խոսեց մի գյուղացի։

— Էն օրը մինն էկել ա թե՝ մածոն եմ ուզում։ Հարսներ-ը մածոն գրին առաջին. կերավ պրծավ, հիմի վեր ա կացել, թե ինչ արժե...

— Ասում եմ՝ ի՞նչը...

Թե՝ մածոնը...

— Ասի՝ ա՛յ մարդ, գլխիցս քաշվի, էդպես բաներ մի խոսիլ, թե չէ ոչխարի էլած կաթն էլ կըցամաքի...

— Ա՛յ ապա, բա ի՞նչպես անենք... էն լա՞վ ա, որ ով գա մուֆտա ուտի ու տանի՞... էս վրա քանիսն են գալի, գիտե՞ս թե չէ... էն օրը մնին էլ ես եմ մի խան ալյուր չափել տվել... էդ ո՞ւր կերթա,— մեջ ընկավ Ուհանես բիձու փոքր ախպերը։

— Որ գա՛ մին էլ տուր...— գլուխը վեր քաշելով հանդարտ խոսեց Ուհանես բիձեն։

— Օչախդդ շեն կենա,— վրաշացին մի քանի ծերեր։

— Աչքս լուս էլի՞. Սրվազից սկսած ով գա՝ չափի տուր. կասես ես նրանց համար եմ աշխատել... Ով գալիս ա՝ բարով, հազար բարի. բան ա ուզում՝ փողը բերի՝ տանի...

Ու սկսեցին վիճել։ Ուհանես բիձեն էլ տաքացավ, աղմուկը մեծացավ։

— Ո՞ւ-ո՞ւ-ո՞ւ.... Ջորերում սուլում էր երկաթուղին։

Նոր էր մտել նա մեր ձորերը։

ԱՀՄԱԴԸ

Ա

Ես իմ մանկության գարունները անց եմ կացրել մեր սարերում։

Շատ էի սիրում իմ տատոնց տունը ու միշտ այնտեղ էի լինում։ Իմ քեռիներից ամենից փոքրը, Ահմադը — հովիվ էր։

Նա ինձ տանում էր, ման էր ածում գառների մեջ, հետը հանդից հաղարճի կարմիր ճյուղեր էր բերում ինձ համար, իսկ իրիկունները հանում էր սրինգը ու ածում։

Ու ասաղալի, լուսնյակ գիշերները, ահագին խարույկի շուրջը բոլորած, ծափ էին տալի, խնդրում էին իմ պապն ու տատը, իմ քեռիները, իսկ ես Թիթեռի նման թռթռում, պար էի գալի նրանց շրջանի մեջ։

Ահմադը թուրքի անուն է, դրա համար էլ երբ մենք խոզի միս էինք ուտում, միշտ տանեցիք հանաք էին անում, ծաղրում, ծիծաղում էին Ահմադի վրա, թե՝ Ահմադը հայացավ, Ահմադը հայացավ...

Իհարկե, անունը լսողը կասեր թուրք է. բայց հենց նիրս մտներ, տեսներ թե Ահմադը ինչպես է ժաժ գալի տանը, հերիք էր, իսկույն կիմանար, որ նա տան սիրելի աղան է։

Ում կամենում էր, տուն էր-բերում, պատվում, ճամփու դնում։ Աղքատը ողորմությունը ոգեր թե հարուստը հացփոխ, իր ձեռքով տաշտից վերցնում էր, տալի։ Տան աղջիկներին ու փոքրերին հրամայում էր, ծեծում էր, սիրում էր, ինչպես

և մյուս քեռիներս։ Անասունների համար հոգին տալիս էր։ Մինը հիվանդանալիս գրեթե ինքն էլ հետն էր հիվանդանում, էնքան էր սիրում։ Ինքն էլ էնպես սիրելի էր ամենքին։ Ահմադը հիվանդանում էր թե չէ, մեր ուրախությունն էլ հետը կտրում էր։ Ու ամբողջ օրը տատս ու պապս ջրոս կողմը պտտվում էին, ինչ որ լավ բան էին գտնում, շուրջն էին հավաքում, խնդրում էին, թե էլ ուրիշ ինչ կուզի սիրտը։

Բ

Մի առավոտ էլ վեր կացա, տեսնեմ՝ բոլոր տանեցիք տխուր են։

Իմ տատը արտասվելով քթքթում էր, ման էր գալի անկյուններում ու ինքը չէր իմանում, թե ինչ էր անում։ Հարսներն ու աղջկերքը լուռ, տխուր ներս ու դուրս էին անում։ Վրանի դռան կողքին նստած խոսում էր իմ պապը, իսկ մի լիլ հեռու գլխակոր նստած էին քեռիներս։

— Աստված լինի քո օգնականը, բալա ջան,— խոսում էր պապս։— Չոր քարին գնալիս՝ շոր քարն էլ կանաչի քեզ համար։ Պակաս օրդ խնդությունով անց կենա... Դե, վեր կաց, օրն անց է կենում, ճամփեդ երկար է։ Վեր կաց, բալա ջան, առավոտ բարի ճամփա տա, ոտդ ոչ դիպչի քարի...

Ահմադը շուխի փեշով աչքերը սրբեց, վեր կացավ, եկավ մոտեցավ իմ պապին։ Պապս գրկեց, համբուրեց Ահմադին, ու աչքերը լցվեցին արտասուքով։

— Քո աշխատանքը մեզ հալալ արա, Ահմադ ջան, մեր աղ ու հացն էլ քեզ հալալ լինի, քո մոր կաթնի պես։ Մեզ մտիցդ ոչ։ Թե աջողություն ունենաս՝ իմացրու, որ մենք էլ ուրախանանք, թե պակասություն ունենաս՝ իմացրու, որ հարեհաս լիննենք։ Դե, գնա, քեզ մատաղ, աստված բարի ճամփա տա։

Ապա թե տատս գրկեց, համբուրեց Ահմադին, հետո մնացածները լաց լինելով ձեռն առան։ Ապուշ կտրած փոքրերիս էլ Ահմադը համբուրեց և մի երկու կով, հորթ, գոմիշ, ձագ, մի կտրրկան ոչխար, մի բարձած էշ առաջն արած, մի

երկու շուն էլ ետը գցած, ճանապարհ ընկավ։ Մյուս քեռիներս ուղեկցում էին Ահմադին։

— Աստված բարի ճամփա տա, Ահմադ ջան, գնաս բարով, բալա ջան,— ձեռքը ճակատին դրած հեռից ձայն էր տալիս պապս։

Գ

Ահմադը անցավ սարի մյուս կողմը, մյուս քեռիներս վերադարձան։ «Բայց ինչո՞ւ էին լաց լինում մեր տանը, քեռի Ահմադը ո՞ւր գնաց»,— մտածում էի ես։

— Ահմադը ո՞ւր գնաց, նանի — հարցրի իմ տատին։

— Իրենց տունը գնաց,— պատասխանեց տատս։

— Իրենց տունը ո՞րն է...

— Ուրիշ տեղ է։

— Ահմադը ո՞վ էր որ...

— Ահմադը թուրք էր, մեր ծառան էր։ Է՛, քանի տարի մեր տանն էր.... Հիմի իր իրավունքն առավ ու գնա՞ց...

— Բա էլ չի՞ գալու։

— Չէ՛, բալա ջան, գնա՞ց...

ԳՐԱՉԸ

1

Այնտեղ սարերն իրար են հանդիպել, իրենց արանքում մի մեծ ձոր են սեղծել, որ կոչվում է Մութը Ձոր։

Մութը Ձորը բաժանում է հայերին ու թուրքերին իրարից։ Նրա մի կողմը թուրք սարվորն է իջնում, որ բինեն զարկում, մյուս կողմը՝ հայը։

Բայց նրանց իգիթները գիշերվա մթնով էլ անցնում են այն խոր անդունդը, իրարից ոչխար են գողանում, ձի, կով կամ գոմեշ են քշում։ Նրանց հովիվները հանդերում են հասնում ու փետակռիվ են անում։

Մեկ էլ տեսար մի սարի ոսից տարածվեց մի զիլ, առաձգական ձայն — «Հավար հե՛յ...»։ Այդ դուժավոր ձայնը ձգվելով՝ տարածվում է լեռներում ու հանկարծ երկու կողմն էլ բինեքում իրարով են անցնում։

2

Թուրք Ղափըշօղլին իր բինեն զարկել, ձվար էր արել Մութը Ձորի մի կողմը։ Այնտեղից խրոխտ ու սպառնալի նայում էր դիմացը վեր եկած հայերին։ Նրա մարդիկը այդ սարերի ամենահռչակավոր գողերն էին։ Դատաստանից փախածները նրա մոտ էին ծածկվում, սարերով անցնող ավազակային խմբերը նրա հարկի տակ էին ապաստան գտնում։

3

Մի իրիկնադեմ վրանում թինկը, տված նա դրույց էր անում իր սովորական հյուրերի հետ։ Նրանք հայտնի ավազակներ էին, որ անցնում էին լեռներով։

— Էս դիմացի հայերին լավ է տղերքը տակնուվրա չեն անում,— իր զարմանքը հայտնեց հյուրերից մի քուրդ։

— Էդքան էլ խեղճ մի դիտենալ դրանց,— պատասխանեց տան տերը։

—Դրա՞նց...

— Հա՛, դրանց։ Դրանց մեջ Ջատի անունով մի չորան կա, իգիթ եմ ասում, որ մենակ էն մի ագի դեմը դուրս գա։

— Փա՛ հա՜,— բացականչեց վրդոված ավազակը ու շրջելակալով վրա նստեց։

— Ի՞նչ կըտաս գիշերս էնպես անեմ, որ առավոտն էլ ծուխ չըրարձրանա դիմացը։

— Կապուտ ձին փեշքեշ։

— Ձեռքդ տուր։

Նրանք ձեռք ձեռքի խփեցին ու գրաչ եկան։

4

Սարսափելի մութն են Մութը Ձորի գիշերները։

Մի մթնագիշեր էր, անձրևն էլ անընդհատ տեղում էր միալար։ Քնած էր հայերի բինեն, երբեմն երբեմն հովիվները այս կամ այն կողմից խուլ «հեյ-հե՛յ...» կանչելով, իմացնում էին, որ հսկում են դեռ։

Գիշերվա մի ժամանակը մի թմփթմփոց անցավ վրանների մոտից։ Շները վեր կացան, վրա տվին, ոչխարը խրտնեց, ձիաները փախան, տավարը ցրվեց։ Հովիվները հավար կանչեցին, հրացանները բացվեցին, և այս բոլոր սարսափներն ու ձայները խառնվելով մութին, հեղեղին ու ամպի որոտմունքին, հորինեցին մի դժոխային գիշեր։

— Շունը տարա՞ն, բինեն պահեցեք, հե՛յ...— գոռաց աժդահա հովիվ Ջատին։

— Շունը տարա՞ն...— ձայն տվին ամեն կողմից ու սև սարսափը կալավ բինին։ Լեռներում ամեն մարդ լավ է հասկանում, թե ինչ կընշանակի՝ «շունը տարան»։

Գողերը միշտ մի կամ երկու հոգով վաղում ընկնում են բինեն, ոչխար, ձի, տավար խրոտնացնում, խառնում են իրար։ Շներն ընկնում են նրանց ետևից։ Նրանք էլ շներին հաշեցնելով տանում, հեռացնում են բինից։ Այնուհետև խառնված, անշուն բինին ետևից վրա են տալիս նրանց ընկերները և շփոթի ու խավարի մեջ քշում են անասունները։

Շուտով հետևից երկրորդ հարձակումը, հարայհրոցն ընկավ, հրացանները բացվեցին, ամեն բան մթնումը խառնվեց իրար ու իրար խառնված ընկավ դեպի ներքև։

Ակնակիր մթնում ոչինչ չէր երևում։ Փայլակի լույսով վայրկենաբար բացվում էր ահռելի տեսարանը, բայց մարդու աչքերը որոշ բան չէին կարող նկատել այն թոհ ու բոհի մեջ։ Աչքերն չէին կարող նկատել, բայց հրացանների ձայները ցույց էին տալիս, թե որ կողմից են գնում, և հովիվների աղաղակը, որ կանչում էին՝ «Տարա՞ն, տարա՞ն... Ալարաշ հե՛յ...»։

Այդ ձայներն էլ հետզհետե հեռացան, նվազեցին ու էլ ոչինչ չէր լսվում։

Անձրևը միալար շրմփում էր և ամպը խուլ հայթում ու որոտում հեռու լեռներում։

5

Լուսադեմին տղերքը վերադարձան։ Դեռ հեռվից լսվում էր նրանց ուրախ ուրախ խոսոցն ու ծիծաղները թանձր մշուշի մեջ։ Ապրանքն ական ու անվնաս ետ բերին, հանձնեցին սարվորին, իրենք հավաքվեցին հովիվ Զատոի վրանը, որ հաց ուտեն։

Նրանք իրենց հետ բերել էին մի քրդի քոլոզ, վահանն ու թուրը։

Իսկույն տարածվեց, թե տղերքը մի քուրդ են սպանել ու

հետաքրքրված սարվորները եկան խռնվեցին վրանի ներսն ու դռների արանքում։

Զատոի մայրը սոված հովիվների համար կրակի վրա կերակուր էր շինում ու հետն էլ իրեն իրեն դունդունում.

«Ա տղա, նա էլ մեր կունենա՞...

Ա տղա, հիմի նրա մերը ճամփա կըպահի՞...

Ա տղա, կասի, տղես ետ չեկավ...

Ա տղա, ճամփա կըպահի՝ ետ չի գնա՞լ...»։

Գլուխներն օրորելով նրան ձայնակցում էին մի քանի ուրիշ կանայք։ Այնինչ՝ հովիվները սարվորին պատմում էին, թե բանն ինչպես եղավ։

— Զորս կողմից հավաքվեցինք, տարանք արինք մի ձոր։ Էստեղ սրանց տեղը որ նեղացրինք, սրանք ապրանքը թող արին ու ամենքը մի կռան վրա փախան։ Մընին քշեցի, տարա քարափին դեմ արի։ Որ քարափին դեմ էլավ, մին էլ տեսա ետ դառավ, թուրը հանեց, վրա քշեց թե՝ գլուխդ ապատի, միջիցդ կես եմ անում։ Ոնց թե միջիցդ կես եմ անում— դագանակը պտրտեցի, ուսախառը վեր բերի, ա՛ռ հա կըտաս...

— Ա՛յ տո՞ւր,— բացականչեցին սարվորները։

— Շրրխկալով փռվեց,— վերջացրեց Զատին իր պատմությունը։

— Հա՛, հա՛, հա՛, հա՛,— քահ քահ խնդացին սարվորները։

6

Այս դեպքից մի քանի շաբաթ անց էր կացել։ Մի օր շները հաշեցին. դուրս եկան, տեսան մի պառավ քուրդ ձայն էր տալի բինի ներքևից։

— Ի՞նչ ես ուզում, ա՛ քիրվա։

— Զորան Զատոի վրանն եմ ուզում,— ասավ քուրդը։

Բերին չորան Զատոի վրանը։ Զատին հաց դրեց հյուրի առաջ։ Դեսից դենից խոսեցին, մինչև հացը կերավ, պրծավ։ Երբ որ հացը կերավ, պրծավ, Զատին հարցրեց.

— Ներ ըլի, ընչի՞ համար է եկել քիրվան։

— Էստեղ մի քանի շաբաթ առաջ մի քուրդ են սպանե՞լ,— խոսեց հյուրը։

— Սպանել են,— պատասխանեց հովիվը։

— Ասում են՝ դու ես սպանել։

— Դրուատ է։

— Ես նրա հայրն եմ,— ասավ ծերունին։— Եկել եմ, որ նրա արիները քեզ հալալ անեմ։ Դու նրան ճամփին չես սպանել, իր ոչխարումը չես սպանել, իր տանը չես սպանել... Քանի անգամ ասի՝ ա՛յ որդի, ձեռը վեր կալ էդ հարամ ճամփից, հեռու կաց էդ ընկերներից. ոստիշները քեզ համար չեն աշխատել... ինձ չըլսեց։ Երևի էդպես մահը մոտեցել էր,— ասավ քուրդը ու դովը քաշ արավ, լռեց։

— Հավատիդ հաստատ կենաս, որ արդարն ես խոսում,— չորս կողմից ձայն տվին սարվորներն ու իրենք էլ լռեցին։

— Արիները քեզ հալալ,— բացականչեց ծերունին,— միայն մայրը.... գիտես էլի, մայր է... չի հանգստանում... Շորերն ինձ տվեք, տանեմ, շորերի վրա լաց ըլի, իր սիրտը հովացնի, իր կարոտն առնի։

Ջատին բերեց, ծերունուն հանձնեց արյունոտ քուրդը, վահանն ու թուրը, մի ոչխար էլ առաջն արավ ու շներն անցկացրեց, տարավ ճամփու դցեց։

— Դե մնաս բարով,— ասավակս,— հրաժեշտ տվավ ծերունի քուրդը։

— Գնաս բարով, քիրվա՛։

ՄԱՅՐԸ

Մի գարնան իրիկուն դռանը նստած զրույց էինք անում, երբ այս դեպքը պատահեց։ Էս դեպքից հետո ես չեմ մոռանում էն գարնան իրիկունը։

Միծեռնակը բույն էր շինել մեր սրահի օճորքում։ Ամեն տարի աշնանը գնում էր, գարնանը ետ գալի, ու նրա բույնը միշտ կպած էր մեր սրահի օճորքին։

Ե՛վ գարունն էր բացվում, և՛ մեր սրտերն էին բացվում, հենց որ նա իր զվարթ ճիչով հայտնվում էր մեր պլուզում ու մեր կտուրի տակ։

Եվ ի՞նչ քաղցր էր, երբ առավոտները նա ծլվլում էր մեր երդիկին կամ երբ իրիկնապահերին իր ընկերների հետ շարվում էին մի երկար ձողի վրա ու կարդում «իրիկնաժամը»։

Եվ ահա նորից գարնան հետ վերադարձել էր իր բույնը։ Զու էր ածել, ճուտ էր հանել, ու ամբողջ օրը ուրախ ճչալով թռչում, կերակուր էր բերում իր ճուտերին։

Էն իրիկունն էլ, որ ասում եմ, եկավ, կացումը կերակուր բերավ ճուտերի համար։ Ճուտերը ճվճվալով բնից դուրս հանեցին դեղին կտուցները։

Էդ ժամանակ, ինչպես եղավ, նրանցից մինը, դուցե ամենից անզգույշը կամ ամենից սովածը, շտապեց, ավելի դուրս ձգվեց բնից ու ընկավ ներքև։

Մայրը ճչաց ու ցած թռավ ճուտի ետևից։ Բայց հենց

էդ վայրկյանին, որտեղից որ էր, դուրս պրծավ մեր կատուն, վեր թռցրեց փոքրիկ ճուռը։

— Փի՛շտ, փի՛շտ,— վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտալով ընկավ կատվի ետևից՝ նրա շուրջը թրռթռալով ու կռցահարելով, բայց չեղավ։ Կատուն փախավ մտավ ամբարի տակը։ Եվ այս ամենն այնպես արագ կատարվեց, որ անկարելի էր մի բան անել։

Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտըտվում էր ամբարի շուրջը, իսկ մենք, երեխաներս, մի մի փայտ առած պտըտում էինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս եկավ ու փախավ դեպի մարագը դոմբը լիզելով։

Ծիծեռնակը դատարկ կատվին որ տեսավ, մի դիլ ծղրտաց ու թռավ, իջավ դիմացի ծառի ճյուղին։ Այնտեղ լուռ վեր եկավ։ Մին էլ տեսանք, հանկարծ ցած ընկավ մի քարի կտորի նման։ Վազեցինք, տեսանք՝ մեռած, ընկած է ծառի տակին։

Մի զարնան իրիկուն էր, որ այս դեպքը պատահեց։ Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում այն զարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացա, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է ու սիրտն էլ սիրտ է, ինչպես մերը։

1909

ԵՂՋԵՐՈՒՆ

Մի սեպտեմբերի մեր գյուղացի որսկան Օսեփը ինձ գիշերակաց որսի տարավ Եղնուտի կիրճը։ Գիշերներն էդ կիրճով եղջերուներն իջնում են ձորերն ու հովիտները, արածում են, արշալույսից առաջ ջուր են խմում ու էլ ետ իրենց տպնդոցնն են տալի։

Գնում էինք գիշերը մնանք բոստանչի Օվակիմի դափում, որ լուսադեմին հասնենք որսատեղը պահելու։

Ես էի, որսկան Օսեփն էր ու մեր գյուղացի մի տղա, որ Օսեփի շալակտարն էր։

Մենք գնում էինք էն դաժան հրճվանքով, որով միայն որսի են գնում։ Ճամփին որսից էինք խոսում։

— Որսը բախտի պես բան է,— ասում էր Օսեփը։— Մին էլ տեսար երևույթք էլավ ու քամի դառավ կորավ։ Անսովոր մարդը նրան հեշտ չի նկատիլ. կըշփոթվի, կըդողդոդա, կըփախցնի։ Աչքդ առնելուն պես պետք է թվանքդ բացվի. թե չէ որ տուղեցիր նշան դնես, մինչև աչքդ ճպես, նա սարն անցկացավ։

— Հապա դուք ի՞նչպես եք որսի ման գալի, ուստա Օսեփ։

— Լավ որսկանը ման չի գալ, նա որսը կըպահի,— պատմում էր որսկանը։— Գիտի, ո՞ր ժամանակին, ի՞նչ տեղ որսը ժամ կըգա՝ կըգնա էն տեղը կըպահի։ Թե ման էլ գա, քիչ, էն էլ էնպես ման կըգա, որ որսն իր քամին չառնի, թե

չէ որսն էնպես սուր հոտառություն ունի, որ թե քու քամին (հոտը) նրա վրա էլավ— պրծար, որտեղ որ է հոտդ առավ, կորավ։

Էսպես խոսելով իրիկոնը հասանք բոստանչի Օվակիմի դափին։ Մերոնի բոստանչին փեսա էր հավաքել, կրակը վառել ու կողքին թինկը տվել։

— Բարի բիգուն, Օվակիմ բիձա։

— Այ ասածու բարին ձեզ, դուք բարով եկաք. ա՛յ տղա, էդ ինչ լավ զնանխներ եք։ Ես հենց մենակ միտք էի անում, թե մի ղրիցընկեր ըլի... Էս հենց ասածի հասցրեց ձեզ...— ուրախացած գոռգոռում էր Օվակիմ բիձեն։

— Դու էն ասա՝ որս ա ժամ գալի թե չէ, Օվակիմ բիձա,— անհամբեր հարց տվավ որսկանը։

— Այ տղա, մի անտեր պախրի բուղա կա, Օսեփ ջան, գիշերները գալիս ա լորին ուտում ու գնում։ Էնքան լորիս փուչ արավ. թվանք չանեմ, շուն չանեմ... Պախրա մի՛ ասիլ,— մի սար ասա։ Զարդախ (պոզեր) ունի. ոնց որ մի կաղնի։

— Էդ մինը ոչինչ. բա իսկի բուղագոռոցի ձեն չի գալի՞։

— Այ տղա, էլ ասում ես, ինչ անես, քնահարամ են արել։ Երեկ գիշեր էս վերի մասներումը հենց գոռում էին, որ գնալիս որոտում էր։

— Հա՛յ հող ու ջրի ասածի, հա՛,— սղագալեց որսկանը։

Օվակիմ բիձեն մեզ հրավիրեց, տակներս խոտ ածավ, ինքն էլ կրկին թինկը տվավ իր տեղը։

— Տղերք, ես որ խորը միտք եմ անում, տեսնում եմ, որ աշխարքի երեսին մարդիցն էլ վերը անիրավ շնչավոր չըկա։

— Ի՞նչի, Օվակիմ բիձա։

— Ինչին էլ ա՞րին ես ասում. տեսնում ես՝ դուք թվանքներդ առել եք ետևներիցն ընկել, մենք էլ ուրախացել ենք, թե ինչ ա, մի պախրա կըսպանենք, կուտենք։ Ախր չէ՞ որ նա էլ մեզ նման շունչ կենդանի ա, հրեն կես-գիշերին էրվելով

գոռում ա, ձեն ա տալի, իր կովին կանչում. չէ՝ էն էլ նրա սերն ու մուրազն ա...

— Թե ձենը գուրս կըգա՝, ես նրա սերն ու մուրազը նշանց կըտամ,— ծիծաղելով բացականչեց որսկան Օսեփը։

— Չէ՞, շատ մեղք բան ա, շա՛տ,— գլուխը շարժելով կրկնեց բոստանչին ու ձենը ավելի բարձրացնելով, կանչեց.

— Տղերք, էս ա որ պախրիցը խոսք ընկավ, ես ձեզ մի բան պատմեմ։

— Պատմի, Օվակիմ բիձա։

— Մի տարի սարումն էի։ Էկան, խաբար բերին, թե բա թոռդ հիվանդացել ա, քեզ ուզում ա, արի։ Սարիցը վեր կացա, հիմի տուն եմ գալի։ Ճամփին ծովեցի, ասի կարելի ա որսից բանից պատահի։ Ման եկա, ման, մի տեղ տեսնեմ բրնուտումը մի բան խշխշացնում ա, թփերը ժաժ ա տալի։ Ախպեր, էս թե մոշահավ ա, մոշահավի բան չի, թե անասուն ա, ի՞նչի չի երևում։ Մի քար գցեցի թփուտը. մին էլ տեսնեմ մի պախրի ճուտի ականջներ ցրցվեցին, էլ ետ ցածացան, ու սկսեց թփերը ժաժ տալ, ճամփա բաց անել, որ փախչի։ Թվանքն երեսս կալա հենց թփերի էն ժաժ էկող տեղը։ Թվանքը որ տրաքեց, սա վեր թռավ, գուրս ընկավ ու ետ գետնովը դիպավ։ Տղերք, հիմի մի ձեն ա ածում. մի տնքում ա, ոնց որ մեռնող էրեխա։ Ուստա որսկաններից լսել էի, ասի՝ էս ա սրա մերը ինձ տեսել ա, էստեղից փախել, որտեղից որ է հիմի ետ կըգա։ Մտա մի ծառի տակ ճամփա պահեցի։ Շատ մնացի թե չի, մին էլ տեսնեմ հրես էկավ, բայց ոնց էկավ, ես տեսա գուք ոչ տեսնեք— մի խոսքով մոր նման, թվանքի ձենը իր էրեխի վրա լսած մոր նման։ Էկավ տեսավ իր ճուտը հրես անշունչ, արնակոլոլ մի ծառի տակ փռված։ Տղերք, գունը մեկնել ա, ոնց ա տխուր մղկացնում, ոնց ա վերը լիզում... Թվանքը վեր կալա, էդտեղից քաշվեցի, էկա տուն։ Էկա տեսա էրեխեն դժար ա, հոպու հետ կռիվն ա տալի, տնքում ա։ Տղերք, էն օրը չի, էն օրվա ասածն ա. էնպես էն պախրի ճուտի նման ա տնքում, որ աչքս խուփ եմ անում, հենց իմանում եմ դեռ էն թփի կողքին եմ կանգնած։ Վերջապես,

էրեխեն մեռավ. հիմի մերը ընկել ա վրեն— բառանչում ա... Ասում եմ, փառքդ շատ ըլի աստած, ի՞նչ ա մեր ու էն սարի պախրի զանազանությունը— ոչինչ... ամենի սիրուն էլ սիրտ ա, ամենի ցավն էլ— ցավ...

Օվակիմ բիձու տխուր պատմության տպավորության տակ մի առժամանակ լուռ էինք։

— Օվակիմ բիձա, չէ որ ասում են պախրեն էլ տեր ունի,— խոսեց շալակատար Ղազարը։

— Ունի բաս, պախրեն մեծ տեր ունի։

— Ետնա էդ դրո՞ստ բան ա։

— Դրուստ ա, բաս։ Որսկան Փիրումն ինքը գլուխ որսկան էր ու նրա գնդակը իր օդումը գետին չէր ընկած։ Մի անգամ մի պախրա ա վիրավորում։ Պախրեն փախչում ա, սա ընկնում ա ետևիցը։ Քշում ա տանում հասցնում Զորավոր կաղնքքու տակը։ Էստեղ, Զորավոր կաղնքքու տակին պախրեն չոքում ա. պախրեն չոքում ա—որսկան Փիրումը թվանքն երեսն ա կալնում։ Հենց էս տժժան բոպեին Զորավոր կաղնքքուց մի դուռն ա բացվում, մի սիրուն հարսն ա դուրս գալի. էս սիրուն հարսը դուրս ա գալի՝ որսկանի դեմը ծղրտում.

— Ի՞նչ ես հալածում իմ անմեղին, անիրավ մարդ, ի՞նչ ա ախել քեզ։ Ագա՜հ, ոչ կշտանաս դու, որ չես կշտանում լիքն աշխարքում։ Թվանքդ արնով լցվի, գնդակդ խմոր դառնա, չորանա էդ թվանքը բռնող կուռը...

Միայն որսկան Փիրումը խելոք մարդ էր, գլխի ա ընկնում որ էս որսի տերն ա, ձեռաց թվանքը գցում ա մի ծառի ճյուղքի. անիծելուն պես ծառի ճյուղքը տեղն ու տեղը չորանում ա։

— Օվակիմ բիձա, ուրեմն էդ ա, որ ասում են որսկանությունը անիծած ա։

— Անիծած ա, բաս, մին որսկանությունը, մին էլ ձրկնորսությունը, երկուան էլ անիծած են։ Հնուց դրած նզովք ա, որ որսկանի ու ձկնորսի փորը կշտանա ոչ։ Որսկանի վրա Քյարամն էլ նզովք դրեց։ Երբ էրվելով իր Ասլու ետևից ման էր գալի՝ մի վիրավորված պախրա տեսավ։ Տեսավ՝ անա-

սունը մղկտալով շունչը տալիս ա, հորթն էլ մոլորած մնացել ա կողքին կանգնած, էստեղ սազ առավ ու մի խաղ ասավ։

Մենք խնդրեցինք Օվակիմ բիձուն, որ էդ խաղն ասի մեզ համար, ու ծեր բոստանչին իր պառավ ձենով, խարույկի առաջ երգում էր մութը ձորում.

Հե՜յ, պարոններ, տեսա կանաչ դարունքին՝
Էս սարերում լաց էր լինում մի պախրա.
Սիրուն հորթը մոլոր կանգնած իր կողքին՝
Էս սարերում լաց էր լինում մի պախրա։

Գընդակն առած գընում էր փուչ աշխարքից,
Գանգատվելով մարդու անգութ արարքից,
Արյուն տալով, մըղկըտալով իր վերքից
Էս սարերում լաց էր լինում մի պախրա։

Ասված սիրող՝ որսին թըվանք չըբռնի,
Երկինք սիրող՝ որսի միսը թող չառնի.
Դարդոտ Քյարամ տեսավ ծովում արյունի՝
Էս սարերում լաց էր լինում մի պախրա։

* * *

Ամենքը քնեցին. ես մնացի զարթուն։ Գիշերն էս տեսակ տեղերում անսովոր մարդը չի կարողանում քնել, հազար ու մի ձեն է լսում, հազար ու մի բան է երևակայում։

Էն անշուշտ գիշերվա հովն էր, որ շարժում էր սիմինդրները, բայց ինձ թվում էր, թե Օվակիմ բիձու ասած պախրեն էր բոստանը մտել։ Գիշերվա մթության մեջ հեռվում սև կերպարանքներ էին երևում ու կարծես շարժվում էին։

Ու անքուն էի ես։

Գիշերվա մի ժամին դուրս եկա դռան դուռը։ Պարզ աշնանային գիշեր էր։ Ձոր ցոլքը սեղմում էր։ Ձորերը խուլ

թշշում էին։ Նրանք էլ ասես քնել էին, Օվակիմ բիձու նման փշշացնում էին խոր ու հանգիստ։

Բայց Քարվան-դռան աստղը արդեն դուրս էր եկել. մեր ճամփա ընկնելու ժամանակն էր։ Ես վեր կացրի իմ ընկերներին։ Նրանք շտապով հագան իրենց տրեխները ու վեր կացանք դեպի Եղնուտի կիրճը...

* * *

Արշալույսից առաջ մենք դարան էինք մտած Եղնուտի կիրճում։ Ես իմ դիրքից պահում էի առաջիս ընկած բացատը։ Դիմացս կանգնած էր խոր ու անթափանցելի մութն անտառը։

Հետզհետե գիշերվա խավարն սկսեց նոսրանալ։ Ժայռերը խոժոռ, քնաթաթախ դուրս նայեցին աղջամուղջի միջից։ Երկինքն սկսեց գունատվել ու պարզվել։ Ապա երևաց Եղջերուն—Լուսաստղը։ Վեր կացավ վաղորդյան զեփյուռը։ Մաղիկները շարժեցին իրենց գլխիկները, խոտերը գողդողացին, տերևները շշշացին։ Անտառն սկսեց զարթնել։ Մոտակա թփից մի ծիտ ճկաց, մի ուրիշը՝ մյուս թփից, մեկն էլ հեռվից...

Ես աննկատելի դուրս էի եկել իմ թաքստից ու զմայլած դիտում էի շուրջս— բնությունը, էն սրբազան ժամին, երբ ծագում է առաջին լույսը։

Հանկարծ մի ձայն... չորացած ճյուղ կոտրվեց մոտիկ անտառում։ Նայում եմ էն կողմը։ Անտառը տակավին մութն է։ Աչքս չի որոշում, թե ինչ կա էնտեղ, միայն պարզ լսում եմ զգույշ ոտնաձայնը, որ խաշամը կոխելով առաջ է գալիս—խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ... Բան չի երևում, բայց զարձյալ խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ, մոտենում է ավելի ու ավելի... Եվ, ահա, դուրս եկավ...

Ես առաջին անգամն էի տեսնում եղջերուն ազատ բնության մեջ։ Նա դուրս եկավ մի խաղաղ հպարտությամբ, վեհ ու չքնաղ, ինչպես բնության էն ամեն գեղեցկությունների տերն ու թագավորը։ Կիսովին, դեռ անտառի մթության մեջ կանգնեց, թուխ դունչը դրավ գետնին, ապա թե գլուխը բարձրացրեց, վայրենի շնորհքով ոլորեց երկայն վիզը ու նայեց իմ կողմը։

Ամենագեղեցիկ հայացքը, որ ես տեսել եմ իմ կյանքում։

Ես շփոթվեցի, ամաչեցի, ուզեցի թաքցնել հրացանս... Շարժվեցի թե չէ, նա շտապով ետ թեքեց իր կարապի վիզը. վիզը ետ թեքելուն պես հարևան դիրքից որոտաց որսկան Օսեփի հրացանը։ Հրացանի ձայնից անտառը որոտաց ու սկսեց ճռճռալ։ էն եղջերուն էր փախչում։

— Հա՛յ քո տունը չքանդվի,— ինձ հանդիմանելով դուրս թռավ որսկանն ու վազեց դեպի մոտիկ բլուրը, տեսնի ո՛ր կողմից կերևա փախած որսը։ Առավոտը բացվում էր, և էնքան լուս էր. կարողացանք կանաչ խոտերի վրա գտնել թարմ արյան հետքը։

Վիրավորված էր եղջերուն։ Արյան հետքը բռնեցինք ու գնացինք որոնելու։

— Էսքան որ արյուն է ավել, ինչքան ուզում է գնա՝ մերն է,— հայտնեց որսկան Օսեփը։

* * *

Երիկնապահին նրան գտանք մի խոր անտառում։ Նա ընկած տեղից իր երկայն վիզը մեկնեց մեզ վրա։ Ես տեսա՝ ինչպես չէր կարողանում գլուխը պահի, շարժում էր անդադար ու նայում էր մեզ իր պղտոր, շշկլած, անորոշ հայացքով։ Հանկարծ կարծես գլխի ընկավ, աշխատեց վեր կենա, ծնկները վեր բարձրացրեց ու կրկին ճղփալով ընկավ իր արյան մեջ մի ծանր, անզոր թառանչով։

Որսկանը վրա վազեց... Ես ուզեցի մի բան ասեմ, ամաչեցի... Նա բռնեց եղջերուի գլուխը, ոլորեց գեղեցիկ վիզը... Ես կրկին ուզեցի մեջ մտնեմ... դարձյալ սիրտ չարի... Եվ ահա դաշույնը փայլատակեց։

Ես երեսս շրջեցի, իբրև թե սարերին եմ նայում։ Ետևից մի խուլ տնքոց լսեցի... ու, չըգիտեմ ինչու, սկսեցի մտածել կյանքի ու մահվան մասին, և էնպե՞ս տգեղ էր թվում ինձ կյանքը...

1910

ՆԵՍՈՅԻ ՔԱՐԱԲԱՂՆԻՍԸ

Կիրակոսը մրսել էր, անկողին էր ընկել, տանջվում էր տաքության մեջ։ Հարևանները հիվանդի շուրջը հավաքված օդեն լիքը վրույց էին անում, չիբուխ քաշում։

— Տղե՛ք, սա որ քրտնի ոչ, բան չի պատնալ, էկեք սրան մի քարաքաղնիս անենք,— ծխի միջից առաջարկեց Նեսո բիձեն։

— Հա, էդ խելքս կտրեց,— հավանություն տվեց մի ուրիշը։

— Դրան էլ ուրիշ ճար չկա,— ձեն տվին էս ու էն կողմից։

— Կիրակո՞ս...

— Հը՞՞։

— Ասում ենք քարաքաղնիս անենք, ի՞նչ ես ասում։

— Վախենում եմ... չդիմանամ...

— Տո՛, կդիմանաս, էրեխա հո չե՞ս։

— Դե... դուք գիտեք... ձեզ... մատաղ։

— Ա՛ղջի, պղինձը ջուր լցրեք բերեք. մի փեշ էլ քար բերեք կրակն ածենք տաքանան։

Պղինձը դրին կրակին, քարերն ածին կրակի մեջ ու նստոտեցին։ Նեսո բիձեն սկսեց պատմել, թե քանի՝ հոգի են ազատվել քարաքաղնիսով. Մատնանց Դանելը, Մաթոսանց Մինասը, Ծատուրանց Ստեփանը, Մաշկավորանց Միկոն— մինչև որ ջուրն եփ էկավ, քարերն էլ կարմրեցին։

— Դե ժամանակն ա, վե՛ր կացեք։

— Տղե՛ք, վախում եմ...— կանչեց հիվանդը։

— Դու սո՛ւս կաց։ Աղջի, մի երկու հաստ լեհեք բերեք, մի չորս ու հինգ ուժով տղեք էլ էկեք էստեղ։

Շորերով փաթաթած եռման ջրով լիքը պղինձն ու հիվանդին դրին իրար հետ, կարմրած քարերը լցրին ջրի մեջ. քարերը թշշացին, ամպի նման գոլորշին սկսեց բարձրանալ, շտապով վերմակները ծածկեցին ու չորս կողմից վրեն պինդ նստատեցին։

— Վա՛յ, խեղդվեցի՛,— խուլ գոռում էր հիվանդը։

— Խեղդվիլ չես... տղեք պինդ նստեցնեք։ Գլուխն ու ոտները ամուր պահեցեք։

Հիվանդը աղաղակում էր, օրհասական ջանքեր էր անում շարժվելու, բայց հինգ-վեց ածդահա տղամարդ վրեն նստած չէին թողնում։

— Ո՞ւր ես գնում,— կանչում էին էս ու էն կողմից, վերեից սեղմում ու հոհոռում։

— Հիմի թե չքքրտնի՞։

Ու Նեսո բիձեն, հիվանդի վրեն նստած, չիբուխը բերանին շարունակում էր իր պատմությունը։

— Մի տարի էս մեր Աբգարն էլ էսպես մրսել էր։ Ղանթափու ծաղիկ բերին չայ շինեցին խմացրին, պրաշոկ բերին, ջուր արին, տվին իրան, քացախ քսեցին, բան չի դառավ։

Ասի՝ տղեք, բերեք ես դրան մի քարաքաղնիս անեմ։ Թե՝ դե դու գիտես։ Բերի մի թեժ կրակ արի, Գարան տատի պռունգը կոտրած պղինձը ջուր լցրի վրեն դրի, քար հավաքեցի ածի շեղջը։ Ջուրն եփ էկավ, քարը կարմրեց։ Սա թե՝ վախում եմ։ Ախր նա էլ սրա նման մի լեղապատառ օքմին ա։

— Ագա, ընչի՞ ես ասում, Աբգարը հո սրտոտ մարդ ա։

— Վա՛յ է՛, նրա սրտոտը որն ա։ Մի աշունք ես մի արջի բուն գտա։ Էկա ասի՝ Աբգար, արջի բուն եմ գտել, արի գնանք արջին բնիցը հանենք։ Գնացինք։ Ես մի ձող վեր կալա էս արջի բունը խրրխրրթորեցի։ Մին էլ հանկարծ էն անտեր արջը դուրս եկավ ու ինձ կալավ։ Աբգար, քոմադ հա քոմագ։ Ո՞վ կըտա Աբգար — մին էլ տեսնեմ հրեն փախած

գնում ա։ Արջի ձեռիցը մի կերպով պրծա էկա տուն։ Ասում եմ, ադա, դու էս ի՞նչ արիր։ Թե՝ էկա տուն, որ թվանք բերեմ։ Սուտ։ Վախիցը փախավ։

— Էն էի ասում—հիմի սա կանգնել ա, թե Նեսո չան, վախենում եմ, ինձ քարաբաղնիս մի՛ անիլ։

Ականջ չի դրինք, բերինք կեծացած քարերն եփման ջուրը լցրինք ու հենց էնպես բուղը վեր ըլելով սրա հետ կոխեցինք տեղի տակը.— վա՜յ, մեռա հա, մեռա։ Լսողն ո՞վ ա։ Վրեն նստոտեցինք։ Ես եմ, էս մեր Ղուկասն ա, Փիլոն ա, Գաբոն ա, Արուքն ա։ Հիմի սա տակից գոռում ա, ո՞նց ա գոռում... էնքան գոռաց մինչև դինջացավ։ Բաց արինք, տեսանք ջուր ա կտրել։ Էն էր ու էն, լավացավ, տեղիցը վեր կանգնեց ողջ առողջ մարդ։

Նեսո բիձու պատմությունը որ վերջացավ, վեր կացան վերմակները ետ քաշեցին։ Գոլորշին օդեն բռնեց։ Բայց Կիրակոսը...

— Կի՛րակոս։

Ժամ չի գալի։

— Կի՛րակոս...

Պատասխան չի տալի։

— Կիրակո՞ս.—ձեն տվին, շարժեցին, քաշքշեցին։ Կիրակոս չկա։

— Ա՛յ տղա, էս ո՞նց էլավ,— մոլորված արտասանեց Նեսոն։ Մյուսները լուռ էին։

— Վա՜յ, տունա քանդվե՞ց... —ծղրտաց Կիրակոսի կինը։ Իրար հրդհրելով տղեքը դուրս էկան կտուրը։ Ու մինչդեռ ներքև Կիրակոսի կինը սուգ էր անում, կտուրը արևում նստոտած տղեքը պատմում էին, թե քանի-քանի հոգի են խեղդվել քարաբաղնիքից. Հանրսանց Հարոնը, Մելքոնանց Վանեսը, Հախվերդոնց Աղեն, Շիմալանց Շամիրը... ո՞ր մինն ասես։

— Տո՛, դե ճակատի գիր ա էլի, հո նրան էլ Նեսոն չի խեղդել։

Նեսոն լուռ, գլուխը կախ արած լսում էր ու չիբուխ էր քաշում։

ՔԵՌԻ ԽԵՉԱՆԸ

— Բարի լիս ձեզ։

— Ա՜՛, բա՛րով, բա՛րով, քեռի խեչան։ Աղջի, չայ բերեք, հաց բերեք, արաղ բերեք քեռի խեչանի համար։ Է՛, խեր ըլի, քեռի խեչան, ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, որ դու քաղաք ես եկել։

— Ինչ պետք է պատահի. ձեր կարոտն էինք քաշում։ Ասի՝ մեռնիլ կա, ապրիլ կա, մի գնանք տեսնենք։

— Շնորհակալ ենք, շնորհակալ ենք, քեռի խեչան։

Քեռի խեչանը դեսից-դենից խոսելով թեյ խմեց, հաց կերավ, վերջը լռեց ու սկսեց չիբուխ քաշել։

Մին էլ չիբուխը բերանից հանեց թե՝

— Բա էս ո՞նց պրտի ըլի։

— Ի՞նչը, քեռի խեչան։

— Էս, որ էրեխին սալդաթ են տանում։

— Չըգիտեմ... ես ի՞նչ կարող եմ անել...

— Էլ ինչը ո՞րն ա, հրեն քեռկինդ նստած լաց ա ըլում։

— Դե ասա, ինչ որ կարող եմ անել,— պատրաստ եմ։

— Ասում եմ՝ գնանք մի մեսրիկեն հանենք, տեսնենք ինչ ենք անում։

— Լա՛վ, համեցեք գնանք։

Գնացինք կոնսիստոր։

Դիվանապահին խնդրեցի՝ քեռի խեչանի ցույց տված

Թվականի մետրիկական մատյանները հանեց, ման եկանք, բրքրեցինք, քեռի խեշանի տղեն չկա։

— Էդ ոնց ա, ախպեր։

— Դե չկա էլի, քեռի խեշան։

— Հլա մի քանի տարի էլ ցած մտիկ արեք, կարելի՛ ա սխալվել ենք։

Նոր մատյաններ բերինք, ման եկանք, նրանց մեջ էլ չկա։

— Մենք սխալվել ենք... անպատճառ սխալվել ենք էլի,— կրկին խոսեց քեռի խեշանը։— Էրեխին իմ հաշվով մեծ պետք է լի։ Մրթամ պետք է ասեի բարձր մտիկ արեք, ցած եմ ասել։

— Լավ, քեռի խեշան, բարձր էլ մտիկ կանենք։

Նոր մատյաններ բերինք, նորից ման եկանք, նրանց մեջ էլ չկա։

— Չկա, քահանեն գրել չի։

— Բա էս ո՞նց պըտի ըլի։

— Դե որ չկա՝ ի՞նչ անենք... Գնանք, քեռի խեշան։

— Գնալով ո՞նց կըլի... հրեն քեռեկինդ նստած լաց ա ըլում։

— Դե ինչ անենք, որ չկա։

Դուրս եկանք։ Մի հիսուն քայլ գնացինք, քեռի խեշանը կանգնեց։

— Կա՛ց հլա։

— Ի՞նչ կա, քեռի խեշան։

— Մրթամ էս ո՞ւր եկանք, ուր ենք գնում։

— Մեր տունն ենք գնում, էլի։

— Ետո էդ էլավ որ...

— Բա ի՞նչ անենք։

— Ախր էնտեղից էստեղ քու անունը տվել եմ եկել, հիմի որ գնամ՝ ի՞նչ խաբար տանեմ։

— Դե ի՛նչ անեմ, քեռի խեշան, մատյաններն էն էին, ինքան տարի տեսանք, տակն ու վրա արինք—չկա։

— Ո՞նց թե չկա. էն ոնց ա ամենք տղեն էլ կա, հենց իմը չկա...

— Դե որ էդպես է, ի՛նչ անենք։

Քեռի խեշանը մինչև տուն բան չըխոսեց։

— Հը՞, ինչ արիք,—հարցրեց կինս։

— Դեռ հալա տեսնենք,—պատասխանեց քեռի խեշանը։

— Էլ ի՞նչ տեսնենք, մատյանումը գրած չէ, վերջացավ գնաց,—մեջ մտա ես։

Քեռի խեշանը, տնքաց։

— Վերջացավ, վերջացավ, ես էլ ինչ ճամփով եկել եմ, էն ճամփովն էլ ետ կերթամ մեր տունը,— վճռեց ու վշտացած նստեց, սկսեց չիբուխին զոռ տալ։

Ճաշի ժամանակն եկավ։ Լուռ նստած ճաշում էինք. հանկարծ քեռի խեշանը ճաշն ընդհատեց ու ինձ դիմեց.

— Բաս ես որ հիմի գնամ՝ քեռեկինդանդ ի՞նչ ասեմ։

— Ընչի՞ համար։

— Էս մետրիկականի։

— Վա՛հ, չկա, չկա, քեռի խեշան. տերտերը գրել չի, չկա։

— Է՞, դե ասում ես, է՞լի։

— Ի՞նչպես թե ասում ես, էլի. թեղ ասում են—չկա։

Քեռի խեշանը դարձյալ տնքաց ու չիբուխը սարքեց։

Ճաշից հետո մտա իմ առանձնասենյակը, որ հանգստանամ։ Մտածում էի, թե ինչ տեսակ մարդիկ են մեր գյուղացիք...

Մին էլ տեսնեմ ներս մտավ քեռի խեշանը։

— Քնո՞ւմ ես։

— Հա՛։

— Բա էս քնելու ժամանակ ա՞։

— Բա՛ ինչ անեմ, քեռի խեշան։

— Ախր ես եկա էստեղ մնացի, բա ի՞նչ ես անում։

— Ի՞նչ անեմ, քեռի խեշան։

— Էս մետրիկի համար բա ի՞նչ ես ասում։

— Վա՛հ, զարմանալի մարդ ես, ա՛յ մարդ քեզ հայերեն ասում են՝ չկա՛, չկա՛, քեռի խեշան։

— Դե լավ, լավ, էլ ինչ ես նեղանում. չկա. ես էլ

կը գնամ մեր տունը։ Մնաք բարով,— ու քրթմնջալով դուրս գնաց։

— Գնաս բարով. դե ինչ անեմ, որ չկա։

Վեր կացա, տեսնեմ քեռի Խեչանը պատշգամբում նստած շիբուխ է քաշում։ Գլխարկս վերցրի, որ տանիցը դուրս գամ։

— Էդ ո՞ւր ես գնում,— նոսկիցս կանչեց քեռի Խեչանը,— բա ի՞նչ ես ասում...

— Բան չեմ ասում։

— Գնո՞ւմ ես...

— Հա՛։

— Էլ մեարիկին չես տեսնի՞լ...

— Չէ՛, չեմ կարող։

Էս պատմությունից հետո քեռի Խեչանը գնացել էր գյուղումը պատմել, թե իր տեղը նեղ էր, եկել էր քաղաք՝ ինձ խնդրել, որ օգնեմ, իսկ ես ասել էի՝ չեմ կարող, ու ոչ նրա խոսքին էին ականջ դրել, ոչ երեսին մտիկ արել։

1911

ԱԼԼԱՀԻՑ ՊՐԿՎԱԾ

(Մի հիշողություն թուրք-հայկական ընդհարումներից)

1905 թվի աշնանն էր, թուրք-հայկական ընդհարումների ամենակատաղի ժամանակը։ Ես իմ հայրենիքում էի—Լոռու սարերում։ Մենք մի ժողով արինք ու որոշեցինք, թե՝ լռահցիներս չենք կռվում մեր հարևան թուրքերի հետ, որովհետև եթե ուժեղ ենք՝ անխղճություն է դա, իսկ եթե թույլ ենք՝ հիմարություն է։ Բարձրացնում ենք սպիտակ դրոշակ և աշխատում ենք սերն ու խաղաղությունը պահել մեր սարերում ու ձորերում։

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Եվ ահա մի օր էլ տեղեկություն է գալիս, թե այս ինչ տեղը մի քանի մահմեդական են սպանված։ Կենդանի մնացածները փախել են X կայարանը։

Մի խումբ ձիավորներով շտապում ենք X կայարանը։ Կայարանը գրեթե դատարկ է։ Գնացքների երթևեկությունը դադարած է, ծառայողներն ու առևտրականները ցրված։ Լոռու ձորերի երկարությամբ տոնալով փչում է նոյեմբերի ցուրտ քամին։ Կայարանի առջև, ճանապարհի մեջտեղը կանգնած է մի մենակ մարդ։

— Փախածներից մինն է,— բացատրում են կողքիս ձիավորները։

Դեռ բավական հեռու ենք։ Նա մեզ չի նկատել։ Երեսը հակառակ կողմը կանգնած է օտար, մենակ, դատարկ, ահռելի ձորում, թշնամու հողում։

Մի որոշ ապաստության վրա կանգ առանք, իջանք ձիերից։ Ես դիմեցի դեպի նրան։ Շտապում եմ մի բոպե առաջ ուրախացնել նրան, թե ապահով է ու գտնվում է իր եղբայրների մեջ, ուզում եմ մի բոպե առաջ վայելել այդ վայրկյանի գերազանց հաճույքը։ Մեր ձիանքերից մինը խրխնջաց։ Նա ետ նայեց, տեսավ դինված մարդկանց բազմությունը, տեսավ ինձ, որ գնում եմ ուղիղ իրեն վրա ու սարսափահար տեղիցը թռավ... Թռավ, բայց ուր գնա... Մոտավ կայարանի դռան տակն ու կուչ եկավ։ Ես վազեցի։

— Մի՛ վախիր, մի՛ վախիր...

Բայց նա արդեն բառաչում էր սարսափով լիքն աչքերը հառած երեսիս։

— Մի՛ վախիր... ինչո՞ւ ես վախենում... ամոթ չի՞...

Բայց նա իմ բառերը չէր լսում, բառաչում էր ավելի զարհուրելի, և երբ իրեն հասա, անխուսափելի օրհասը տեսնելով առաջին մի վայրկյան ուզեց մի բանով պաշտպանվել և, ասես թե հանկարծ հիշելով, ձեռքը տարածեց դեպի ջինջ կապույտ երկինքը ու սպառնալի աղաղակեց.

— Ալլա՛հ...

— Ալլահը կա հապա՞... Քանի որ նա կա՝ ընչի՞ց ես վախենում. վե՛ր կաց։

Ձեռքը բռնեցի, նա վեր կացավ։ Ինձ թվաց, թե դեռ լավ չէր հավատում, և կարծես ստուգելու համար մին էլ ցույց տվեց երկինքը։

— Ալլահ վար... (Ասված կա)։

— Մի՛ վախիր, արի՛, ինձ հետ արի։

Նա սառած, դողալով գալիս էր իմ կողքին։ Հանկարծ փղձկաց ու սկսեց լաց լինել։

— Ինչո՞ւ ես լաց լինում. ումի՞ց ես վախենում... Դու մեր ղոնաղն ես... մեր ախպերն ես...

— Ախը չէ՞ որ ալլահ կա էնտեղ...

— Կա, կա. մի՛ վախենար...

Ես նկատեցի, թե ինչպես ավելի սկսեց նա դողալ, երբ մոտեցանք մեր ձիավորներին։ Երբ հասանք՝ նրանց էլ ցույց տվեց երկինքը։

— Ալլա՛հ...

Մի գյուղացի, որ ճանաչում էր սրան, առաջ եկավ. Բարով Բայրամ, ասավ ու սկսեց հանդիմանել.

— Այ մարդ, չես ամաչո՞ւմ, լաց ես ըլում։ Փառք աստծու՝ աղատվել ես՝ էլ ինչի՞ ես լաց ըլում. ամոթ չի՞։

— Ձեզ դուրբան, ես էլ ձեր ախպերն եմ...

— Իհարկե մեր ախպերն ես... Մի՛ վախենար, ուղի հետ գնա։

Ես ներս տարա նրան այն սենյակը, որ պատրաստել էին ինձ համար. ասի, որ ոչ ոք ներս չըմտնի, առանձին խոսելիք ունեմ հետը։

Տաք սենյակում վառարանի մեջ ճարճատում էր թեժ կրակը։

— Նստի՛, Բայրամ։

Նա նստեց կրակի դեմը թախտի վրա։ Ես նկատեցի, թե ինչքան էր ուժասպառ եղած։ Ուզեցի հաց բերել տամ ուտի, արգելք եղավ։

— Երկու օր է հաց չեմ կերել, բայց իշտահ չունեմ փակի. շատ եմ բեզարած... քունս է շատ տանում...

Եվ ընդարմացած թեքվում էր դեպի մութաքին։

— Մարդը չի կարող իմանալ, թե ինչ կա իր առջևը պահված,— սկսեց խոսել ասես ինքն իր հետ։— Պարսկաստանի խորքից վեր կացա եկա աշխատանք անեմ, տանեմ քյուփաթ պահեմ—էս պատահեց...

— Հանգստացի՛, Բայրամ, հանգստացի՛...

— Ամեն բան սուտ է, մենակ ալլահն է ճշմարի՛տ...

— Ճշմարիտ ես ասում։

— Ամենքս ալլահով մին ենք։

— Մին ենք,— կրկնեցի ես։

— Նա է քեզ ղրկել,— մրմնջաց վերջին անգամ։

Ես լռեցի։

Նա քնեց։ Ես նայում էի նրան և ինձ թվում էր, թե նա հանգստանում էր աստված հովանավորության տակ, որ ասես թե, նստում էր վերևի ջինջ կապույտից, իսկ ես նրանից պահապան էի կարգված, որ ոչ ոք չխանգարի Թայրամի հանգիստը։ Ես այն բոպեին զգում էի իմ պաշտոնի ամբողջ վեհությունը, և ոչ ոք չէր կարող խանգարել նրա հանգիստը։

ՈՒՐԱԽ ԳԻՇԵՐ

Ի՞նչքան ծիծաղեցին էն գիշեր...

Ամենքը գաղթականներ էին։ Նոր էին Թիֆլիզ հասել։ Զանոն էլ նրանց հետ էր։ Իր հոր փեշիցը բռնած նա անց էր կացել ձյունոտ սարերով, ամայի, ցուրտ դաշտերով, երկա՜ր-երկա՜ր ճանապարհ։

Նա չէր հասկանում, թե ինչու պատահեց էն ամենը, ինչ որ ինքը տեսավ. էն հրացանների ճայթյունը, էն աղաղակը։ էն ծուխն ու կրակը, էն փախուստը, որ փախչում էին ամենքը, ամենքը... Եվ չէր հասկանում, թե ինչպես եղավ, որ իր մայրիկը կորավ էն ժամանակ։

Հայրիկը փախցրեց իրեն ու իր փոքրիկ եղբորը՝ Սուրիկին։ Ամբողջ ճանապարհին հայրիկը պինդ գրկած էր Սուրիկին, իսկ Զանոն բռնած էր փեշից։ Ճանապարհին հաճախ լաց էր լինում Սուրիկը։ Հայրիկն աշխատում էր նրան տաքացնել ու հանգստացնել.

— Սո՛ւ, Սուրիկ ջան, սո՛ւ։ Ամեն անգամ Զանոն էլ հոր եռևից կրկնում էր.— «Սո՛ւ, Սուրիկ ջան, սո՛ւ», ու միշտ էլ ավելացնում էր՝ «մայրիկը հիմի կըգա»։ Նա զարմանում էր, թե ի՞նչու հայրիկն էլ չի ասում՝ մայրիկը կըգա։ Հայրիկը հենց ասում էր՝ կըհասնենք Թիֆլիզ... կըհասնենք Թիֆլիզ...

Վերջապես հասան Թիֆլիզ։

Մի մութը, մռայլ ու ցեխ աշնան իրիկուն էր, որ հա-

սան Թիֆլիզ։ Զանոն մտածում էր, թե Թիֆլիզում կարոտած մարդիկ են սպասում իրենց, որ գեմ կըգան կըդրկեն, կըհամբուրեն. գուցե և մայրիկը նրանց մեջ լինի։ Ոչ ոք չերևաց։ Ամենքը անց էին կենում նրանց կողքով։ Մինչև անգամ նրանք, որ մոտենում մի բան էին տալի կամ հետաքրքրվում, այնպես էին վերաբերվում՝ ինչպես աղքատների։ Եվ այստեղ իմացավ նա առաջին անգամ, որ հայրիկն էլ հայրիկ չի, ոչ Սուրիկը՝ Սուրիկ, ոչ էլ ինքը՝ Զանո, այլ «գաղթականներ» են։ Հայրիկը ու մյուս գաղթականները դնացին ման եկան, շատ խնդրեցին սրան, նրան, ցույց տվին— երեխաների վրա, որ հոգնած էին, մրսում էին, երկար խընդրեցին, երկար սպասեցին, մինչև որ բերին էս տունը։

Միակ լամպը աղոտ լուսավորում էր հին մեծ սրահը մի ծայրից մյուսը։ Պատերի երկարությամբ տեղավորվել էին գաղթականները ընտանիք-ընտանիք։ Զանոյի հայրն էլ իր երկու երեխաների հետ մի անկյունում էր տեղավորվել։ Հայրիկը թինկը տված՝ ծոցն էր առել Սուրիկին, իսկ Զանոն մի գույլ կոշիկ գրկին նստած էր նրանց կողքին։ Ու էնպես լավ էր զգում Զանոն իրե՛ն... էլ չըկար էն երկյուղը, որ տեսան, էլ չրկային երկար, ցուրտ ճամփեքն ու սովը։ Տաք սենյակում հաց էր կերել, ու հոգնությունից հետո մի սխորժելի հանգիստ էր զգում։ Քունը տանում էր թեև, բայց նա մտածում էր էն փոքրիկ աղջկա վրա, որ ժպտալով իրեն նվիրեց զոդին դրած կոշիկները։ Ի՞նչ լավն էր էն աղջիկը, ի՞նչ լավն էին նրա ժպտուն, զվարթ աչքերը, ի՞նչ լավն էր էն տաք ապահով սենյակը, ի՞նչ լավն էր էն գիշերը...

Քաղաքում մի խումբ տիկիններ հնամաշ շորեր էին հավաքել ու բաժանում էին գաղթականներին։ Գաղթականներից ոմանք ստացած շորերն էին շինում, հարմարեցնում իրենց, ոմանք հաց էին ուտում, ոմանք ծխում ու զրույց անում։

Էն գիշեր ամենքն էլ լավ էին զգում իրենց, ամենքն էլ ուրախ էին։ Իրենցից որը ներս էր դալի՝ քաղաքացու մի որևէ շոր հագին կամ կրկնակոշիկները ոտներին, էս ու էն կողմից սրախոսում էին, ծիծաղում, ուրախանում։ Մանավանդ երբ ներս եկավ էն խեղկատակ Մարտոն։ Ամեն ծիծաղելի բան էլ հակառակի նման հենց նրա հետ էր պատահում։ Զըգիտես ում խելքին էր փչել, մի հին ցիլինդր էին տվել նրան ու մի թևը կտրած հովանոց։ Եվ ահա գաղթականների ուրախ ժամանակ դռնից ներս մտավ Մարտոյի հովանոցը, նրա ետևից ցիլինդրավոր Մարտոն։ Գաղթականները առաջին րոպեին շփոթվեցին, բայց տղաներից մինը շուտով ճանաչեց, վեր կացավ ցիլինդրին զարկեց, ցիլինդրը դետին թռավ, մի ուրիշն էլ հովանոցը փախցրեց, ու մեջտեղը կանգնեց էն մասխարա Մարտոն։

— Տո Մարտո, քու տունը չըքանդվի, տո մասխարա... Ամբողջ սրահը սկսեց հրճվալ։

— Տո զարկե՛ք էդ խեղկատակին։

Ու սկսեցին կատակով զարկել Մարտոյին, էս կողմը քարշ տալ, էն կողմը ձգել։ Ի՞նչ ծիծաղ ընկավ սրահը, ի՞նչ ծիծաղ։

Ծիծաղում էին ամենքը, ծիծաղում էր Զանոն։ Նա ուզեց Սուրիկին վեր կացնի, որ նա էլ ծիծաղի, բայց Սուրիկը քնած էր։ Զվարթ աղմուկի մեջ կամաց, կամաց իր քունն էլ տարավ ու նվերը կրծքին սեղմած քնեց Զանոն։

Քնեց, և ահա եկավ, երևաց մայրիկը։ Տխուր էր մայրիկը, բայց Զանոյին ժպտում էր։

— Մայրի՛կ, մայրի՛կ, տե՛ս էն աղջիկը տվեց ինձ... Էնպես լավ աղջիկ է՞ր, էնպես լավ աչքեր ունե՞ր, էնպես լավ մայրիկ ունե՞ր... մայրի՛կ... մայրի՛կ...

Ու երկար, երկար մայրիկի հետ էր Զանոն, երբ վեր թռավ մի գիլ ձևից։ Գաղթականներից մեկն էր, որ ընդհանուր աղմուկի մեջ երգ էր երգում։

«Սրև շողցեր ա պայծառ,
Նախշուն ա դաշտ, ճյուղն ու ծառ.
Հրդեհի վերև հավաքվեր՝
Կուճլվլրան մեր հավքեր,
Վայ լե՞, վայ լե՞...»։

Այնինչ մյուս անկյունում Մարտոն դեռ անում էր իր ծաղրածությունները ընդհանուր ծիծաղի մեջ։ Քնաթաթախ Զանոն չէր հասկանում, թե որտեղ էր գտնվում. բայց որտեղ էլ լիներ, նրան թվում էր, թե սրահը լիքն էր մուտիկներով, հարազատներով, ապրությունով ու լույսով, զվարթ քրքիջով, հայրիկի շնչով, մայրիկի ժպիտով, էն աղջկա պայծառ հայացքով, հայրենի երգի մրմունջով...

Ամենքն էլ էնտեղ էին, ամենքն էլ ուրախ... Եվ ի՞նչքան ծիծաղեցին էն գիշեր ամենքն էլ, ի՞նչքան ծիծաղեց Զանոն...

Ի՞նչ ուրախ գիշեր էր, ի՞նչ ուրախ գիշեր...

1913

ԾՂԻԻԴԸ

Ճրռռ՞... ճրռռ՞... ճռ՛ռճռ՛ռ, ճրռռ՞...

Լսե՞լ եք էն թախծալի ճրռռոցը, որ ծաղկի բուրմունքի ու կանաչի թարմության հետ խառնված հոսում է գարնան դաշտերի երևսով։

Իհարկե լսել եք, և ինչպե՞ս չեք լսել։ Դեռ ով գիտի, գուցե էդ ժամանակ մի ծառի կամ թփի տակ էլ պառկած խրախուսվել եք ջինջ, կապույտ երկնքի խորության մեջ, մաքուր, թեթև երաղների մեջ, իսկ չորս կողմերդ ծավալվում է համատարած՝ ճրռ՞ռ... ճրռ՞ռ...

Հանդի կամ դաշտի ծղրիդն է իր անթիվ ու անհամար ընկերներով։

Կամ գուցե հիշում եք էն մելամաղձոտ ճրռռացը, որ ամառվան իրիկունները մենակ ու միալար հնչում է գյուղական խաղաղ տան մի որեէ անկյունից։ Եվ ի՞նչ դյուրեկան թախիծ է բերում մարդու հոգուն, ի՞նչ խաղաղություն, ու մանկության օրերից, մանկության իրիկուններից, նրանցից էլ կարծես թե դենը՝ հեռավոր ու անորոշ հիշողություններ։

Էս էլ տան ծղրիդն է։ Ապրում է տաք անկյուններում, սովորաբար բուխարու կողքին կամ վառարանի ետևը, մի որևէ փոքրիկ ճեղքում։ Դիշերները իր թաքստից դուրս է գալիս, հացի, պանրի և ուրիշ ուտելիքների փշրանքներ է որոնում, նրանով ապրում ու երգում ամբողջ տարին։ Նրա

տան մեջ լինելն ու երգելը մեր տատերը բախտի նշան էին համարում։

Աշխարհում որ, բախտ է էս տեսակ երգիչ ունենալ տանը։

Հին հույները ծղրիդներին բռնոտում, ածում էին փոքրիկ վանդակներն ու կախում իրենց լուսամուտների շրջանակներին, որ երգեն։

Եվ, օրական մի թերթ սալաթ ստանալով, դերությանն հետ հեշտ հաշտվում են ծղրիդներն ու երգում, ու ավելի էլ շատ են ապրում, քան ազատ ժամանակը, երբ ենթակա են հազար ու մի փորձանքի։

Մի մեծ միջատագետ, որ և մեծ բանաստեղծ է միաժամանակ, ասում է՝ ես ծղրիդին հանձնելքով կրդնեի գարնան վերածնության երգիչների գլուխը։

Եվ սրանով՝ միջատ սոխակը քիչ է մնում խլի թռչուն սոխակի փառքը։

Բայց դուք գուցե էս էլ եք փորձել։ Ուզել եք գտնել, տեսնել մեր փոքրիկ ու նշանավոր երգչին ու չեք կարողացել։ Առաջիդ երդում է, ձենի վրա գնում ես, մին էլ տեսնում ես կտրեց ու սկսեց հեռվից։ Էն կողմն ես գնում, հանկարծ լսում ես, որ աջից է երդում, ձախից, ետևից...

Ջարմանում ես, շշկլում ես։ Ո՞րտեղ է վերջապես։

Ինչ ուզում ես՝ արա, ձենով չես գտնիլ նրան, շարունակ էսպես խաբոր կրտա։

Բայց ինչո՞ւմն է հնարքը, ո՞նց է անում, որ էսպես խաբան է տալիս։

Շատ հասարակ ու պարզ բան։

Երկու զոլզոլուն, սպիտակ, բարակ, շոր ու թափանցիկ արտաքին թևեր ունի, որոնց եզերքները իջնում են ցած։ Սրանց աջը միշտ գալիս է ձախի վրա, ու արմատում տակից մի կոշտ ունի։ Էդ կոշտից հինգ փայլուն ամուր երակներ են ձգվում, երկուսը վերև, երկուսը ներքև, իսկ հինգերորդը, որ շեկավուն է և փշփշոտ՝ մեջտեղով։

Հենց սա է էն գործիքը, որ թևին քսելով ձեն է հանում ու նվագում ծղրիդը։ Կրնտրնատցի (СМЫЧОК) պաշտոն է կատարում։

Ներքևի ձախ արտաքին թևն-էլ նույն կազմն ունի, միայն թե սրա կրնտրնատցն ու մյուս երակները վերևի կողմիցն են։ Էնպես որ վերևի ու ներքևի արտաքին թևերի երակները խաչաձև գալիս են իրար վրա։

Կրնտրնատցներն իրար քսելիս, նայած թե որ երակին կամ թևի ինչ տեղին է քսում — նրա համեմատ էլ ձենը փոխում է։

Սրա հետ միասին, եթե նվագելիս թևերը բարձրացնում է—ձենը ազատ ու լիահնչուն է տարածվում, իսկ եթե թևերն իջեցնում է, կպցնում է մարմնին, թևի ձենը խլանում է, էնպես, ինչպես նթե մատդ սեղմես զրնգող սամանին—ձենը խլանա։ Եվ նայած, թե որ կողմից ու ինչպես է թևը սեղմում, նրա համեմատ էլ մին թույլ է գալիս ճրռռոցի ձենը, մին ուժեղ, մին զվարթ, մին ճնշված, մին էս կողմից, մին էն։

Դրա համար էլ ձենը լսում եք, բայց չեք կարողանում նրան գտնել։

Նրան գտնելու համար պիտի գտնեք նրա բույնը։ Գրեթե միշտ իր բնումն է կամ բնի առաջը, ու չի հեռանում։

Ահա, տեսե՛ք, բնից դուրս հանած նրա սև գլուխը, դես ու դեն է շարժվում երկար շոշափուկները, որ մենք բեղեր ենք ասում։ Իմացավ՝ մոտենում ենք — շտապով ետ ետ գնաց, ներս մտավ, թաքնվեց։ Էլ դուրս չի գալ։ Բայց ես գիտեմ նրան դուրս բերելու ձևը։ Էսպես դեպքերում, երեխա ժամանակ, շոփ էինք առնում, կոխում ծղրիդի՝ մատնաչափ երկարություն ունեցող՝ բույնը, խառնում ու ետ հանում։ Էլ չէինք իմանում, զարմացած թե զարհուրած, ծղրիդը շշկլած դուրս էր գալիս ու դես դեն ընկնում։ Իսկ եթե նորից ներս էր մտնում, կամ իսկի դուրս չէր գալիս, ավելի հիմնավոր բան գիտեինք — ջուր էինք լցնում նրա փոքրիկ բույնը, կամ տունը։ Էս անգամ արդեն ուզեր-չուզեր մեր երգիչը դուրս էր գալիս արևի տակ։

Տունը ջրով լցվեց։

Տուն որ ասում եմ—հանաք չիմանաք։ Ես չեմ եղել նրա տանը, բայց հայտնի միջատագետների ասելով, ծղրիդի տունը թե մաքրության, թե գեղեցկության և թե առողջապահության

կողմից ավելի լավն է ու հարմար, քան մարդկանցից շատ շատերի տները։

Տեղն ընտրում է արեգունի ու ջրփոխ մի կանաչ տեղ։ արևոտ, առողջ ու դիրքը գեղեցիկ։ Բնի մուտքի վրա սովորաբար կախված է լինում մի փունջ խոտ կամ ծաղիկ, որ համ դուրը ծածկի շար աչքերից, համ հովանի լինի շոգի դեմ։ Մուտքի առաջ փոքրիկ ավլած բակը։

Ինչպես մուտքը, էնպես էլ ներսը—սենյակը, պարզ, մաքուր ու չոր։ Իսկ ներսի սենյակի պատերը կոկ ու հղկած, դեռ սենյակում էլ պահարան։ Ու միշտ էլ քանի կենդանի է ու ապրում է իր բնում, աշխատում է ավելի ու ավելի դեղեցկացնի, կատարելագործի։ Եվ իր ցեղակից—ուղղաթիռների մեջ մենակ ինքն է, որ էսպես բույն է շինում իր համար, նրա ապակյաց կյանքի, մշտական բնակության համար։ Համ բակ, համ նախասենյակ, համ սենյակ, համ պահարան։

Ասացեք խնդրեմ, ի՞նչով է տանից պակաս։ Ինքն էլ համ հիանալի նվագում է, համ էսպես տուն է շինում. ինչո՞վ է մարդուց պակաս։ Գլխին էլ որ լավ մտիկ անեք, պատավ մարդի գլխի նման է։ Երևի էդ շնորհքի ու էդ դլխի պատճառով էս տեսակ մի ավանդություն էլ կա։ Ասում է. «Ծղրիդը մի ժամանակով մարդ է եղել։ Շատ ուրախ ու կյանքը սիրող մարդ է եղել։ Աստծուն խնդրել է, որ իրեն հավիտենական կյանք տա, բայց մոռացել է հավիտենական կյանք խնդրելիս էն էլ խնդրի, որ միշտ ջահել մնա։ Աստված նրա կիսատ խնդիրքը կատարել է։ Էս մարդն ապրել է, ծերացել, ծերացել, էնքան ծերացել, կորացել, չորացել ու կուզ եկել, փոքրացել, որ վերջը ծղրիդ է դարձել»։

Ինչպես բոլոր արտիստ մարդիկ—ծղրիդն էլ ատում է ամբոխը և սիրում է մենակությունը։ Մենակ ապրում է իր գեղեցիկ տանը ու շատ էլ ծույլ է, ինչպես առհասարակ երգիչները։ Մայիսը գալիս է թե չէ—տուն ու տեղը սաքքում է թե չէ—սկսում է երգել։ Եվ միշտ իր շեմքում։ Իրիկնապահերին դուրս է գալիս վերջալույսի դիմաց կամ խաղաղ լուսնյակ գիշերները լուսնի լուսի տակ, իր մաքուր շեմքում նվագում, կամ ինչպես ընդունված է ասել՝ երգում—ճը՞ռռ... ճը՞ռռ...

Սկզբում երգում է իրեն համար, փառաբանում է գարնան գիշերների գեղեցկությունը, նոր կյանքի քաղցրությունը։ Մի քիչ հետո սկսում է սեր երգել ու քնքշալով կանչել իր դրկից հարևանուհուն՝ տան առջևը կախած ծաղկի կամ խոտի փնջի տակ գտնվող մաքուր բակում—լուսնյակի լուսի տակ ժամանակ անցկացնելու։

Հարևանուհին երգել չգիտի ու երբեք չի երգում, սակայն սիրում է երգը, մանավանդ երբ երգում իրեն են գովում ու կանչում։ Լսում է երգչին, և լսում է իր առաջին ծնկներով, ու էդ ձենի վրա գալիս է հրավերքին։

Գալիս է, գուրգուրում, գգվում են իրար, սիրում են իրար, սիրելով էլ իրար հետ կապում են իրենց կյանքը։ Բայց շատ կարճատև ու դժբախտ է լինում առհասարակ նրանց էդ բարեկամությունը։ Մի տասը տեսակցությունից հետո հաճախ մեռնում է մեր ուժասպառ երգիչը։ Էն էլ է պատահում, որ էս ամենից հետո իր նախկին ընկերուհին է վրեն հարձակվում, ծեծում, ծվատում, ոտում, դեն շպրտելով անբախտ երգչի փալաս դարձած ջութակը։ Էն ջութակը, որ էնքան սրտառուչ եղանակներ էր նվագել իրեն համար։

Եթե կերպարանափոխության շրջանումն է պատահում, որ ծղրիդը կորցնի իր մարմնի որևէ մասը, նորից պոկված անդամը դուրս է գալի, ինչպես բույսի կտրած ճյուղը դուրս գա։

Տան ծղրիդը իր ապահով տեղը, իր տաք անկյունում սովորաբար երկար է ապրում, իսկ հանդինը ենթակա է հազար ու մի փորձանքի։ Քարաթռթռ կա, մողես կա, մեղու կա, վերջապես էն շարաճրճի ծառերը կան, որ անդադար թռչկոտում են չորս կողմը, մին էլ տեսար մինը մոտակա թփի վրից պը՞ժժ զարկեց, կտցեց մեր տկար երգչին ու տարավ շամփրեց մամխի թփի փշերին—իրեն համար ձմեռվա պաշար։

Բայց եթե դրանից էլ ազատվի—բնությունից ո՞ւր պիտի փախչի։

Հասնում են աշնան ցրտերը։ Հոկտեմբերյան մի ցուրտ օր էլ, վերջին անգամ իր շեմքի առաջ, աշնան սառը վերջաբաստի դեմ, երգում է ծղրիդն իր վերջին երգն ու քնում հավիտենական քնով։ Սառը քամին շորացած խոտերով ու թառամած ծաղիկներով ծածկում է նրա անհայտ գերեզմանը, իսկ մի քիչ հետո, անհետ թաղում է ձյունի տակ ու վրեն սուլում է ձմռան բուրը—վա՜ւ... ո՜ւ... էսպես է բնության կարգը։ Մնվեց, ապրեց ու մեռավ, ետեից թողնելով իր սերունդը — 300—600 ծղրիդ, ինչպես ասում են գիտնականները։

Մարիկ ծղրիդը էսքան ձու է ածել մի էն տեսակ հարմար ու ապահով տեղ, որ համ վտանգից ու փորձանքից ազատ լինեն ձվանը, համ էլ, երբ ձագերը դուրս գան, հենց տեղն ու տեղը կերակուր լինի նրանց համար։

Զարմանում են գիտնականները, թե ո՞րտեղից է ծղրիդին էսքան խելք ու բանականություն, որ առաջուց ամեն բան հոգում է իր ձագերի համար։ Չէ որ ինքը՝ ծղրիդը երբեք ոչ մեր է տեսնում, ոչ ձագ, որ սովորած լինի, փորձով գիտենա։ Երբ որ գարնանը ձվից աշխարհը է դուրս գալիս—մերն արդեն մեռած է լինում անցյալ աշնանը, ինքն էլ երբ ձու է ածում—դրանից հետո մնանում է նույն աշնանը, ու չի տեսնում, թե էն ձվից ինչ է դուրս գալիս եկող գարնանը։ Հապա ինչպես է, որ ամեն բան հասկանում է. նախատեսում ու հոգում։ Եվ դրան մի պատասխան են տալի, թե դա կյանքի, բնության անգիտակից թելադրությունն է, բնազդն է, ինստինկտն է։

Բայց ով գիտի, մի՞թե չի կարող պատահել, որ բացի բնազդից ուրիշ ընդունակություն էլ ունենա մեր փոքրիկ երգիչը, օրինակ՝ գիտակցություն, դատողություն։ Հեշտ կարող է պատահել, որ էդպես լինի, թեև ինքը բնազդն արդեն շատ մեծ բան է, և շատ կենդանիների մեջ ավելի է զարգացած, քան թե մարդու մեջ։

Ահա էսպես հոգում է ծղրիդն իր ապագա սերունդի համար, ապահովում է նրա ծնունդն ու ապրուստը և նոր գարունքին հայտնվում են նրա ձագերը։ Նորելուկ ձագերը ձվից դուրս գալուց հետո չորս անգամ իրենց կաշին ու կերպարանքը փոխում են ու չորրորդ կերպարանափոխությանը դուրս են գալիս կատարյալ ծղրիդներ։ Անմիջապես իրենց բնակարանի հոգսն են քաշում, իրար հետ կռվում են ծնողական օջախին տիրելու համար, որն էս կռվում մնանում է անժամանակ, որը տիրում է, մյուսներն էլ գնում են իրենց աշխատանքով նոր բնակարան են շինում, և դարձյալ նույն կապույտ, ժպտուն երկնքի տակ, նոր կանաչ ծաղկոտ դաշտերի մեջ խնդալով ու թռչալով շարունակվում է նույն կյանքն ու նույն երգը—ճը՜՝՝ռռ... ճը՜ռռ...

Կարծես թե ոչինչ չի փոխվել։

ԳԵԼԸ

1

Խորն աշունքին Լոռու սարերով անցկենալիս մի գյուղում մութը վրա հասավ։ Հյուր ընկա Անդրիաս քեռու տանը, որ մի հին ու փորձված հովիվ էր։

Սարերում սովորություն կա, որ տեսան մեկի տունը հյուր եկավ՝ հարևանները կըհավաքվեն եկվորի գլխին, կըհետաքրքրվեն, հարց ու փորձ կանեն՝ իմանան ի՞նչ կա, ի՞նչ չըկա աշխարքում։ Սվ ահա հետզհետե գյուղացիք հավաքվեցին Անդրիաս քեռու օթախը։

Տան տերը բուխարին թեժ արավ, մենք էլ ով ինչպես ուզեց, տեղավորվեցինք լեն ու արձակ տափաների վրա ու սկսեցինք զրույց անել։

Էս խոսակցության միջոցին գյուղի շներն սկսեցին անհանգիստ հաչել ու ոռնալ։

— Գել է,— միաբերան բացականչեցին գյուղացիք։

— Ընչի՞ց եք իմանում,— հարցրի ես։

— Գիլահաչ են տալի, աղա։

— Գիլա՞հաչը ո՞րն է։ Մի՞թե շները միշտ մի տեսակ չէն հաչում։

— Չէ, աղա, գիլի վրա ուրիշ տեսակ են հաչում, մարդի վրա ուրիշ։ Մարդկանցից էլ՝ գողի վրա ուրիշ տեսակ են հաչում, անցորդի վրա՝ ուրիշ։ Խմրի վրա ուրիշ տեսակ են հաչում, կենդու մարդի վրա՝ ուրիշ...

Հենց էս խոսքի մեջն էինք, որ մի հրացան տրաքեց, շնե-

ի հաչոցը սաստկացավ ու միաժամանակ մի աղմուկ բարձրացավ։

— Հասեք հեյ՛... տարա՛վ, տարա՛վ, հե՛յ...

Գյուղացիք դուրս թափեցին։

2

Գյուղիցը դուրս գիշերվա մթնում լսվում էր խուլ աղմուկ։

Ես մենակ էի մնացել։ Տան կնանիքն էին միայն դռան առջև հավաքված վաշ ու վիշ անում։ Միջների պառավն անիծում էր.

— Վո՛ւյ, անտեր մնաս դու, անտեր։

Ու մրմնջում էր «Գիլկապի» աղոթքը։

«Ալալոս,
Գալալոս,
Գելը կապեմ երկու բրթով,
Երկու բրթով, երկու մատով,
Աստվածածնա քաղցր կաթով,
Սուրբ Սարգսի ձիու ձարով,
Նահատակաց կարմիր քարով։
Գիլի ճամփեն մոլոր անեմ,
Գիլի ատամը խրմոր անեմ,
Ոտները թուլ,
Ականջը խուլ...»։

Ու կրկնում էր.

— Վո՛ւյ, անտեր մնաս դու, անտեր...

— Էն ի՞նչ է, նանի,— հարցրի ես, թեև համոզված էի, որ գել էր։

— Գել է, որդի, գել։ Ոչխարը սարից դեղն են բերել— ետևիցն եկել է։

3

Վերջապես խառն ի խուռն բարձր-ցարձր խոսքով ու ծիծաղելով եկան գյուղացիք։

— Աղա, բա որ ասի՞նք։

— Ուրեմն գե՞լ էր։

Ինձ պատասխան տալու փոխարեն առաջ բերին մի թխադեմ 17—18 տարեկան պատանու։

— Այ տղա, Սիմոն, էդ ո՞նց էլավ։

— Այ տղա, դե էն ա ոչխարը բերում էի տուն անեմ։ Բերի գեղին մոտեցրի, մին էլ տեսնեմ ոչխարը գես ու գեն խախալ խախալ է անում. շունն էլ հա է անում, թե ոչխարի մեջն ընկնի։ Հենց էս ժամանակը շները թիթի տակիցը մի գիլի վեր կալան ու ետևիցը լարվեցին։

— Հասի՛ հա հասի՛, բռնի՛ հա բռնի...

Մին էլ տեսնեմ ոչխարը կտրիան էլավ ու փախս առավ։ Ետ մտիկ տամ, որ մի անտեր գել էլ մի ոչխարի բռնել է, հետը կողք կողքի ընկել ու պոչով ետևիցը քշում է, ոչխարն էլ հետը չափ ընկած գնում է, ոնց որ հարսանիքի ձիավոր ըլի...

— Հա՞յ հա հա՞յ... շուռ եկա դեսը։ Թվանքը որ տրաքեց, սա ոչխարը թող արավ փախավ։

— Անտերը ոչխարի միջին տապ արած է էլիլ հա՛,— նկատեց քեռի Անդրեասն ու դարձավ դեպի ինձ.

— Էդպես է դրանց սովորությունն, ա՛դաս էդ ու որձ գնում են։ Մինը ոչխարիցը մոտիկ տապ է անում կամ եթե աջողեցնում է՝ հենց ոչխարի միջին է տապ անում, մյուսը գալիս է երևութք ըլում, խաբսը տալիս, շանն ու շրջանին առնում փախչում։ Տապ արած ընկերը ետևիցն էս խառնակ ժամանակը ոչխարը տանում է։ Շատ անգամ էլ ոչխարը տանում է պահում ու ետ գալիս ընկերին օգնություն։ Ուստա շրջանը փախած գիլի ետևից դնալ չի, գիտի որ ետևուց վտանգ կա պատրաստած։

— Սա էլ է լավ ժամ եկել,— գովեցի ես պատանի հովվին,— կարողացել է գիլի բերանից անփորձանք ազատել ոչխարը։

— Գիլի բերանից անփորձանք ոչխար ազատելն ինչպես կլինի, աղա,— խոսեց պատանին։— Գելը տեսավ, որ ոչխարը ձեռիցը գնում է, մինչև իմ հասնելը մի ոխելում ոչխարի գմակը պոկեց տարավ։

— Հա՛, էդպես է,— գարձյալ մեջ մտավ տանտերս։— Գելը ոչխարին հասավ թե չէ, եթե տանելու հնար չըկա, դմակին կըտա ու մի տալումը դմակը կըպոկի։

— Տավարին էլ հասավ թե չէ՝ բողազիցը կըբռնի, քեռի Անդրիաս,— մեջ մտավ մի տավարած։

— Տավարին էնքան էլ հեշտ չի,— պատասխանեց քեռի Անդրիասը։— Տավարիցը մինը գոռաց թե չէ, ամբողջ տավարը հասկանում է բանն ընչումն է, որովհետև գելի գոռացնելն ուրիշ տեսակ է. իսկույն բոլորը հավաքվում են, բամակ քամակի տալիս ու պոչները դեմ անում, կանգնում...

— Տավարը հեշտ է շաղվում, քեռի Անդրիաս, ու հեշտ էլ գիլի փայ է դառնում։ Էն, ինչ ձի՛ն է անում գիլի հետ, ոչ մի անասուն չի անիլ։

Ձին գիլի հոտն առավ թե չէ, ականջները սրում է, փրռռացնում, փռնչացնում ու ձեռաց բոլոր ձիերը հավաքվում են մի տեղ։ Մադիանները իրենց քուռակները մեջտեղն են առնում ու նրանց շրջապատում կանգնում, երեսները դեպի նէրս, բամակները դեպի դուրս—գելերի կողմն արած՝ քացիները պատրաստի։ Ու ասես հեռու տանի. թե մի գել մոտեցավ։ Բայց կռվում գիլի համար ամենավտանգավորը որձ ձին է։ Որձ ձին մադիանների հետ շրջանի մեջ չի մնում։ Բաշը թափ տալով ու փռռացնելով կատաղի պտըտվում է շրջանի չորս կողմը, հարձակվում է գելերի վրա ու առաջն ընկած գելին տրորում, չարդում առաջի ոտներով կամ քացու մի զարկով փռում գետին։

Եթե մադիանը մենակ է, քուռակը դոշի տակն է առնում ու կանգնում։

Մենակ ձիու էս կողմն էն կողմն է թռչում գելը ու հանկարծ վրա է թռչում բողազիցը բռնում կամ մի զարկով փորը պատռում։ Երբեմն քնթիցն էլ է բռնում, շունչը կտրացնում։ Երբեմն էլ ձիու առաջն է ընկնում ու փախսը տալիս— իբրև թե վախենում է. ձին էլ դունչը տնկած ետևիցն է ընկնում, իբրև թե հալածում է։ Հանկարծ ետ է դառնում ու բռնում։

— Էդ հո էշն է,— խոսեց քեռի Անդրիասը։— Գելն էշի

հետ խաղում է, խաղում, ու ականջներն իրեն քաշում, առաջը փախս հարում։ Էշն ընկնում է ետևիցը, իբրև թե հալածում է։ Էսպես հեռացնում է, հասցնում մի ապահով տեղ ու ետ դառնում ուտում... Դրա համար էլ, ասում են՝ «Իշի գերեզմանը գիլի փորն է»։

— Ոչխարն էլ է գիլի ետևիցն ընկնում.— նկատեց մի ուրիշը։

— Հենց գելն էլ էդ երկուսին—իշին ու ոչխարին—ամենից շատ է սիրում։

— Իսկ ամենից քիչ մոտենում է խոզին ու գոմշին։

— Բա իծի՞ն։

— Պա՜, իծի բանը ծիծաղ է։ Խամ գելն իծին բռնած ժամանակը՝ էծը էնպես է ճղրղում, որ գելը թող է անում, փախչում։

— Բայց մի՞թե գելն էդքան անվախ ու համարձակ մոտենում է գյուղին,— հարց տվի ես։

— Գելը, երբ որ կուշտ է, շատ վախկոտ կենդանի է, աղա,— պատասխանեց քեռի Անդրիասը։ Բայց հիմի սկսվում է գիլի դժար ժամանակը։ Ձմեռը գալիս է, անտառի որսը դժարանում է, ապրանքը սարից ցած է գալիս — տուն է մտնում։ Գիլի ապրուստը կտրվում է։ Սովը որ նեղացնի՝ գեղ էլ կրմտնի, դեռ տուն էլ։ Սովի ձեռիցը ձմեռը գալիս է շեմքիցը շուն է տանում լափում։ Մուկն է որսում։ Ծառի փթռակ է ուտում, իր լակտան է ուտում... Դե սովն է պատճառն էլի, որ ձմեռը միանում են, բոլուկ են (ոհմակ) կազմում, որ ուժեղ լինեն, միասին հարձակվեն...

Ձմեռը դեռ էլի մեզանում, մեր սարերում, մեր անտառներում մի բան է ճարվում, նապաստակներ են կամ ուրիշ մանր-մոնր կենդանիներ։ Վերջապես եղնիկների ու եղջերուների ետևից են ընկնում, քշում են դեպի սառած գետերը։ Տանում են սառույցի վրա ճղատում—ու վրա են հասնում խեղդում, ուտում։ Բայց էն ինչ դաշտ տեղերն են, որ դրանք էլ չկան, գելը սովից ավելի համարձակ ու վտանգավոր է դառնում։ Շատ անգամ կատաղում է։ Ու դաշտ տեղերը մարդկանց վրա էլ է հարձակվում ու վնասում։

— Տղեք, դե խոսքն էստեղ ինձ տվեք,— էն կողմից խոսեց Շորագյալցի Ավոն ու սկսեց իր պատմությունը։

— Մեզանում, դաշտ տեղերում, գելը շատ ավելի վտանգավոր է, քան սար տեղերում։ Մեզանում գելերը ձմեռվան դիշերը գալիս են գեղի մեջը ման գալիս։ Շներին պահում ենք, որ չտանեն—չուտեն։ Ձմեռները մեզանում շատ վտանգավոր է մենակ ճանապարհորդելը. մանավանդ, եթե մութն էլ վրա հասավ։ Այ ձեզ պատմեմ իմ գլխին եկած մի դեպք։

Միրան անունով մի եղն ունեինք։ Մի ձմեռ էս եզը կորավ։ Ախպերս ինձ ղրկեց ման գալու։ Ես էլ էսպես 16—17 տարեկան ջահել տղա եմ։ Գնացի գեղի շորս կողմը ման ենա ման—չըկա։ Գոմահանդ ունենք, էնքան էլ գեղիցը հեռու չի։ Ասի՝ եզը սովոր է, կարելի է էդ կողմն ըլի գնացած։ Գնացի էդ գոմահանդը։ Գնացի, էս գոմը նայեցի, էն գոմը նայեցի, վերջը տեսնեմ՝ դրուստ որ եզը մի գոմումն է։ Եզը դուրս արի. դուրս գամ տեսնեմ արդեն մութն ընկնելու վրա է։ Սիրտս մի ահ ընկավ։ Տեսնում եմ, որ լուսով չեմ կարող գեղը հասնեմ։ Մտածում եմ՝ գնա՞մ-չըգնա՞մ։

Ի՞նչ անեմ...

Չորս կողմս ամայի ձյունապատ դաշտ, շեն չըկա, ձեն չըկա. ձեռիս էլ մի ճիպոտ ու մի դանակ։

Ի՞նչ պետք է անեմ։ Աստծու անունը տվի, եզն առաջն արի քշեցի։ Մի քիչ տեղ անց էի կացել. հանկարծ իրիկվան էն դառը քամու հետ մի տխուր ձեն ընկավ ականջովս։ Կանգնեցի, ականջ դրի...

Տեսնեմ գիլի ոռնոց է.— ո՜ռ՜ւ...

Ո՜ւ... էս ոռնոցին միացավ ամբողջ խումբը ու սարսափով լցվեց դաշտը։ Մտիկ տամ՝ որ աջ կողմս, հեռվում, մթան մեջ, ջուխտ-ջուխտ վառված ճրագների մի բազմություն է շարժվում... էլ ի՞նչ. ձեռաց հասկացա, որ գելերի աչքերն են—սոված բոլուկ է... Եզը ետ տվի դեպի գոմերն ու քշում եմ, ո՜նց եմ քշում, վազում եմ, ո՜նց եմ վազում... Ետ նայեմ, որ արդեն գալիս են։ Եզը թող արի փախա, ընկա գոմը։ Ընկա գոմը, բարձրացա սների գլխներին գերանների վրա դատարկ տեղեր են լինում է՛...

— Հա՛, իմանում ենք, կոնդերի վրա։

— Հա՛, էդ կոնդերից մեկին վեր էլա։ Դեռ չէի տեղավորվել—մին էլ տեսնեմ եզանս գոռոցը բարձրացավ։ Զարմանք բան է, թե էնքան տարածությունը ինչպես մի երկու բոպեումը կտրեցին ու հասան։

— Վա՛հ, գելի ոտին ինչը կըհասնի,— խոսեց քեռի Անդրիասը։— էն սարի գլխիցը որ մի բան նկատեց՝ մին էլ կտեսնես կողքիդ դուրս եկավ։ Դրա համար են ասում էլի, թե՝ գելն ապրելիլ է։

— Հա՛, էն էի ասում,— շարունակեց Շորա-գյալցի Ավոն։— Եզանս գոռոցը բարձրացավ ու իսկույն էլ կտրեց, խոխոռցն ընկավ։ Խոխոռցն էլ կտրեց, միայն գելերի ժընդ-ժընգոցն եմ լսում, ու լսում եմ՝ ոնց են լափում...

Վա՛յ Միրան ջա...— դուրս թռավ սրտիցս։ Բայց ի՞նչ Միրանի ժամանակն է։ Ես իմ գլուխն եմ լաց ըլում։ Մոռացում եմ թե՝ էս լավ էր, եզնովը կըլեն մինչև կըլուսանա, կամ կըկշտանան ու կգնան, կամ, ասում եմ, ինձ չեն գտնիլ... Դու մի ասիլ՝ սոված գելի բոլո՞ւմ, ես հիսուն ասեմ, դու հարյուր իմացի, ձեռաց հախռել են, ու մին էլ տեսնեմ, մութը գոմը լցվեցին էն ջուխտ-ջուխտ վառած ճրագները ռեխները բաց արած...

Գտան...

Եկել են լցվել, ներքևից ադամ-ադամ ինձ են մոտիկ անում։ Ես էլ չորացել եմ մնացել վերանին կպած։ Մոտիկ արին մոտիկ ու թող արին դուրս գնացին։

Շունչս ետ եկավ։ Ասի՝ «Փառքդ շատ ըլի ասատծ էս էր՝ ազատվեցի...»։

Դեռ ասատծու փառքը ըներանումս, մին էլ ինչ եմ լսում։ Իմ ուղղությամբ վերևից կատուրը քանդում են, չանգերովը հողը ետ են տալի։ Արդեն լսում եմ չանգերը կոճերին է դիպչում...

Սառը քրտինքը վրա ավեց... Շտապեցի տեղս փոխեցի, անցկացա մյուս կոնդի վրա կուչ եկա։

Բաց արին, կոնը վեր կալան, տեսան տակին չըկամ։

Էլի եկան ներքև։ Մոտիկ արին, որ մյուս կոնդի վրա եմ. ետ դուրս գնացին։ Հիմի էս կոնդի վերևից սկսեցին քանդել կտուրը։

Դարձյալ տեղս փոխեցի։ Էսպեսով՝ նրանք քանդելով, ես տեղս փոխելով՝ հասանք վերջին կոնդին։

Էլ ո՞ւր գնամ։

Սկան մոտիկ արին կատաղած ու ետ գնացին։ Քանդում են, ո՞նց են քանդում...

Մի սուր դանակ ունեի գրպանումս, հանեցի, բաց արի ու ձեռիս բռնած՝ մտքումս աղոթք եմ անում.— Տեր աստված, դու ինձ ազատ անես էս նեղ տեղիցը...

Իսկ հենց անդամիս վերևը քանդում են։ Քանդելով հասան կոճերին։ Հասան կոճերին, մինը կոճերի արանքովթաթը մեկնեց, որ կոնը ետ քաշի։ Թաթը բռնեցի ու էն սուր դանակովը զըռթ կտրեցի... Թաթը փախցրեց, ոռնալով, կոնձկոնձալով ետ դնաց, ու կտերն իրարով անցան։ Իմացել էի, որ գելերի մինը եթե վիրավորվեց, մյուսները վրա են թափում նրան ուտում։ Ասի՝ ուրեմն սրան ուտում են։ Հիմի սպասում եմ, որ սրան կուտեն կըպրծնեն ետ կդան։ Էլի դանակս ձեռիս պատրաստ սպասում եմ։

Ականջս ձենի է։ Գիշերվա մի ժամին, ոնց որ երազում՝ մի բարակ ձեն եմ լսում.

— Ավո հե՞յ...

Ինձ են կանչում...

— Տեր աստված, մի՞թե ինձ են կանչում... Մի՞թե ախպերս է... Մի՞թե մերոնք են... Գոմից ձեն եմ տալիս, գոռում եմ.

— Աղանիկ հե՞յ... Էտեղ ե՞մ... Գոմերումն ե՞մ... Գելերն ինձ ուտում ե՞ն... Օգնեցեք հե՞յ...

Էլի նրանք ձեն են տալի, իմ ձենը չեն լսում, թեև ես շարունակ կանչում եմ։

Մին էլ տեսնեմ հրացանները տրաքեցին, ետևից լսվեցին հեռացող գելերի կոզկանձն ու մարդկանց հարայհրոցը։ Պարզ ճանաչեցի ախպորս ու մեր գեղացի տղերանց ամեն մեկի ձենը։

— Ավո հե՞յ...

— Էստեղ ե՞մ... էստեղ ե՞մ... կենդանի ե՞մ...

Ներս թափեցին գոմը։

— Փառք քեզ աստած... Փառք քեզ աստած,— ուրախացած ու զարմացած կանչում են ամենքը։ Ցած եկա վերջին կոնդի վրից։ Ախպորս դիրկն ընկա ու սկսեցի հեկեկալ։

— Էլ լաց մի ըլի, գնա աստծուն փառք տուր, որ էսօր նոր մորից ծնվեցիր,— կանչեցին էս ու էն կողմից ու ինձ չուրս բերին գուռը, ուր թափված էին մեր Միրան եզան ոսկորները։

Դեռ լուսը չէր բացվել։

Հեռվից լսվում էր գելերի ոռնացը։

4

Շորագյալցի Ավոյի պատմությունից հետո խոսքն ընկավ գիլի ոհմակի վրա։

Երկար ձմեռներն ու ապրուստի դժվարությունն են պատճառը, որ գելերը ոհմակ են կազմում, բացատրում էին գյուղացիք։

Ոռնում են, իրար կանչում, հավաքվում, միանում, որ ուժեղ լինեն թե՛ հարձակվելու և թե՛ հարձակման դիմադրելու ժամանակ։

Ամեն մինը մենակ հեշտ կրհաղթվի ձմեռն ու կրկորչի, քան թե խմբով, և ամեն մինը չի կարող էն ճանկել, ինչ որ կրճանկի խումբը։

Եվ հավաքվում են հիսունով, հարյուրով, մի քանի հարյուրով։

Սարսափելի բան է գիլի ոհմակը։ մանավանդ էդ լինում է ձմեռը, գիլի ամենաքաղցած ժամանակը, երբ շատ անգամ գելը քաղցից կատաղում է։ Էդ ժամանակ, ասում են, գելերը իրենք էլ են իրարից վախենում։ Երբ ոհմակով մի տեղ կանգնում են հանդստանալու՝ շրջան են կազմում ու էնպես են վեր թափում, որ իրար երես պահեն, չեն հավատում մեկմեկու։ Վախում են իրար ուտեն։ Բայց ոմանք էլ ասում են՝ նրա համար են էդպես անում, որ իրար տեսնեն ու հարկա-

վոր դեպքում իսկույն նշան տան իրարու, և իրրև թե բոլորը նայում են իրենց գլխավորին։

Գիլի համար մութը, ճամփի դժվարությունը, հեռավորությունը—ոչ մի նշանակություն չունեն։

Գելն էնքան արագավազ է, որ մի գիշերվա մեջ երեքչորս օրվա ձիու ճամփա կրկտրի։ Իսկ գիլի սրատեսության վրա էսպես մի զրույց կա ժողովրդի մեջ։

Ասում են։ Մի անգամ արծիվն ու գելը վեճի բռնվեցին, թե իրենցից ո՞րն է ավելի սրատես։ Գելն ասավ՝ մի ամպոտ օր ես սարի գլուխն ելա, ամպի միջով մտիկ արի տեսա՝ հեռու մի դաշտում մի սև ցելի (վարած հողի) մեջ մի ակոսում մի սև գառն է նստած։

Արծիվն էլ թե՝ ես էլ երկնքի երեսն ելա, ներքև մտիկ արի, մի ծխնելուղի միջից տեսա կրակի վրա դրած մի պղինձ խուփը վրեն։ Խփան ճեղքիցը նայեցի, տեսա պղնձի միջին կաթը, կաթնի երեսին էլ մի սպիտակ մազ։

Էսքան արագավազ ու սրատես գազան է գելը։ Եվ էս ամենի հետ միասին՝ շատ խորամանկ։

Նա մինչև լավ չիմանա, որ հարձակումն ապահով է — չի հարձակվիլ։ Ուրիշ բան է, եթե սովից խելագար մի գել իրեն կորցրած գցի ափաշկարա վտանգի մեջ. բայց սովորաբար գելը շատ է զգույշ ու խորամանկ։

Մի գյուղացի էսպես պատմություն արավ։ Ասում էր. մի տարի թակարդ էի սարել։ Առավոտը վաղ վեր կացա գնացի տեսա մի գել է ընկել մեջը։ Միայն ոտիցն է ընկել ու ոտը փշրվել է, սառել է։ Վեր կալա թակարդիցը հանեցի, էն կողմ դցեցի։ Մինչև գյուխս կախ ես թակարդովն էի եղած, մին էլ տեսնեմ վեր կացավ կաղին տալով փախավ։ Հա՛յ հա հա՛յ, էլ ո՞րտեղ, իրեն տվեց անտառը։ Դու մի՛ ասիլ անտառը սըտամեռնուկ է աված եգիլ։

Գիլի ոհմակն էլ, ձմեռը ճամփա կտրելիս իրար ետևից է գնում—ծլլաշարուկ, ու միշտ ամենից ուժեղն ու փորձվածը առաջին է գնում։ Եվ սա երկու հարմարություն ունի նրանց համար։ Մին, որ առաջի գնացողները ձնի մեջ կոպար (շավիղ) են բաց անում, ետևից եկողների համար բաց-պատ-

բաստ ճամփա է լինում, մին էլ՝ որ ոչ ոք չի կարող իմանալ, թե իրենք քանիսն են եղել։ Եվ էդ է պատճառը, որ ոչ մի որսկան չի կարող ասել, թե էս ոհմակը, որ անցել է, քանի գել է եղել մեջը։

Ասված հեռու տանի, թե ոհմակի աչքովը մի որս ընկավ։ Ուրիշ գաղան լինի, թե ընտանի կենդանի, իսկույն շորս կողմից շրջապատում են ու էլ փրկություն չկա։ Իսկ կճղակավորներին, հատկապես եզնիկներին ու եղջերուներին, քշում են դեպի սառած գետերը, սառույցի վրա ճղատում ու վրա թափում կամ քշում են դեպի բարձր ժայռերը, ժայռերից թոցնում ու իջնում ներքև լափում։

Ոհմակը վտանգավոր է և մարդու համար։ Եթե բազմություն չեղավ՝ մի կամ երկու մարդից ոհմակը չի վախենալ, թեկուզ հրացան ունենան։ Մինչև անգամ հրացանն ավելի վտանգավոր է։ Հրացան արձակես թե չէ, իսկույն կըհարձակվին։ Հիմի կասեք՝ հապա ինչի՞ց է վախենում գելը։

Էս մասին պյուղացիք մի քանի պատմություն արին։

5

Գելը ոչ մի բանից էնպես չի վախենալ, ինչպես կրակից,— տուաջինը խոսեց իմ տանտերը, բեռի Անդրիասը։

Մեր կողմերը, դե դիտեք, որ գել շատ կա։ Էնպես տեղ ունենք. որ հենց գիլի բուն է, որ կա։ Մի մեծ ծմակ ունենք, Մոսկորա ծմակ ենք ասում։ Էդ ծմակումը մի թալա (անտառումը բաց տեղ, բացատ) կա։ Էդ թալումը էնքան գել կա, որ անունը դրել են Գիլի թալա։

Մի ամեռնամուտ իրիկուն սարի գոմերիցը տուն եմ գալիս։ Հակառակին էլ էս Ստեփան ուղես էլ հետս է. ինը-տասը տարեկան էրեխա է։ Որ նկանք էդ թալի դիմացը, մի շան ձեն ընկավ ականջովս։ Ասի՝ ով դիտի ոչխար են բերել էս կողմերը, շորանի շունն է հաչում։ Ձեն տվի.

— Ա՛յ շորան, հե՞յ...

Էս ձեն տալն էր, էլի։

Շան հաչոցը կտրեց ու, ձեզ մատաղ, մին էլ էն տեսնեմ

էդ ծմակիցը գիլի տուտը բաց էլավ, ականները բաց տրած գալիս են, ո՞նց են գալիս, աչքերս սևացան...

Դու մի՛ ասիլ, հաչողը գել է եղել։ Ախր չէ որ գելը սոնում է, բայց շանից հաչել է սովորում ու շատ անգամ էլ հաչում է։

Ձեռիս թվանք կա, միայն լավ գիտեմ, որ գիլի բոլոքի վրա թվանք չեն գցիլ. թվանք գցես թե չէ՝ ավելի կատաղի վրա կըտան։

Էրեխեն թե՝ ապի, էն ի՞նչ են։

Ասի՝ վախիլ մի՛, քեզ մատաղ, գոչող կաց։ Արի օգնի էս խաչամն (շոր ատերն) ու շոր ճյուղերը հավաքենք։ Չորս կողմից խաչամն ու շոր ճյուղերը ձեռաց կիտեցի ու կրակ տվի, բոցը ծուլ էլավ։ Մոսկորա ծմակը լիքը փետ։ Մինչև սրանց հասնելը վրա տվի, թեժ արի. բոցն էլավ ծառերի ծերը։

Սրանք եկել են, ի՞նչքան են եկել. շորս կողմերս կտրել են, հեռու կանգնոտել ժընգժընգում են ու տուտմերը չիկչիկացնում։ Աչքերը ծմակի մթոն մեջ քուրքրի (ծծումբի) բոցի նման ջուխտ ջուխտ վառվում են։ Մարդ մտիկ տալիս զարվանդում է։

Էրեխեն կպել է փեշիցս ու լաց է լինում։

— Վախիլ մի՛, Ստեփան ջան, վախիլ մի՛, ես էստեղ եմ... լաց մի՛ ըլի, որ լաց ըլես—կը գան մեզ կուտեն...

Էրեխեն ձեռը փսրն է գցել ու փեշիցս կպած դողում է, ո՞նց է դողում...

Տեր ասված, ասում եմ, դու ազատես էս նեղ տեղիցը։ Ի՞նչ անեմ։ Հույսս դրել եմ կրակի վրա։ էն էլ փետը հատնում է, էրեխեն էլ փեշիցս պինդ բռնել է, թողնում չի մի քիչ հեռանամ, փետ բերեմ կրակին վրա տամ։

Մոտիկ մի ցրցշորի ծառ կար։ Կրակը բռնեցի սրա տակը, սրա կողքին էլ մի կտրած ծառի շոր բլուղ կար, էն էլ քաշեցի վրեն, թեժացավ, ոնց թեժացավ, կարմիր լույսն ընկել է ամբողջ ձորը։

Դիմացի սարիցը շոբանները նկատում են, որ, ախպեր,

Էս ձորումը, էս ժամանակին, էս ի՞նչ կրակ պետք է լինի, որ քիչ է մնում ծմակը կրակի։

Մոտենում են, մոտենում ու ձեն են տալիս։

Ականջ դնեմ, որ էս մեր Շամիրի ձենն է։

Ուրախանաք, ինչ որ մենք ուրախացանք։

Ձեն տվի.

— Շամիր հե՞յ... գիլի բոլուկ է. չորս կողմս կտրել են... էրեխեն հետս է... օգնեցեք հե՞յ...

Հենց էս կանչելն էր։ Մի քանի չոբան իրար հետ ձեն տվին.

— Վախիլ մի՛ք, վախիլ մի՛ք, գալիս ենք հե՞յ...

Ու պարզ լսում ենք, ոնց են իրար ձեն տալիս շտապեցնում, ոնց են շներին կանչում։

— Թոբլան հե՞յ, Ղայթար հե՞յ, Ջամբոր հե՞յ, Ջալակ հե՞յ...

Շների կլանչոցը վեր էլավ ու մտավ ձորը։

Էստեղ էրեխեն նորից սկսեց հեկեկալ ու լաց ըլիլ։

— Վախիլ մի՛, Ստեփան ջան, վախիլ մի՛, հրես կըգան։

— Տղե՛ք, էս մեր Շամբրին Թոբլան անունով մի դելխելդ շուն ուներ։ Մին էլ տեսա էս շան ձենը մոտիկ ծմակում ղընգաց։ Սրա եռևից մնացած շները, շների եռևից կրընկակոխ չոբանները։ Չորանների ղչրղումն ու շների հաչոցը ծմակը դրմբացնում է։ Մին էլ Ստեփանոս թե՝ ապի, գելերը փախչում են։

Ասավ, ու ուրախությունը խառնվեց սարսափին, սկսեց աղաղակել ու առաջն ընկած փեսի կոտր, քար, հող շպրտել դելերի եռևից։

Էլ գելն ո՞վ կըտա։ Ծմակի մթնումը կորան, գնացին։

Տղեքն եկան։

— Ա՛յ տղա, էս ի՞նչ բան էր։

— Բանն էլ որն է, ձեր տունը չըքանդվի, Հապա Էսպես, էսպես...

Էստեղից վեր կացանք գնացինք չոբանների մոտ, մինչև լուսացավ, առավոտը խմրով եկանք տուն։

Էս բանն, ախպեր, իմ գլուխն եկավ։ Կրակը մեզ աղատեց,— վերջացրեց խոսքը քեռի Անդրիասը։

6

— Ուստա Սարգիս, հիմի քո պատմությունն արա,— էս ու էն կողմից ձեն տվին գյուղացիք.— Շորագյալից գալիս ոնց էլա՞վ։

— Էլ ի՞նչ ասեմ, դե գիտեք էլի,— պատասխանեց ուստա Սարգիսը։

— Մենք գիտենք, ամա աղեն գիտի ոչ։

— Պա՛տմի, ուստա Սարգիս, պա՛տմի լսենք, տեսնենք Շորագյալի ճամփին քեզ հետ ի՞նչ է պատահել,— խընդրեցի ես։

Ուստա Սարգիսը կուռնաչի էր։ Թինկը տված չիբուխ էր քաշում, վրա նստեց ու սկսեց պատմությունը.

— Շորագյալի ճամփին պատահած պատմությունն էսպես է, աղա ջան։

Մի հացատակաս տարի վեր կացանք ես, դամբաշ (զուռնի ձեն պահող) Ակոփն ու դհոլչի (թմբկահար) Դավիթը մեր զուռնա դհոլը վեր կալանք, ասինք գնանք Շորագյալ գեղերը հարսանիքներ անենք, հացահատիկ հավաքենք բերենք ձմեռը կառավարվենք։

Դե գիտեք էլի, որ Շորագյալա հացը համ լավն է լինում, համ առատ, իսկ մեղանում, սարերում, սակավ է լինում, եղածն էլ շատ անգամ կարկուտը տանում է։

Գնացինք զուռնա ածելով, հարսանիք անելով գեղեղեղ ման եկանք։ Բավական ցորեն-գարի հավաքեցինք, մի ծանոթի պահ տվինք, մենք ետ ճամփա ընկանք դեպի մեր տները։

Գիտեմ ոչ Շորագյալ եղել եք թե չէ։ Հոտոմ անունով մի գեղ կա. էդ գեղիցը դուրս ենք եկել գալիս ենք դեպի Արթիկ։ Եկանք, ճամփին մութն ընկավ։ Մենկնահար ձյուն. ցուրտն էլ հո—թրի նման մարդի երես է կտրատում։ Ճամփեն էլ լավ չգիտենք։ Գնա թե պետք է հասնես Արթիկ։

Էս մեր Դավիթն առաջին էր գնում։ Մին էլ թե՝ տղեք եկեք. որ գեղը գտել եմ։

— Այ տղա, ո՞ւր է։

— Թե՝ հրեն ճրագները երևում են։

Մտիկ տանք տեսնենք, ճշմարիտ որ հեռվում շատ ճրագներ են երևում։ Միայն ես նկատում եմ, որ էս ճրագները ժամ են գալի, դես դեն են գնում։

Ասի՝ տղեք։

Թե՝ ինչ է։

Ասի՝ էս գեղ չի։ Մին, որ ձմեռը սրանց գեղերի տների դուռն ու կտուրը փակ, ճրագները չեն երևալ, մին էլ որ՝ էս ճրագները որ տեսնում եք՝ ման են գալի։

Թե՝ բա էս ի՞նչ են։

Ասի՝ գելեր են։ Գիլի բոլոմի բերան ենք ընկել, պատրաստվեցեք։ Ես լսել եմ, որ զուռնի ձենին գելը—էլ վախենում է թե ինչ,— մոտ չի գալի։ Զուռնա դհոլը սարքեցեք։ Էս խոսքումն ենք, տեսանք ճրագները մոտենում են, մթնումը, ձնոտ դաշտումը դես ու դեն վազում են, ցրվում են, ուզում են մեզ շրջապատեն։ Էնքա՞ն են, էնքան են, որ էլ հաշիվ չկա։

Ես ու Ակոփը զուռնեն զլեցինք, էս Դավիթն էլ դհոլը—դը՛մբ հա դը՛մբ, կես-փշերին, էս վերանա դաշտումը ածում ե՞նք։ Զուռնա դհոլի ձենը վեր էլավ թե չէ—էս գելերս, ոնց որ տեղն ու տեղը մեխես, մնացին իրենց տեղերը մեխված։

Մին էլ ոռնոց վեր քաշեցին, տեր աստված, ի՞նչ ոռնոց։ Զուռնի հետ ձեն ձենի են տվել, ոռնում են։

— Վայ ծիծա՞ղ,— էս ու էն կողմից բացականչեցին գյուղացիք։— Ուստա Սարգիս, լավ է ծիծաղներդ գալիս չէր։

— Այ տղա, ի՞նչ ծիծաղ կըգար, սիրտներս սևացել էր. դանակ տայիր՝ արյուն չէր կաթիլ։

— Եառ՞, եառ՞...

— Եառ մենք ճամփա ընկանք, սրանք էլ մեզ հետ։ Մենք ածելով գալիս ենք, սրանք էլ շո՞ւրջ կողմերս կտրած հեռու մթնումը ցինգիր-ցինգիր անելով գալիս են։ Կարծես պար են գալիս։ Գլուխներդ ինչ ցավեցնեմ. էսպես գնալով գիշերվա

մի ժամանակը առաջներս մի շան հաչոցի ձեն լսեցինք հեռու։ Էս հաչոցի վրա մի քանի շներ սկսեցին հաչել ու ոռնալ, ու մին էլ տեսնենք մոտիկ գեղի ճրագները դուռը դուրս եկան։ Մարդկանց ձենները հասնում է մեզ։

Ուրախությունից զուռնա դհոլի ձենն ավելի զլեցինք։

Քանի գեղին մոտենում ենք, գելերը ետ են ընկնում։ Վերջապես հասանք գեղին, սրանք ետ դառան, կորան։

Գեղացիք ճրագներով, աղմուկով առաջ եկան—մնացին զարմացած։ Տեսնում են՝ երկու զուռնաչի ու մի դհոլչի ածելով գալիս են ու հետները հարսանքավոր չկա։

— Այ ուստա, բա հարսանքավորնե՞րը որտեղ են։

Ասում ենք՝ հարսանքավորները ետ դառան գնացին։ Զուզեցին ձեր գեղը մտնեն։

— Էդ ո՞վ էին որ...

— Գելերը...

— Ո՞նց թե գելերը...

— Ախպեր, ասինք, պատմելու ժամանակը չի, ցրատաբ էլանք, մտնում ենք, մեզ մի տաք տուն տարեք, էնտեղ կպատմենք։

Տարան մի տաք օդա, բուխարին թեժ արին, հացը դրին առաջներս, գլխներիս հավաքվեցին էսպես, ինչպես որ մենք հավաքվել ենք, ու սկսեցինք պատմել։ Պատմում ենք ու ծիծաղում, պատմում ենք ու ծիծաղում։

Վերջն էլ իմանանք, որ էն գեղը չենք եկել, որտեղ գալիս էինք, ճամփեն կորցրել ենք—ընկել ենք Պարնի գեղ։

7

— Դուք հո կրակն ու զուռնեն եք ասում, բայց գելը մի բանից էլ է վախենում. թե իմանաք ընչի՞ց,— հարց տվեց օտարականը։

— Թոկից, ձեն տվին մի քանիսը։

— Ո՞նց թե թոկից,— զարմացան չըգիտեցողները։

— Հա՛, ճշմարիտ է, թոկը որ ետևիցդ քաշ տաս՝ գելը կվախենա, մոտ չի գալ,— Հաստատեց քեռի Անդրիասը։

— Ա՛յ տղա, թոկն ի՞նչ է, որ գելը թոկից վախենա։

— Ո՞վ գիտի, օձի տեղ է դնում ինչ է, ի՞նչ իմանաս։

— Մեր գեղումը Եղո անունով մի ջահել մարդ կար,— պատմեց Շորագյալցին։— Մի շատ սրտոտ ու քաջ մարդ։ Երեսին որ թուր բռնեիր՝ երեսը ետ չէր թեքիլ։ Ինքն էլ թրի-թվանքի հետ խաղացող մարդ էր։

Սրանից մի 4—5 տարի առաջ մի ձմեռ գործով գնում է մեր հարևան գյուղերը և մի քանի օր ուշանում։ Մի երեխա ուներ, շատ էր սիրում։ Մի իրիկուն լուր է առնում, թե բա՝ երեխեդ հիվանդ է, քեզ է ուզում։ Վեր է կենում, թե՝ պետք է գնամ։ Սրա առաջն են ընկնում, բռնում են, համոզում են, թե մութը գիշեր—հաղար ու մի չար փորձանք, հալալ ու մի գել ու գազան, սպասիր՝ ասում են, գիշերը լուսա ունի, կըլուսանա կըգնաս երեխիդ կտեսնես։ Սա պըպին է կանդնում թե՝ չէ որ չէ, հենց էս կես գիշերին պետք է գնամ, թուրը վրես, ձին տակիս, ի՞նչ պետք է պատահի։ Ինսանի թարսություն էլի։ Չեն կարում հաղթեն, կես-գիշերին ձի է նստում, ճամփա ընկնում։ Կիսաճամփին գելի բոլուկը սրան շրջապատում է։ Դու մի ասիլ հետը թոկ ունի, ինքն էլ փորձված, բանգետ մարդ է. թոկը երկար բաց է թողնում ու ձիու ետևիդ քաշ տալիս։ Գելերն էլ մոտ չեն դալիս, երկու կողմից թոկին մտիկ տալով վաղ են տալիս։ Էսպես բավական տեղ անց է կենում։ Մի տեղ, ո՞նց է լինում, ի՞նչ է լինում, թոկի ծերը ձեռքիցը դուրս է պրծնում ու վեր է ընկնում։ Սա ձին քշում է։ Մի քիչ տեղ գնում է, գելերը վրա են տալիս։ Թուրը հանում է հենց առաջին հասնողին տալիս... Դե գելերի սովորությունն էլ դիտեք էլի. մինը թե վիրավորվեց—մյուսները նրա վրա կըթափեն, կուտեն։ Էդպես էլ ձիավորին թող են անում, վրա են թափում էս վիրավորվածին։ Եղոս ձիուն մտրակում է, քշում, բավական տեղ քշած գնում է։ Գելերը վիրավորվածին լափում են պրծնում, ետ նորից ընկնում սրա ետևից։ Սա էլի թուրը ուզում է հանի, որ զարկի, քաշում է քաշում, դուրս չի գալի։ Տեսնում է՝ հասնում են իրար — հերսից պատյանը առամով կրծոտում է, ինչ անում է, չի անում՝ թուրը դուրս չի գալիս։ Դու մի ասի՝ գելին որ զարկել է,

առանց արյունը սրբելու տեղն է դրել, արյունոտ թուրը կպել է պատյանին, ամրացել։

Էլ ի՞նչ երկարացնեմ, գելերը վրա են տալի, իրեն էլ են ուտում, ձիուն էլ։

Մյուս օրը լուրն եկավ. գնացինք տեսանք արնոտ ձյունի վրա իր ոսկորներն էլ, ձիունն էլ, թուրն էլ, պատառոտած շորերն էլ թափված, ցրված դես ու դեն։

— Բա էն մարդին, որ գելերը կերել էին՝ ձեզ էդ բոլորն ո՞վ պատմեց,— հարցրեց մի գյուղացի։

— Հապա մարդուս խելքն ու փորձն ընչի՞ համար է,— պատասխանեց պատմողը։ Գնացինք տեսանք ձրնի պարզ հետքերը երևում են, որ կողմից է եկել ու որտեղ շրջապատել գելի բոլուկը. որտեղից է Եղոն սկսել թոկը քաշ տալ, մինչև որտեղ է քաշ տվել, որտեղ է ձեռքից ընկել։ Մի քիչ էլ գնացած է ու հետքերն իրար են խառնված, տակն ու վրա են եղած, ու թափված են գելի բուրդն ու ոսկորները։ Նրանցից բավական հեռու էլ իրեն ու ձիուն են կերել։ Թուրն էլ բերինք, տեսանք պատյանը մարդու ատամներով կրծոտած։ Քաշեցինք, քաշեցինք, չըկարացինք դուրս քաշել. ավինք վարպետին, քանդեց, հանեց. տեսնենք արյունոտ, կպած պատյանին։

— Ափսոս մարդ,— էս ու էն կողմից ափսոսացին գյուղացիք։— Ա՛յ թե ընչի համար են ասել, թե համբերությունը կյանք է։ Ասա, հեր օրհնածի մարդ, մի քիչ համբերի, լուսանա էլի...

8

— Տղե՛ք, հավատա գելիցն էլ վերը մնասակար գազան չինի, դուք ի՞նչ եք ասում,— խոսեց մի գյուղացի էս պատմությունից հետո։

— Էդպես էլ իմացած կենաք, որ չի լինիլ,— հաստատեց քեռի Անդրիասը ու դիմեց ինձ.

— Դու ի՞նչ կարծիքի ես, պարոն։

— Ես էլ էդ կարծիքին եմ,— պատասխանեցի ես։—

Արդեն գրքերից էլ հայտնի է, որ ոչ մի գազան գիլի չափ վնաս չի տալիս մարգուն։ Մանավանդ էն երկրներում, որտեղ գլխավորապես անասնապահությամբ են պարապում։ Ամեն մի տերության մեջ էլ ահագին վնաս է տալիս։ Միայն Ռուսաստան տարեկան մոտ մեկ միլիոն անասուն է փչացնում։

— Հապա ի՞նչպես է, որ տերությունները դրա մասին չեն մտածում, մի ճար անում,— խոսքս կտրեց մի գյուղացի։

— Ի՞նչպես չեն մտածում։ Տերություններ կան, որ առանձին վարձատրություն են տալիս գել սպանողներին։ Կանոնավոր կռվում են գիլի դեմ։ Դրա համար էլ էնպես տերություններ կան, որ մեջներն էլ գել չկա. օրինակ Անգլիան, Գերմանիան...

— Վա՜հ,— զարմանքից բացականչեցին գյուղացիք։— Ո՞նց թե... հիմի էդ երկիրներում էլ գել չկա՞։

— Չկա...

— Ա՛յ երկիր... Ապրանքդ ապատ բաց թող ու հանգիստ գնա քու գործին...

— Էնպես տերություն էլ կա,— շարունակեցի ես,— որ հաշվով գիտեն, թե քանի գել կա իրենց երկրում, չորսը թե հինգը...

— Էդ ի՞նչ բան է, ավելի զարմացան գյուղացիները,— մեկանում իսկի մարդի հաշիվը գիտեն ոչ, նրանք գելն էլ են հաշվել։

— Որ ասում ես գելը վերջացնում են, ի՞նչպես են անում վարժապետ,— հարցրեց մի ծերունի, որին Սահակ էին ասում։

— Զանազան միջոցներով, բի՛ձա Սահակ։ Ինչպես ասի՝ տերություններն առանձին վարձատրություն կամ պարգև են տալիս ամեն մի սպանած գիլի համար, որսկաններն էլ աշխատում են շատ գել սպանեն, որ շատ փող ստանան։ Մինչև անգամ կազմակերպված ընկերություններ կան, որ միայն գիլի որսի համար են։ Էնպես երկիր էլ կա, օրինակ Իսպանիան, որ ամբողջ տերությունը չի վարձատրում գել սպանողին— ժողովուրդն է վարձատրում։ Սպանողը գելը գցում է իշի կամ

ձիու վրա ու գեղե գեղ ման ածում, ապրանքատերերից փող է հավաքում։ Եվ ամենքն էլ ուրախությամբ տալիս են։

— Չէ՛ ես էդ չէի հարցնում, պարոն ջան, ես էն էի հարցնում թե ընչո՞վ են սպանում, ինչպես են կոտորում։

— Հա՛, էդ ես հարցնում։ Ասեմ, բիձա Սահակ, էդ էլ ասեմ։

— Իհարկե, հրացանով սպանելն ու թակարդով բռնելը արդեն դուք էլ գիտեք։ Բացի հրացանն ու թակարդը, էնպես տեղեր էլ կան, որ խորը փոսեր են փորում, օրինակ մի սաժեն ու կես խորությամբ, մի սաժեն էլ լայնությամբ։ Երեսը ցախ ու մախով ծածկում են, վրեն միս են դնում, շորս կողմն էլ դեռ ցած ցանկապատում, որ գելը թռչի, հանկարծ ընկնի մեջը։ Սրանով, իհարկե, չի կարելի շատ բան անել։

Էնպես տեղ էլ կա, որ ամբողջ հասարակություններով հավաքվում են, գնում են շրջապատում անտառի որոշ մասերը։ Որսկանները հրացանները ձեռներին պատրաստի երեք կողմը կտրում են, իսկ չորրորդ կողմից մի բազմություն անտառ է մտնում ու հրացան արձակելով, աղմկով, հարայ-հրոցով, շանով-բանով գազաններին քշում, բերում դցում որսկանների բերանը։ Էս էլ անտառում տեղերն է լինում, ու էս միջոցն էլ շի մեծ արդյունք տալիս։ Պատահում է, որ ահագին աղմուկից հետո մեջտեղը մի կամ երկու նապաստակ են հայտնվում կամ պատահում է, որ դուրս եկող գազանները անվնաս էլ փախչում, աղատվում են։ Շատ քիչ են սպանվում։

Ռուսաստանի ձնոտ գաշտերումն էլ մի ուրիշ տեսակ որս են անում։ Ձիով ընկնում են գիլի ետևից։ Մեկնահար ձյունի մեջ թաղվելով՝ գելը զոռով է վազում և շուտ էլ հոգնում է։ Ետևից հասնում են՝ հենց տեղնուտեղը դագաղակով սպանում։ Բայց ավելի շատ գիլին կոտորում են թույնով։ Սատկած ոչխարը մաշկում են, միսը շերտ-շերտ կտրատում, արանքները թույն են լցնում, ետ նորից մորթին վրեն քաշում ու տանում գիշերը հանդերում վեր դցում։ Սոված գելը—գալիս են ուտում ու տեղն ու տեղը կոտորվում։

9

— Վարժապետ, ճշմարիտ է, գելը գազան է ու մարդուն էլ շատ է վնաս տալիս, միայն էդ որ պատմեցիր, ախպեր, ինչ թաքցնեմ, մեզքս եկավ,— խոսեց ծերունի Սահակը։

— Հետո գիլին մեղք կըգա՞ն որ, Սահակ բիձա,— ձեն տվեց մի հովիվ։

— Ընչի՞, գելը շունչ կենդանի չի՞,— սկսեց վիճել Սահակ բիձեն։

— Գելն ի՞նչ է որ,— մեր շան պես անասուն էլի,— խոսքն առավ քեռի Անդրիասը։— Ուղիղ շան պես։ Որ էն շունն էլ չոլերը գցես՝ անտեր, սոված թողնես, հալածես— կըվայրենանա, կդառնա գիլի պես մի բան, էլի։ Ինչպես որ էն սոված, վայրենի գելն էլ, որ բերես կուշտ պահես, պահպանես, խնամես, կընտելանա, կըդառնա մեր շան պես տանու կենդանի։

— Հետո գելը տանու կըլնի՞ որ, քեռի Անդրիաս։

— Լա՞վ։ Շատ է պատահել։ Գիլի ճուտը բռնի բեր տանու արա, տես կըլինի թե չէ։

— Հապա ինչո՞ւ է ասած՝ գելն ինչքան էլ տանու անես—էլի աչքը անտառումը կըլինի։

Էդ էլ է ճշմարիտ։ Մի սերնդի, երկու սերնդի աչքն անտառումը կըլինի, բայց կամաց կամաց անտառը կըմոռանա—կըդառնա տանու կենդանի շան նման։ Եվ հենց ինքն էլ շան ցեղից է, էլի։ Գելն էլ կազմված է էնպես—ինչպես շունը։ Գելն էլ շան պես տարին մի անգամ 3—10, բայց սովորաբար 4—6 ձագ է ծնում, ու ինչպես շունն իրեն համար բույն է փորում կամ մի անկյուն է գտնում ու էնտեղ ծնում ու մեծացնում ձագերը, էնպես էլ գելը։ Կամ գետնում բույն է փորում, էնտեղ ծնում ու մեծացնում իր ձագերը կամ ընկած ծառի փչակում, կամ մերում, կամ հենց ծմակի խիտ տեղերը։ Նա էլ է էնպես սիրում իր ձագերին, ինչպես ամեն մի ծնող կենդանի։ Մի վտանգի հոտ առնելիս բերանով՝ շատ զգույշ ու քնքուշ իրենց տեղից տանում է ավելի ապահով

տեղ։ Եվ երբեք իր բնի մոտերքում որս չի անիլ ու վնաս չի տալ, որ կասկած չըբերի էդ տեղի վրա։

Գիլի էգն էլ, ինչպես շանը, ավելի քնքուշ է, դունչն ավելի սուր ու պոչն ավելի բարակ։ Գելն էլ պատահում է, որ նույնպես կատաղում է, ինչպես շունը։ Եվ կատաղած գիլից շատ են վախենում ու սարսափով հեռու են փախչում բոլոր վայրենի կենդանիները։

Վերջապես գելն էլ շան պես 12—15 տարի է ապրում։ Ավելի երկար շատ քչերն են ապրում, ինչպես և շների մեջ։

Մի խոսքով միևնույն կենդանիներն են. մինը խնամքի տակ ու կուշտ, մյուսը վայրենի, հալածված ու սոված։ Իսկ սովը...

Սովն ինչ ասես կանի, ձեզ մատաղ։ Սովը մարդին էլ կըդարձնի սարսափելի, ո՞ւր մնաց էն անտառի գիլին,— խոսքը վերջացրեց քեռի Անդրիասը։

— Ճշմարիտ ես ասում, քեռի Անդրիաս,— ասացի ես։ Մեղանում սովորություն չըկա, միայն լուսավոր երկրներում շատ է պատահում, որ մարդիկ վայրենի անասուններին ու գազաններին բռնում են, բերում են տանու անում. փորձում են, վարժեցնում են, բան են սովորեցնում։ Մինը երկու գիլի ճուտ էր բռնել բերել տանը պահել։ Կարճ ժամանակում էնքան էին ընտանիացել, որ ազատ տան մեջն ամենքի հետ էլ խաղ էին անում ու շան հետ միասին միևնույն բնումը քնում։ Մի քանի ժամանակից ետը մինը սատկում է։ Ասում է՝ մենակ մնացածը քանի ժամանակ էր էլ ոչ խաղ էր անում, ոչ կարգին կերակուր էր ուտում։ Տխուր վեր ընկած դարդ էր անում ու ոռնում։ Իհարկե հետզհետե մոռացավ ու էլ ետ աշխուժացավ։ Մեծացավ, ու ասում է, մեզ հետ էնքան էր կապվել, որ որտեղ նստում էինք, միշտ կողքներիս վեր էր ընկնում և ուրիշներին չէր թողնում, որ մեզ մոտենան։ Ասում է՝ վախեցինք մարդու վնաս տա, շղթայով կապեցինք, իսկ մի քանի ժամանակից ետը մի շրջիկ գազանանոցի վրա ծախեցինք։ Անցավ դրանից մի տարի ու կես թե երկու տարի, լավ չի միտս, էդ գազանանոցին պատահեցի մի քաղաքում։ Հետաքրքվեցի, ներս մտա, ասի տեսնեմ իմ գելը կենդանի է

թե չէ։ Ներս մտա հարցրի։ Դու մի ասիլ գելը մոտիկ վանդակում պառկած է եղել։ Զենս իմացավ թե չէ՝ վեր թռավ, ճանաչեց, ուրախացավ, ու ի՞նչ էր անում, ի՞նչ էր անում, չեր կարող երեսակայել։ Աշխատում էր ինձ մոռնալ, պոչը շարժելով, ծմբրալով դես ու դեն է ընկնում վանդակում։ Ինձ էլ թվաց թե մի մոտիկ, հարազատ արարածի հանդիպեցի, ձ դարս դալիս մի տեսակ ցավ զգացի։

Ինչ կասեք սրան։ Ահա պատահած գեպքը։ Եվ հշմարիտ է ասում քեռի Անդրիասը. գելն էլ շան պես մի արարած է, միայն վայրենի, հալածված ու սոված։

Արդեն գիշերվա կեսն էր, որ մեր ղրույցը վերջացրինք։ Շները դուրսը հաչում ու երկար ու ձիգ ոռնում էին։

— Անտերը գեղի վրա պատա է գալիս. հեռանում չի։ Հանդստանալու չի, մինչև էս գիշեր մի վնաս չլսես Տզե՛ր, զդույշ կացեք, ապրանք չդտաք ռեխը, ասավ քեռի Անդրիասը դյուղացիներին, որ բարի գիշեր ասելով, իրար եռեից դուրս էին գնում մեր օթախից։ Դուրսը նրանցից մինը ձրկար ու գիլ հե՛յ հե՛յ ազազակեց, ու դյուղի շները հեռու թաղերից սկսած ավելի կատաղի սկսեցին հաչել ու ոռնալ խմբովին։

Սոված գելը պարավում էր դյուղի չորս կողմը։

1914

ԻՄ ԸՆԿԵՐ ՆԵՍՈՆ

I

Մի խումբ ընկեր երեխաներ էինք։ Գյուղացի երեխաներ։ Ոչ ուսումնարան կար, ոչ դաս, ոչ դասատիրակություն. ազատ էինք միանգամայն ու խաղում էինք. ի՞նչքան էինք խաղում։ Ու ո՞նց էինք իրար սիրում, ո՞նց էինք իրար սավորել։ Սոված ժամանակներս էլ՝ վազում էինք հացի տաշտիցը մի կտոր հաց առնում, պանրի կարասիցը մի կտոր պանիր ու էլ եռ շտապում իրար մոտ։ Իրիկունները էլ հավաքվում էինք, ծիծաղ բաներ ասում կամ հեքիաթ պատմում։

Մի ընկեր ունեինք, անունը Նեսո։ Է՞նքան հեքիաթ գիտեր. է՞նքան հեքիաթ գիտեր, ոչ ծեր ուներ, ոչ տուտը։

Ամառվա լուսնյակ գիշերները մեր դռան գերանների վրա շուրջը-բոլոր նստում էինք, հիացած լսում Նեսոյի՝ ոգեորությունից գեղեցկացած դեմքին։ Ու պատմում էր նա Հորի փերիներից, Զմբուխտ Ղուշից, Լիս ու Մութ աշխարհից...

— Նեսո ջան, Նեսո, հիմի էլ Կուր Թագավորի հեքիաթը պատմի, հիմի էլ Թութի ղուշի հեքիաթը պատմի... հիմի էլ Քաշալի ու Քոսակի հեքիաթը պատմի...

II

Էնպես պատահեց, որ մեր դյուղում ուսումնարան բաց արին։ Ինձ ուսումնարան տվին, ինձ հետ էլ մի քանի-երեսուն երեխա։ Ամեն մի երեխի համար տարեկան երեք ռուբ-

լի վարձ էին ուզում. էս պատճառով էլ գյուղի երեխաներից շատերը, որոնց ծնողները չէին կարող տարեկան երեք ռուբլի տան, մնացին դուրսը։ Դուրսը մնացին և իմ խաղընկերների մեծ մասը, նրանց հետ և Նեսոն։

Առաջին անգամն էր, որ մեզ ջոկում էին իրարից և ջոկում էին ուսումնարանն ու վարժապետը, առաջին անգամն էր, որ մենք պլխի էինք ընկնում, թե մենս ունևոր ենք, մյուս աղքատ։ Դեռ էսօր էլ ականջումս է Նեսոյի լացի ձենը, որ իրենց դռանը թավալ գալով գոռում էր, թե՝ ես էլ եմ ուզում ուսումնարան գնամ։ Եվ դեռ ականջումս է նրա հոր ձենը, որ կանչում էր.— «Կա ո՞չ, կա ո՞չ, ա՛յ ոչ ու փուչ, ո՞րտեղից տամ... Երեք մանեթ ունենամ՝ կըտանեմ հացի կըտամ, կըբերեմ կուտեք, հրես մնացել եք սոված Նատաշ. կա ո՛չ...»։

Նեսոն ու մյուս դուրսը մնացած ընկերներս գալիս էին ուսումնարանի շեմքում հավաքվում՝ մեզ մտիկ անում, բայց վարժապետը թող չէր անում, էնտեղից քշում էր։ Դասամիջոցներին խաղի ժամանակ էլ չէր թողնում մեզ հետ խաղան, ասում էր՝ կողմնակի, օտար երեխաները իրավունք չունեն աշակերտների խաղերին խառնվելու։ Եվ նրանք գնում էին ուսումնարանի պատի տակին նստոտում՝ սպասում էին մինչև դասներս վերջանար, որ միասին գնայինք։

Էսպեսով էլ առաջին տարին ուսումնարանում ես մոտեցա նոր ընկերների հետ, Նեսոն ու մյուս դուրսը մնացած ընկերներս էլ տարվա վերջը էլ չէին գալիս ուսումնարանի պատի տակին նստոտում ու սպասում ինձ։

III

Մի երկու տարի մեր գյուղի ուսումնարանումը կարդալուց ետը հերս ինձ տարավ մեր կողմերի գյուղաքաղաքը, էնտեղի ուսումնարանը տվավ։ Էս արդեն բոլորովին ուրիշ աշխարք էր։ Տները սիպտակ, կարմիր տանիքներով, ժողովուրդը զուգված ու մաքուր. ուսումնարանն էլ մեծ ու գեղեցիկ, ու ոչ թե մի վարժապետ, ինչպես մեր գյուղումն էր,

այլ մի քանի վարժապետ ու մինչև անգամ վարժուհիներ. որ նորություն էր ինձ համար ու զարմանալի, սակայն շատ գուրեկան։

Տեղին ու դպրոցին վայել իմ հագուստն էլ փոխեցին. Քաղաքացի աշակերտի շորեր հագա, գեղեցիկ, մաքուր,- ու էսպես կերպարանափոխված էլ տոների արձակուրդին վերադարձա մեր գյուղը։

Նեսոն ու հին ընկերներս իմացել էին, թե վերադարձել եմ, առավոտից եկել էին մեր տան շորս կողմը պտըտվում էին ու պատատակերիցը ծիկրակում։ Դուրս եկա, գնացի մոտեցա։ Չեմ հիշում ինչպես բարևեցինք. միայն էն է միտս մնացել, որ նրանք էլ առաջվա նման մտերիմ ու համարձակ չէին ինձ հետ։ Ամենից առաջ ուշադրություն դարձրին իմ շորերի վրա։ Նեսոն մինչև անգամ իմ աշակերտական կարճ բլուզն ակնարկելով մի սրախոսություն արավ՝ մյուսներին դառնալով ասավ.— «Կասենաս պոչատ կաշաղակ ըլի...»։ Նրանք ծիծաղեցին։ Ես վշտացա, բայց բան չասացի։ Ապա թե Նեսոն ձեռքը քաշեց իմ շորերին, նրան հետևեցին մյուսները ու զարմանք հայտնեցին, թե ինչ փափուկ են։ Էդ օրը առաջին անգամն էր, որ ես էլ ուշք դարձրի նրանց շորերի վրա ու նկատեցի, թե ինչքան էին կեղտոտ ու պատռտված։ Եվ առհասարակ մեր ամբողջ գյուղը թվաց աղքատ ու կեղտոտ։

IV

Երկու տարուց հետո էստեղից էլ հերս ինձ տարավ մեծ քաղաք, ավելի մեծ ուսումնարան։ Երբ էնտեղից էլ վերադարձա՝ իմ առաջվա խաղընկերները, որ արդեն մեծ տղերք էին, եկան բարևեցին մյուս գյուղացիների նման ու նրանց հետ էլ հեռու կանգնեցին։ Միայն մի անգամ, խոսակցության մեջ, երբ ուրիշները ինձ հարցնում էին, թե հիշո՞ւմ եմ արդյոք, որ միասին կարդում էինք, Նեսոն էլ հարցրեց թե՝ «Միտդ ա, որ ձեր դռան գերանների վրա գիշերները հեքիաթ էինք ասում...»։

— Վա՛, ի՞նչպես չի միտս... Միթե կրմոռանամ։ Էդ իմ մանկության ամենալավ հիշողություններից մինն է,— պատասխանեցի ես։

Նեսոն կարծես թե զարթացավ, բայց դարձյալ մնաց ծարար ու հեռու։

Իսկ քաղաք վերադառնալու ժամանակ էնպես պատահեց, որ Նեսոյի հոր ձին վարձեցինք, որ ես հեծնեմ։ Նեսոն էլ պետք է ձիու հետ ոտով գար։ Եվ երբ ճանապարհ ընկանք, ես ձիու վրա, իսկ Նեսոն իր ցնցոտիներով ու պճեղները զուրս պրծած տրեխներով ոտով՝ ձիու նստից— ինձ սաստիկ ծանր եկավ։ Մի քիչ անցնելուց հետո հայտնեցի, թե ես ոտով գնալն ավելի եմ սիրում քան ձիով, ու ձիուց իջա։ Եվ այնուհետև կամ միասին ոտով էինք գնում, կամ հերթով էինք ձի նստում։ Նեսոն սրա վրա զարմացավ, բայց նկատեցի, որ նա իմ արածը վերագրում է ոչ թե իմ բարեսրտությանն ու ընկերական զգացմունքին, այլ իմ հիմարությանը։ Ես վշտացա իմ մեջը, բայց ավելի մեծ վիշտը առաջս էր։

Ճանապարհին մի տեղ իջանք, հանգստացանք ու հաց կերանք։ Ճմերուկ ուտելու ժամանակ իմ գրպանի դանակը հանեցի տվի Նեսոյին, որ ճմերուկը կարի։ Ճամփա ընկնելու ժամանակ դանակը կորավ։ Նեսոն պնդում էր, թե դանակն ինձ տված դրպանս դրի։ Ես թեև լավ գիտեի, որ ինձ չէր տվել, բայց գրպաններս ման նկա ու ճանապարհ ընկանք։ Ես պարզ նկատեցի, որ նա իմ դանակը տակով արավ, վերջն էլ ուրիշները տեսել էին ձեռին։ Եվ ճանապարհ ընկանք սրտումս մի ծանր վիշտ, որ ոչ թե դանակս եմ կորցնում, այլ մի ուրիշ շատ թանկագին բան, որ Նեսոյի համար անհասկանալի էր... Իսկ երբ տեղ հասանք ու Նեսոն պետք է ետ վերադառնար՝ ես նրա համար մի ալխալուղացու առա նվիրեցի, բացի ձիու վարձը, իսկ նա ինձ դիմեց թե՝ «Բա մի չայի փող չես բաշխո՞ւմ...»։

Ես սաստիկ ամաչեցի ու էդ չայի փողն էլ տվի։ Բայց նրանից հետո, ամեն անգամ, երբ հիշում էի իմ մանկության օրերը և էն երեկոները, գերանների վրա, լուսնյակի տակ նստած մեր խումբը ու Նեսոյին՝ հեքիաթ ասելիս— ամեն անգամ սիրտս լցվում էր ցավով ու ափսոսանքով։

V

— Նեսոն աղքատ է... Նեսոն տգետ է... Նեսոն լցված է գյուղական չարքաշ կյանքի դառնություններով... Նա էլ եթե ուսում առներ, կրթվեր, ապահով լիներ՝ լավ մարդ կլիներ, գուցե ինձանից էլ շատ ավելի լավը...

Այժմ Նեսոյին հիշելիս միշտ էսպես եմ մտածում ու աշխատում եմ արդարացնեմ, լավացնեմ ու նորից սիրեմ Էնպես, ինչպես սիրում էի էն ժամանակ։ Ուզում եմ՝ շարունակ էն խաղաղ, աստղալի լուսնյակ գիշերների Նեսոյի պատկերը լինի աչքիս առաջին, մտքիս միջին, բայց չի լինում, էլ չի լինում. իսկույն ևեթ առաջ է գալիս մի ուրիշ պատկեր, մի շատ ամոթալի ու ցավալի պատկեր։

Երբ արդեն ուսումս ավարտած, կյանք մտած մարդ էի, մի անգամ էլ մեր գյուղը վերադարձա ու գնացի գյուղամիջ։ Գյուղամիջում ժողովուրդը հավաքված աղմկում էր ու աղաղակում, իսկ մեջտեղը մի հաշից թոկով կապած ու գլխակոր կանգնած էր Նեսոն։

Իմ հարցին պատասխանեցին, թե՝ գողություն է արել։ Ես միջամտեցի, բաց թողնել տվի նրան։ Բայց իմ երևակայության մեջ նա դեռ մնում է թեժ արևի տակ թոկերով հաշիցը կապած ու գլխակոր, իսկ շուրջն աղմկում է մեր գյուղը։

Մեր գյուղում սովորական բան է և՛ գողությունը, և՛ հաշիցը կապելը, և՛ ծեծելը, բայց էս մինը իմ աչքի առաջից ու մտքի միջից չի հեռանում, ինչպես չի հեռանում և էն մանուկ Նեսոն, լուսնյակ գիշերներին գերանների վրա նստած հեքիաթ ասող Նեսոն, մաքուր ու միամիտ Նեսոն, իմ մանկության ընկեր Նեսոն։

ՇՈՒՆԸ

ՄԻ ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Լավ չեմ հիշում՝ երկրորդ թե երրորդ դասարանի աշակերտ էի։ Մի ուսումնական ծանոթ ունեինք. օտար մարդ էր, մեն մեն մեր տունն էր գալիս, մերոնց հետ զրույց էր անում։

Էդ ժամանակները մի էսպես դեպք պատահեց։ Մեր հարևան հովիվը մեռավ։ Նա երեք շուն ուներ։ Էս երեք շունը իրենց տիրոջ մեռնելուց մի քանի օր առաջ անդադար ոռնում էին էնքան ողբալի ու չարագուշակ, որ ահ ու սարսափ էին գցել ամենքի սիրտը։

— Չո՜ռ, չո՜ռ, ձեր գլուխն ուտեք, քա՞նի ոռնաք,— կանչում էր երիտասարդ հովվի մերն ու փեռով զարկում շներին։ Շները կլանչկլանչելով էս կողմ, էն կողմ էին փախչում ու մի քանի րոպեից հետո նորից սկսում ոռնալ։ Հովիվը մեռավ թե չէ՝ բոլոր հարևանները բացականչեցին.

— Ա՛յ, ընչի համար էին շները ոռնում...

Սրանից հետո մի անգամ էլ, երբ մեր ուսումնական ծանոթն եկել էր զրույց անելու, մերոնք էս դեպքը պատմեցին ու խոսքն ընկավ շան վրա։

— Օ՜, չըգիտեք թե ինչ տեսակ կենդանի է շունը,— լուրջ ու խորհրդավոր խոսեց նա։

— Շունը իմաստուն կենդանի է,—նույն լրջությամբ վրա բերեց հերս։

— Այո՛, շունը իմաստուն կենդանի է, լավ է նկատել ժողովուրդը,— ասավ մեր ծանոթն ու ավելացրեց.

— Մարդկային կյանքի զարգացումը շան վրա է հիմնված։ Մենք դեռ լավ չըգիտենք, թե ինչ կենդանի է շունը, դեռ լավ չի ուսումնասիրված շունը...

Հակառակի նման իմ դասն էլ շունն էր, ու լավ էլ անգիր էի արել։ Իսկույն մեջ մտա։ Ասի.— Ես գիտեմ։ Մենք շունը սովորել ենք։

— Չէ, քո սովորածը շունը չի,— մեղմ ու բարի ժըպտալով նկատեց մեր լարեկամը։ Ես վիրավորվեցի։ Ո՞նց թե իմ սովորածը շունը չի... Ինքն ասում է՝ լավ չըգիտենք... իսկ մեր ուսուցիչն էնտեղ... իմ տեսակին էնտեղ—... ես էլ գրեթե անգիր գիտեմ... և առանց լսելու ասում է՝ քո սովորածը շունը չի...

— Լա՛վ, լա՛վ նեղանալ մի՛, գե ասա տեսնենք ո՞րն է քու սովորած շունը,— նույն մեղմ ժպիտով հարցրեց նա ու թևիցս բռնեց իրեն մոտ քաշեց։

Ես սկսեցի.

«Շունը չորքոտանի, կաթնասուն, մսակեր, ընտանի կենդանի է։ Նա ունի մի գլուխ, երկու աչք, մի քիթ, մի պոչ, երեսունչորս ատամ։ Նրա մորթին ծածկված է մազով։ Նա ծնում է սովորաբար 4—6 ձագ, բայց պատահում է, որ մինչև 12 էլ է ծնում։ Շան ձագերը ծնում են առաջին ատամներով, բայց կույր են լինում և միայն 10—12 օրից հետո են աչքները բաց անում։ Շունը ապրում է 15—20 տարի։ Նա մարդուն շատ օգուտ է տալիս...»։

Մեր ծանոթը շարունակ ժպտում էր։ Ես սկսեցի շփոթվել, մանավանդ գիտեցածս էլ հատնում էր։

— Այո՛, այո՛, ճիշտ ես ասում, սիրելի՛ս,— վրա հասավ նա։— Դասդ լավ ես սովորել, բայց... էդ շունը չի։

— Ո՞նց թե էս շունը չի։ Հապա էլ ո՞րն է շունը... Դուք հիմի մեր վարժապետիցը լավ գիտե՞ք...

— Սո՛ւս,— բարկացավ վրես հերս։

— Հա՛, սո՛ւս... իրենք չըգիտեն ու՝ սո՛ւս...

Եվ, հիշում եմ՝ էն օրը բավական անհամություն արի, մինչև որ վերջապես ինձ լռեցրին։ Այնինչ մեր ծանոթը շարունակ ժպտում էր։

Վաղուցվա խոսք եմ ասում. մեր էն բարի, ուսումնական ծանոթն էլ վաղուց է մեռել։ Նրանից հետո ես մեծացա, դանազան գրքեր կարդացի, նոր-նոր բաներ իմացա ու սովորեցի։ Ու ինչքան սովորեցի՝ էնքան էլ տեսա, որ ես շատ ու շատ քիչ բան գիտեմ։ Շատ մասին էլ կարդացի։ Համ կարդացի, համ լսեցի, համ կյանքում տեսա, և ահա էդ բոլորից հետո հիմի գրում եմ շատ մասին։ Բայց համ գրում եմ, համ մտածում, թե ո՞վ գիտի, դեռ ի՞նչքան բան կա, որ ես չըգիտեմ։

Այժմ առանձին սիրով եմ հիշում մեր հին ծանոթին ու տեսնում եմ՝ ճիշտ որ, էն, ինչ որ ինձ ու իմ ընկերներին սովորեցրել էին՝ իսկի շունը չէր։ Շունը շատ ավելի մեծ բան է եղել, քան թե ես էի կարծում էն ժամանակ, և դեռ ո՞վ գիտի, մեզանից հետո էլ գիտությունն ինչեր է բաց անելու։

I

Գիտությունը դեռ չի կարողացել որոշի, թե ո՞ր ժամանակից է շունը մարդուն ընկերացել, միայն կարծիք կա, որ ձիուռուսն կենդանիների մեջ շունը մարդու սամենահին ընկերն է։

Քրիստոնեությունից առաջ եղած հին կրոնները իրենց հոգևոր երգերի մեջ փառաբանում էին շան հավատարմությունն ու մարդուն արած ծառայությունները։

Աստրական ու բաբելական պալատների վրա քանդակած են աստրական ու բաբելական թագավորները իրենց որսի շների հետ։

Նրանից էլ դենը, Քրիստոսից հինգ հազար տարի առաջ՝ եգիպտական հին հիշատակարանների վրա դանազան տեսակի շների պատկերներ կան փորագրած։

Նրանից էլ դենը գնանք, նախապատմական ժամանակների, քարե շրջանի մարդկային բնակարանների շուրջը գտնված մնացորդների մեջ շան ոսկորներ են գտնվում։

Նրանից էլ ավելի խոր գնանք, արդեն մարդը ինքը վայրենի է։ Ճշմարիտ է, էսօր էլ կան աշխարհի դանազան մասերում վայրենի ցեղեր, բայց մի ժամանակ, շատ հազար տարի առաջ, մարդը վայրենի է եղել ամեն տեղ։

Նայած թե որտեղ է գտնվել վայրենի մարդը՝ բաց լեռներում, թե խոր անտառներում, գետափերին ու ծովափերին, թե լերկ, ընդարձակ տափաստաններում, ամեն տեղ էլ՝ հարմարվել է իրեն շրջապատող պայմաններին։ Կերել է ինչ որ կարողացել է ճանկել՝ վայրենի պտուղներ ու բույսեր, սերմահատիկներ ու արմատիկներ, կամ թե չէ՝ քարով կամ նիզակով որս է արել, հում որսի միս է կերել։ Բայց երաշտ կա, ցուրտ կա, կարկուտ կա, մրրիկ կա, պատահում է, որ բուսեղենն ու պտուղը փչանում են, վերջապես ձմեռ կա, ձմեռը հո՛ արդեն վերջանում են։ Կենդանի որսալն էլ հեշտ բան չի, որսը ամեն անգամ ձեռ չի ընկնում։ Եվ ահա հայտնվում է սովը։ Իսկ մենք լավ ենք իմանում ինչ բան է սովը։ Սովը մեր լուսավոր գարում և ամենաքաղաքակիրթ երկրներում էլ ստիպում է մարդուն ուտել ամեն բան, մինչև անգամ մարդու միս ուտել, նույնիսկ իրեն մոտիկների միսն ուտել։ Հենց մեր մոտիկ ժամանակներում ամեն մի ժողովրդի պատմության մեջ էդ տեսակ դեպքեր շատ են եղել։ Եվ եթե մեր ժամանակներում լուսավոր ժողովուրդների մեջ մարդը կարող է մարդ ուտի, էն խոր ու խավար ժամանակներում հա կուտեր ու կուտեր։ Եվ էն ժամանակները մարդակերությունը ընդունված սովորություն էր։ Մարդը ինչպես գնում էր մի որևէ կենդանի որսալու, որ լերի ուտի, էնպես էլ գնում էր մարդ որսում լերում ուտում կամ մարդաղահ էր անում, մատաղ էր անում իր կուռքի առջև։ Մի խոսքով, ճիշտ էնպես, ինչպես էսօր մեզանում սովորություն է՝ անասունի միս ենք ուտում կամ անասունը մատաղ ենք անում մեր խաչերի ու սուրբերի առջև։

Էսպես էլ մարդակերության սովորությունը շարունակվեց երկար ժամանակ, մինչև որ մարդը ընկերացավ շան հետ։ Շան հետ ընկերանալով՝ մարդը նրա հետ միասին որս էր անում, էնպես, ինչպես էսօր էլ երկու գիշատիչ գազան իրար երբեմն օգնում են մի որևէ կենդանու բռնելու կամ

ժայռից կցելու, բայց գլխավորը որսը չէր։ Գլխավորն էն է, որ շանը ձեռնասուն անելուց, սանու անելուց հետո, գամփռը ունենալուց հետո, մարդը կարողացավ հոտ ու նախիր կազմել։ Հոտ ու նախիր կազմելուց հետո ունեցավ և՛ պատրաստի միս, և՛ կաթնեղեն, և՛ հագուստի ու այլ զարծվածքների համար բուրդ ու կաշի, ապա թե վար ու ցանք սնելու, ծանրություններ տեղափոխելու լծկան։ Նրանից հետո էլ կարողացավ ապահով ապրուստ ունենալ, հանդիստ ապրել, պարապել խաշնարածությամբ, երկրագործությամբ, զանազան արհեստներով ու արվեստներով, սկսեց իր շուրջը դիտել, ուսումնասիրել, զարդանալ ու բարձրանալ, ստեղծել գիտություններ ու դրականություններ։

Մին էլ ետ նայեց, տեսավ՝ վաղուց էր մարդակերության սովորությունը վերացել, էն օրվանից, ինչ օրվանից շան սղնությամբ հոտ էր կազմել ու ստեղծել պատրաստի ապրուստ։

Թե շունն է մարդակերության վերանալու և մարդկային կյանքի զարգացման գլխավոր պատճառը՝ դրա համար էսօր էլ աշխարհը լիքն է ապացույցներով։ Արևելքն է շան հայրենիքը, արևելքն էլ համարվում է մարդկային ցեղի լուսավորության, քաղաքակրթության հայրենիքը։ Եվ արևելքն էլ նրա համար է համարվում լուսավորության ու քաղաքակրթության հայրենիք, որովհետև արևելքի ազգերը անհիշելի ժամանակներից ի վեր շուն են ունեցել, հոտ ու նախիր են կազմել, պարապել են խաշնարածությունով, երկրագործությունով ու արհեստներով ու զարգացել։ Եվ հետք ու հիշատակություն չկա, թե արևելքի խաշնարած ժողովուրդների մեջ երբևիցե եղած լինի մարդակերության սովորությունը։ Էսպես էլ բոլոր էն երկրներում, որտեղ շունը վաղ է մարդուն ընկերացել, ինչքան էլ թեկուզ աղքատ ու անբիրի երկրներ լինեն — էն բոլոր տեղերը մարդակերություն չկա։ Իսկ, ընդհակառակը, էն երկրներում, որտեղ շուն չկա, ինչքան էլ թեկուզ լիքն ու բարեբի երկրներ լինեն, էն երկներում մինչև էսօր էլ շարունակվում է մարդակերությունը։ Օրինակ՝ հյուսիսային մշտական ձյունի ու սառնամանիքի մեջ ապրող

լոպարները (լապլանդացիք), օսայակներն ու սամոյեդները[1] չգիտեին, թե ինչ բան է մարդակերությունը, որովհետև շուն են ունեցել, եղջերուների հոտեր են կազմել ու միշտ պատրաստի ապրուստ են ունեցել։ Իսկ միջօրեականի կլիմայի տակ գտնվող Բորնեոյի, Ցելեբեսի և Տիմորի կղզիների նման տաք ու բարեբի երկրներում, որտեղ շուն չի եղել ու չկա, մնացել են մարդակեր։

Գիտությունը մինչև էսօր դեռ չի կարողացել հաստատ որոշի և շան ծագումը։ Ոմանք ասում են տանու շունը առաջ է եկել մի վայրենի տեսակից, որ այժմ անհետացած է, ոմանք ասում են գելից է առաջ եկել, ոմանք ասում են շնագելից (չախկալից), ոմանք էլ՝ ագվեսից։ Գիտնականներ էլ կան, որ ասում են և՛ գելից է առաջ եկել, և՛ շնագելից, և՛ մարդագելից, և՛ ագվեսից, դրա համար էլ շուն կա, որ գելի է նման, շուն կա՝ շնագելի, շուն կա՝ մարդագելի, շուն կա՝ ագվեսի և հասցնում են մինչև սկզբնական յոթը տեսակի, որոնք էլ շան անունով ընդհանրապես կոչվուն են շան ցեղ։

Ասում են էդ յոթը տեսակից էլ հետո, տարբեր կլիմաների, տարբեր կուլտուրաների ու խառնուրդների ազդեցության տակ առաջ են եկել եղած բազմազան տեսակները, որ հասնում են մինչև թնեռունի և ցրված են ամբողջ աշխարհքում, բացի մեծ Անտիլյան կղզիներից (Կուբա, Հայիթի կամ Ս. Դոմինգոյ, Յամայկա. Պորտո-Ռիկո և այլն), Մադագասկարից, Նոր Զելանդիայից, Բորնեոյից, Ցելեբեսից, Տիմորից և Ավստրալիայից։ Ճշմարիտ է, Ավստրալիայում մի տեսակ շուն կա, որ կոչվում է դինգո, բայց էն էլ տանու չի, վայրենի է։

[1] Սամոյեդները իրենց անվանում են խազ-օվո կամ խաս-օվո, որ կնշանակի միայն ինքը կամ ինքը մենակ։ Ռուսները էս բառը թարգմանել են самодин կամ само-един, և ժամանակի ընթացքում ազավաղելով շինել են самоед, որ կընշանակի ինքնակեր և սեգիր են ավել էն տարածված սխալ կարծիքին, թե նրանք իրենք իրենց ուտում են կամ իրրև թե մարդակեր են։ Ճիշտ էնպես, ինչպես որ չինական սամովար բառը շինել են самовар, մենք էլ թարգմանել ենք ինքնաեռ։ Հ. Թ.

Ինչպես աշխարհագրական և կլիմայական, էնպես էլ կուլտուրական պայմանները, մարդու պարապմունքն ու ապրելու եղանակը ահագին ազդեցություն են արել շան թե՛ ֆիզիկական կազմվածքի, թե՛ մտավոր ընդունակությունների ու բնավորության վրա։ Ժողովրդական առածն ասում է. ապրանքը եթե տիրոջը չըգցի, այսինքն տիրոջ նման չըլինի— գողանովի է։ Եթե էսպես է, ապրանքը տիրոջ նման է լինում, որովհետև նրա հետ ու նրա մոտ է լինում և ամեն կերպ ազդվում է նրանից, էն ժամանակ շունը հո էն ապրանքն է, որ բոլոր ապրանքներից ամենից շատ է լինում իր տիրոջ հետ ու մոտ։ Եվ որովհետև ապրանքներից կամ անասուններից գրեթե ամենից ընդունակն է, կամ, ինչպես ժողովուրդն է ասում, իմաստուն կենդանի է, միշտ ազդվում է, կրթվում է, սովորում է և յուրացնում է իր տիրոջ բնավորության առանձնահատկությունները։ Առանց մանրամասնությունների մեջ մտնելու՝ նկատված է ընդհանրապես, որ դյուղացու շունը կոպիտ ու անճոռնի է լինում, բայց հավատարիմ. հովվի գամփռը ժիր ու մտացի է լինում, որսկանի շունը ճարպիկ ու հնարագետ. անբան, պարապ-սարապ պարոնի շունը՝ ծույլ ու քմապաշտ և դյուղացու անկիրթ շանից էլ ավելի կոպիտ. փակ, անհյուրասեր մարդու շունը՝ տխուր ու մռայլ։

Մեր հովիվների մեջ սովորություն է հաճախ իրենց հոտը թողնել շների հսկողությանը։ Ամեն մի հովիվ հասատատ գիտի, որ իր շունը միանգամայն կրփոխարինի իրեն։ Պատահում է, որ մթնագիշերով գելը կամ գողը վրա է տալիս, հարձակվում է, հոտը ցրվում է, կորկան է անում ոչխարի մի մասն ու քշում։ Սակայն հովիվը չի հուսահատվում, նա լավ գիտի, որ իր շները կրփրկեն։ Միմիայն շներն են իր հույսը և միմիայն նրանց է աղաղակում։ Էդ ժամանակ շների մի մասը ցրված ոչխարն է հավաքում, մյուս մասը կամ մինը ընկնում է թշնամու տարածի, կարկանի ետևից՝ անդադար բարձր հաչելով ու կլանչելով, որ տերն իմանա որ կողմն է գնում և ազատում է թշնամու ճանկից, հավաքում ու պահում, չորս կողմը պտըտում, մինչև տերը

վրա է հասնում։ Եվ էդպես ժամանակը ոչ մի ատրանոլիբով ու ոչ մի զենքով չի կարելի ետ դարձնել հովվի շանը։

Իսկ սովորական դիշերը հո նա անշարժ նստած է իր տեղը, իր թևում, հոտի կողքին և ոչ մի բանով, ոչ մի ուսելիքով չի կարելի նրան հրապուրել, տեղահան անել, մինչև վտանգ չըլինի կամ տերը չըկանչի։ Կրպատահի, որ հոտի մի կողմը մի որևէ կասկածելի շարժում նկատի, էն ժամանակ էլ թաքուն կերթա, կրատուգի, կրկին կրգա իր թեր։ Հովվի շունը հովիվն ինքն է, որ կա, և դրա համար էլ հովիվը իր շանը սիրում է իր անձի նման։

Հիմի դուք նայեցեք մուրացկանի շանը։

Ելիազար Բլաղ անունով մի եվրոպացի գրում է. ասում է՝ կառքում, դիլիժանսում նստած էի, մի շուն մոտեցավ՝ թաթերը բարձրացրեց դրեց առջևս ու աղաչավոր աչքերը ձգեց երեսիս։ Կառապանը, որ ճանաչում էր շանը, ասավ,— «Մանր փող կունենաս, տվեք իրեն, պարոն. տեսնեք ինչ է անում»։

Մի սև փող ձգեցի իրեն, վեր կալավ՝ վազեց մոտիկ հացթուխի խանութը, փողը տվեց, հաց առավ, ու մի կողմ բաշվեց, սկսեց ուտել։ Բանից դուրս եկավ, որ մի մուրացկանի շուն էր, տերը նոր էր մեռել, մնացել էր անտեր ու իր տիրոջ նման ողորմություն ուզելով ապրում էր։

Հիմի էլ մի ուրիշ շուն։

Մենք հո լավ դիտենք բարձրաստիճան մարդկանց բնավորությունը։ Նրանք առհասարակ խոժոռ են ու կոպիտ դեպի ամեն մի մարդ, որ ներկայացրած չի իրենց։ Ահա էս տեսակ մարդկանցից մեկը, կոմս Բոասին (Անդրեզի) 1774 թվին մի մեծ շուն ուներ, անունը Պլուտոն։ Շատ էլ սիրում էր։ Պլուտոնը տանել չէր կարող ոչ մի օտար մարդու, ու կոմսի հյուրերը միշտ վտանգի մեջ էին։ Սրա առաջն առնելու համար կոմսը սկսեց իր հյուրերին ամենից առաջ ներկայացնել Պլուտոնին ու ասել. Պլուտոն, ահա էս ինչ պարոնը, իմ բարեկամն է, և միայն էսպես՝ Պլուտոնին ներ-

կայանալուց ու ծանոթանալուց հետո մարդիկ կարող էին ուզած ել ու մուտք ունենալ կոմսի տանը՝ ճիշտ իր տիրոջ նման։

Լոնդոնի հայտնի վիրաբույժ Բելկանին էլ իր շանից հետևյալ պատմությունն է անում։ Ասում է՝ մի փոքրիկ շուն ունեի, որ միշտ հետս հիվանդանոց էի տանում ու միշտ կողքիս աթոռին նստած ներկա էր լինում անդամահատությունների։ Մի անգամ էլ հիվանդանոց մանելիս, չէի նկատել թե շունս ետ է մնացել, հանկարծ դուռն ամուր զարկեցի ու շանս թաթը մնաց դռան տակը։ Շունս սկսեց աղիողորմ կլանչել ու կլանչելով էլ կաղին տալով վազեց, բարձրացավ աթոռին, աթոռից էլ թռավ անդամահատության սեղանին, սեղանի վրա մեկնվեց ու կոնծկոնծալով թաթը մեկնեց ինձ։ Նայեցի, տեսա ոտի մի մասը չարդվել է, իսկույն փաթաթեցի, կապեցի, ու մի քիչ անց հանգստացավ, ու իր աթոռի վրա կծիկ հկավ քնեց։ Մյուս օրն էլ եկավ իրան իրան նույնն արավ, ու էսպես ամեն օր, մինչև որ լավացավ։

1881 թվին, Մոսկվայում երաժիշտ Բենեստու շունը էնքան վարժ էր նվագում, որ մասնակցում էր երաժշտական խմբի մեջ և իր տիրոջ երգելու ժամանակ նվագակցում էր նրան։

ՀԵՔԻԱԹՆԵՐ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

1894

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան շարշարվում էր, դարձյալ միևնույն աղքատն էր մնում։

Հուսահատված մի օր նա վեր կացավ, թե՝ պետք է գնամ գտնեմ աստծուն, տեսնեմ ես երբ պետք է պրծնեմ այս աղքատությունից ու ինձ համար մի բան խնդրեմ։

Ճանապարհին մի դայլ պատահեց.

— Առաջ բարի, մարդ-ախպեր, ո՞ւր ես գնում,— հարցրեց դայլը։

«Գնում եմ աստծու մոտ,— պատասխանեց աղքատը,— դարդ ունեմ ասելու»։

— Դե որ գնաս աստծու մոտ,—խնդրեց դայլը,—ասա մի սոված գայլ կա, դիշեր ցերեկ մահ է գալիս սար ու ձոր, ուտելու բան չի գտնում, ասա՝ մինչև ե՞րբ պետք է սոված մնա. որ ստեղծել ես՝ ինչո՞ւ չես կերակուր հասցնում։

«Լա՛վ»,— ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը։

Շատ գնաց թե քիչ, պատահեց մի սիրուն աղջկա։

«Ո՞ւր ես գնում, ախպեր»,— հարցրեց աղջիկը։

«Գնում եմ աստծու մոտ»։

— Երբ որ աստծուն տեսնես,— աղաչեց սիրուն աղջիկը,— ասա այսպիսի մի աղջիկ կա՝ ջահել, առողջ, հարուստ—բայց չի կարողանում ուրախանալ, բախտավոր զգալ իրան— ի՞նչ պիտի լինի նրա հարը։

«Կասեմ» — խոստացավ ճամփորդն ու գնաց. պատահեց մի ծառի, որ թեև ջրափին էր կանգնած, բայց չոր էր։

— Ո՞ւր ես գնում, ա՛յ ճամփորդ,— հարցրեց չոր ծառը։

«Գնում եմ աստծու մոտ»։

— Դե կանգնի՛ր, մի երկու խոսք էլ ես ապսպրեմ,— խնդրեց չոր ծառը,— աստծուն կասես, այս ի՞նչ բան է, բռաել եմ այս պարզ ջրի ափին, բայց ամառ-ձմեռ չոր եմ մնում. ե՞րբ պետք է ես էլ կանաչեմ։

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը։

Այնքան գնաց մինչև գտավ աստծուն։ Մի բարձր ժայռի բակ, մեջքը ժայռին դեմ տված, ալևոր մարդու կերպարանքով նստած էր աստվածը։

— Բարի օր,— ասաց աղքատն ու կանգնեց աստծու առաջին։

— Բարով եկար,— պատասխանեց աստված,— ի՞նչ ես ուզում։

«Էն եմ ուզում, որ ամեն մարդի էլ հավասար աչքով մտիկ անես, մեկին ավար չանես, մյուսին խավար. ես այնքան տանջվում, աշխատում եմ, էլ չեմ կարողանում կուշտ փորով հաց դնեմ, իսկ շատերը, որ իմ կեսի չափ էլ չեն աշխատում, հաճուստ ու հանգիստ ապրում են»։

— Դե գնա, հիմի կըհարստանաս, քո բախտը տվեցի, գնա վայելի՛ր,— ասաց աստված։

«Էլ բան ունեմ ասելու, տե՛ր»,— ասաց աղքատն ու պատմեց սոված դայլի, սիրուն աղջկա ու չոր ծառի ապսպրանքը։

Աստված բոլորի պատասխանը տվեց, և աղքատը շնորհակալություն արավ ու հեռացավ։

Վերադարձին պատահեց չոր ծառին։

— Ինձ համար ի՞նչ ասաց աստված,— հարցրեց չոր ծառը։

«Ասաց, քո տակին ոսկի կա. մինչև այդ ոսկին չըհանեն, որ արմատներդ հողին հասնի, դու չես կանաչիլ»,— պատմեց մարդը։

— Էլ ո՞ւր ես գնում. արի՛ ոսկին հանիր էլի, համ քեզ օգուտ կըլինի, համ ինձ, դու կըհարստանաս, ես էլ կըկանաչեմ։

«Չէ՛, ես ժամանակ չունեմ, շտապում եմ»,— պատասխանեց աղքատը, «աստված ինձ բախտ տվեց, ես շուտով պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ»,— ասաց ու գնաց։

Հետո սիրուն աղջիկը պատահեց ու ճամփորդի առաջը կտրեց.

— Ի՞նչ լուր բերիր ինձ համար։

«Աստված ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակ էլ տխուր չես լինիլ, ուրախ ու երջանիկ կըլինես»։

— Դե որ այդպես է, արի՛ դու եղիր իմ կյանքի մտերիմ ընկերը,— թախանձեց աղջիկը ճամփորդին։

«Չէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ, աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ»,— ասաց աղքատն ու հեռացավ։

Ճանապարհին սպասում էր սոված դայլը, հեռվից հենց որ տեսավ ճամփորդին, վազեց առաջը կտրեց։

— Հը, աստված ի՞նչ ասաց։

«Ախպեր, աստծու մոտ գնալիս քեզանից հետո մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ պատահեցին. աղջիկն ապրսպրեց, թե ինչու ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թե՝ ինչո՞ւ է գարուն, ամառ չոր։ Աստծուն պատմեցի, ասաց—աղջկանն ասա իրան համար մի կյանքի ընկեր գտնի—կըբախտավորվի, ծառին էլ ասա, քո տակին ոսկի կա, պետք է այդ ոսկին հանեն, արմատներդ հողին հասնեն, որ կանաչես։ Եկա իրանց պատմեցի աստծու խոսքերը. ծառն ասաց, դե արի, հանիր ոսկին տար, աղջիկն էլ թե՝ ես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր։ Ասացի, չէ՛, ախպեր, չեմ կարող, աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ»։

— Իսկ ինձ համար ի՞նչ ասաց աստված,— հարցրեց սոված դայլը։

«Քեզ համար էլ ասաց՝ սոված ման կըգաս՝ մինչև մի անխելք մարդ կըգտնես, կուտես, կըկշտանաս»։

— Էլ քեզանից անխելք մարդ ո՞րտեղից գտնեմ, որ ուտեմ,— ասաց գայլն ու կերավ անխելք աղքատին։

1907

ՊՈՉԱՏ ԱՂՎԵՍԸ

Լինում է, չի լինում՝ մի պառավ։ Էս պառավն իր էծը կթում է, կաթը վեր է դնում, գնում է ցախ ու փեռ բերի, որ կրակ անի, կաթն եփի։

Մի աղվես գալիս է, գլուխը կոխում կաթնի ամանը, կաթն ուտում։

Պառավը վրա է հասնում, ցաքատով տալիս է,— աղվեսի պոչը կտրում։

Պոչատ աղվեսը փախչում է, գնում է մի քարի վրա կանգնում է ու էսպես խնդրում.

— Տատիկ, տատիկ, պոչս տուր, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր։

Պառավն ասում է.

— Դե գնա իմ կաթը բեր։

Աղվեսը գնում է կովի մոտ։

— Կովիկ, կովիկ, կա՛թ տուր ինձ, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր։

Կովն ասում է.

— Դե գնա ինձ համար խոտ բեր։

Աղվեսը գնում է արտի մոտ։

— Արտիկ, արտիկ, խո՛տ տուր ինձ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր։

Արտն ասում է.

— Դե գնա ինձ համար ջուր բեր։

Աղվեսը գնում է աղբյուրի մոտ։

— Աղբյուր, աղբյուր, ջո՛ւր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր։

Աղբյուրն ասում է.

— Դե գնա կուժ բեր։

Աղվեսը գնում է աղջկա մոտ։

— Աղջիկ, աղջիկ, կուժը՛դ տուր, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր։

Աղջիկն ասում է.

— Դե գնա ուլունք բեր ինձ համար։

Աղվեսը գնում է չարչու մոտ։

— Չարչի, չարչի, ուլո՛ւնք տուր, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր։

Չարչին ասում է.

— Դե գնա ինձ համար ձու բեր։

Աղվեսը գնում է հավի մոտ։

— Հավիկ, հավիկ, ձու-ձուտուր, ձու-ձու տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ,

աղջիկն ինձ կուժ տա. կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա. ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա. կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչը տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր։

Հալվն ասում է.

— Դե գնա ինձ համար կուտ բեր։

Աղվեսը գնում է կալվորի մոտ։

— Կալվոր, կալվոր, կո՛ւտ տուր ինձ, կուտը տանեմ հավին տամ, հավը ինձ ձու տա, ձուն տանեմ շարշուն տամ, շարշին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչը տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր։

Կալվորի մեղքը գալիս է. մի բուռ կուտ է տալիս։ Աղվեսը կուտը տանում է հավին, հավը ձու է տալի, ձուն տանում է շարշուն, շարշին ուլունք է տալի, ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալի, կուժը տանում է աղբյուրին, աղբյուրը ջուր է տալի, ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալի, խոտը տանում է կովին, կովը կաթն է տալի, կաթը տանում է տալի պառավին, պառավը պոչը տալիս է իրեն, կըցում է, կրցմըցում, վազում է գնում, իր ընկերներին հասնում։

ՈՒԼԻԿԸ

1

Խոր անտառում մի այծ է լինում։ Ունենում է մի գեղեցիկ ուլ։

Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու։ Արածում է և իրիկունը կուրծքը լիքը տուն է գալիս։ Տուն է գալիս, դուռը զարկում ու մկրկում, կանչում.

Սևիկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Մատն եմ եկել սարև սար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դռնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ։

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բաց անում։ Մայրը ծիծ է տալիս նրան ու կրկին գնում արոտ։

2

Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը։ Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Մատն եմ եկել սարև սար,

Կաթն եմ արել քեզ համար,
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ՝ քեզ.
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ։

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում. «Էգ ո՞վ ես դու. չեմ ճանաչում։ Իմ մայրը էդպես չի կանչում։ Նա քաղցր ու բարակ ձայն ունի։ Քո ձայնը կոշտ է ու կոպիտ։ Դուռը բաց չե՛մ անի... Գնա՛... Չեմ ուզում քեզ...»։

Ու գայլը հեռանում է, գնում։

3

Գալիս է մայրը, դուռը ծեծում.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարն սար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ։

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մորը պատմում.

— Գիտե՞ս, մայրի՛կ, ինչ եղավ։ Մի քիչ առաջ մինը եկավ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ։

Ասում էր՝ դուռը բա՛ց արա։ Էնպե՞ս հաստ ձայն ունի՞։ Էնպե՞ս վախեցա՞, Էնպե՞ս վախեցա՞... Դուռը բաց չարի, ասի՝ չեմ ուզում, գնա՛...

— Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևուկ ջան, ի՞նչ լավ է եղել, որ բաց չես արել,— ասավ վախեցած մայրը։— Էդ գայլն է եղել. եկել է, որ քեզ ուտի։ Մյուս անգամ էլ որ գա, բաց չանես. ասա՝ գնա՛, թե չէ իմ մայրը քեզ կըսպանի իր սուր պողերով։

ԾԻՏԸ

Լինում է, չի լինում մի ծիտ։

Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում։ Դես է թռչում, դեն է թռչում, տեսնում է՝ մի պառավ փետի է ման գալի, թոնիր վառի, հաց թխի։ Ասում է.

— Նանի ջան, նանի, ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ։

Պառավը փուշը հանում է, թոնիրը վառում։

Միտը գնում է, ետ գալի, թե՝ փուշը ետ տուր ինձ։

Պառավն ասում է.

— Փուշը թոնիրն եմ դցել։

Միտը կանգնում է, թե՝

— Իմ փուշը տուր, թե չէ դես թռչեմ, դեն թռչեմ, լոշիկդ առնեմ, դուրս թռչեմ։

Պառավը մի լոշ է տալի։ Միտը լոշն առնում է թռչում։

Գնում է տեսնում՝ մի հովիվ անհաց կաթն է ուտում։ Ասում է.

— Հովիվ ախպեր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում։ Ա՛յ լոշը ա՛ռ, կաթի մեջ բրդի՛, կե՛ր. ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ։

Գնում է, ետ գալի, թե՝ լոշս տուր։

Հովիվն ասում է.

— Կերա։

— Չէ՛,— ասում է,— իմ լոշը տուր, թե չէ դես թռչեմ, դեն թռչեմ, գառնիկդ առնեմ, դուրս թռչեմ։

Հովիվը ճարահատած մի գառն է տալի։ Առնում է թռչում։

Գնում է տեսնում՝ մի տեղ հարսանիք են անում, մսացու չունեն, որ մորթեն։

Ասում է.— Ի՞նչ եք մորթել։ Ա՛յ, իմ գառն առեք, մորթեցեք, քեֆ արեք։ Ես էլ գնամ քուչուչ անեմ, գլուխս պահեմ։

Գնում է, դալի, թե՝ իմ գառը տվեք։

Ասում են.— Մորթել ենք կերել, ո՞րտեղից տանք։

Սա կանգնում է, թե՝ չէ, իմ գառը տալիս եք՝ տվեք, թե չէ՝ դես թռչեմ, դեն թռչեմ, հարսին առնեմ, դուրս թռչեմ։

Ու հարսին առնում է թռչում։

Գնում է, գնում. գնում է տեսնում՝ մի աշուղ մի ճամփով գնում է։

Ասում է.— Աշուղ ախպեր, առ էս հարսին պահի քեզ մոտ։ Ես էլ գնամ քուչուչ անեմ, գլուխս պահեմ։

Գնում է, ետ գալի աշուղի առաջը կտրում, թե՝ իմ հարսը ինձ տուր։

Աշուղը ասում է.— Հարսը գնաց իրենց տուն։

Սա թե՝ չէ, իմ հարսը տուր, թե չէ՝ դես թռչեմ, դեն թռչեմ, սազիկդ առնեմ դուրս թռչեմ։

Աշուղը սազը տալիս է իրենց։

Սազն առնում է, ուսը գցում, թռչում, մի տեղ նստում է, սկսում է ածել ու ճըտվըտալով երգել.

Ծընգլը, ծընգլը,
Փուշիկ տվի, լոշիկ առա,
Լոշիկ տվի, գառնիկ առա,
Գառնիկ տվի, հարսիկ առա,
Հարսիկ տվի, սազիկ առա,
Սազիկ առա, աշուղ դառա,
Ծընգլը, ծընգլը,
Ծի՜վ ծի՜վ։

ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

Աքլորը մի օր կատուը բարձրացավ, որ աշխարհը տեսնի։ Վիզը ձգեց, երկարացրեց, բայց բան չըտեսավ. դիմացի սարը խանդարում էր։

— Քուչի՛ ախպեր, կարելի է դու գիտենաս, էն սարի ետեն ի՞նչ կա,— հարցրեց վերևից բակում պառկած շանը։

Ես էլ չըգիտեմ,— պատասխանեց Քուչին։

— Հապա մինչև ե՞րբ պետք է այսպես մնանք. արի՛ գնանք մի տեսնենք՝ աշխարհումս ինչ կա, ինչ չըկա։

Շունն էլ համաձայնեց։ Խոսքը մին արին ու փախան։

Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ։ Գիշերը մնացին էնտեղ։ Շունը պառկեց մի թփի տակ, իսկ աքլորը բարձրացավ մոտիկ ծառին, քնեցին։

Լուսադեմին աքլորը կանչեց՝ ծուղրուղո՜ւ։

Մի աղվես լսեց աքլորի ձայնը։

— Վա՜հ, սա ո՞րտեղից դուրս եկավ, ա՛յ լավ նախաճաշիկ.— մտածեց աղվեսը ու վազեց։

— Բարի՛ լուս, սանահեր աքլոր։ Ի՞նչ ես շինում էս կողմերը։

— Գնում ենք աշխարհ տեսնելու,— պատասխանեց աքլորը։

— Օ՜, ինչ լավ բան եք մտածել,— խոսեց աղվեսը։— Քանի ժամանակ է ես էլ մի կարգին ընկերի եմ ման գալիս։ Ինչ լավ էր՝ պատահեցինք։ Դե՜, ցած արի, որ չուշանանք։

— Ես համաձայն եմ,— ասավ աքլորը.— տես, թե ընկերս էլ համաձայն է, ցած դամ՝ գնանք։

— Ո՞րտեղ է ընկերդ։

— Էն թփի տակին։

«Սրա ընկերն էլ երևի իր նման մի աքլոր կլինի. էս էլ իմ ճաշը»,— մտածեց աղվեսը ու վազեց թփի կողմը։ Հանկարծ որ շունը դուրս եկավ, աղվեսը, պո՜ւկ, փախավ, ո՜նց փախավ։

— Կա՛ց, աղվե՛ս ախպեր, մի՛ վռազի, մենք էլ ենք պուլի, էդպես ընկեր չի լինի,— ծառի գլխից ձայն էր տալիս աքլորը։

ԿԱՑԻՆ ԱԽՊԵՐ

Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու։ Ընկավ մի գյուղ։ Տեսավ՝ այս գյուղի մարդիկ ձեռով են փայտ կոտրատում։

— Ախպե՛ր, ասավ, ինչո՞ւ եք ձեռով փայտ անում, մի՞թե կացին չունեք։

— Կացինն ի՞նչ բան է,— հարցրին գյուղացիք։

Մարդը իր կացինը գոտկից հանեց, փայտը չարդեց, մանրեց, դարսեց մյուս կողմը։ Գյուղացիք այս որ տեսան, վազեցին գյուղամեջ, ձայն տվին իրար.

— Տո՛, եկե՛ք, տեսե՛ք, կացին ախպերը ինչ արավ։

Գյուղացիք հավաքվեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տվին ու կացինը ձեռից առան։

Կացինը առան, որ հերթով կտրեն իրենց փայտը։

Առաջին օրը տանուտերը տարավ։ Կացինը վրա բերավ թե չէ՝ ոտը կտրեց։ Գոռալով ընկավ գյուղամեջ։

— Տո՛, եկե՛ք, եկե՛ք. կացին ախպերը կատաղել է, ոտս կծեց։

Գյուղացիք եկան, հավաքվեցին, փայտերն առան, սկսեցին կացնին ծեծել։ Մեծեցին, տեսան՝ բան չըդառավ, փայտերը կիտեցին վրան, կրակեցին։

Բոցը բարձրացավ, չորս կողմը բռնեց։ Երբ կրակն իջավ, եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է։ Գոռացին.

— Վա՜յ, տղե՛ք, կացին ախպերը բարկացել է, տեսե՛ք՝ ոնց է կարմրել. որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կբերի։ Ի՞նչ անենք։

Մտածեցին, մտածեցին, ու վճռեցին տանեն բանտը գցեն։

Տարան գցեցին տանուտերի մարագը։ Մարագը լիքը դարման էր. գցեցին թե չէ՝ կրակն առավ, բոցը երկինք բարձրացավ։

Գյուղացիք սարսափած վազեցին տիրոջ եռևից թե՝ «ե՛կ, աստծու սիրուն, կացին ախպորը բան հասկացրու»։

ՍՈՒՏԱՍԱՆԸ

Լինում է, չի լինում մի թագավոր։ Էս թագավորը իր երկրումը հայտնում է.

«Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կեսը կըտամ նրան»։

Գալիս է մի հովիվ։ Ասում է.

— Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դագանակ ուներ, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում։

— Կըպատահի՛,— պատասխանում է թագավորը։— Իմ պապն էլ մի շիբուխ ուներ. մի ծերը բերանին էր դնում, մյուս ծերը մեկնում, արեգակիցը վառում։

Ստախոսը գլուխը քորելով դուրս է գնում։

Գալիս է մի դերձակ։ Ասում է.

Ներողությո՛ն, թագավո՛ր, ես վաղ պիտի գայի, ուշացա։ Երեկ շատ անձրև եկավ, կայծակները տրաքեցին, երկինքը պատռվեց, գնացել էի կարկատելու։

— Հա՛, լավ ես արել, —ասում է թագավորը,— բայց լավ չէիր կարկատել. էս առավոտ մի քիչ անձրև թափվեց։

Սա էլ է դուրս գնում։

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի, կոտը կռնատակին։

— Դո՞ւ ինչ ես ուզում, ա՛յ մարդ,— հարցնում է թագավորը։

— Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանեմ։

— Մի կոտ ոսկի՞,— զարմանում է թագավորը։— Սո՛ւտ ես ասում, ես քեզ ոսկի չեմ պարտ։

— Թե որ սուտ եմ ասում, թագավորությանդ կեսը տուր։

— Չէ՛, չէ՛, ճշմարիտ ես ասում,— խոսքը փոխում է թագավորը։

— Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր։

ՋԱԽՋԱԽ ԹԱԳԱՎՈՐԸ

Լինում է, չի լինում մի աղքատ ջաղացպան։

Մի պատռված քուրք հագին, մի ալրոտ փոստալ գլխին սպրելիս է լինում գետի ափին, իր կիսավեր ջաղացում։ Ունենում է մի մոխրոտ բաղարջ ու մի կտոր պանիր։

Մի օր գնում է, որ ջաղացի ջուրը թողնի, գալիս է տեսնում պանիրը չկա։

Մին էլ գնում է ջուրը կապի, գալիս է տեսնում՝ բաղարջը չկա։

Էս ո՞վ կըլինի, ո՞վ չի լինի։ Մտածում է մտածում ու ջաղացի շեմքում թակարդ է լարում։ Առավոտը վեր է կենում։ տեսնում մի աղվես է ընկել մեջը։

— Հը՞, գող անիծված, դու ես կերել իմ պանիրն ու բաղարջը հա՞. կաց՝ հիմի ես քեզ պանիր ցույց տամ։— Ասում է ջաղացպանն ու լինգը վերցնում է, որ աղվեսին սպանի։

Աղվեսը աղաչանք պաղատանք է անում։ Ինձ մի սպանի,— ասում է,— մի կտոր պանիրն ինչ է, որ դրա համար ինձ սպանում ես։ Կենդանի բաց թող, ես քեզ շատ լավություն կանեմ։

Ջաղացպանն էլ լսում է, կենդանի բաց է թողնում։

Էս աղվեսը գնում է, էդ երկրի թագավորի աղրանոցում մատն է գալի մատն, մի ոսկի է գտնում։ Վազ է տալիս թագավորի մոտ։

—Թագավորն ապրած կենա, ձեր կոտը մի տվեք։ Զախչախ թագավորը մի քիչ ոսկի ունի, չափենք եւ կրբերենք։

— Զախչախ թագավորն ո՞վ է,— զարմացած հարցնում է թագավորը։

— Դու դեռ չես ճանաչում,— պատասխանում է աղվեսը։— Զախչախը մի շատ հարուստ թագավոր է, ես էլ նրա վեզիրն եմ։ Կոտը տուր, տանենք ոսկին չափենք. հետո կը-ճանաչես։

Կոտը առնում է տանում, աղբանոցում գտած ոսկին ամբարցնում կոտի ճեղքում, իրիկունը եւ բերում, տալիս.

— Օֆ,— ասում է,— զոռով չափեցինք։

— Միթե ճշմարիտ սրանք կոտով ոսկին են չափել,— մտածում է թագավորը։ Կոտը թափ է տալիս, գրընգալեն մի ոսկի է վեր ընկնում։

Մյուս օրը աղվեսը եւ գալիս է, թե՝ Զախչախ թագավորը մի քիչ ակն ու մարգարիտ ունի. ձեր կոտը տվեք, չափենք կրբերենք։

Կոտն առնում է տանում։ Մի մարգարիտ է գտնում. կոխում է կոտի արանքը, էլ եւ իրիկունը եւ բերում։

— Օֆ, ասում է,— մեռանք մինչև չափեցինք։

Թագավորը կոտը թափ է տալի, մարգարիտը դուրս է թռչում։

Մնում է զարմացած, թե էս Զախչախ թագավորն ինչքան հարուստ պետք է լինի, որ ոսկին, ակն ու մարգարիտը կոտով է չափում։

Անց է կենում մի քանի օր։ Մի օր էս աղվեսը գալիս է թագավորի մոտ խնամախոս, թե՝ Զախչախ թագավորը պետք է ամուսնանա, քու աղջիկն ուզում է։

Թագավորն ուրախանում, աշխարհքով մին է լինում։

— Դե գնացեք, ասում է, շուտ արեք, հարսանիքի պատրաստություն տեսեք։

Թագավորի պալատում իրար են անցնում, հարսանիքի պատրաստություն են տեսնում, իսկ աղվեսը ջաղացն է վազում։

Վազում է ջաղացպանին աչքալուս տալի, թե՝ հապա թագավորի աղջիկը քեզ համար ուզել եմ։ Պատրաստ կաց որ գնանք հարսանիք անենք։

— Վա՛յ, քու տունը քանդվի, այ աղվես. էդ ի՞նչ ես արել,— ասում է վախեցած ջաղացպանը։— Ես ով, թագավորի աղջիկը ով։ Ոչ ապրուստ ունեմ, ոչ տուն ու տեղ, ոչ մի ձեռք շոր... Հիմի ես ի՞նչ անեմ...

— Դու մի վախենա, ես ամեն բան կանեմ,— հանգրստացնում է աղվեսն ու եւ վազում թագավորի մոտ։

Վազելով ընկնում է պալատը. Հայ-հարա՛յ, Զախչախ թագավորը մեծ հանդեսով գալիս էր, որ պսակվի։ Ճամփին թշնամի զորքերը հանկարծ վրա տվին, մարդկանց կոտորեցին, ամեն բան տարան։ Ինքը ազատվեց փախավ։ Զորում մի ջաղաց կա, եկել է մեջը մտել։ Ինձ ուղարկեց, որ դամ իմաց տանեմ, շոր տանեմ, գա պսակվի շուտով գնա իր թշնամիներից վրեժն առնի։

Թագավորը իսկույն ամեն բան պատրաստում է, տալիս աղվեսին, հետո էլ շատ ձիավորներ է գնում, որ պատվով ու փառքով իր փեսին պալատ բերեն։

Գալիս են հանդեսով ջաղացի դուռը կանգնում։ Ջաղացպանի քուրքը հանում, թագավորի շորերը հագցնում, նստեցնում են նժույգ ձիուն։ Շրջապատված մեծամեծներով, առջևից ձիավորներ, ետևից ձիավորներ — էսպես հանդեսով բերում են թագավորի պալատը։ Իր օրումը պալատ չըտեսած ջաղացպա՞ն — շշկլված, բերանը բաց մին չորս կողմն է նայում, մին հագի շորերին է նայում, խլշկտում ու զարմանում։

— Էս ինչու չըտեսի նման դես ու դեն է նայում, աղվես սխալեր,— հարցնում է թագավորը։— Կարծես տուն չըլինի տեսած, շոր չըլինի հագած։

— Չէ, դրանից չի,— պատասխանում է աղվեսը։— Նայում է ու համեմատում իր ունեցածի հետ, թե իր ունեցածը որտե՞ղ, էս որտեղ...

Նստում են ճաշի։ Տեսակ տեսակ կերակուրներ են բերում։ Ջաղացպանը չի իմանում՝ որին ձեռք տա կամ ինչպես ուտի։

— Ի՞նչու չի ուտում, աղվես ախպեր,— հարցնում է թագավորը։

— Գալու ժամանակ ճամփին որ կողոպտեցին, նրա համար միտք է անում։ Ձեք կարող երևակայել, տեր թագավոր, թե ինչքան բան տարան և վերջապես ինչ անպատվություն էր էդ մեր թագավորի համար։ Ի՞նչպես հաց ուտի,— պատասխանում է աղվեսը հառաչելով։

— Բան չըկա, դարդ մի անի, սիրելի փեսա, աշխարհք է, էդպես էլ կըպատահի,— խնդրում է թագավորը։— Այժմ հարսանիք է, ուրախանանք, քեֆ անենք։

Ու քեֆ են անում, ուտում, խմում, ածում. պար գալիս։ յոթն օր, յոթ գիշեր հարսանիք անում։ Աղվեսն էլ դառնում է քավոր։

Հարսանիքից հետո թագավորը իր աղջկանը մեծ քաժինք է տալի ու հանդիսով ճամփա դնում Զախչախ թագավորի հետ։

— Կացե՛ք, ես առաջ գնամ տունը պատրաստեմ, դուք իմ ետևից եկեք, ասում է քավոր աղվեսը ու վազ տալի։

Վազ է տալի վազ, տեսնում է մի դաշտում մեծ նախիր է արածում։

— Էս ո՞ւմ նախիրն է։

Ասում են.— Շահ-Մարինը։

— Պա, Շահ-Մարի անունը էլ չըտաք, որ թագավորը նրա վրա բարկացել է, զորքով իմ ետևից գալիս է. ով նրա անունը տվավ՝ գլուխը կտրել կըտաս։ Որ հարցնի թե ումն է, ասեք, Զախչախ թագավորինը, թե չէ՝ վայն եկել է ձեզ տարել։

Վազ է տալի վազ, տեսնում է ոչխարի հոտը սարերը բռնել է։

— Էս ո՞ւմն է։

— Շահ-Մարինը։

Հովիվներին էլ նույնն է ասում։

Վազ է տալի վազ, տեսնում է ընդարձակ արտեր, հընձվորները միջին հնձում են։

— Էս ո՞ւմ արտերն են։

— Շահ-Մարինը։

Հնձվորներին էլ նույնն է պատվիրում։

Վազ է տալի վազ, տեսնում է անվերջ խոտհարքներ։

— Էս ո՞ւմն են։

— Շահ-Մարինը։

Խոտ հարողներին էլ նույնն է ասում։

Հասնում է Շահ-Մարի պալատին։

— Շահ-Մար, ա Շահ-Մա՛ր,— գոռում է հեռվից վազելով։— Քու տունը չըքանդվի, միամիտ նստել ես։ Թագավորը քեզ վրա բարկացել է, մեծ զորքով գալիս է, որ քեզ սպանի, տուն ու տեղդ քանդի, տակն ու վրա անի, ունեցածդ-չունեցածդ էլ թագավորական գրի։ Մի անգամ քեզ մոտ մի վառիկ եմ կերել. էն աղուհացը դեռ չեմ մոռացել։ Վաղեցի, եկա, որ քեզ իմացնեմ։ Շուտ արա, գլխիդ ճարը տես, քանի չի եկել։

— Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ,— հարցնում է սարսափած Շահ-Մարը ու տեսնում է, որ ճշմարիտ, հեռվից փոշի բարձրացնելով գալիս է թագավորը։

— Փախի՛, շուտով ձի նստի փախի, էս երկրից կորի, էլ հետ չընայես։

Շահ-Մարը իսկույն նստում է իր լավ ձին ու փախչում էդ երկրից։

Աղվեսի ետևից գալիս են հարսանքավորները։ Գալիս են զուռնով, թմբուկով, երդով, զորքով հրացան արձակելով ու աղմուկով։

Գալիս են Զախչախ թագավորն ու իր կինը ոսկեզոծ կառքի մեջ, նրանց առջևից ու ետևից անհամար ձիավորներ։

Հասնում են մի դաշտի։ Տեսնում են մեծ նախիր է արածում։

— Էս ո՞ւմ նախիրն է,— հարցնում են ձիավորները։

— Զախչախ թագավորինը,— պատասխանում են նախրապանները։

Անց են կենում։ Հասնում են սարերին։ Տեսնում են ոչխարի սիպտակ հոտը սարերը բռնել է։

— Էս ո՞ւմն է,— հարցնում են ձիավորները։

— Զախչախ թագավորինը,— պատասխանում են հովիվները։

Անց են կենում։ Հասնում են ընդարձակ արտերի։

— Էս ո՞ւմ արտերն են։

— Զախչախ թագավորինը։

Հասնում են խոտհարքներին։

— Էս ո՞ւմն են։

— Զախչախ թագավորինը։

Ամենքը մնացել են զարմացած, Զախչախ թագավորն ինքն էլ քիչ է մնում խելքը թռցնի։

Էսպեսով Աղվեսի եռեից գալիս են, հասնում Շահ-Մարի պալատներին։

Քավոր ագվեսն էնտեղ արդեն տեր է դառել, կարգադրություններ է անում։ Ընդունում է խնամիներին ու նորից սկսում են քեֆը։

Յոթն օր, յոթ գիշեր էլ էստեղ են քեֆ անում ու խնամիները վերադառնում են իրենց տեղը։

Զախչախ թագավորը, իր կինն ու քավոր Աղվեսը ապրում են Շահ-Մարի պալատներում։

Իսկ թագավորից վռնեցած Շահ-Մարը մինչև էսօր էլ գնա գնում է։

1908

ՈՍԿՈՒ ԿԱՐԱՍԸ

Ես մեր ծերերից եմ լսել, մեր ծերերը իրենց պապերից, նրանց պապերն էլ իրենց մեծերից, թե մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի լուծ կով։

Զմեռը էս աղքատ հողագործի եզները սատկում են։ Գարունքը, վար ու ցանքի ժամանակը որ գալիս է, եզը չի ունենում թե վարի, հողը վարձով տալիս է իր հարևանին։

Էս հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում, գուրս է գալի մի կարաս, մեջը լիքը ոսկի։ Եզները լծած թողնում է, վազում է գյուղը հողատիրոջ մոտ։

— Հեյ, աչքդ լուս,— ասում է,— քու հողումը մի կարաս ոսկի գուրս եկավ, արի տար։

— Չէ՛, ախպե՛ր, էդ իմը չի,— պատասխանում է հողատերը։— Հողի վարձը դու տվել ես, դու վարում ես. էն հողումն ինչ էլ գուրս գա, քունն է. ոսկի է գուրս եկել, թող ոսկի լինի, էլի քունն է։

Սկսում են վիճել. սա ասում է՝ քունն է, նա, թե չէ՝ քունը։ Վեճը տաքանում է, իրար ծեծում են։ Գնում են թագավորի մոտ դատաստան։

Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ՝ աչքերը չորս է բաց անում։ Ասում է.

— Ոչ քունն է, ոչ դրանը, իմ հողումը կարասով ոսկի է գուրս եկել — իմն է։

Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի։ Գնում է կարասի բերանը բաց անել է տալի, տեսնում—ի՞նչ ոսկի—կարասը լիքը օձ...

Զարհուրած ու կատաղած նա է գալի։ Հրամայում է պատժեն անգետ ռանչպարներին, որ համարձակվել են իրեն խաբել։

— Չէ՞, թագավորն ապրած կենա,— գոռում են խեղճերը,— մեկ ինչո՞ւ ես սպանում. լավ չես տեսել, օձ չկա էնտեղ, ոսկի է, ոսկի...

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան ստուգեն։ Մարդիկը գնում են, ետ գալի, թե՝ ճշմարիտ, ոսկի է։

— Վա՜հ,— զարմանում է թագավորը։ Ասում է.— երևի լավ չըտեսա, կամ տեսածս էն կարասը չէր։ Վեր է կենում մին էլ գնում։

Կարասը բաց է անում,— գարձյալ մեջը լիքը օձ։

Էս ի՞նչ հրաշք է, ի՞նչ միտք ունի,— չեն հասկանում։

Թագավորը հրամայում է, հավաքում է իր երկրի իմաստուններին։

— Բացատրեցեք,— ասում է,— ո՞վ իմաստուններ, ի՞նչ հրաշք է սա։ Էս հողագործներն իրենց հողում կարասով ոսկի են գտել։ Ես եմ գնում—կարասը լիքն օձ է գտնում, սրանք են գնում—ոսկի։ Էս ի՞նչ կրնշանակի։

— Դրա բացատրությունն էս է, թագավոր, եթե չես բարկանալ,— ասում են իմաստունները։— Կարասով ոսկին ազքատ հողագործներին պարգև է դրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար։ Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի գտնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես ուրիշի յահուր հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում։

Թագավորը ցնցվում է. խոսք չի գտնում պատասխանելու։

— Լա՜վ, —ասում է,— դե հիմի էն որոշեցեք, թե էդ երկուսից ո՞րին է պատկանում գտած ոսկին։

— Իհարկե հողագործին,— ձայն է տալի վարող գյուղացին։

— Չէ, վարողինն է,— մեջ է մտնում հողատերը։ Ոնորից սկսում են կռվել։

— Լա՜վ, լա՜վ, կացե՛ք,— կանգնեցնում են իմաստունները,— ի՞նչ ունեք գուք — ագա կամ աղջիկ։

Դուրս է գալի, որ մեկը մի տղա ունի, մյուսը մի աղջիկ։ Իմաստունները վճռում են, որ սրանք գնան իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց։ Էստեղ համաձայնում են բարի մարդիկը, ուրախանում են, ու կռիվը վերջանում է, սկսում է հարսանիքը։ Օխտն օր, օխտը գիշեր հարսանիք են անում, կարասով ոսկին էլ, որ պարգև էր դրկած իրենց ազնվության ու արդար աշխատանքի համար, տալիս են իրենց զավակներին։

Բարին էստեղ, չարն էն ագահ թագավորի մոտ։

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Ասուած բարի տա ձեզ էլ, երկու ախպորն էլ։ Լինում են, չէն լինում երկու աղքատ ախպեր են լինում։ Մտածում են ինչ անեն, ոնց անեն, որ իրենց տունը պահեն։ Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը գնա մի ունևորի ծառա մտնի, ռոճիկ ստանա, ղրկի տուն։

Էսպես էլ մեծը վեր է կենում գնում մի հարուստի մոտ ծառա մտնում։

Ժամանակ նշանակում են մինչև մին էլ կրկվի ձեն ածելը։ Էս հարուստը մի շրջված պայման է գնում ծառային։ Ասում է՝ «մինչև էն ժամանակը թե դու բարկանաս—դու հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե ես բարկանամ — ես տամ»։

— Ես որ հազար մանեթ չունեմ ո՞րտեղից տամ,— ասում է ծառան։

— Բան չկա, փոխարենը ինձ տասը տարի ձրի կրծառայես։

Տղեն մին վախենում է էս տարօրինակ պայմանից, մին էլ մտածում է, թե ինչ պետք է պատահի։ Ինչ ուզում են անեն, ես եմ ու չեմ բարկանալ, պրծանք գնաց։ Իսկ թե իրենք կրբարկանան, թող իրենք էլ տուժեն իրենց դրած պայմանով։

Ասում է լավ. համաձայնում է։

Պայմանը կապում են ու մտնում ծառայության։

Մյուս օրը վաղ տերը վեր է կացնում ծառային դրկում է արտը հնձելու։

— Գնա՛,— ասում է,— քանի լուս լուս է հնձի, որ մութն ընկնի կըդաս։

Ծառան գնում է ամբողջ օրը հնձում, իրիկունը հոգնած գալիս է տուն։ Տերը հարցնում է.

— Էդ ո՞ւր եկար։

— Դե արևը մեր մտավ, ես էլ եկա։

— Չէ՛, էդպես չի։ Ես քեզ ասել եմ՝ քանի լուս է, պետք է հնձես։ Արևը մեր մտավ, բայց տես, նրա ախոպեր լուսնյակը դուրս եկավ։ Սա ինչ պակաս է լուս տալի...

— Էդ ո՞նց կըլինի...— զարմանում է ծառան։

— Հը՞, դու արդեն բարկանո՞ւմ ես,— հարցնում է տերը։

— Չէ՛, չեմ բարկանում... ես միայն ասում էի՝ հոգնած եմ... Մի քիչ հանգստանամ... կըզկըզում է վախեցած ծառան ու գնում է նորից հնձելու։

Հնձում է, հնձում, մինչև լուսնյակը մեր է մտնում։ Բայց լուսնյակը մեր է մտնում թե չէ, դարձյալ արեգակն է դուրս գալիս։ Ծառան ուժասպառ արտում վեր է ընկնում։

— Վա՛յ, քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տված ռոճիկն էլ...— սկսում է հայհոյել հուսահատված։

— Հը՞, դու բարկանո՞ւմ ես,— կանգնում է դեմքին հարուստը։ Երբ որ բարկանում ես, մեր պայմանը պայման է։ Էլ չասես թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին։

Ու պայմանի ուժով ստիպում է, ծառան կամ հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի։

Ծառան մնում է կրակի մեջ։ Հազար մանեթ չուներ, թե տար հոգին ազատ աներ, տասը տարի էլ էս տեսակ մարդու ծառայելն անկարելի բան էր։ Միտք է անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ է տալիս հարուստին, գառն ու դատարկ վերադառնում տուն։

— Հը՞, ի՞նչ արիր,— հարցնում է փոքր ախպերը։ Ու մեծ ախպերը նստում է, դլուխն էկածը պատմում, ինչպես որ պատահել էր։

— Բան չկա,— ասում է փոքրը,— դարդ մի անի. դու տանը կաց, հիմի էլ ես գնամ։

Վեր է կենում հիմի էլ փոքր ախպերն է գնում ծառա մտնում է՛լ նույն հարուստի մոտ։

Հարուստը դարձյալ ժամանակը որոշում է մինչև գարնան կրկվի ձեն ածել, ու պայման է դնում, որ եթե ծառան բարկանա, հազար մանեթ տուգանք տա կամ տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հազար մանեթ տա տու էն օրից էլ ծառան ազատ է։

— Չէ՛, էդ քիչ է,— հակառակում է տղեն։— Թե դու բարկանաս, դու ինձ երկու հազար մանեթ տաս, թե ես բարկանամ, ես քեզ երկու հազար մանեթ տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ։

— Լա՛վ,— ուրախանում է հարուստը։ Պայմանը կապում են ու այժմ էլ փոքր ախպերն է մտնում ծառայության։

Առավոտը լուսանում է, էս ծառան վեր չի կենում տեղից։ Տերը դուրս է գնում, տուն է գալիս, էս ծառան դեռ քնած է։

— Ա՛յ տղա, դե վեր կաց է՛, օրը հաշ դառավ։

— Հը՞, բարկանո՞ւմ ես դու...— գլուխը վեր է քաշում ծառան։

— Չէ՛, չեմ բարկանում,— վախեցած պատասխանում է տերը. միայն ասում եմ՝ պետք է արտը դնանք հնձելու։

— Հա, որ էդ ես ասում ոչինչ, կըգնանք, ինչ ես վռազում։

Վերջապես ծառան վեր է կենում, սկսում է տրեխները հագնել։ Տերը դուրս է գնում, ներս է գալիս, սա դեռ տրեխները հագնում է։

— Ա՛յ տղա, դե շուտ արա, հագի է...

— Հ՞ը, հո չե՞ս բարկանում։

— Չէ՛, ո՞վ է բարկանում, ես միայն ուզում էի ասել՝ ուշանում ենք...

— Հա՛, էդ ուրիշ բան է. թե չե՝ պայմանը պայման է։

Մինչև ծառան տրեխները հագնում է, մինչև արտն են գնում, հաշ է դառնում։

— Էլ ինչ հնձելու ժամանակ է,— ասում է ծառան,— տեսնում ես ամենքն էլ հաշում են, մենք էլ մեր հաշն ուտենք՝ հետո։

Նստում են, հաշն ուտում։ Հաշից հետո էլ ասում է՝ «Մշակ մարդիկ ենք, պետք է մի քիչ քնենք, հանգստանանք, թե չէ՞»։ Գլուխը կոխում է խոտերի մեջն ու քնում մինչև իրիկուն։

— Տո՛, վեր կաց է, մթնեց է՛, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց... Վա՛յ քու դեսը դրկողի վիզը կոտրի, վա՛յ քու կերածն էլ հարամ ըլի, քու արածն էլ... էս ինչ կրակի մեջ ընկա...— սկսում է գոռգոռալ հուսահատված տերը։

— Հը՞, չըլինի՞ թե բարկանում ես,— գլուխը վեր է քաշում ծառան։

— Չէ՛, ո՞վ է բարկանում, ես էն էի ասում թե՝ մթնել է. տուն գնալու ժամանակն է։

— Հա՛, էդ ուրիշ բան է, գնանք, թե չէ հո մեր պայմանը գիտես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ։

Գալիս են տուն։ Տեսնում են հյուր է եկել։

Ծառային դրկում են թե՝ գնա ոչխար մորթի։

— Ո՞րը։

— Որը կըպատահի։

Ծառան գնում է։ Մի քիչ հետո լուր են բերում հարուստին. թե՝ հասի, որ քու ծառան ամբողջ հոտդ կոտորեց։ Էս հարուստը վազում է, տեսնում է՝ ճիշտ որ, ինչ ոչխար ունի, բոլորը ծառան մորթել է։ Գլխին տալիս է, գոռում.

— Էս ի՞նչ ես արել, ա՛յ անասուած, քու տունը քանդվի. ինչ իմ տունը քանդեցիր...

— Դու ասիր՝ «ո՛ր ոչխարը պատահի՛, մորթի», ես էլ եկա, բոլորը պատահեցին բոլորը մորթոտեցի—ուրիշ ավել պակաս ի՞նչ եմ արել,— հանգիստ պատասխանում է ծառան,— բայց կարծեմ դու բարկանում ես...

— Չէ՛, բարկանում չեմ, միայն ափսոս գալիս է, որ էսքան ապրանքս փչացավ...

— Լա՛վ, որ բարկանում չես, է՛լ կրծառայեմ։

Հարուստը մտածում է ինչ անի, ոնց անի, որ էս ծա-

ռայիցն ապատվի։ Պայմանն է կապել մինչև մին էլ գարնան՝ կըկվի ձեն ածելը, այնինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ ո՞ր-տեղ են գարունն ու կըկուն...

Միտք է անում միտք, մի հնար է մտածում։ Կնոջը տանում է անտառում մի ծառի վեր հանում ու պատվիրում, որ «կուկու» կանչի։ Ինքը գալիս է ծառային տանում թե՝ արի գնանք անտառը որսի։ Հենց անտառն են մտնում թե չէ, կինը ծառի վրայից կանչում է— «կուկո՛ւ, կուկո՛ւ...»։

— Ը՜հը՜, այդ լուս,— ասում է ծառային տերը. կըկուն կանչեց, ժամանակը լրացավ...

Տղեն զլխի է ընկնում տիրոջ խորամանկությունը։

— Չէ՛, ասում է, ով է լսել, որ տարու էս եղանակին, ձմեռվա կիսին, կըկուն ձեն ածի, որ սա ձեն է ածում։ Ես պետք է էս կըկվին սպանեմ, սա ինչ կըկու է...

Ասում է ու հրացանը քաշում դնում է ծառը։ Տերը գոռալով ընկնում է առաջը.

— Վա՜յ չըլարկես, ասածու տիրուն... սե լինի քու պատահելու օրը, էս ինչ փորձանք էր, որ ես ընկա մեջը...

— Ը՜ը, չըլինի՞ թե բարկանում ես...

— Հա՛, տիպեր, հերիք էր. արի՝ ինչ տուպանք տալու եմ տամ, քեզանից ազատվեմ։ Իմ գրած պայմանն է—ես էլ պետք է տուժեմ։ Հիմի նոր եմ հասկանում էն հին խոսքը՝ թե «մարդ ինչ անի, իրեն կանի»։

Էսպես հարուստը խելոքանում է, իսկ փոքր տիպերը մնում տխուր տված պարտքի թուղթը պատռում է, հազար մանեթ տուպանքն էլ առնում ու վերադառնում տուն։

ԽԵԼՈՔՆ ՈՒ ՀԻՄԱՐԸ

Երկու տիպեր են լինում. մինը խելոք, մյուսը հիմար։ Խելոք տիպերը միշտ բանեցնում ու շարշարում է հիմարին։ Էնքան շարշարում է, որ հիմարը հուսահատվում է, մի օր էլ կանգնում է, թե՝

— Ախպեր, էլ չեմ տալիս քեզ հետ կենամ, բաժանվում եմ. իմ բաժինը տուր, գնամ ջոկ ապրեմ։

— Լա՛վ,— ասում է խելոքը.— էսօր էլ դու ապրանքը ջուրը տար, ես կերը տամ. երբ ցրից բերես, ո՛ր ապրանքը գոմը մտնի — ինձ, որը գուրսը մնա — քեզ։

Ժամանակն էլ լինում է ձմեռ։

Հիմարը համաձայնում է։ Ապրանքը ջուրն է տանում ետ բերում։ Ձմեռվա ցուրտ օ՜ր, մրսած անասուններ. հենց տաք գոմի դուռն են հասնում թե չէ՝ իրար ետևից ներս են թափում։ Դռանը մնում է մի հիվանդ քոսոտ մոզի դիրաններին քոր անելիս։ Էն է մնում հիմարին։

Էս հիմարը թոկը վիզն է կապում, իր մոզին տանում ծախելու։

— Ա՛ մոզի, արի, հե՜յ,— կանչելով գնում է։

Մի հին ավերակի մոտից անցնելիս էլ որ ձեն է տալի— ա՛ մոզի, արի, հե՜յ...— ավերակի արձագանքը կրկնում է.

— Հե՜յ...

Հիմարը կանգնում է։

— Ինձ հետ ես խոսում, հա՞...

Ավերակը ձայն է տալիս.

— Հա՛...

— Մոպին ուզում ե՞ս։

— Ե՞ս...

— Քա՞նի մանեթ կըտաս։

— Տա՛ս...

— Հիմի կըտա՞ս, թե չէ։

— Չէ՞...

— Դե էգուց կըգամ, որտեղից որ է՝ ճարի՞։

— Արի՞...

Հիմարը համաձայնում է ու մոպին ծախված համարելով՝ ավերակի դռանը կապում է, շրվշրվացնելով վերադառնում տուն։

Մյուս օրը առավոտը վաղ վեր է կենում գնում փողերն առնելու։ Դու մի՛ ասիլ՝ գիշերը գայլերը մոպին կերել են։ Գնում է տեսնում՝ ոսկորները դես ու դեն ցրված ավերակի առջև։

— Հը՞,— ասում է,— մորթել ես կերել, հա՞։

— Հա՛...

— Չաղ է՞ր, թե չէ։

— Չէ՞։

Հիմարը էստեղ վախենում է, կարծում է ավերակի մրտքումը կա, որ իր փողը չըտա։

— Էդ իմ բանը չի,— ասում է,— առել ես պրծել, ես իմ փողի տերն եմ, բեր իմ փողը—տաս մանեթ դեղին ոսկի՞...

— Ոսկի՞...

Էս էլ որ լսում է հիմարը, բարկանում է, ձեռի փետը ետ է տանում, տուր թե կըտաս, ավերակի խարխուլ պատերին։ Մին, երկու զարկում է. պատերից մի քանի քար են վեր ընկնում։ Դու մի ասիլ՝ հնուց էդ պատում գանձ է եղել պահած։ Քարերը որ վեր են ընկնում՝ ոսկին թափում է հանկարծ առաջը՝ լցվում։

— Ա՛յ էդպես... բայց էսքանն ի՞նչ եմ անում. տասը

մանեթ ես պարտ—իմ տասը մանեթը տուր, մնացածը քու — փողն է, ընչի՞ս է պետք...

Մի ոսկի է վերցնում, գալի տուն։

— Հը՞, մոպիդ ծախեցի՞ր,— ծիծաղելով հարցնում է խելոք ախպերը։

— Ծախեցի։

— Ո՞ւմ վրա։

— Ավերակի։

— Հետո, փող տվա՞վ։

— Իհարկե տվավ։ Դեռ չէր ուզում տա, ամա ձեռիս փետովը որ մի քանի հասցրի, ինչ ուներ՝ առաջիս փռեց։ Իմ տասը մանեթը վեր կալա, մնացածն իրենն էր, հենց թողեցի էնպես փռված։

Ասում է ու ոսկին հանում ցույց տալիս։

— Էդ ո՞րտեղ է,— աչքերը չորս է անում խելոք ախպերը։

— Է՛հ, ցույց չեմ տալ, դու աչքածակ ես, էնքան կըհավաքես, շալակս կըտաս, որ մեջքս կըկոտրի։

Խելոքը երդվում է, որ մենակ ինքը կըշալակի, միայն թե տեղը ցույց տա։

— Բեր, ասում է,— ձեռինդ էլ ինձ տուր, մնացածի տեղն էլ ցույց տուր, որ ես տեսնեմ տկլոր ես, քեզ համար նոր շորեր առնեմ։

Հիմարը նոր շորերի անունը որ լսում է՝ ձեռինն էլ է տալիս ախպորը, տանում է մնացածի տեղն էլ ցույց տալիս։ Խելոքը ոսկին հավաքում է, բերում տուն, հարստանում, բայց ախպոր համար նոր շորեր չի առնում։

Էս հիմարը ասում է, ասում է, որ տեսնում է չի լինում, գնում է դատավորի մոտ գանգատ։

— Պարոն դատավոր,— ասում է,— ես մի մոպի ունեի տարա ավերակի վրա ծախեցի...

— Հերիք է, հերիք,— ընդհատում է դատավորը.— էս հիմարը ո՞րտեղից եկավ, ո՞նց թե մոպին ավերակի վրա ծախեցի...— վրեն ծիծաղում է ու դուրս անում։

Գնում է ուրիշներին գանգատվում, նրանք էլ էն վրեն ծիծաղում։

Ու ասում են, մինչև էսօր էլ խեղճ հիմարը կիսամերկ ման է գալի, պատահողին գանգատվում, բայց ոչ ոք չի հավատում, ամենքն էլ ծիծաղում են վրեն, իսկ խերոք ախպերն էլ ծիծաղում է ամենքի հետ։

ԽՈՍՈՂ ԶՈՒԿԸ

1

Լինում է, չի լինում մի աղքատ մարդ։ Էս աղքատ մարդը գնում է դառնում մի ձկնորսի շալակտար։ Օրական մի քանի ձուկն է աշխատում, տուն բերում, նրանով ապրում են ինքն ու կինը։

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկ է բռնում, տալիս իր շալակտարին, որ պահի, ինքն էլ ետ ջուրն է մըտնում։ Էս շալակտարը գետափին նստած՝ նայում է նայում էն սիրուն ձկանն ու միտք է անում.

— Տեր աստված,— ասում է,— սա էլ, որ մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՝ սա՞ էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից բան է հասկանում, ոնրախություն կամ ցավ է զգում՝ թե չէ...

Հենց էս մտածելու ժամանակ ձուկը լեզու է առնում.

— Լսի՛,— ասում է,— մարդ-ախպեր։ Ընկերներիս հետ ես խաղում էի գետի ալիքների մեջ։ Ուրախությունից ինձ մոռացա ու անզգույշ ընկա ձկնորսի ուռկանը։ Հիմի, ով գիտի, իմ ծնողն ինձ որոնում է ու լաց է լինում, հիմի ընկերներս տխրել են։ Ես էլ, տեսնում ես, ինչպես եմ տանջվում. շունչս կտրում է ջրից դուրս։ Ուզում եմ էլ ետ գնամ ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ ու պարզ ջրերում։ Էնպես եմ ուզո՞ւմ, էնպես եմ ուզո՞ւմ... Նկ խեղճ արի, ազատ արա ինձ, բա՛ց թող, բա՛ց թող դնամ...

Էսպես էր ասում ցա՜ծ, շատ ցա՜ծ ձեռով, ցամաքած բերանը բաց ու խուփ անելով։

Էս շալակտարի մեղքը գալիս է, առնում է ետ գցում գետը։

— Գնա, սիրուն ձկնիկ, թող լաց չլինի քո ծնողը։ Թող չըտխրեն քու ընկերները։ Գնա ապրի ու խաղ արա նրանց հետ։

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակտարի վրա։

— Տո՛ ախմախ,— ասում է,— էստեղ ջրի մեջ թրջվելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես էլ ետ ջուրը գցո՜ւմ... Դե գնա կորի, էլ իմ աչքին չերևաս, էլ իմ շալակտարը չես էս օրից. գնա սովից մեռի։

Ձեռի տոպրակն էլ խլում է ու ճամփու դնում։

— Հիմի ես ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ, ո՞նց ապրեմ...— տարակուսած մտածելով դառն ու դատարկ վերադառնում է աղքատը դեպի տուն։

2

Էս տխուր մտածմունքի ժամանակ ճամփին դեմը դուրս է գալի մի մարդակերպ Հրեշ առաջը մի գեղեցիկ կով։

— Բարի օր, ախպերացու, էդ ի՞նչ ես մտլորել, ի՞նչ ես միտք անում,— հարցնում է Հրեշը։

Աղքատը պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես հիմի մնացել է անգործ, անճար ու չի իմանում, թե ոնց պետք է ապրեն ինքն ու իր կինը։

«Լսի՛, բարեկամ,— ասում է Հրեշը։— Էս կաթնատու կովը ես քեզ կըտամ երեք տարվան ժամանակով։ Ամեն օր էնքան կաթը տա, որ քու կնիկն ու դու կուշտ-կուշտ ուտեք, ապրեք։ Երեք տարին լրացավ թե չէ, հենց էն գիշերը կըգամ ձեզ հարց կըտամ։ Թե հարցիս պատասխանեցիք—իմ կովը ձեզ լինի, թե չէ՝ երկուսդ էլ իմն եք, տանելու եմ, ինչ ուզեմ կանեմ։ Համաձայն ե՞ս։

— Մի բան՝ որ առանց էն էլ սովից մեռնելու ենք,— մտածում է աղքատը,— կովը կըտանեմ. էս երեք տարին

կապրենք, մինչև երեք տարվա լրանալն էլ ասված ողորմած է։ Մի տեղից մի դուռը կըբացվի, կամ գուցե հենց պատասխանը տալիս ենք, ով գիտի... ։

— Համաձայն եմ, ասում է, ու կովն առաջն անում, տանում տուն։

3

Երեք տարի կթում են, լիուլի ուտում, ապրում։ Ձեռն էլ նկատում, թե ինչպես անցավ երեք տարին. և ահա հասնում է նշանակած օրը, որ Հրեշն էն գիշեր պիտի գա։

Մարդ ու կնիկ վերջալուսի տակ տխուր նստում են դռանը ու միտք են անում, թե ինչ պատասխան տան Հրեշին կամ ով գիտի՝ ինչ կըհարցնի նա. ո՞վ կիմանա Հրեշի միտքը։

— Ա՛յ թե ինչ դուս կըգա, երբ մարդ Հրեշի հետ գործ բռնի... Հրեշի հետ հաշիվ ունենա... Հրեշից լավություն ընդունի...— հառաչելով զրուցում էին մարդ ու կին, բայց անցկացածն անց էր կացել, էլ հնար չըկար։ Իսկ զարհուրելի գիշերն արդեն վրա էր հասնում։

Էս ժամանակ նրանց մոտենում է մի անծանոթ գեղեցիկ երիտասարդ։

— Բարի իրիկուն,—ասում է,— ճամփորդ մարդ եմ. մութն ընկնում է, ես էլ հոգնած եմ, հյուր չե՞ք ընդունի ձեր տանն էս գիշեր։

— Ընչի չէ, ճամփորդ ախպեր, հյուրն աստծունն է։ Բայց մեզ մոտ վտանգավոր է էս գիշեր։ Մենք Հրեշից մի կով ենք առել էն պայմանով, որ երեք տարի կթենք, ուտենք, երեք տարուցը եկը գա մեզ հարց տա, թե պատասխանենք, կովը մեզ լինի, թե չէ—իր գերին ենք։ Հիմի ժամանակը լրացել է, էս գիշեր պիտի գա, մենք էլ չըգիտենք, թե ինչ պատասխան տանք։ Հիմի մեզ ինչ անի մենք ենք մեղավոր, վայ թե քեզ էլ վնասի։

— Բան չըկա, որտեղ դուք՝ էնտեղ էլ ես,— պատասխանում է օտարականը։

Համաձայնում են. հյուրը մնում է։

Մին էլ կես-դիշերին դուռը դղրդում է։ Ո՞վ է։— Հրեշը։ Եկել եմ որ եկել եմ, դե պատասխանս տվեք։— Ինչ պատասխան. սարսափից մարդ ու կնգա լեզուն կապվում է, մնում են տեղները քարացած։

— Մի՛ վախենաք, ես ձեր տեղակ սրա պատասխանը կըտամ,— ասում է երիտասարդ հյուրը ու գնում է դեպի դուռը։

— Եկել ե՞մ,— դռան ետեւից ձայն է տալիս Հրեշը։

— Ես էլ եմ եկե՞լ,— պատասխանում է ներսից հյուրը։

— Ո՞րտեղից ես գալիս։

— Ծովի էն ափից։

— Ընչո՞վ ես եկել։

— Կաղ մոծակը թամքիլ եմ, վրեն նստել եմ, եկել։

— Ուրեմն ծովը պստիկ է եղել։

— Ի՞նչ պստիկ. արծիվը չի կարող մի ափից մյուսը թռչի։

— Ուրեմն արծիվը ճուտ է եղել։

— Ի՞նչ ճուտ. թևերի շվաքը քաղաք է ծածկում։

— Ուրեմն քաղաքը շատ է փոքրիկ։

— Ի՞նչ փոքրիկ. նապաստակը մի ծայրից մյուսը չի հասնի։

— Ուրեմն նապաստակը ձագ է։

— Ի՞նչ ձագ. մորթին մի մարդու քուրք դուրս կըգա, գլխարկն ու տրեխն էլ ավել։

— Ուրեմն մարդը թզուկ է։

— Ի՞նչ թզուկ, ծընկան ծերին աքլորը ծուղրուղու կանչի ձենը ականջը չի հասնիլ։

— Ուրեմն խուլ է։

— Ի՞նչ խուլ. սարում որ պախրեն խոտ պոկի նա կըլսի։ Հրեշը մնում է կապված, մոլորված. զգում է, որ ներսը մի ուժ կա իմաստուն, համարձակ, անհաղթելի, էլ չի իմանում ինչ ասի, սուս ու փուս քաշվում, կորչում է դիշերվա խավարի մեջ։

Սրանք նոր մեռած տեղներիցը ետ են գալի, ուրախանում աշխարհքովը մին են լինում։ Հետո էլ բացվում է լարի լուսը, և երիտասարդ հյուրը վեր է կենում, մնաք բարով է ասում, որ գնա իր ճանապարհը։

— Ձենք թողնի, որ չենք թողնի,— առաջը կտրում են մարդ ու կին.— դու որ փրկեցիր մեր կյանքը, ասա՛, ինչով ետ վճարենք քո լավությունը...

— Չէ՛, անկարելի բան է, պետք է գնամ իմ ճանապարհը։

— Դե գոնե անունդ ասա, եթե լավությունդ կորչի ու չրկարողանանք ետ վճարել, գոնե իմանանք՝ թե ում ենք օրհնելու...

— Լավությունը արա ու թեկուզ ջուրը գցի—չի կորչի։ Ես հենց էն խոսող ձուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր...— ասում է անծանոթն ու չքանում ապշած մարդ ու կնգա աչքերից։

———

ԿՈՆԱՏ ԱՂՋԻԿԸ

Ժամանակով լինում են, չեն լինում, մի քույր ու մի ախպեր են լինում։ Քույրը էնքան սիրուն, էնքան շարմաղ է լինում, ինչպես լուսի կտոր, անունն էլ Լուսիկ։

Ախպերը պսակվում է, կնիկ է բերում։

Սա տեսնում է, թե ինչպես ամենքը սիրում են Լուսիկին, ու նախանձը, օձի նման բույն է դնում սրտի մեջ։ Սկսում է Լուսիկին բամբասել ու լացացնել ամեն օր, ամեն օր...

Ախպերը ամեն կերպ աշխատում է ուրախ պահի քրոջը։ Մին տուն է գալիս՝ հետը ծաղիկ է բերում նրա համար, մյուս օրը միրգ, մի ուրիշ անգամ հագուստ։

Եվ Լուսիկը մնում է միշտ բարի, գեղեցիկ ու սիրված ամենքից։

Հարսը նախանձից քիչ է մնում տրաքի, մտածում է, ինչ անի, ոնց անի, որ մեջտեղից կորցնի Լուսիկին։

Մտածում է, մտածում է. ու մի օր էլ, երբ մարդը տանից դուրս է գնում, վեր է կենում, տան կահ-կարասին, աման-չամանը իրար գլխով է տալիս, ջարդում ու գնում ձեռները ծոցին դռանը կանգնում մինչև մարդու գալը։

Որ տեսնում է մարդը գալիս է, սկսում է լաց լինել։

— Ա՛յ,— ասում է,— էս էլ քո սիրած քույրը, տանը ինչ ունեինք-չունեինք՝ ջարդեց։

— Բան չկա, այ կնիկ, դրա համար ինչո՞ւ ես լաց լինում. էդ բոլորն էլ առնելու բաներ են։ Աման է՝ կոտրեց, նորը կառնենք, բայց Լուսիկի սիրտը որ կոտրենք, հետո ի՞նչ անենք։

Կինը տեսնում է, որ էս մինը չեղավ։ Մյուս անգամ, երբ մարդը դուրս է գնում, նրա սիրած ձին տանում է, քշում կորցնում ու գալիս ձեռները ծոցին կտերը կանգնում, մինչև մարդը եռ է գալի։

— Ա՛յ,— ասում է,— էս էլ քո սիրած քույրը. քու էն լավ ձին դուրս է արել, կորցրել, մեզ էսպես տնաքանդ արել։

Մարդը ասում է.

— Բան չկա. ձի է, կորել է, կաշխատեմ մի ուրիշ ձի էլ կառնեմ, բայց հո չեմ կարող մի ուրիշ քույր առնել։

Չար կինը տեսնում է, որ էս անգամ էլ ցուր անցկացավ, ավելի է կատաղում իրեն կրծում։

Մի գիշեր էլ քնած ժամանակը իր երեխին օրորոցումը մորթում է, արնոտ դանակը թաքուն դնում քնած Լուսիկի գրպանը։

Գիշերվա մի ժամանակը մայրը շաղ է տալի, երեսը պոկում, ճչում, ծղրտում.

— Վա՛յ, երեխես, երեխես...

Տանը ցիք վեր են թռչում, տեսնում երեխեն օրորոցումը մորթած։ Մնում են սարսափած, սասանած կանգնած։ Էս ո՞վ կըլինի, ո՞վ չի լինի...

Հարսն ասում է.

— Էլ ո՞վ պետք է լինի. էս տունը մեղանից բացի հո էլ ուրիշ մարդ չի մտել. ման գանք, ում գրպանում արնոտ դանակը գտնենք—նա կլինի։

Համաձայնում են։ Ման են գալի, ու... արնոտ դանակը հանում են Լուսիկի գրպանից։

Մնում են քար կտրած, բայց էլ ի՞նչ...

— Է՛ս էլ քո սիրած քույրը,— ճչում է չար կինը ու երեսը պոկում—երեխես, երեխես...

Առավոտը լուսի հետ աշխարհքով մին լուրը տարածվում է։ Ժողովուրդը վրդովվում է, դատաստան է պահանջում, մայրը լալիս է, դատաստան է պահանջում, ու գեղեցիկ Լուսիկին քաշում են դատաստանի դուռը։ Դատում են վճռում, կռները կտրում են ու էնպես, կռնատ, տանում, հեռացնում, կորցնում են հեռո՛ւ, հեռո՛ւ անտառներում։

Էսպես կռնատ, մեն-մենակ թափառում է Լուսիկը անբնակ անտառներում։ Շատ թափառելուց թփերն ու փշերը հագի շորերը տանում են, մնում է տկլոր։ Մոծակներն ու մժեղները կծոտում են, ձեռ չի ունենում թե քշի, մտնում է մի ծառի փչակ։

Օրերից մի օր Թագավորի տղեն էս անտառը որսի է գալի։ Որսի շները անտառում էս ու էն կողմն են ընկնում, մի ծառի շրջապատում ու սկսում են հաչել։

Թագավորի տղեն, իր հետի մարդիկը մտածում են, թե շները երևի գազանի հետքի վրա են ընկել կամ որջ են դտել, ու սկսում են շներին հիս անել։

— Հիս մի՛ անել ինձ վրա, Թագավորի որդի,— ձեն է տալի աղջիկը ծառի փչակից,— ես մարդ եմ, գազան չեմ։

— Թե մարդ ես, դե դուրս արի։

— Չեմ կարող, մերկ եմ, ամաչում եմ։

Թագավորի տղեն ձիուց իջնում է, վերարկուն հանում ա տալիս իր մարդկանց, որ տանեն գցեն աղջկա վրա։ Վերարկուն տանում են, գցում են աղջկա վրա. դուրս է գալիս մի սիրուն, մի աննման աղջիկ, որ ոչ ուտես, ոչ խմես, կանգնես ու մտիկ անես։ Թագավորի տղեն հայիլ-մայիլ է մնում։

— Ո՞վ ես դու, սիրուն աղջիկ, ի՞նչ ես շինում էս անտառում, ի՞նչու ես մտել էս ծառի փչակը...

— Ես մի էսպես աղջիկ եմ. աշխարհքումը մի ախպեր ունեմ. բայց ախպերն էլ է ինձ թողել, աշխարհքն էլ...

— Ախպերդ էլ է քեզ թողել, աշխարհքն էլ, բայց ես չեմ թողնիլ,— ասում է արքաորդին ու առնում է Լուսիկին տանում իրենց տունը։

Տանում է իրենց տունը, հորն ու մորը հայտնում, թե պետք է պսակվի նրա հետ։

— Թե սրա հետ կըպսակվեմ, լավ, թե չէ հո՝ ինձ մի փորձանքի կըտամ։

Հերն ու մերն ասում են.

— Ա՛յ որդի, աշխարհքի աղջիկները հո վերջացել չեն. Թագավորի աղջիկներ կան, նազիր-վեզիրների աղջիկներ

կան, հարուստ, դեղեցիկ... էդ կռնատ, տկլոր, անտեր աղջիկն ո՞վ է, որ դու դրան ուզում ես։

— Չէ՞, որ չէ...

Հերն ու մերը ճարահատված իրենց քաղաքի խելոք մարդկանց հավաքում են, մի խորհուրդ են հարցնում, թե ինչպես անեն, իրենց որդուն էդ կռնատ աղջկա հետ պսակեն, թե չէ։

Խելոք մարդիկ ասում են.

— Մարդ ու կնկա բախտը որ կա՝ սրտիցն է։ Ձեր տղի բախտն էլ, երևի, էդ աղջիկն է, որ սիրտը կպել է դրան։ Աստված դրանց համար էլ, էդպես է բարի տեսել։

Էս որ լսում են՝ հերն ու մերն էլ համաձայնվում են, յոթն օր, յոթը գիշեր հարսանիք են անում, ու Թագավորի տղեն ամուսնանում է գեղեցիկ Լուսիկի հետ։

Մի առժամանակ անց է կենում, էս Թագավորի տղեն գնում է հեռու երկիր։ Գնալիս տանը պատվիրում է, որ երբ կինը ծնի՝ իրեն տեղեկություն գրեն։ Պատվիրում է ու գնում։

Սրա գնալուց մի քանի ամիս անց է կենում, Լուսիկը աղատվում է, մի սիրուն, շարմաղ, ոսկեդանգուր տղա է ծնում։

Թագավորն ու թագուհին էնպես ուրախանում են, էնպես ուրախանում են, որ աշխարհքովը մին են լինում։ Աչքալուս են դրում, նամակը տալիս են սուրհանդակին, ուղարկում են։ Դու մի ասիլ, էս նամակը տանողը գնում է ճանապարհին հյուր է ընկնում Լուսիկի եղբոր տանը ու գիշերը մնում է նրանց մոտ։ Իրիկունը պրույց անելիս պատմում է, թե՝ հապա՛, էսպես-էսպես մի բան է պատահել ու հիմի աչքալուսի թուղթ եմ տանում Թագավորի տղին։

Չար հարսը էստեղ գլխի է ընկնում բանը։ Գիշերվա մի ժամանակը վեր է կենում, էս մարդի գրպանից նամակը հանում, կրակը գցում ու ինքը մի նոր նամակ գրում, դնում տեղը։ Գրում է, թե՝ հապա չես ասիլ, քու գնալուց եռը կլիդ ծնեց՝ մի շան լակոտ բերա՞վ... Էսպես խայտառակվեցինք աշխարհքի մեջ. հիմի քեզ իմացնում ենք—գրի ինչ անենք, ինչ չանենք։

Սուրհանդակը էս նամակը տանում է տալի թագավորի տղին։ Կարդում է թագավորի տղեն ու շա՜տ շատ վշտանում։ Հորն ու մորը նամակ է գրում, թե իմ բախտն էլ երևի էդ է եղել. ինչ որ ասուված ավել է—իմն է, պահեցեք, կնկանս էլ մի թթու խոսք չասեք, մինչև ես գամ։

Գրում է, նամակը տալիս սուրհանդակին, ետ դրկում։ Էս սուրհանդակը վերադարձին գալիս է կրկին իր հյուրատունը ու էլի գիշերը մնում է նրանց մոտ։

Չար հարսը դիշերվա մի ժամանակն էլի վեր է կենում, սրա գրպանից թագավորի տղի նամակը հանում, գցում կրակը, ինքը մի նորը գրում, դնում տեղը։ Գրում է, թե՝ իմ կինն ինչ որ ծնել է, իր ծնած շան լակոտը դոշիցը կրկապեք ու դուրս կանեք, կրկորցնեք, որ ես չըդամ ու մեր տանը տեսնեմ, թե չէ ինձ մի փորձանքի կըտամ։

Հերն ու մերը էս նամակը որ ստանում են, մնում են զարմացած։ Ասում են.

— Էս ի՞նչ բան է. ինքը բերավ մեր կամքին հակառակ հետը պսակվեց, հիմի էլ գրում է, թե՝ դուրս արեք...

Շատ են տխրում, շատ է մեղքները գալի, բայց ինչ որ գրել էր՝ պետք է կատարեին։

Բերում են երեխին կապում են մոր դոշիցը, լաց են լինում, օրհնում են ու իրենց տանիցը դուրս են անում։

Երեխեն դոշիցը կապած՝ Լուսիկը գնում է լալով։ Անց է կենում խոր ձորեր, մութ անտառներ, անքնակ դաշտեր, ընկնում է մի անջուր, ամայի անապատ։

Էս անապատում՝ ծարավ, ջրշոր՝ գնում է, գնում է, շատ է գնում, թե քիչ է գնում, շատն ու քիչն էլ ասուված գիտի—հասնում է մի ջրհորի։ Նայում է ջրհորի մեջը, աչքին թվում է, թե ջուրը մոտիկ է։ Կռանում է թե ջուր խմի՝ երեխեն գրկիցը ընկնում է ջրհորի մեջը։ Ճչալով ջրհորի էս կողմն է թռչում, էն կողմն է թռչում։ Հանկարծ ետևից մի ձեն է գալի.

— Մի՛ վախիլ, աղջիկ ջան, մի՛ վախիլ, հա՛նի...

Ետ է նայում, տեսնում՝ սիպտակ միրուքը մինչև գոտկատեղը մի ծերունի։ Ասում է.

— Ո՞նց հանեմ, չեմ կարող, պապի ջան, ձեռներ չունեմ։

— Հա՛նի, հա՛նի, աղջիկ ջան, ձեռներ ունես, մեկնի...

Լուսիկը կռները մեկնում է, ձեռները բացվում են, ու երեխեն ջրհորից հանում է։ Ետ է դառնում թե շնորհակալություն անի, տեսնում է ծերունի չըկա, աներևութացել է։

Սրան էստեղ թողնենք իր երեխի հետ ու հիմի ո՞ւմից տեղեկություն տանք։ Հիմի տեղեկություն տանք թագավորի աղիցը։

Թագավորի տղեն օտարությունից վերադառնում է, ամեն բան իմանում է, ու էլ տուն չի մտնում. դռնից ետ է դառնում, գնում է աշխարհք է աշխարհք ման դա, որ իր կնկանն ու երեխին գտնի։

Գնում է ման է գալի. էս կողմը հարց ու փորձ, էն կողմը հարց ու փորձ, մի տեղ պատահում է մի մարդու։

— Բարի օր։

— Աստծու բարին։

— Ո՞ւր առաջ բարի։

— Իմ քրոջն եմ ման գալի։

— Դե մին շըլինենք, երկու լինենք, գնանք, ես էլ իմ կնկան... երեխես եմ ման գալի։

Ընկերանում են, գնում են ման են գալի, մի տարի, երկու տարի, երեք տարի, ոչ տեղն են իմանում, ոչ տեղեկություն։ Էս թագավորի տղեն վերջը գալիս մի մեծ ճանապարհի վրա քարվանսարա է պահում, ընկերն էլ իր տուն ու տեղը, իր կնկանը բերում է ու էնտեղ ապրում են, որ գուցե թե գնացող-եկողից մի բան իմանան։

Մի անգամ էս քարվանսարի դուռն է գալի մի աղքատ կին իր փոքրիկ տղի հետ։

Թագավորի տղեն իր ընկերոջը ասում է.

— Եկ ներս կանչենք էս աղքատ կնկանն ու իր երեխին։ Սրանք լավ հեքիաթներ են գիտենում ու լավ էլ պատմում են. հեքիաթ կըպատմի, մենք էլ դարդի տեր մարդիկ ենք, կըլսենք, գիշերն անց կըկենա։

Ընկերոջ կնիկն էն կողմից հակառակում է, թե՝ մենք հազիվ ենք տեղավորվում, դրանց ո՞րտեղ բերենք։

Թագավորի տղեն որ շատ խնդրում է, ներս են թողնում

մուրացկան կնկանն ու իր երեխին։ Մերը պատի տակին կուչ է գալի, երեխեն էլ կողքին։ Թագավորի տղեն ասում է.

— Քունները չի տանում, քույրիկ, հեքիաթից, առակից կիմանաս, պատմի լսենք, գիշերն անցկենա։

— Ես ոչ հեքիաթ գիտեմ, ոչ առակ,— պատասխանում է աղքատը,— ես մի ճշգրիտ պատմություն գիտեմ, մի պատահած դեպք և շատ հետաքրքրական. թե կուզեք, պատմեմ, լսեցեք։

— Լավ, էդ պատմի։

Ու աղքատ կինը սկսում է պատմել։

— Մի ժամանակ մի աշխարհքում լինում են, չեն լինում, մի քույր մի ախպեր են լինում։ Ախպերը պատակվում է, կին է բերում, մի շար ու նախանձոտ կին։

Տանտիկինը էն կողմից բարկանում է.

— Հը՛, սկսեց գլխից դուրս տալ։

— Ա՛յ կնիկ, ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ ես խանգարում, թող պատմի,— նեղանում է մարդը։— Պատմի, քույրիկ, դու պատմի...

Աղքատ կնիկը շարունակում է իր հեքիաթը.

— Քույրը մի գեղեցիկ ու բարեսիրտ աղջիկ է լինում, ամենքը սիրում են նրան։ Ախպերն էլ ամեն տուն գալով միշտ նրա համար մի բան է բերում՝ կամ ծաղիկ, կամ միրգ, կամ հագուստ և կամ թե չէ՝ մի քաղցր խոսք է ասում։ Նախանձում է շար հարսը, հնարքներ է մտածում, թե ինչպես անի, որ կորցնի գեղեցիկ աղջկանը։

— Հը, գե տեսեք ինչ է ասում է՛ս անզգամը...— կրկին մեջ է ընկնում տանտիկինը։

— Ա՛յ կնիկ, ի՞նչ պատահեց քեզ. թող լսենք, տեսնենք ինչ է ասում։ Դու շարունակի, քույրիկ, սրան ականջ մի դնիր։

Աղքատ կնիկը շարունակում է.

— Հնարքներ է մտածում շար հարսը։ Մի օր տան կահ-կարասին է շարդում ու դնում անմեղ աղջկա վրա, մյուս օրը մարդու սփրած ձին է բաց թողնում, կորցնում ու մեղադրում քրոջը. տեսնում է բան չի դառնում, վերջը իր երեխին օրորոցի մեջ մորթում է, դանակը դնում քնած աղջկա գրպանը...

— Զենդ կարի, լիրբ, անզգամ, ո՞վ է իմացել, որ մեկն իր երեխին մորթի,— ճչում է տանտիկինը։

— Ի՞նչ ես ընդհատում,— գոռում է մարդը կնոջ վրա։— Թող պատմի, չե՞ս տեսնում՝ ինչ հետաքրքրական բան է պատմում։

Աղքատը շարունակում է.

— Դատաստան են անում, կորում են անմեղ աղջկա կոնները ու էնպես կոնատ հալածում, կորցնում հեռո՛ւ, հեռո՛ւ...

Հալածված թափառում է նա անծանոթ անտառներում։ Էն երկրի թագավորի տղեն օրերից մի օր որսի է դուրս գալի էն անտառները, գտնում է գեղեցիկ աղջկանը ու պատակվում է նրա հետ։ Թագավորի տղեն հեռու երկիր է գնում։ Նրա գնալուց հետո կինը ծնում է մի ոսկեգանգուր երեխա։ Աչքալուսի նամակ են գրում հորը։ Նամակատարը ճամփին հյուր է ընկնում կոնատ աղջկա եղբոր տունը։

Չար հարսը գիշերը փոխում է նամակը, նոր նամակ է գրում թագավորի տղին, թե՝ «քու կնիկը ծնել է, շան լակոտ է բերել...»։

— Սո՛ւս, հերիք էր ինչ որ տակից-գլխից դուրս տվիր, դուրս կորի գնա,— կատաղում է տանտիկինը։

— Ախպեր, կնկանդ ասա հանգիստ կենա, լսենք, տեսնում ես ինչ պատմություն է անում,— խնդրում է թագավորի տղեն ընկերոջը։

Աղքատը շարունակում է.

— Թագավորի տղեն կարդում է փոխած նամակը, վրշտանում է, բայց էլի գրում է, որ պահեն, մինչև իրեն կլրա։ Նամակատարը վերադարձին կրկին հյուր է ընկնում նույն տունը։ Էս նամակն էլ է փոխում չար հարսը ու գրում է, թե՝ «նամակն ստանալուն պես իր ծնածը կրծքիցը կապեցեք ու դուրս արեք իմ կնոջը»։ Էս նամակն ստանում են թագավորն ու թագուհին, շատ են զարմանում, շատ են տանջվում—

բայց ինչ անեն— կատարում են ինչ որ գրած է. երեխին մոր դաշիցն են կապում ու դուրս անում։

— Էս ո՞րտեղից եկավ էս շունը,— ազաղակում է տանտիկինը։

— Բավական է,— գոռում են վրեն մարդն ու թագավորի տղեն։— Պատմի, քույրիկ, հետո՞... հետո՞...

Աղբատը շարունակում է.

— Հետո թագավորի տղեն տուն է գալի։ Լսում է ինչ է պատահել, ետ է դառնում, գնում է իր կնոջն ու երեխին ման գալու։ Պատահում է կոնտա ալչկա եղբորը։ Նա էլ դուրս էր եկել իր քրոջը ման գալու։ Ընկերանում են ու ման են գալի։ Շուտ են ման գալի, չեն գտնում։ Գալիս են, մեծ ճանապարհի վրա մի քարվանսարա են պահում...

— Սուտ է ասում,— գոչում է տանտիկինը։ Իսկ մարդն ու թագավորի տղեն ագռուշ կտրած սպասում են վերջին։ Եվ աղքատ կինը հասնում է վերջին.

— Սոված ու ծարավ թափառում է հալածված մերը իր ոսկեգանգուր երեխի հետ, վերջը աղքատ, տկլոր գալիս է, հասնում էդ քարվանսարայի դուռը... Ախպերն ու ամուսինը մեղքանում են, ներս կանչում, խնդրում են, որ մի հեքիաթ ասի իրենց համար...

— Վա՛յ...— ուշաթափվում է տանտիկինը։

— Լուսիկ ջա՛ն... մի՞թե դու ես... վեր են թռչում թագավորի տղեն ու ընկերը, Լուսիկ ջան...

— Հա՛, ձեր Լուսիկն եմ ես, ահա իմ ախպերը, ահա իմ ամուսինը, ահա իմ ոսկեգանգուր երեխան, և ահա շար հարսը...

Լեզվով չի պատմվիլ, թե ինչպես են ուրախանում ամենքը, որ իրար որոնում էին ու գտնում են վերջապես։

Իսկ շար հարսին կապում են կատաղի ձիու պոչից ու բաց են թողնում արձակ դաշտերում։ Որտեղ արյունն է կաթում, էնտեղ փուշ ու տատասկ է դուրս գալի, որտեղ արտասուքն է թափվում, էնտեղ լիճ է դոյանում։ Էն լճի խորքում երևում է մի երեխա՝ քնած օրորոցում, դանակը գրած գլխի տակին։ Ասում են՝ երևում է և մի վանք. էն վանքում շոքած է մի կին ու լալիս է, լալիս է, անվերջ լալիս է։

1909

ԱՆՀԱՂԹ ԱՔԼՈՐԸ

Լինում է, չի լինում՝ մի աքլոր է լինում։

Էս աքլորը քուջուջ անելիս մի տսկի է գտնում։

Կտուրն է բարձրանում, ձեն է տալի.

— Մուղրուղո՛ւ, փող եմ գտե՛լ...

Թագավորը լսում է, իր նազիր-վեզիրին հրամայում է՝ գնան խլեն բերեն։

Նազիր-վեզիրը գնում են՝ խլում բերում։

Աքլորը կանչում է.

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձանով ապրե՛ց...

Թագավորը ոսկին ետ տալիս է իր նազիր-վեզիրին, ասում է.

— Նա տարեք իրեն տվեք, թե չէ աշխարհքովը մին կխայտառակի մեզ էդ անպիտանը...

Նազիր-վեզիրը ոսկին տանում են ետ տալիս աքլորին։

Աքլորն էլ կտուրն է բարձրանում.

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձանից վախե՛ց...

Թագավորը բարկանում է, իր նազիր-վեզիրին հրամայում է.

— Գնացե՛ք,— ասում է,— բռնեցեք էդ սրիկային, գլուխը կտրեցեք, եփեցեք բերեք ուտեմ, պրծնեմ դրանից։

Նազիր-վեզիրը գնում են աքլորին բռնում, որ տանեն։ Տանելիս կանչում է.

— Մուղրուղո՛ւ, թագավորն ինձ հյուր է կանչե՛լ...

Տանում են մորթում, պղինձն են կոխում, որ եփեն, ձեն է տալի.

— Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձ տաք-տաք բաղնիք է ղրկե՜լ...

Եփում են բերում թագավորի առաջն են դնում, կանչում է.

— Թագավորի հետ սեղան եմ նստե՜լ, ծուղրուղո՜ւ...

Թագավորը շտապով վերցնում է կուլ տալի։ Կոկորդով գնալիս կանչում է.

— Նեղ-նեղ փողոցներով անց եմ կենում, ծուղրուղո՜ւ...

Թագավորը որ տեսնում է՝ կուլ տվեց, էլ չի ձենը կըտրում, իր նագիր-վեզիրին հրամայում է թուրները հանած պատրաստ կենան, որ մին էլ ձեն ածի— ղարկեն։

Նագիր-վեզիրը թրերը հանած՝ պատրաստ կանգնում են մինը էս կողմը, մյուսը էն։

Աքլորը որ թագավորի փորն է հասնում, ձեն է տալի.

— Լուս աշխարհքումն էի, մութ տեղն եմ ընկել, ծուղրուղո՜ւ...

— Ջարկեցե՛ք...— հրամայում է թագավորը։

Նագիր-վեզիրը զարկում են, տալիս են թագավորի փորը պատռում։

Աքլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանգնում ձեն տալի.

— Ծուղրուղո՜ւ...

1910

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում։

Էս մարդ ու կնիկը իրար հավանելիս չեն լինում։

Մարդը կնկանն է ասում հիմար, կնիկը մարդուն, ու միշտ կռվելիս են լինում։

Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն։

Կնիկը բարկանում է.

— Ա՛յ, որ ասում եմ հիմար ես, չես հավատում. էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել. հորդ քե՞լեխն ես տալիս, թե տղիդ հարսանիքն ես անում։

— Ի՞նչ քելեխ, ի՞նչ հարսանիք, այ կնիկ, ի՞նչ ես խոսում, տար պահի, բարեկենդանի համար է։

Կնիկը հանգստանում է, տանում է պահում։

Անց է կենում մի առժամանակ, էս կնիկը սպասում է, սպասում է, բարեկենդանը դալիս չի։ Մի օր էլ շեմքումը նստած է լինում, տեսնում է մի մարդ վռազ-վռազ փողոցով անց է կենում։ Ձեռը դնում է ճակատին ու ձեն տալի.

— Ա՛խպեր, ա՛խպեր, հալա մի կանգնի։

Տղեն կանգնում է։

— Ա՛խպեր, բարեկենդանը դու հո չե՞ս,

Անցվորականը նկատում է, որ էս կնկա ծալը պակաս է, ասում է՝ հա՛ ասեմ, տեսնեմ ինչ է դուրս գալի։

— Հա, ես եմ բարեկենդանը, քույրիկ ջան, ի՞նչ ես ասում։

— Էն եմ ասում, որ մենք քո ծառան հո չենք, որ քո եղն ու բրինձը պահենք։ Ինչ որ պահեցինք, հերիք չէ՞... չես ամաչո՞ւմ... Ընչի՞ չես գալի քո ապրանքը տանում...

— Դե էլ ի՞նչ ես նեղանում, քույրիկ ջան, ես էլ հենց դրա համար եմ եկել, ձեր տունն էի մտնելիս, չէի գտնում։

— Դե արի տար։

Էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը շալակում ու կրունկը դեսն է անում, երեսը դեպի իրենց գյուղը։

Մարդը գալիս է տուն, կնիկն ասում է.

— Հա՛, էն բարեկենդանն եկավ, իր բաները իրեն սեցրի տարավ։

— Ի՞նչ բարեկենդան... ի՞նչ բաներ...

— Ա՛յ էն եղն ու բրինձը... Մին էլ տեսնեմ՝ վերևից գալիս է. մեր տունն էր մտնելիս. կանչեցի, մի լավ էլ խայտառակ արի, շալակը տվի տարավ։

— Վայ քու անխելք տունը քանդվի, որ ասում եմ հիմար ես — հիմար ես էլի... Ո՞ր կողմը գնաց։

— Ա՛յ էն կողմը։

Էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետևից։ Ճանապարհին բարեկենդանը ետ է մտիկ անում, տեսնում է՝ մի ձիավոր քշած գալիս է։ Գլխի է ընկնում, որ սա էն կնիկ մարդը պետք է լինի։

Գալիս է հասնում իրեն։

— Բարի օր, ախպերացու։

— Աստծու բարին։

— Հո էս ճամփովը մարդ չի անցկացավ։

— Անցկացավ։

— Ի՞նչ ուներ շալակին։

— Եղ ու բրինձ։

— Հա, հենց էդ եմ ասում։ Ի՞նչքան ժամանակ կըլինի։

— Բավականին ժամանակ կըլինի։

— Որ ձին քշեմ՝ կըհասնե՞մ։

— Ո՞րտեղից կըհասնես, դու ձիով, նա ոտով։ Մինչև քու ձին շորս ոտը կըփռի— մի՞ն, երկո՞ւ, երե՞ք, չո՞ր— նա երկու ոտով մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, շուտ-շուտ կըգնա, անց կըկենա։

— Բա ի՞նչպես անեմ։

— Ինչպես պետք է անես. ուզում ես, ձիդ թող ինձ մոտ, դու էլ նրա պես ոտով վազի, դուցե հասնես։

— Հա՛, էդ լավ ես ասում։

Վեր է գալիս, ձին թողնում սրա մոտ ու ոտով ճանապարհ ընկնում։ Սա հեռանում է թե չէ, բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամփեն ծռում, քշում։

Էս մարդը ոտով գնում է, գնում է, տեսնում է չըհասավ, ետ է դառնում։ Ետ է դառնում, տեսնում՝ ձին էլ չըկա։ Գալիս է տուն։ Նորից սկսում են կռվել, մարդը եղ ու բրինձի համար, կնիկը ձիու։

Մինչև օրս էլ էս մարդ ու կնիկը կռվում են դեռ։ Սա նրան է ասում հիմար, նա սրան, իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում։

ՍԱՒՏԼԻԿ ՈՐՍԿԱՆԸ

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք։ Հադին էր, Հյուդին էր, Զատին էր, Մատին էր, հերս էր, ես էի, գնացինք որսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, որտեղ որս կար՝ սուս ու փուս գնացինք, որտեղ ահ էր՝ կուզ ու կուզ գնացինք...

Գնացի՞նք, գնացի՞նք, շատ թե քիչ, մին էլ տեսնենք երեք լիճ. երկուսը ցամաք, մընի մեջ էլ ըսկի շուր չկա։ Մին էլ, ըհը, մտիկ տանք, որ էս անշուր լճում լողում են ճչում երեք հատ սիպտակ բադ, երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չի։

— Հադի՛, տո՛ւր հա, տո՛ւր։

Թե՝ թվանք չունեմ։

— Հյուդի՛, տո՛ւր հա, տո՛ւր։

— Ես էլ չունեմ։

— Զատի... Մատի...

— Մենք էլ չունենք։

— Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փեռ կար. երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրա՞ք, որ կրակեց... Նա կրակեց, ես զարկեցի. որ զարկեցի՝ փռվեց էսպես— ամեն թեը հինգ դաղ ու կես...

— Հադի, դանա՞կ...

Թե՝ դանակ չունեմ։

— Հյուդի, դու...

— Ես էլ չունեմ։

— Զատի՞, Մատի՞...

— Մենք էլ չունենք։

— Բա ի՞նչ անենք...

Հերս էլ ունի, բերան չունի։

Էս անբերան դանակը քաշեցինք։ Հադին մորթեց, չըկարաց. Հյուդին մորթեց, չըկարաց, Զատին չըկարաց, Մատին չըկարաց, հերս էլ չըկարաց, ե՛ս քաշեցի մորթեցի։

Մորթեցի, վեր գցեցի. բաղ մի ասիլ—մի գոմեշ ասա։ Հադին շալակեց, չըկարաց, Հյուդին շալակեց, չըկարաց. Զատին չըկարաց, Մատին չըկարաց, հերս էլ չըկարաց, ե՛ս շալակեցի։ Շալակեցի, գնացինք։

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին էլ տեսնենք երեք գեղ, երկուսի տեղն իսկի չի երևում, մընումն էլ իսկի շենլիկ չըկա։ Էս անշեն գեղում դես ման եկանք, դեն ման եկանք, մի տուն դտանք, մեջը երեք պառավ, երկուսը մեռած, մընի բերնումն էլ շունչ չըկա։

— Տղերք, ասինք, եկեք բաղով փլավ անենք։

Էս անշունչ պառավը գնաց դես ման եկավ, դեն ման եկավ, կես բրինձն դտավ, երեք պղինձ, երկուսը ծակ, մինն էլ իսկի տակ չունի։

Ջուրը լցրինք էս անտակ պղինձը, մեջը ածինք բաղն ու բրինձը, անկրակ եփեցինք։ Եփեց, եփեց, միսն ու բրինձը գնացին, մնաց ջուրը։

Որտից եկած սուված մարդի՞կ, վրա եկանք, կերա՞նք, կերա՞նք. ոչ աչքերս բան տեսավ, ոչ բերանս բան մատի։

1911

ԱՆԲԱՆ ՀՈՒՌԻՆ

Լինում է, չի լինում մի կնիկ։ Էս կնիկը մի աղջիկ է ունենում՝ անունը Հուռի։ Մի ծույլ, անշնորհք աղջիկ։ Օրը մինչև իրիկուն պարապ-սարապ նստած։

Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է.
Բամբակը կորիզոտ է։
Մաստակ պիտի, որ ծամեմ,
Կըտերը տիտիկ անեմ,
Անցնողին մըտիկ անեմ.
Ուտեմ, խմեմ,
Մըթնի, քընեմ։

Հարևանները անունը դնում են Անբան Հուռի։ Ինչ մերն է՝ աղջկանը գովելով ման է գալի.— լիդրը գզող, լիդրը մանող, համ խրճճող, համ խճուճը հանող, ձևող-կարող, հունցող-թխող, եփող-թափող, մի խոսքով՝ հուրի-հրեշտեն, մատները ոսկի։

Էս գովասանքը գնում մի երիտասարդ վաճառականի ականջն է ընկնում։ Էս երիտասարդ վաճառականն ասում է՝ իմ ուղածն էլ հենց սա է, որ կա։ Գլխապատառ գալիս է անբան Հուռիին ուղում է, հետը պսակվում, տանում իրենց տունը։ Մի քանի ժամանակից ետը մի տասը-քսան բեռը բամբակ է առնում տալիս կնկանը, թե՝ ես գնում եմ հեռու

ճեղեր առուտուրի, դու էլ էս բամբակը գզի, մանի, դամ տանեմ ծախեմ, հարստանանք։

Անբան Հուռին է, իրեն համար մաստակ ծամելով ման է գալի։ Մի օր էլ գետի ափովն անց կենալիս լսում է, որ գորտերը կոկռում են։

— Փե՛փել... կե՛կել... Փե՛փել... կե՛կել...

— Վո՛ւյ, աղջի Փեփել, Կեկել,— ձեն է տալի անբան Հուռին,— որ բամբակը բերեմ ձեզ տամ՝ կըգզեք...

— Բե՛ր, բե՛ր, բե՛ր...

Անբան Հուռին ուրախանում է։ Գնում է բամբակը կրում բերում, ածում գետը։

— Դե գզեցեք, մանեցեք։ Մի քանի օրից ետ կըգամ, մանածը կըտանեմ, որ ծախենք։

Գնում է մի քանի օրից ետ է գալի։

Գորտերը էլի կոկռում են.

— Փե՛փել-Կեկել... Փե՛փել-Կեկել...

— Աղջի Փե՛փել, Կեկել, դե մանածը բերիք։

Գորտերը շարունակում են կոկռալ, իսկ մանածը չեն բերում։

Հուռին մին էլ որ նայում է, աչքովն ընկնում է գետի ափերին ու քարերին փաթաթված կանաչ մուռը։

— Վո՛ւյ,— ասում է,— քոռանամ ես, տե՛ս, համ գզել ու մանել են, համ խալիչա են գործել իրենց համար։

Զեռը հակատին է դնում ձեն տալի.

— Դե որ խալիչա եք գործել, մեզ բամբակի փողը բերեք։— Ձեն է տալի ու ոտը փոխում է, մտնում ջուրը։ Հանկարծ ոտը առնում է մի կոշտ բանի։ Հանում է տեսնում՝ մի կտոր ոսկի։ Փեփելին ու Կեկելին շնորհակալություն է անում, ոսկու կտորը փեշը դնում, գալիս տուն։ Մարդն էլ առուտուրի տեղիցն է գալիս։ Գալիս է տեսնում՝ իրենց թարեքին մի մեծ ոսկու կտոր։

— Այ կնիկ, էս ի՞նչ ոսկի է։

Թե՝ բա չես ասիլ բամբակը Փեփելի ու Կեկելի վրա ծախեցի. բամբակի փողն է։

Մարդը ո՞նց է ուրախանում, էնպես էլ դուք ուրախա-

նաք։ Զոքանչին հրավիրում է, ընծաներ է տալի, դովում է. շնորհակալություն է անում, որ էնպես խելոք, շնորհքով, աշխատասեր աղջիկ է մեծացրել։ Քեֆ է սարքում. նստում են քեֆի։

Զոքանչը խորամանկ կին է լինում։ Իմանում է, թե բանը ինչպես է պատահել. վախենում է փեսեն էլի աղջկանը գործ հանձնի, ու գաղտնիքը բացվի։ Քեֆի լավ ժամանակը մի բզեզ է ներս մտնում ու բզռռացնելով պտտվում սենյակում։ Էս զոքանչը վեր է կենում գլուխ է տալի բզեզին։ Ասում է.

— Բարով եկար, մորքուր ջան, ո՞նց ես. ո՞րտեղ ես. էսքան ժամանակ չես երևում... Ախր քեզ ո՞վ էր ասում էդքան բան անես, որ էդ օրն ընկնես...

Փեսեն մնում է զարմացած։ Ասում է.

— Այ մեր, խելոքարվեցի՞ր, քեզ ի՞նչ պատահեց. էդ բզեզին էդ ի՞նչ ես ասում— մորքո՞ւրս որն է...

Զոքանչը թե.— Այ որդի, քեզանից ինչ թաքցնեմ, դու էլ իմ որդին ես։ Չես ասիլ էս բզեզն իմ մորքուրն է։ Խեղճը շատ աշխատասեր կնիկ էր։ Ամբողջ օրն աշխատում էր. շատ աշխատելուց կուչ եկավ, պստիկացավ. էնքան պստիկացավ, որ դարավ բզեզ։ Մեր ցեղն էսպես է։ Շատ աշխատասեր ենք։ Բայց աշխատելուց պստիկանում, բզեզ ենք դառնում։

Էս որ փեսեն լսում է, վախից բիչ է մնում պռոշը ճաքի. էն է լինում որ էն, արգելում է Հուտիին ձեռն էլ բանի չըտա, որ մորքուրի նման բզեզ չըդառնա։

———

ՔԵՖ ԱՆՈՂԻՆ ՔԵՖ ՉԻ ՊԱԿՍԻԼ

Ա

Ժամանակով Բաղդադ քաղաքում նստում էր Հարուն Ալ Ռաշիդ թագավորը։ Հարուն Ալ Ռաշիդ թագավորը սովորություն ուներ՝ շրջերը փոխած ման էր գալիս իմանալու, թե ինչ է կատարվում իր մայրաքաղաքում։ Մի գիշեր էլ էսպես, դերվիշի շոր մտած, անցնելիս է լինում մի խուլ փողոցով։ Մի աղքատ տնակից երգի ու նվագածության ձայներ է լսում։ Կանգ է առնում, միտք է անում միտք, հետաքրքրվում է ու ներս է մտնում։ Ներս է մտնում տեսնում՝ դատարկ ու մերկ մի տնակ, կրակի գիմը փռած կարպետի վրա նստոտած տան տերն ու երաժիշտները։ Աղքատ ընթրիքի շուրջը բոլորած նվագում են, երգում ու զվարճանում։

— Խաղաղություն ձեզ, ո՛վ ուրախ մարդիկ,— ողջունում է դերվիշն ու խոնարհություն է անում տան տիրոջը։

— Բարով եկար, դերվիշ բաբա, համեցեք, միասին ուտենք աստծու տված մի կտոր հացն ու միասին ուրախանանք,— խընդրում է տան տերը։ Դերվիշին էլ նստեցնում են իրենց հետ ու շարունակում են քեֆը։

Գիշերվա մի ժամին տան տերը երաժիշտներին վճարում է իրենց հասանելիքն ու ճամփու դնում։ Երբ երաժիշտները հեռանում են՝ դերվիշը տան տիրոջը հարցնում է.

— Անունդ ի՞նչ է, բարեկամ։

— Հասան։

— Ամոթ չլինի հարցնելը, Հասան ախպեր, ի՞նչ ար-

հեստի տեր ես դու, ի՞նչքան փող ես աշխատում, որ էսպես քեֆով ես անցկացնում քո ժամանակը։

— Քեֆը շատ փողով չի լինում, դերվիշ բաբա,— պատասխանում է տան տերը։— Ամենաշնչին ապրուստն էլ կարող է մարդ ուրախ վայելել։ Ես մի փինաչի եմ, շուստեր եմ կարկատում, օրը մի չնչին բան եմ վաստակում։ Երեկոները բերում եմ մի մասը ապրուստի եմ տալիս, մյուս մասն էլ էս եչաժիշտներին, որ տեսար։ Նստում ենք, ուրախանում։ Թե քեզ նման մի ազնիվ հյուր էլ աստված հասցնում է՝ ավելի լավ։

— Անպակաս լինի քո ուրախությունը, ո՛վ Հասան, բայց եթե հանկարծ աշխատանքիդ էդ բարակ աղբյուրն էլ կտրի՝ ի՞նչ պիտի անես։

— Ինչո՞ւ է կտրում, դերվիշ բաբա։

— Օրինակ, թագավոր է ու թագավորի քմահաճույք. հանկարծ հրաման արավ, որ էլ փինաչությունը չպիտի լինի։

— Է՜հ, թագավորի դարդը կտրե՞լ է ընկնի փինաչիների ետևից... կամ ի՞նչ են արել նրան փինաչիները։ Երբ էդպես բան կպատահի, էն ժամանակ կըմտածենք. այժմ քնենք, դերվիշ բաբա։ Աստված ողորմած է. քեֆ անողին քեֆ չի պակսիլ։ Աշխարհքի բան է՝ ինչպես բռնես՝ էնպես էլ կերթա։

— Լա՛վ, աստված տա, որ էդպես լինի,— բարեմաղթում է դերվիշն, ու քնում են։

Ը

Առավոտը վաղ դերվիշը գնում է։ Նրա գնալուց հետո մունետիկները լցվում են Բաղդադի փողոցներն ու հրապարակները, գոռալով հայտարարում, թե թագավորի հրամանն է, փինաչիների խանութները փակ պիտի մնան. էս օրվանից էլ ոչ ոք իրավունք չունի էդ արհեստով պարապելու։ Զանցառուների գլուխները կթռչեն։

Խեղճ Հասանի ձեռքից էլ բիզը խլում են, վզակոթին տալով դուրս անում իր նեղլիկ խանութից ու դուռը փակում։

Մյուս գիշերը, դարձյալ դերվիշի շոր մտած, Հարուն Ալ Ռաշիդ թագավորը գնում է քաղաք շրջելու։ Դարձյալ անցնում է էն փողոցով, ուր ապրում էր ուրախ Հասանը։ Դարձյալ երգի ու երաժշտության ձայներ է լսում նրա տանից։ Ներս է մտնում։

— Օ՜, բարով, բարով, դերվիշ բաբա. համեցեք, նստիր քո տեղը։

Նստում են, ուտում, խմում, ածում, երգում, ուրախանում մինչև կես-գիշեր։

Կես-գիշերին երաժիշտներն իրենց վարձն առնում են հեռանում։ Մնում են տան տերն ու հյուրը։

— Գիտե՞ս ինչ պատահեց, դերվիշ բաբա։

— Ի՞նչ պատահեց։

— Հենց էն, ինչ որ դու պուշակեցիր երեկ իրիկուն։ Էսօր թագավորը հրաման հանեց— մեր արհեստն արգելեց...

— Ի՞նչ ես ասում,— զարմանում է հյուրը։— Հապա ո՞րտեղից փող գտար, որ էս գիշեր էլ քեֆ սարքեցիր։

— Մի կավե կուժ եմ գտել, հիմի էլ ջուր եմ ծախում։ Օրական ինչ աշխատում եմ՝ մի մասը տալիս եմ ապրուստի, մյուսը երաժիշտներին ու դարձյալ քեֆ եմ անում։

— Իսկ եթե թագավորը ջուր ծախելն էլ արգելի՝ էն ժամանակ ի՞նչ ես անելու։

— Ջուր ծախելով թագավորին ի՞նչ վնաս ենք տալի, որ արգելի։ Եվ ինչո՞ւ էսօրվանից դարդ անեմ դրա համար։ Երբ որ կարգելի, էն ժամանակ կըմտածեմ։ Մի՛ վախենար, բարեկամ, երբեք չի պակսիլ մի կտոր հաց ու մի անկյուն, որ ես էնտեղ ուրախանամ։

— Անպակաս լինի ուրախությունը քո օջախից, ով Հասան,— բարեմաղթում է դերվիշն ու հեռանում։

Գ

Առավոտը վաղ ամբողջ Բաղդադը թնդում է մունետիկների ձենից, թե Հարուն Ալ Ռաշիդ թագավորն էսպես է հրամայում. ջուրը ասուրծունն է և էսօրվանից ոչ ոք իրավունք

չունի փողով ծախելու։ Պատռել բոլոր ջրկիրների տիկերն ու ջարդել նրանց կժերը։

Աղքատ Հասանի կուժն էլ շարդում են ջրի ճամփին ու դատարկ ետ ղրկում։

Մյուս գիշեր թագավորը կրկին դերվիշի շոր է հագնում ու գնում քաղաքը շրջելու։ Կրկին մոտենում է ուրախ Հասանի տանը։ Դարձյալ ուրախության և երգի ձայներ։ Ներս է մտնում։

— Ա՜յ, դերվիշ բաբա՜, համեցե՜ք, համեցե՜ք, նստիր քո տեղը, քեֆ անենք, ցերեկը երկարացնենք, գիշերը կարճացնենք։ Ուրախանանք, դերվիշ բաբա, ավելի լավ է ուրախանալ, քան արտմել։

— Իհարկե, ուրախությունը ավելի լավ է։ Ամենքս էլ մեռնելու ենք, ո՛վ կարող է թող ուրախանա,— բացականչում է դերվիշն ու նստում Հասանի կողքին։

Գիշերվա մի ժամին երգիչներն իրենց վարձն առնում են ու հեռանում։ Մնում են դերվիշն ու տան տերը։

— Հասան ախպեր. էսօր ի՞նչ լսեցի. ասում են թագավորը արգելել է ջուր ծախելը, ճշմարի՞տ է արդյոք։

— Ի՞նչպես չէ, ի՞նչպես չէ, ամենքիս ջրի ամանները էլ ոչնչացրին։ Ա՜խպեր, դու կատարյալ մարգարե ես եղել. ինչ ասում ես՝ մյուս օրը կատարվում է։

— Հապա ի՞նչպես է, որ դու դարձյալ քեֆ ես անում։ Ո՞րտեղից ես գտել էս փողը։

Երանի թե մարդու պակասը փողը լինի։ Փողի գտնելը հեշտ է, դերվիշ բաբա։ Գնացի մի գործատիրոջ մշակ մտա. օրական մի բան է տալիս. բերում եմ մի մասը ապրուստս եմ անում, մյուսը երաժիշտներին եմ տալիս ու շարունակում եմ իմ քեֆը։ Բանը մարդու սիրտն է, դերվիշ բաբա։

— Ես իմ հոգին, արժե, որ էդ սրտով թագավորի պալատական լինեիր դու,— բացականչեց դերվիշը։

— Վա՛հ, դերվիշ, քո ասածները կատարվում են ճշտությամբ, հիմի որ էս խոսքդ էլ կատարվի՞։

— Ինչո՞ւ չի կատարվի, աշխարհքում անկարելի բան չկա,— պատասխանեց դերվիշն ու բաժանվեցին։

Դ

Առավոտը վաղ տերության պաշտոնյաները կտրեցին Հասանի աղքատ տնակի դուռը։

— Էստե՞ղ է կենում քեֆ սիրող Հասանը։

— Ես եմ,— պատասխանեց զարմացած Հասանը։

— Թագավորի հրամանով հետևիր մեզ։

Ուղիղ պալատը տարան Հասանին։ Հայտնեցին, որ թագավորը իրեն պալատականի պաշտոն է տվել։ Պալատականի ղեսատ հագցրին, մի թուր էլ կապեցին մեջքը ու կանգնեցրին պալատի մուտքերից մեկի առջև։ Ամբողջ օրը էն մուտքի առջև պարապ կանգնեց Հասանը։ Իրիկունը որ մըթնեց, դատարակ ճամփու ղրին տուն, թե՝ գնա, առավոտը ետ կըդաս քո տեղը կանգնելու։

Գիշերը դարձյալ դերվիշի շոր մտավ Հարուն Ալ Ռաշիդ թագավորն ու գնաց քաղաքը շրջելու։

Գնաց մոտեցավ Հասանի տանը։ Ականջ դրեց։ Զարմանքով լսեց, որ դարձյալ հնչում են երգն ու երաժշտությունը։ Հասանը քեֆի է անում դարձյալ։ Ներս մտավ։

— Դերվի՞շ, դերվի՞շ, քո տունը չըքանդվի, արի է՛. երեկվա խոսքդ էլ կատարվեց, թագավորն ինձ պալատում պաշտոն է տվել։

— Ի՞նչ ես ասում։

— Ասվածն վկա։

— Եվ երևի շատ փող է տվել...

— Չէ՛, ինչ փող. մի դրոշ չըտվին։ Դատարկ տուն ղրկեցին։

— Հապա որտե՞ղից ես փող գտել, որ դարձյալ քեֆ ես անում։

— Նստի՛ր, ասեմ որտեղից։ Մի թուր են կապել մեջքս։ Իրիկունը տուն գալիս մտածեցի, թե՝ էս ես մարդ չեմ սպանելու։ Տարա պողպատի շեղբը (մեջը) ծախեցի, պողպատի փոխարեն փայտե շինել տվի, մեջը դրի՝ եկա տուն։ Եկա

պոզպատի փոդով քեֆ սարքեցի։ Լավ եմ արել, չէ՞, դերվիշ, ավելի լավ է ուրախություն ունենալ, քան մարդ սպանելու սուր։

— Հա՛, հա՛, հա՛,— ծիծաղեց դերվիշը։— Լավ անելը՝ լավ ես արել, Հասան, բայց եթե էդուց քեզ թագավորը հրամայի, թե՝ կտրի էս հանցավորի գլուխը՝ ի՞նչ ես անելու։

— Թերանդ բարի բաց արա, ա՛յ չարագուշակ դերվիշ,— բարկացավ Հասանը։— Հակառակի նման ինչ էլ ասում ես, կատարվում է. չե՞ս կարող մի լավ բան ասել...

Ու շատ վշտացավ Հասանը։ Սիրտը երկյուղ ընկավ, ամբողջ գիշերը չքնաբողացավ քնի։

Իրավ որ, մյուս օրը թագավորը կանչեց Հասանին ու ամբողջ արքունիքի առջև հանդիսավոր հրամայեց, որ մի հանցավորի գլուխը կտրի։

— Հանիր թուրդ ու կտրի էս հանցավորի գլուխը։

— Ապրած կենաս, մեծ թագավոր,— պատասխանեց սարսափած Հասանը,— ես իմ օրում մարդու գլուխ չեմ կտրել, չեմ կարող։ Փորձված մարդիկ շատ կան քո պալատում. հրամայիր մի ուրիշը կտրի...

— Ես քեզ եմ հրամայում,— սաստեց թագավորը,— եթե մի վայրկյան էլ ուշացրիր, գլուխդ կըթռչի։ Հանի՛ր թուրդ...

Էս խոսքի հետ թշվառ Հասանը մոտեցավ հանցավորին, ձեռքերը տարածեց ու աղաղակեց դեպի երկինք.

— Տեր աստված, արդարն ու մեղավորը դու գիտես։ Եթե էս մարդը մեղավոր է, ինձ ուժ տուր, որ մի զարկով թռցնեմ սրա գլուխը, իսկ եթե արդար է, թող փայտ դառնա իմ թուրը...

Ասավ, դուրս քաշեց թուրը... Փա՜յտ։ Հրաշքի վրա պալատականները մնացին ապշած։ Էստեղ Հարուն Ալ Ռաշիդ թագավորը փառ-փառ ծիծաղեց ու ամեն բան բաց արավ, պատմեց իր պալատականների առջև։ Շատ ծիծաղեցին պալատականները ու շատ գովեցին թե՛ ուրախություն սիրող Հասանին, թե՛ թագավորին։ Ծիծաղեց մինչև անգամ էն դըժ-

բախտ հանցավորը, որ չորած, վիզը մեկնած սպասում էր թրի զարկին։ Թագավորը բաշխեց հանցավորին իր կյանքը, իսկ Հասանին դառնալով՝ հռչակեց նրան իր սիրելի մարդը ամբողջ տերության մեջ ու լավ պաշտոն տվեց, որ միշտ աշխատի ու անպակաս ուրախ ապրի, ուրիշներին էլ սովորեցնի ուրախ ապրել աշխարհքում։

ԵԴԵՄԱԿԱՆ ԾԱՂԻԿԸ

Ժամանակով մեր աշխարհքում մի վաճառական է լինում։ Էս վաճառականը ունենում է մի աղջիկ՝ անունը Ծաղիկ։ Ծաղիկ որ ծաղիկ, էնքան քնքուշ, էնքան նախշուն, էնքան սիրուն է լինում։

Հերը անչափ սիրելիս է լինում աղջկանը։ Մի անգամ էլ օտարություն գնալիս հարցնում է.

— Ի՞նչ կուզես քեզ համար բերեմ։— Թե՝ եդեմական ծաղիկը կուզեմ ինձ համար բերես։— Լավ, ասում է, կբերեմ։

Գնում է աշխարհքից աշխարհք անց է կենում, իր ասուտուրն անում է, իր գործը պրծնում, ուզում է ապչկա համար էլ եդեմական ծաղիկ գտնի, որ առն գա։ Դես է հարցնում եդեմական ծաղիկ, դեն է հարցնում եդեմական ծաղիկ, ոչով չի իմանում, թե ինչ բան է եդեմական ծաղիկը կամ որտեղ է բացվում։ Վերջը մի ծեր մարդ է պատահում։ Էս ծեր մարդը մի ճամփա է ցույց տալի. ասում է էս ճամփով որ գնաս, էսինչ տեղը կըդտնես քո հարցրած ծաղիկը։ Բայց դդուլ կաց Սիպտակ դևից, նա եդեմական ծաղիկին հըսկում է։

Հոր սիրտ է։ Մերոնու ցույց տված ճամփեն բռնում է գնում։ Գնում է, գնում, շատ է գնում թե քիչ, դուրս է գալիս էնտեղ, որտեղ բացվում է եդեմական ծաղիկը։ Հենց հասնում է ծաղիկը պոկում է թե չէ, մի հողմ, մի փոթորիկ է վեր կենում, փոթորկի հետ հայտնվում է մի հրեշ։ Մարդ

ասես, մարդ չի, գազան ասես, գազան չի, բայց գազանի նման մոնչում է.

— Ո՞ւր պոկեցիր իմ ծաղիկը... քո մահն է հիմի...

— Քո մահն է հիմի...— ձեն է գալի ամեն կողմից...

Մարդը ոչ մեռած, ոչ կենդանի՝ հրեշի առաջն է ընկնում։

— Ներիր,— ասում է,— ո՛վ հզոր... իմ աղջիկն էր ուզել...

— Կընեռեմ,— կանչում է հրեշը,— միայն էն պայմանով, որ էդ աղջիկը ինձ տաս։

— Համաձայն եմ։

— Որ համաձայն ես՝ քեզ եմ բաշխում քո կյանքը։ Գնա։ Հենց որ ձեր տան դիմացի սարն սիպտակի—էդ իմ նշանն է, կգամ Ծաղիկին տանելու։

Գու մի ասիլ Սիպտակ դևը ինքը հրեշն է, որ կա։

Վաճառականը վերադառնում է տուն։ Աղջիկը միամիտ առաջն է վազում, վզովը փաթաթվում։ Հերը համբուրում է՝ եդեմական ծաղիկը տալիս իրեն, իսկ պատահած դեպքն ու իր խոստումը թաքցնում է։ Թաքցնում է, բայց ինքն իր մեջ միտք է անում ու տխրում։ Քանի օրերն անց են կենում, էնքան ավելի է տխրում։ Մի առավոտ էլ վեր է կենում տեսնում իրենց տան դիմացի սարն արդեն սիպտակել է։ Լաց է լինում։ Պատճառը հարցնում են. էլ չի կարողանում ծածկի, պատմում է, թե՝ հապա չեք ասիլ էսպես-էսպես բան է պատահել, ես էլ խոսք եմ տվել, հիմի Սպիտակ դևը գալու է Ծաղիկին տանի։

— Բան չըկա, հայրիկ,—ասում է Ծաղիկը,— դու լաց մի լինի, ես կերթամ Սիպտակ դևի հետ. ինչ կըլինի կըլինի։

Այնինչ Սիպտակ դևը արդեն դուռը կտրել է ու մոնչում է.

— Ո՞ւր է Ծաղիկն, ո՞ւր... ինձ տո՞ւր...

Մոնչում է ու նրա սառը շնչից դողում են ծառերը, աշխարհքը գունատվում. ի՞նչ պետք է անեին խեղճ մարդիկը։ Ջուգած, զարդարած, եդեմական ծաղիկը ձեռքին դուրս են բերում Ծաղիկին հանձնում են Սպիտակ դևին, որ շարախինդ սուլոցով ու ագահ ոռնոցով, սառով, սևով, հողմի

թեով իսկույն հափշտակում է տանում։ Տանում է Մասիսի մեծ վիհը։ Էնտեղ, Մասիսի էն մեծ վիհում, էն անմատչելի, միշտ մառլլ ու միշտ սառն աշխարհքում կանգնած էր իր բյուրեղյա ապարանքը։ Էն ապարանքից իջնում էր նա, սառով ու սարսափով աշխարհքը պատում, հափշտակում տանում ամեն կյանք ու կենդանություն։ Ծաղիկին էլ տանում է փակում էն բյուրեղյա ապարանքում։

Էսպես ամիսներ են անցկենում։ Մի անգամ էլ, գարնան սկզբին, երբ Սիպտակ դևը տանից դուրս է գնում, աղջիկը վեր է կենում փախչում։ Ետ է գալի դևը՝ տեսնում է՝ Ծաղիկը չկա։ Կատաղում է, հավաքում է իր բոլոր դիվական ուժն ու մրրիկի նման սուրալով՝ ընկնում է ետևից։ Աղջիկը արդեն Արագածի ստորոտն է լինում հասած։ Ետ է նայում տեսնում է Սիպտակ դևը գալիս է։ Գալիս է, ո՞նց է գալիս, աստված նա ու հեռու անի։ Սարսափից ճչում է, օգնություն է կանչում։ Կանչելու հետ, աստծու հրամանով, առաջը մի դուռն է բացվում։ Էն դռնովը մտնում է սարի մեջն, ու կրկին դուռը փակվում է դևի առաջին։

Ավելի է կատաղում Սիպտակ դևը։ իր լայն թևերով բամփում է Արագածի գագաթին ու մռնչում.

— Ո՞ւր է Ծաղիկն, ո՛ւր... ինձ տո՛ւր...

Սա էստեղ թող մռնչա, մենք գնանք Ծաղիկի ետևից, տեսնենք էն կախարդական դռնից որ մտավ, ինչ եղավ։

Ծաղիկը էն կախարդական դռնից ներս է մտնում թե չէ, դուրս է գալի մի դրախտական այգի, որտեղ հազարավոր ձայներ երգում են.

Զմրուխտ պալատում, ոսկի դագաղում,
Պառկած է շարի ուժով կախարդված,
Պառկած է Արին ոչ մեռած, ոչ քուն,
Ու աշխարհքն ամեն սև սուգ է մտած։
Պառկած է մինչև օրը ցանկալի,
Էն պայծառ օրը, երբ որ նա կըգա,
Կըգա նոր կյանքով ու նոր սիրով լի,
Կարտասվի անուշ ու համբույր կըտա։

Առաջ է գնում Ծաղիկը, հանկարծ այգին լցվում է զվարթ աղմուկով ու տարածվում են ուրախ երգի ձայնները.

Ահա եկավ, հասավ չքնաղ
Իր թագուհին, իր սիրելին,
Հիմի կելնի պաղ դագաղից
Մեր քաջ Արին—Արմանելին։
Հիմի կելնի թաղավորը,
Հզոր Արին—Արմանելին
Ու կրժպտան վառ աչքերը
Ողջ աշխարհքին, ծաղկին, ծըլին։
Հիմի կընկնի կախարդանքը
Զար թշնամու, Սիպտակ դևի,
Հիմի կըգա դալար կյանքը,
Բույրը ծաղկի, շողն արևի։

Եվ ճիշտ որ, Ծաղիկը գնում է, ինչ է տեսնում. այգու մեջ մի զմրուխտ պալատ, պալատի մեջ ոսկի դագաղ, դագաղի մեջ մի ջահել, գեղեցիկ երիտասարդ, որ ոչ քնած է, ոչ մեռած, շունչը վրեն հաղիվ սրրփում է։ Տեսնում է թե չէ, էիրտը փուլ է գալի, էլ չի դիմանում, լաց է լինում ու կռանում է համբուրում։ Արտասուքի կաթիլներն ընկնում են երիտասարդի երեսին. երիտասարդը հանկարծ բաց է անում աչքերն ու վեր է կենում կանգնում, ինչպես էն դրախտում բուսած սոսիներից մինը։

Դու մի՛ ասիլ՝ հենց ինքը Արին—Արմանելին է, որ կա։

— Ո՞վ ես դու, սիրուն աղջիկ,— հարցնում է Արին—Արմանելին,— և ինչպես ընկար էս աշխարհքը։

Ու Ծաղիկը կանգնում պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես ինքը գերի էր եղած Սպիտակ դևին, որ այժմ էլ ետևիցն է ընկել ու հալածում է իրեն։

— Լսում եմ, լսում եմ նրա դաժան ձայնը,— պատասխանում է Արին—Արմանելին։ Ինձ էլ նա է կախարդել ամիսներ առաջ ու գցել էս մահանման քնի մեջ։ Էսպես է անում ամեն տարի։ Պետք է էսպես էլ մնայի, մինչև մինը խորտա-

կեր նրա չար կախարդանքը։ Դու եղար էդ մինը։ Այժմ ես դուրս կը գնամ նրա դեմ։

Ասելն ու անելը մին է լինում։ Առնում է կայծակի թուրը ու դուրս է գալիս։ Երկու թշնամի ուժերը պատահում են իրար. բացվում է օրհասակռիվը։ Զարկում են զարկվում—երկինք ու գետինք իրար են խառնվում։ Մութն ամպերում մռնչում է Սիպտակ գևը, Արին—Արմանելին ահավոր որոտում ու շողացնում է կայծակի թուրը. երկիրը դողում, դղրդում է հիմքից։ Կռվի վերջում պարտված-զարկված Սիպտակ գևը վշշալով ու թշշալով, լացով ու թացով քաշվում է նորից իր մռայլ թագավորությունը, Մասիսի էն մեծ վիհը, դարձյալ փակվում է իր բյուրեղյա սառն ապարանքում։ Աշխարհքը մնում է գեղեցիկ հաղթողին։

Ու աստվածային հանդես է բացվում Արաքսի հովիտում։ Արին—Արմանելին պսակվում է Ծաղիկի հետ։ Բնությունը առատորեն փռում է իր փարթամ վարդերն ու զարդերը, ինս ու չինս, մրջյուն ու թռչուն իրար են խառնում իրենց զվարթ աղմուկն ու աղաղակը, խաղն ու տաղը, ամենի վրա հոյակապ կամար է կապում կանաչ-կարմիրը—ծիածանը, իսկ նրանց վերև ճառագում ու աշխարհքովը մի ժպտում է գարնան կենսատու արևը։

Ու էսպես կրկնվում է ամեն տարի, որովհետև ամեն տարի Սիպտակ գևը կախարդում է Արին—Արմանելին ու հափշտակում է սիրուն Ծաղիկին։

1912

ՔԱՋ ՆԱՂԱՐ

1

Լինում է՝ չի լինում մի խեղճ մարդ՝ անունը Նաղար։ Էս Նաղարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. է՞նքան էլ վախկոտ, է՞նքան էլ վախկոտ, որ մենակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թեկուզ սպանեիր։ Օրը մինչև իրիկուն կնգա կողքը կարած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն դալիս՝ տուն դալիս։ Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նաղար։

Էս Վախկոտ Նաղարը մի դիշեր կնդա հետ շեմքն է դուրս դալիս։ Որ շեմքն է դուրս գալի՝ տեսնում է ճրագքրքքան լո՞ւսլուսնյակ դիշեր՝ ասում է.

— Ա՛յ կնիկ, ի՞նչ քարվան կտրելու դիշեր է՞... Սիրուս ասում է՝ վեր կաց գնա Հնդրստանից եկող Շահի քարվանը կարի բեր տունը լցրու...

Կնիկը թե.

— Ջենդ կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա...

Նաղարը թե.

— Ա՛նզգամ կնիկ, ինչո՞ւ չես թողնում ես գնամ քարվան կտրեմ բերեմ տունը լցնեմ։ Էլ ի՞նչ տղամարդ եմ ես, էլ ինչո՞ւ եմ դդակ ծածկում, որ դու համարձակվում ես իմ առաջը խոսես։

Որ շատ կռվում է՝ կնիկը տուն է մտնում դուռը փակում։

— Հո՛ղեմ էդ վախկոտ գլուխդ, դե հիմի գնա քարվան կաբի։

Էս Նազարս մնում է դռանը։ Վախից լեղապատառ է լինում։ Ինչքան աղաչում-պաղատում է, որ կնիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում։ Ճարը կտրած գնում է մի պատի տակի կուշ է գալի, դողալով գիշերն անց է կացնում մինչև լուսը բացվում է։ Նազարը խռոված պատի տակին արևկող արած սպասում է, որ կնիկը գա տոմ տանի, ու միտք է անում։ Ամառվա շոգ օր գազազած ճանճեր. ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի—ճանճերը գալիս են սրա քիթը ու պռունգին վեր գալի, լցվում։ Որ շատ նեղացնում են՝ ձեռը տանում է երեսին զարկում։ Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդվում են առաջին թափում։

— Վա՛հ, էս ինչ էր...— մնում է զարմացած։

Ուզում է համրի թե մի զարկով քանիսն սպանեց՝ չի կարողանում։ Մտածում է, որ հազարից պակաս չի լինիլ։

— Վա՛հ, ասում է, ես էսպես տղամարդ եմ էլել ու մինչև էսօր չեմ իմացե՞լ... Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնգա կողքին վեր ընկել...

Էստեղից վեր է կենում ուղիղ գնում իրենց գյուղի տերտերի մոտ։

— Տե՛ր տեր, օրհնյա ի տեր։

— Աստված օրհնի, որդի՛ս։

— Տե՛ր տեր, բա չես ասիլ էսպես էսպես բան։

Պատմում է իր քաջագործությունը ու հետն էլ հայտնում է, որ պետք է իր կնգանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տերտերը գրի, որ անհայտ չըմնա, ամենքն էլ կարդան իմանան։ Տերտերն էլ, կատակի համար, մի փալասի կտորի վրա գրում է.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Ու տալիս է իրեն։

Նազարս էս փալասի կտորը մի փետի ծերի ամրացնում է, մի ժանդոտած թրի կտոր կապում մեջքը, իրենց հարևանի իշին նստում ու գյուղից հեռանում։

2

Իրենց գյուղից դուրս է գալի, մի ճամփա է ընկնում ու գնում։ Ինքն էլ չի իմանում, թե էդ ճամփեն ուր է տանում։

Գնում է գնում, մին էլ ետ է նայում, տեսնում է գյուղից հեռացել է։ Էստեղ սիրտն ահ է ընկնում։ Իրեն սիրտ տալու համար սկսում է քթի տակին մռմռալ, երգել, իրեն իրեն խոսել, իշի վրա բարկանալ։ Քանի հեռանում է՝ էնքան վախը սաստկանում է, քանի վախը սաստկանում է՝ էնքան ձենը բարձրացնում է, սկսում է գոռգոռալ, հարայ-հրոց անել, հետն էլ մյուս կողմից էշն է սկսում զռալ... էս աղմուկից ու աղաղակից թռչունները մոտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գորտերը կանաչիցն են ջուրը թափում...

Նազարը ձենն ավելի է գլուխը գցում. իսկ որ մտնում է անտառը—թվում է թե ամեն մի ծառի տակից, ամեն մի թփի միջից, ամեն մի քարի ետևից՝ որտեղ որ է գազան է հարձակվելու կամ ավազակ. սարսափած սկսում է գոռգոռալ, ոնց գոռգոռալ—ականջդ ոչ լսի։

Դու մի ասիլ հենց էս ժամանակ մի գյուղացի ձին քաշելով անտառում միամիտ գալիս է։ Էս զարհուրելի ձենը ականջն է ընկնում թե չէ՝ կանգնում է.

— Վա՛յ,— ասում է,— ո՞նց թե իմն էլ էստեղ էր հասե՞լ. կա-չըկա էս ավազակներ են...

Ձին թողնում է, ընկնում է ճամփի տակի անտառն ու՝ երկու տոն ունեք երկուսն էլ փոխ է առնում՝ փախչում։

Բախտը դիպիմ, Քաջ Նազարս գոռգոռալով գալիս է տեսնում մի թամքած ձի ճամփի մեջտեղը կանգնած իրեն է սպասում։ Իշիցը վեր է գալի էս թամքած ձիուն նստում ու յարմանակում իր ճամփեն։

3

Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կիմանար, գնում է ընկնում մի գյուղ. ինքը գյուղին անծանոթ գյուղն իրեն։ Ո՞ւր գնա, ուր չի գնա։ Մի տանից զուռնի ձեն է լսում. ձին քշում է էս ձենի վրա, գնում է ընկնում մի հարսանքատուն։

— Բարի օր ձեզ։

— Ա՛յ աստծու բարին քեզ. բարով հաղար բարի եկար։

Համեցե՛ք հա, համե՛ցեք. դե զոնախն աստծունն է. որան տանում են իր որոշակով սուփրի վերի ծերին բազմեցնում։ Աչքդ էն բարին տեսնի, ինչ որ լցնում են առաջը — թե ուտելիք, թե խմելիք։

Հարսանքավորները հետաքրքրվում են իմանան, թե ով է էս տարօրինակ անծանոթը։ Ներքի ծերից մինը բոթում է իր կողքի նստածին ու հարցնում, սա էլ իր կողքի նստածին է բոթում, էսպես հերթով իրար բոթելով ու հարցնելով տանը մնում է վերի ծերին նստած տերտերին։ Տերտերը մի կերպով զոնախի որոշակի վրա կարդում է.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Կարդում է ու զարհուրած հայտնում է իր կողքի նստածին, սա էլ իր կողքի նստածին, սա էլ երրորդին, երրորդը չորրորդին. էսպեսով հասնում է մինչև դռան տակը ու ամբողջ հարսանքատունը դրմփում է թե՝ բա՞ չես ասիլ նորեկ զոնախն է ինքը.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

— Քաջ Նազարն է հա՞...— բացականչում է պարծենկոտի մինը.— Ի՞նչքան է փոխվել. միանգամից լավ չճանաչեցի...

Եվ մարդիկ են գտնվում, որ պատմում են նրա արած քաջագործությունները, հին ծանոթությունն ու միասին անցկացրած օրերը։

— Հապա ինչպես է, որ էսպես մարդը հետը ոչ մի ծառա չունի,— զարմանքով հարցնում են անծանոթները։

— Էդպես է դրա սովորությունը, ծառաներով ման գալ չի սիրում։ Մի անգամ ես հարցրի, ասավ՝ ծառան ի՞նչ եմ անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան։

— Հապա ի՞նչպես է, որ մի կարգին թուր չունի, էս ժանգոտ երկաթի կտորն է մեջքին կապել։

— Շնորհքն էլ հենց սրա մեջն է՛, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես ջարդես հազար, թե չէ լավ թրով— ի՞նչ կա որ, սովորական քաջերն էլ են ջարդում։

Ու ապշած ժողովուրդը ոտի է կանգնում խմում է Քաջ Նազարի կենացը։ Իրենց միջի խելոքն էլ դուրս է գալի ճառ է ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց էինք լսել քո մեծ հռչակը. կարոտ էինք երեսդ տեսնելու և ահա էսօր բախտավոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր առաջ։ Նազարը հառաչում է ու ձեռքը թափ է տալիս։ Ժողովրդականները խորհրդավոր իրար աչքով են անում, հասկանում են, թե էդ հառաչանքն ու ձեռի թափ տալը ինչքան բան կընշանակեր...

Աչուղն էլ, որ էնտեղ էր, ձեռաց երգ է հորինում ու երգում։

«Թարով եկար, հազար բարի,
Հզոր արծիվ մեր սարերի,
Թագ ու պարծանք մեր աշխարհի,
Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես ջարդես հազար։

Խեղճ տրկարին դու ապավեն,
Աղյատ կանես ամեն ցավեն,
Մեզ կըփրկես անիրավեն,
Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,
Որ մին զարկես ջարդես հազար։

Մատաղ ենք մենք քո դըրոշին,
Մեջքիդ թըրին, տակիդ ռաշին,

Նրա ոտին, պոչին, բաշին,
Անհաղթ հերոս Քաջրդ Նազար,
Որ մին զարկես ջարդես հազար։

Ու ցրվելով հարբած հարսանքավորները տարածում են ամեն տեղ, թե գալիս է
Անհաղթ հերոս Քաջրն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Պատմում են նրա զարմանալի քաջագործությունները, նկարագրում են նրա ահռելի կերպարանքը։ Ու ամեն տեղ իրենց նորածին երեխաների անունը դնում են Քաջ Նազար։

4

Հարսանքատնից հեռանում է Նազարն ու շարունակում է իր ճամփեն։ Գնում է հասնում մի կանաչ դաշտ։ Էս կանաչ դաշտում ձին թռկնում է արածի, դրոշակը տնկում է, ինքն էլ դրոշակի շվաքամը պառկում քնում։

Դու մի ասիլ օխտը հսկա եղբայրներ կան, օխտը ավազակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամրոցն էլ մոտիկ սարի գլխին է։ Էս հսկաները վերևից մոտիկ են տալիս՝ որ մի մարդ եկել է իրենց հանդում վեր է եկել։ Շատ են զարմանում, թե էս ինչ սրան տեր մարդ պետք է լինի, քանի գըլխանի, որ առանց քաշվելու եկել է իրենց հանդում հանգիստ վեր է եկել ու ձին էլ բաց թողել։ Ամեն մինը մի դուրզ ուներ բառասուն լդրանոց։ Էս քառասուն լդրանոց դուրզները վերց նում են գալիս։ Գալիս են ի՞նչ են տեսնում. հրես մի ձի արածում է, մի մարդ կողքին քնած, գլխավերևը մի դրոշակ տընկած, դրոշակի վրեն դրած.
Անհաղթ հերոս Քաջրն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Վա՜յ, Քաջ Նազարն է... Մատները կծում են հսկաներն ու մնում են տեղները սառած։ Դու մի՝ ասիլ հարբած հարսանքավորների տարածած լուրը սրանց էլ է լինում հասած։ Էսպես թուքերը ցամաքած, չորացած սպասում են, մինչև

Նազարն իր քունն առնում է ու զարթնում։ որ զարթնում է աչքերը բաց է անում գլխավերևը քառասուն լդրանոց դուրզներն ուսներին օխտն ահռելի հսկաներ կանգնած՝ էլ փորումը սիրտ չի մնում։ Մտնում է իր դրոշակի տեղն ու սկսում է դողալ, ոնց որ աշունքվա տերևը կըդողա։ Էս հսկաները որ տեսնում են սա գոնատվնց ու սկսեց դողալ, ասում են՝ բարկացավ, հիմի սրտեղ որ է մի զարկով օխտիս էլ կրս պանի, առաջին գետին են փռվում ու խնդրում են.
— Անհաղթ հերոս Քաջրն Նազար,
Որ մին զարկես՝ ջարդես հազար։

Մենք լսել էինք քո ահավոր անունը, տեսոքյանդ էինք փափագում. այժմ բախտավոր ենք, որ քո ոտով ես եկել մեր հողը։ Մենք, քո խոնարհ ծառաներդ՝ օխտն ախպեր ենք, ահա մեր ամրոցն էլ էն սարի գլխին է՝ մեջը մեր գեղեցիկ քույրը։ Աղաչում ենք շնորհ անես գաս մեր հացը կարես...

Էստեղ Նազարի շունչը տեղն է գալի, նստում է իր ձին, նրանք էլ դրոշակն առած առաջն են ընկնում ու հանդիսավոր տանում են իրենց ամրոցը։ Տանում են ամրոցում պահում պատվում թագավորին վայել պատվով, ու էնքան են խոսում նրա քաջագործություններից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ քույրը սիրահարվում է վրեն։ Ինչ ասիլ կուզի՝ հարգն ու պատիվն էլ հետն ավելանում է։

5

Էս ժամանակ մի վագր է լուս ընկնում էս երկրում ու սարսափ է գցում ժողովրդի վրա։ Ո՞վ կըսպանի վագրին, ո՞վ չի սպանիլ։ Իհարկե Քաջ Նազարը կըսպանի։ Էլ ո՞վ սիրտ կանի վագրի դեմը գնա։ Ամենքն էլ Նազարի երեսին են մտիկ տալի. վերևը մի ասված, ներքևը մի Քաջ Նազար։

Վագրի անունը լսելուն պես Նազարը վախից դուրս է վազում, ուզում է փախչի ետ գնա իրենց տունը, իսկ կանդնածները կարծում են թե վազում էր, որ դնա վագրին սպանի։ Նշանածը բռնում է կանգնեցնում, թե՝ ո՞ւր ես վազում էդպես առանց զենքի, զենք առ հետդ էնպես գնա։ Զենք է բերում

տալիս իրեն, որ գնա իր փառքի վրա մի քաջություն էլ ավելացնի։ Նազարը ձեռքն առնում է դուրս գնում։ Գնում է անտառում մի ծառի բարձրանում, վրեն տապ անում, որ ոչ ինքը վագրին պատահի, ոչ վագրը իրեն։ Ծառի վրա կուչ է գալի ու Նազարն ո՞վ կըտա—հոգին դառել է կորկի հատ։ Հակառակի նման անտեր վագրն էլ գալիս է հենց էս ծառի տակին պառկում։ Նազարը որ վագրին չի տեսնո՞ւմ—լեղին ջուր է կտրում, աչքերը սևանում են, ձեռն ու ոտը թուլանում են ու, թրը՛մփ, ծառիցը ընկնում է գազանի վրա։ Վագրը սարսափած տեղիցը վեր է թռչում, Նազարն էլ վախից կպչում է սրա մեջքին։ Էսպես զարհուրած Նազարը մեջքին կպած էս խրտնած վագրը փախչում է, ոնց է փախչում, էլ սար ու ձոր, քար ու քոլ չի հարցնում։

Մարդիկ մին էլ տեսնում են, վա՛հ, Քաջ Նազարը վագրին նստած քշում է։

— Հա՛յ-հարա՛յ, եկե՞ք հա, եկե՞ք, Քաջ Նազարը վագրին ձի է շինել հեծել... տվե՛ք հա տվե՛ք... Սրտավորվում են, ամենքի մի կողմից հարայ-հրոցով, հրոհրոցով հարձակվում են՝ խանչալով, թրով, թվանքով, քարով, փեռով տալիս են սպանում։

Նազարը որ ուշքի է գալիս, լեզուն բացվում է։ Ախա՛ս, ասում է,— ընչի՞ սպանեցիք, զոռով մի ձի էի շինել նստել... Էնքան պետք է քշեի ո՞ր...

Լուրը գնում է հասնում է ամրոցը։ Մարդ, կին, մեծ, պստիկ՝ ժողովուրդը դուրս է թափում Նազարին ընդունելու։ Վրեն երգ են կապում ու երգում։

Էս աշխարհքում,
Մարդկանց շարքում
Ո՞վ կըլինի քեզ հավասար,
Ո՞վ Քաջ Նազար։

Ինչպես ուրուր,
Կայծակ ու հուր,
Բարձր բերդից թռար հասար,
Ո՞վ Քաջ Նազար։

Ահեղ վագրին
Սրիր քո ձին,
Հեծար անցար դու սարեսար,
Ո՞վ Քաջ Նազար։

Մեղ փրկեցիր,
Ազատեցիր,
Փառք ու պարծանք քեզ դարեդար,
Ո՞վ Քաջ Նազար։

Ու պսակեցին Քաջ Նազարին հսկանների գեղեցիկ քրոջ հետ. օխտն օր, օխտը գիշեր հարսանիք արին, երգերով գովեցին թագավորին ու թագուհուն։

— Լուսընկան նոր սարն ելավ,
Էն ո՞ւմ նըման էր։

— Լուսընկան նոր սարն ելավ,
Էն Քաջ Նազարն էր։

— Արեգակ նոր շաղեշաղ,
Էն ո՞ւմ նըման էր։

— Արեգակ նոր շաղեշաղ,
Էն իր նազ-յարն էր։

Մեր թագավորն էր կարմիր,
Իրեն արևն էր կարմիր,
Թաղն էր կարմիր, հա՛յ կարմիր,
Կապեն կարմիր, հա՛յ կարմիր,
Գոտին կարմիր, հա՛յ կարմիր,
Սոլեր կարմիր, հա՛յ կարմիր,
Թագուհին կարմիր, հա՛յ կարմիր,
Կարմիր թագուհուն բարև,
Կարմիր թագավորին արև։
Շնորհավոր, շնորհավոր,
Քաջ Նազարին շնորհավոր,
Իր նազ-յարին շնորհավոր,
Ողջ աշխարհին շնորհավոր։

6

Դու մի՛ ասիլ էս աղջկանը ուզած է լինում հարևան երկրի թագավորը։ Որ իմանում է իրեն չեն տվել՝ ուրիշի հետ են ամուսնացրել՝ զորք է կապում պատերազմով գալիս է օխտն ախպոր վրա։

Էս օխտը հսկան գնում են Քաջ Նազարի մոտ, պատերազմի լուրը հայտնում են, գլուխ են տալի առաջը կանգնում՝ հրաման են խնդրում։

Պատերազմի անունը որ լսում է՝ նարսատիում է Նազարը. դուրս է պրծնում, որ փախչի ետ գնա իրենց գյուղը։ Մարդիկ կարծում են ուզում էր իսկույն դուրս վազել հարձակվել թշնամու բանակի վրա։ Առաջն են ընկնում բռնում են խնդրում, թե ախր առանց զենքի ու զրահի մենակ ո՞ւր ես գնում, ի՛նչ ես անում, դլխիցդ ձեռք ես վերցրել, ի՞նչ է։

Բերում են զենք ու զրահ են տալի, կնիկն էլ եղբայրներին խնդրում է, որ չըթողնեն Նազարին իր քաջությունից տարված մենակ հարձակվի թշնամու զորքի վրա։ Եվ լուրը գնում տարածվում է զորքի ու ժողովրդի մեջ, լուտեսների միջոցով էլ հասնում է թշնամուն, թե Քաջ Նազարը մենակ առանց զենքի թռչում էր դեպի պատերազմի դաշտը, հազիվ են կարողացել դսպել ու շրջապատված բերում են...

Պատերազմի դաշտում մի ամեհի նժույգ ձի են բերում Նազարին նստեցնում վրեն։ Ոգևորված զորքն էլ հետը վեր է կենում ահագին աղմուկով,— կեցցե՛ Քաջը Նազա՛ր... մա՛հ թշնամո՛ւն...

Նազարի տակի նժույգը, որ տեսնում է վրեն ինչ անպետքի մինն է նստած՝ խրխրնջում է, գլուխն առնում ու թռչում առաջ, տղիղ դեպի թշնամու բանակը։ Զորքերը կարծում են Քաջ Նազարը հարձակվեց, ուռա՜ են կանչում ու իրենք էլ ետևից հարձակվում ամենայն սաստկությամբ։ Նազարը որ տեսնում է չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիշ է մնում վեր ընկնի, ձևը գցում է, ուզում է մի ծառի փաթաթվի, դու մի՛ ասիլ ծառը փտած է, մի գերանաչափ ճյուղը պոկ է գալիս մնում ձեռին։ Թշնամու զորքերը, որ առաջուց համբավը լսել էին ու ահը սրտներումն էր, էս էլ որ իրենց աչքով տեսնում են՝ էլ փորներումը սիրտ չի մնում. երես են շուռ տալիս,— փա՛խի, որ փա՛խի, թե մարդ ես դլուխդ պրծացրու, որ Քաջ Նազարը ծառերն արմատահան անելով գալիս է...

Էդ օրը թշնամուց ինչքան կոտորվում է կոտորվում, մնացածները թուրները դնում են Քաջ Նազարի ոտի տակին, հայտնում են իրենց հպատակությունն ու հնազանդությունը։

Ու պատերազմի ահեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների ամբոցն է վերադառնում։ Ժողովուրդը հաղթական կամարներ է կապում, անկարագրելի ոգևորությամբ, ուռաներով և կեցցեներով, երգով ու երաժշտությունով, աղջիկներով ու ծաղիկներով, պատգամավորություններով ու ճառերով առաջն է դուրս գալի, էնպես մի փառք ու պատիվ, որ Նազարը մնացել էր ապշած շըշկլված։

Էսպես առքով-փառքով էլ բերում հրատարակում են իրենց թագավոր ու բաղմեցնում են թագավորի թախտին։ Քաջ Նազարը դառնում է թագավոր, էն հսկաներից ամեն մեկին էլ մի պաշտոն է տալիս։ Մին էլ տեսնում է աշխարհքը իր բրռան մեջ։

Ասում են մինչև էսօր էլ դեռ ապրում ու թագավորում է Քաջ Նազարը։ Ու՝ երբ քաջությունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում՝ ծիծաղում է, ասում է.

— Ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը։ Բանը մարդուս բախտն է։ Բախտ ունե՞ս— քեֆ արա...

Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրա։

———

1913

ԿԻԿՈՍԻ ՄԱՀԸ

Մի ալքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք . աղջիկ։

Մի օր հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկանը ջուրն է ղրկում։ Էս աղջիկը կուժն առնում է գնում աղբյուրը։ Աղբրի գլխին մի բարձր ծառ է լինում։ Էս ծառը որ տեսնում է՝ իրեն իրեն միտք է անում.

— Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս. Կիկոսը գա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի մեռնի...

— Վա՜յ, Կիկոս ջան, վա՜յ...

Տեղն ու տեղը ծառի տակին նստում է՝ սկսում է սուգ անել.

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գրդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՜յ Կիկոս ջան,
Վա՜յ որդի ջան...

Մերն սպասում է սպասում, տեսնում է չեկավ, միջնեկ աղջկանն է ղրկում։ Ասում է.— Գնա՛ մի տե՛ս, քույրդ ընչի՞ ուշացավ։

Միջնեկ աղջիկն է գնում։

Մեծ քույրը սրան որ հեռվից տեսնում է՝ ձենն ավելի է բարձրացնում։

— Արի՛, արի՛, անբախտ մորքուր, տես քո Կիկոսն ինչ եղավ։

— Ի՞նչ Կիկոս։

— Բա չես ասիլ՝

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գրդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՜յ Կիկոս ջան,
Վա՜յ որդի ջան...

— Վա՜յ Կիկոս ջան, վա՜յ,— պոռում է միջնեկ քույրը, նստում է մեծ քրոջ կողքին ու սկսում են միասին սուգ անել։

Մերն սպասում է սպասում, տեսնում է չեկան, պստիկ աղջկանն է ղրկում։ Ասում է.

— Աղջի՛, մի գնա տես քույրերդ ի՞նչ եղան։ Գնացին, ետ չեկան։

Հիմի պստիկ աղջիկն է գնում։ Գնում է տեսնում՝ երկու քույրերն էլ աղբրի գլխին նստած լաց են լինում։

— Քա՛, ընչի՞ եք լաց ըլում։

Մեծ քույրը թե՝ բա չես ասիլ՝

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գրդակը պոպոզ,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՜յ Կիկոս ջան,
Վա՜յ որդի ջան...

— Վա՜յ քու մորքուրին, Կիկոս ջան, վա՜յ,— սա էլ է պլխին տալիս ու մյուսների կողքին նստում, ձեն-ձենի տալիս։

Մերն սպասում է սպասում, տեսնում է աղջիկները չեկան, ինքն է գնում։

Հեռվից իրենց մորը տեսնում են թե չէ՝ երեք աղջիկն էլ կանչում են.

— Արի՛, արի՛, անբախտ տատի, տե՛ս թոռանդ գլուխն ինչ է եկել։

— Ի՞նչ թոռ, ա՛յ աղջկերք, ի՞նչ է պատահել։

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, ա՛յ մեր՝

Գնացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպող,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՜յ Կիկոս ջան,
Վա՜յ որդի ջան...

— Վա՜յ, քոռանան քու տատի աչքերը, Կիկոս ջան.— մերն էլ ծնկանը զարկում է, նստում է աղջիկների կողքին, սկսում է նրանց հետ սուգ անել։

Մարդը տեսնում է՝ կնիկն էլ գնաց աղջիկների ետևից ու սա էլ չեկավ։ Ասում է՝ մի գնամ տեսնեմ էս ինչ պատահեց, որ սրանք իրար ետևից գնացին մնացին աղբրումը։

Վեր է կենում գնում։

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չէ, ձեն են տալի.

— Արի՛, արի՛, անբախտ պապի, արի տես քու Կիկոսի գլուխն ի՞նչ է եկել... վա՜յ քու Կիկոսին...

— Ի՞նչ Կիկոս, ի՞նչ եք ասում,— զարմանում է մարդը։

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, ա՛յ հեր՝

Գնացի մարդի,
Ունեցա որդի,

Գըդակը պոպող,
Անունը Կիկոս.
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին...
Վա՜յ Կիկոս ջան,
Վա՜յ որդի ջան...

— Վա՜յ, Կիկոս ջա՜ն,— ծնկներին տալիս են ու սուգ են անում մեր ու աղջկերք։

Սրանց միջի խելոքը հերն է լինում։ Ասում է.

— Ա՛յ հիմարներ, ի՞նչ եք սատել էստեղ ու սուգ եք անում։ Ինչքան էլ սուգ անեք, ինչքան էլ լաց ըլեք, հո Կիկոսն էլ կենդանանալու չի։ Վեր կացեք, եկեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք. լացով ի՞նչ պետք է անենք։ Աշխարհքի կարգ է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա։

Դու մի՛ ասիլ՝ սրանց ունեցած-չունեցած չորսոտանանին մի եզն է լինում, ունեցած փոշին էլ մի քթոց ալյուր։

Գալիս են էս եզը մորթում, էս մի քթոց ալյուրն էլ հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, որ նոր հանգստանում են։

1914

ՉԱԽՈՐԴ ՓԱՆՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի աղքատ մարդ է լինում, անունը Փանոս։ Ինքը մի բարի մարդ է լինում, բայց ինչ գործ որ բռնում է՝ ձախ է գնում։ Դրա համար էլ անունը դնում են Չախորդ Փանոս։ Ունեցած-չունեցածը մի լուծ եզն է լինում, մի սել ու մի կացին։

Մի օր եզները սելում լծում է, կացինը առնում գնում անտառը փետի։ Անտառում էս Փանոսը միտք է անում, թե՝ մի բան որ ծառը կտրելուց ետը մին էլ նեղություն պետք է քաշեմ՝ ահագին գերանը գետնից բարձրացնեմ գցեմ սելի մեջը, ավելի լավ է՝ հենց սելը լծած բերեմ ծառի տակին կանգնեցնեմ, որ ծառը կտրեմ թե չէ, ընկնի մեջը։

Ասածն արած է։

Եզներով սելը բերում է մի մեծ ծառի նստրքև կանգնեցնում, ինքը անցնում վերի կողմը, կացինը քաշում—թրը՛խկ հա թրը՛խկ։ Շատ է քաշում թե քիշ, էդ էլ ինքը կիմանա, ծառը ճռճռալով դալիս է զարկում, տակովն անում սելը ջարդում, եզներն էլ հետը։ Փանոսը մնում է ապշած կանգնած։ Ի՞նչ պետք է անի։ Կացինը վերցնում է ու ծոծրակը բորելով ճամփա է ընկնում դեպի տուն։

Ճամփին մի լճի ափով անց կենալիս է լինում։ Տեսնում է մեջը վայրի բադեր են լողում։ Ասում է՝ գլուխը քարը, չեղավ չեղավ, արի գոնե մի բադ սպանեմ, տանեմ տամ կընկանս։ Ասում է ու կացինը պոքսում, շպրտում դեպի բա-

դերը, որ մինն սպանի. բադերը ճղճղալով ցրվում են, փախչում, որը եղեգնուտն է մտնում, որը թռչում գնում, կացինն էլ ընկնում է լճի խոր տեղը, տակն անում, կորչում։ Փանոսը մնում է լճի ափին կանգնած միտք անելիս։ Ի՞նչ անի, ի՞նչ չանի։ Շորերը հանում է գնում լճի ափին, ինքը մտնում մեջը, որ կացինը հանի։ Գնում է, գնում. քանի առաջ է գնում, ջուրն ինքան խորանում է, տեսնում է կարող է խեղդվել, ետ է դառնում, դուրս գալի։

Դու մի՛ ասիլ՝ Փանոսը որ լիճն է մտնում ու խորը գնում՝ էդ ժամանակ լճափով մի անցկենող է լինում, տեսնում է էստեղ թափած շորեր կան, եղեգնուտի մեջ խորը գնացած Փանոսին էլ չի նկատում, էս շորերը հավաքում է, առնում գնում։

Փանոսը լճից դուրս է գալի, տեսնում շոր չկա։ Մնում է տկլոր կանգնած։

Միտք է անում. «Ի՞նչ անեմ, տեր աստված, էսպես տկլոր ո՞ւր գնամ»։

Սպասում է մինչև մութն ընկնի։ Մթան հետ վեր է կենում գնում գյուղը։ Որ գյուղին մոտենում է, ասում է՝ էսպես տկլոր որ գնամ մեր տունը—տանը ցիր ի՞նչ կասեն։ Արի գնամ ախպորիցս շոր առնեմ՝ հագնեմ՝ էնպես գնամ կնկանս մոտ։

Ճամփեն ծռում է դեպի ախպոր տունը։

Դո՛ւ մի ասիլ՝ էդ գիշեր էլ ախպոր մոտ մեծարք կա, քեֆի էլ էն տաք ժամանակն է։ Գուրը ծերպ է անում, տեսնի ով կա, ով չկա. հյուրերից մինը կտրծում է, թե շունն է, ձեռի կրծած ոսկորը շպրտում է դեպի գուրը, ոսկորը դիպչում է աչքին, աչքը հանում։

Փանոսը ցավից վայ-վայ անելով ետ է դառնում, շներն էս ձենի վրա վեր են կենում, տեսնում են, օհո՛, մթնումը հրես մի տկլոր օջմին, ու շորս կողմից վրա են տալիս։ Շնչի հաչոցի վրա մարդիկ դուրս են թափվում, տեսնում են՝ մի տկլոր մարդ փախած գնում է, շները ետևից։ Առանց երկար ու բարակ մտածելու վճռում են, որ կա թե չկա սա սատանա է։

Բավական տեղ ղբլրղու տալով, հայհոյելով, հարայ-հրոցով ընկնում են նռևից, հալածում, տանում գցում անտառները։ Շներն էլ նռևիցը մի ճուռը պոկում են, ու էսպես տկլոր, աչքը հանած, կաղին տալով՝ խեղճ Փանոսը գնում է կորչում։

Մյուս օրը գյուղում տարածվում է, թե հապա չեք ասիլ՝ «Փանոսը կորել է։ Գնացել է անտառը փեսի ու ետ չի եկել։» Գեղահավան հավաքվում են գնում. գնում են անտառը մանգալի, սելն ու եզները գնում են ծառի տակին չարդված—ինքը չկա։

Դես Փանոս, դեն Փանոս. հարց ու փորձով հագուստն էլ գտնում են մեկի մոտ։

— Ա՛յ մարդ, էս հագուստը ո՞րտեղից է ընկել քեզ մոտ։

— Թե՝ ախպեր, էս հագուստը էսպես մի լճի ափին վեր ածած էր, հավաքեցի բերի։

Գնում են լճի շորս կողմը պտըտում, կանչում՝ «Փանո՜ս, Փանո՜ս», Փանոսը չկա։

Վճռում են որ Փանոսը խեղդվել է։

Գալիս են ժամ ու պատարագ են անում, քելեխը տալիս։ Կնիկն էլ մի քիչ սուգ է անում, Փանոսին գովում. ափսոսում, հետո մի ուրիշ մարդ է ուզում, հետը պսակվում գնում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գուլքանի երգը 7
Ամպովա գիշերը գյուղում 8
Հին օրհնություն 9
«Ես նայում եմ. իմ առջև» 10
«Ներիր, ով կույս, որ հուզեցի» 11
«Երանություն էր խոստացել հույսս ինձ» 11
«Երբ ես տխուր, հուսահատ» 13
Մանկություն 14
Կալի երգ 15
Վերջին խոսք 16
Նախերգանք 17
«Այդ ի՞նչ սրտամաշ տխրություն է բեղ» 18
«Թեև իմ վերջին հայացքը մնա» 19
«Պանդուխտն նրգեց օտար երկրում» 20
Մի՛ որոնիր 21
«Շատերի նման նա էլ խեղդվեցավ» 21
Խորհրդածություն 22
Մարգարե 23
Գիշերային առաջին ասազի դիմաց 24
Զարամիտներին 25
Միամիտներին 26
«Ահ, խնայեցեք, մի հիշեցնեք ինձ» 26
Հիշողություն հայրենիքից 27
«Դեռ անհիշելի վաղ մանկությունից» 30
Նրան 31
«Ոչ յոթինակ այլոց» 31
Համերգ 32
Երգչին 33

Նկարիչ Գ. Բաշինջաղյանի «Զորագնացը գիշերով» նկարի առջև . . 33
«Կուրծքս երբեմն եռ է գալիս և հուզվում» 34
«Քրիստոս հարյավ հրաշափառ» 35
Տարոնի գարունը 36
Տարոնի առավոտը 37
«Խոշնալի մարդ. ոսկորված» 39
Ախ, ես երանի 40
Երգչի վրեժը 40
Կանչ 41
Պատվեր 43
Նվեր Ան. Ա.-ին 43
N N-ին 44
Սարերում 46
«Երբ տեսնում եմ, մարդ տակավին» 47
Կորուստից հետո 48
Հրաժեշտ 48
Դերասան Ադամյանի մահը 49
Աստղերի հետ 50
«Երբ խոսում էիր, պատմում էիր ինձ» 51
Խոստովանություն 51
Ուրու 52
«Սիրելի աչեր» 52
Օր. Ծ. Գ.—ի ալբոմում 54
«Երբ գիշերային» 54
Ծոմանս 56
Քրիստոսն անապատում 56
Նրաշ 57
«Մութն էր երկինքը. ոչ ոք չտեսավ» 58
Աստվոտ (Նվեր մեր նոր երիտասարդությանը) 58
Իմ սերը 59
Հիշի՞ր 59
«Ինձ մի խնդրիր, ես չեմ երգի» 60
Նվեր 60
«Ախ, որքան փարթամ կյանքը ծաղկում է» 61
Ամառային երեկո 61
«Լա՞մ ես դու էլ, թե ինչ են խոսում» 62
Ծառաբության մեջ 63
Կարոտ 64
«Օ, լուռ կաց, ընկեր. այդ ի՞նչ ես երգում» 64
Օր. Մ. Վ.—ին 65
Տենչ 66
Կասկած 67

Մոռացված սեր 67
Վատ օրեր 68
Հայ ուխտավորին 69
«Քրիստոս հարյավ... Ախ, և այս հոծ» 70
Ն. Բարաթաշվիլու դամբանի վերա 71
Աղբյուրը 71
Այվազովսկու նկարի առջև 72
Խրճիթում 73
Պոետին 74
Նա նստած էր 75
Նոր տարի 76
Ես ասացի 77
Մի հառաչանք 78
«Եթե մի օր, անուշ ընկեր» 78
Ժպտուն աչքեր 79
Երկու սև ամպ 80
Գիշեր 81
Հարություն 82
Թայրքնին 83
Գաղթականի երգը 83
Անդարձ ճամփորդներ 85
Երկար գիշերներ 86
Տխուր գիշեր 87
Գարնան հիշողություն 87
Այն օրից 88
Տրամության սաղմոսներից 89
Մեր ազգային վիպասան Պերճ Պռոշյանցին՝ իր բառասնամյակին . 90
Ինչո՞ւ այդպես 91
Դու քո ճամփեն 92
«Ախ, ինչ լավ են սարի վրա» 93
Ընկերիս 93
Տրտունջ 94
Պանդուխտ եմ, քույրիկ 95
Մեր նախորդներին 96
Խորհրդավոր մեռելը 96
Մարգարեություն 97
Հայոց լեռներում 98
Հայոց վիշտը 100
Մեր ուխտը 100
Ընտրյալը 102
Կաքավի գովքը (ժողովրդական) 103
«Ժամանակն անվերջ, տիեզերքն անհուն» 104

Մադոնն 106
Գժար տարի (ժողովրդական) 106
Գարնան առավոտ (ժողովրդական) 107
Ճախարակ (ժողովրդական) 108
«Էհ, ո՞վ գիտի, մենք ապիկարս» 108
Ցվերակում 109
Վայրէջք 110
Սոխակի վիշտը (ժողովրդական) 113
Գաթայի ողբը (ժողովրդական) 115
Գարնան հրավեր 117
Մանուկն ու ջուրը (ժողովրդական) 118
Թեպետև բախտը մեզ չտա հարվածից 119
Դաղիկների երգը 120
«Հոգմիրի առջի ցրվածը, հալածվածն» 123
«Տաղով եկավ» 124
Վերջին տագնապը 125
Հայրենիքիս հետ 126
Բարձրից 127
Ապիսամարի կրկամ 128
«Ճուռ է գարիս ծանր բարը» 129
Գժոխքի հանգիստ 131
Հոդեմանգիստ 132
Իմ Աբուլյակին 123
Գերության մեջ 133
Վրաստանի համար 134
Երազների շարունակ 136
Դու չգիտե՞ս 137
Պատրանք 138
Վրաստանի ոգին 138
Իմ երգը 139
Նվեր Վրաստանի բանաստեղծներին 141
Սիրիուսի հրաժեշտը 143

ՔԱՌՅԱՆԵՐ

Անց կացանս 147
«Վերջացավ» 147
«Ո՞ւր կորան» 148
«Ես չեկավ» 148
«Հիմի բացել են հանգիստ» 148
«Մոտ է իմ վիշտս, անապ ու խոր» 149